




ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ



ԱՄՔՆԱԳՐԱԿԱՆ









АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
СЕКТОР ВОСТОКОВЕДЕНИЯ

**ВОСТОКОВЕДЧЕСКИЙ  
СБОРНИК**

**I**

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1960

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ

ՊԱՁԵ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՊԱ - 84

I



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1960

**Տպագրվում է Հայկական ՍՍՌ  
Գիտությունների ակադեմիայի  
Խմբագրական-հրատարակչական  
խորհրդի օրոշմամբ:**

*Ժողովածուն նվիրված է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների  
պատմության, տնտեսության և կուլտուրայի, ինչպես նաև այդ  
երկրների արտաքին և ներքին քաղաքականության մի շարք  
ակտուալ հարցերի ուսումնասիրությանը:*

Сборник посвящен изучению ряда актуальных вопро-  
сов истории, экономики и культуры, а также внутренней  
и внешней политики стран Ближнего и Среднего Востока.

*Խմբագրական կոլեգիա*  
**Հ. Մ. ԵԳԱՆՅԱՆ  
Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆ  
Ե. Կ. ՍԱՐԳԻՍՈՎ**

Редакционная коллегия:  
**Г. М. ЕГАНИЯ  
О. Г. ИНДЖИКЯН  
Е. К. САРКИСОВ**



### Ս Ե Կ Տ Ո Ր Ի Կ Ո Ղ Մ Ի Ց

Ընթերցողների ուշադրությանը ներկայացվող սույն ժողովածուի մեջ ամփոփված են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության սեկտորի աշխատակիցների գիտական հոդվածները:

Հայտնի է, որ հայ և արևելյան շատ ժողովուրդների պատմությունն ու կուլտուրան սերտորեն կապված են իրար հետ: Այս կապերի ակունքները գալիս են դարերի խորքից և իրենց արտացոլումն են գտել դեռևս V դարի մեր մատենագիրներ՝ Ագաթանգեղոսի, Եզնիկ Կողբացու, Եղիշեի, Մովսես Խորենացու, VII դարի հուշարձան «Աշխարհացոյցի» հեղինակ Անանիա Շիրակացու և հետագա դարերի մյուս հայ պատմագիրների երկերում:

XIX դարի սկզբներից Ռուսաստանի արևելագիտության զբաղմունքը օջախներից մեկն էր Մոսկվայի Արևելյան լեզուների կադարյան ճեմարանը, որը արևելագետների մի ամբողջ սերունդ է դաստիարակել: Կադարյան ճեմարանի անվան հետ են կապված հայ անվանի արևելագետներ Ստեփանոս Նազարյանի, Մկրտիչ էմինի, Քերովբե Պատկանյանի, Գրիգոր Խալաթյանի և շատ ուրիշների անունները, որոնք մյուս հայ գիտնականների հետ միասին արժեքավոր մենագրություններ են ստեղծել արևելյան ժողովուրդների պատմության, լեզվի և գրականության վերաբերյալ:

Արևելագիտության հիմնական ճյուղերից մեկի՝ քրդագիտության բնագավառում ևս մեծ ներդրում ունեն հայ հեղինակները: Քրդագիտության զարգացմանը նպաստել են հայ մեծանուն լուսավորիչ և աշխատուր Աբովյանը, իսկ հետագայում Ս. Եղիազարյանը, Ս. Հայկունին, Ա. Խաչատրյանը և այլ հայ քրդագետներ:

Սովետական իշխանության տարիներին Արևելքի ժողովուրդների հին և միջին դարերի պատմության ու կուլտուրայի, Հայաստանի և հարևան երկրների պատմական կապերի շուրջ հայ գիտնականները հրատարակել են մի շարք կարևոր ուսումնասիրու-

թյուններ: Հիշատակության արժանի են ակադեմիկոսներ Հ. Մանանդյանի, Հր. Աճառյանի, Գր. Ղափանցյանի, Հ. Օրրելու, պրոֆ. Ռ. Աբրահամյանի և նրանց աշակերտների աշխատությունները:

Հայկական ՍՍՌ-ում զգալի գիտահետազոտական աշխատանքներ են ծավալվել նաև ուրարտագիտության, խեթագիտության և ասորագիտության բնագավառներում, հրապարակվել են Մատենադարանի եզակի արժեք ներկայացնող արևելյան առանձին ձեռագրեր, կազմվել են բառարաններ:

Վերջին տարիներս ռեսպուբլիկայում աճել են արևելագիտական նոր, երիտասարդ մասնագետներ, ստեղծվել են արևելագիտության նոր կենտրոններ:

1958 թ. հոկտեմբերից Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում կազմակերպված Արևելագիտության սեկտորը իր ջանքերը կենտրոնացնում է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների նոր և նորագույն շրջանի պատմության, տնտեսության և կուլտուրայի առանձին ակտուալ խնդիրների գիտական մշակման վրա:

Սեկտորի գիտահետազոտական աշխատանքներում պատշաճ ուշադրություն է դարձվելու Սովետական Միության խաղաղասիրական արտաքին քաղաքականության, Արևելքի երկրների ազգային ազատագրական շարժումների և քաղաքական ու տնտեսական անկախության համար ժողովուրդների մղած պայքարի, ինչպես նաև ժամանակակից էտապում իմպերիալիզմի գաղութային քաղաքականության հարցերի լուսաբանմանը:

Սեկտորի գիտական պլաններում որոշակի տեղ են գրավելու քրդագիտության պրոբլեմները, Արևելքի երկրներում հայկական գաղութների պատմությունը, արևելյան տարբեր լեզուների բառարաններ կազմելը:

Վերոհիշյալ խնդիրների բազմակողմանի և խորը հետազոտության համար սեկտորը կհամախմբի ռեսպուբլիկայի բոլոր արևելագետների ջանքերը:

Արևելագիտական ժողովածու-ն պարունակում է հետազոտվող պրոբլեմների առանձին հարցերի վերաբերյալ հոդվածներ, որոնց հեղինակները հավակնություն չունեն քննվող հարցերի լուսաբանումը համարել սպառիչ:

Սեկտորը շնորհակալությամբ կընդունի իր առաջին ժողովածուի մասին եղած քննադատական դիտողություններն ու կարծիքները:

## ОТ СЕКТОРА

В предлагаемом вниманию читателей сборнике помещены научные статьи сотрудников Сектора востоковедения Академии наук Армянской ССР.

Широко известны исторические и культурные связи армян с народами Востока. Уходящие вглубь веков корни этих связей отражены уже в трудах историографов V века Агатангеоса, Езника Кохбаца, Егише, Мовсеса Хоренаци, автора памятника VII века «Ашхарацуйц» («География») Анания Ширакаци и других армянских историографов прошлого.

С начала XIX века один из главных очагов востоковедной науки России—Лазаревский институт восточных языков в Москве подготовил целую плеяду востоковедов. С этим Институтом связаны имена известных востоковедов-армян: Степаноса Назаряна, Мкртича Эмина, Керовбе Патканяна, Григора Халатяна, которые вместе с другими армянскими учеными создали ряд монографий по истории, языку и литературе народов Востока.

Развитию курдоведения—составной части востоковедной науки—способствовали известный армянский просветитель Хачатур Абовян, а позднее исследования С. Егиазарова, С. Айкуни, А. Хачатряна и других армянских курдологов.

В годы советской власти армянскими учеными были изданы ценные исследования по древней и средневековой истории и культуре народов Востока, а также по историческим связям Армении с сопредельными странами. Значительными из них являются труды академиков А. Манандяна, Г. Ачаряна, Г. Капанцяна, И. Орбели, проф. Р. Абрамяна и некоторых их учеников.

В Армянской ССР проделана значительная научно-ис-

следовательская работа также в области урартологии, хеттологии и ассириологии; опубликованы уникальные восточные рукописи Матенадарана, изданы словари.

За последнее время в республике выросли новые кадры востоковедов, созданы центры востоковедной науки. Организованный в октябре 1958 г. Сектор востоковедения Академии наук Армянской ССР сосредоточит свои усилия на научной разработке отдельных актуальных проблем новой и новейшей истории, экономики и культуры стран Ближнего и Среднего Востока. В научно-исследовательской работе Сектора должное внимание будет уделено миролюбивой внешней политике Советского Союза, вопросам национально-освободительного движения и борьбы народов за политическую и экономическую независимость в странах Востока, а также анализу колониальной политики империализма на современном этапе.

В научных планах Сектора определенное место займет исследование проблем курдоведения, истории армянского колониализма в странах Востока, составление словарей восточных языков, публикация источников.

Для выполнения намеченных задач Сектор объединит усилия востоковедов республики.

В «Востоковедческом сборнике» публикуются научные статьи, охватывающие некоторые вопросы исследуемых проблем. Авторы статей не претендуют на всестороннее освещение этих вопросов.

Сектор с благодарностью примет критические замечания и отзывы о своем первом сборнике.

Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԿՆԵՐԸ

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները, մշակելով պրոլետարիատի ուղիղ գիտությունն պայքարի ստրատեգիան և տակտիկան, հատուկ ուշադրություն են դարձրել ազգային և գաղութային հարցին: Նրանք ցույց են տվել, որ ազգային հարցը ու գաղութային ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը իրենց վերջնական դրական լուծմանը կհանգեն միայն շնորհիվ պրոլետարական ուղիղ գիտության հաղթանակի:

Զարգացնելով մարքսիզմի գաղափարները իմպերիալիզմի գարաշրջանում, երբ ազգային և գաղութային հարցերը միջազգային առումով միաձուլվել էին ու վերածվել մի ընդհանուր ազգային-գաղութային հարցի, Վ. Ի. Լենինը մշակեց իր ամբողջական ուսմունքը այդ հարցի վերաբերյալ: Նա ցույց տվեց, որ իմպերիալիզմը, ստեղծելով միջազգային շուկա և ամուր տնտեսական կապեր տարբեր ևրկրների միջև, ստեղծել է նաև պայմաններ միավորելու կապիտալիստական առաջավոր երկրների բանվոր դասակարգի ուղիղ գիտությունն պայքարը Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների հետ:

Ռևոլյուցիոն պրակտիկան հաստատեց Վ. Ի. Լենինի ուսմունքը գործնականում, մանավանդ, Երբ Արևելքում ծավալվեցին ժողովրդական շարժումները:

Ռուսական առաջին ուղիղ գիտության, ինչպես նշել է Լենինը, արթնացրեց Ասիային իր խոր, դարավոր քնից: Իմպերիալիստական երկրների շահագործման ու կեղեքման առարկա դարձած, հարյուրավոր տարիներ նվաստացած, «քաղաքակրթված» Եվրոպայի և Ամերիկայի կողմից ստրկացված գաղութային ժողովուրդները XX դարի սկզբին բարձրացան իրենց ամբողջ հասակով: Սկսվեց ուղիղ գիտություն և ազգային-ազատագրական շարժումների մի պատմա-

իան ժամանակաշրջան: Ռուսաստանի աշխատավորության օրինակով պայքարի ներքին Իրանի, Թուրքիայի, Չինաստանի, Հնդկաստանի և այլ երկրների աշխատավորները:

Այնուհետև ունեցողներն բռնկումների այդ առաջին շրջանին հաջորդեց համաշխարհային պատերազմը և Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիան, որը սկիզբ դրեց պատմական նոր դարաշրջանի:

Ահա այս բոլորը ի մի բերելով, Վ. Ի. Լենինը հիշյալ էպոխան կոչել է վիթխարի փլուզումների դարաշրջան և համարելով այն «միայն սկիզբը», նախատեսել է ավելի խոշոր և արմատական փոփոխություններ մարդկության պատմության մեջ: Մասսայական շարժումների այս բուռն զարգացման պրոցեսում, Լենինի կարծիքով, մեծագույն նշանակություն ունի Արևելքը, որի ժողովուրդների հանդեպ տարվող ճիշտ քաղաքականությունը նա համարում էր հույժ կարևոր քաղաքական հարց:

1921 թ. նոյեմբերին գրած իր նամակներից մեկում, քննադատելով Թուրքեստանում թույլ տված սխալները, Վ. Ի. Լենինը դրում է: «Մեր ամբողջ Weltpolitik\*-ի համար չափազանց կարևոր է նվաճել տեղացիների վստահությունը: Եռակի ու քառակի անգամ նվաճել, ապացուցել, որ մենք իմպերիալիստներ չենք, որ մենք թեֆում դեպի այդ կողմը չենք հանդուրժի:

Իս համաշխարհային հարց է, առանց չափազանցության համաշխարհային:

Այստեղ պետք է լինել չափազանց խիստ: Այդ բանը կանդրադառնա Հնդկաստանի վրա, Արևելքի վրա. այստեղ կատակել չի կարելի, այստեղ պետք է լինել 1000 անգամ զգույշ»<sup>1</sup>:

Նման վերաբերմունք և անհրաժեշտ զգուշություն ազգային, գաղութային հարցում Լենինը ցուցաբերում էր միշտ և նույնը պահանջում ուրիշներից:

Մատնացույց անելով այս հանգամանքը, Ս. Մ. Կիրովը 1924 թ. ապրիլին ասել է. «Վլադիմիր Իլյիչի գործունեության մեջ պետք է նշել նրա հետաքրքրությունը Արևելքի ճնշված ազգությունների նկատմամբ: Եվ ճնշված ազգությունների հարցում Իլյիչը մեզ պակաս հայտնագործություններ չի տվել, քան մյուս բնագավառներում:

Եթե ոռու մուծիկը Լենինին անվանում էր հայր, ապա դեղին, սև և բոլոր ուսանների մարդիկ ոչ պակաս իրավունքով նրան նույն-

\* Միջազգային քաղաքականության:

<sup>1</sup> Ленинский сборник, XXXVI, Госполитиздат, 1959, стр. 320—321.

պես հայր էին անվանում: Սոցիալիզմի համար մղվող համաշխարհային մասշտաբի պայքարում նա հաշվի էր առնում Արևելքի վիթխարի բանակը:

Մենք տեսնում ենք այն հսկայական շարժումը Արևելքի երկրներում, որտեղ կապիտալիզմը նոր է միայն զարգանում: Միայն հանճարեղ Իլիչը կարող էր կանխատեսել, որ Ֆրանսիայի կարող է դառնալ ուղղուցիտ: Դրանում է նրա հսկայական երախտիքը<sup>1</sup>:

Արևելքի ժողովուրդներին քաջ հայտնի է մեծ լենինի անձնադոհ պայքարը իրենց ազատության համար և նրա հայրական խնամքը պաղոթային ժողովուրդների կարիքների և պահանջների նկատմամբ: Եվ նրանք մեծ երախտագիտությամբ են հիշում Վ. Ի. լենինին: Այդ մասին են պատմում Արևելքի երկրների այն գործիչները, որոնք եղել են լենինի մոտ, կամ դիմել են նրան որևէ խնդրով անձամբ, թե գրավոր:

Արտահայտելով ընդհանուր կարծիքը, ընկ. Խո-Շի-Մինը Վ. Ի. լենինի մահվան օրերին գրած՝ «Լենինը և գաղութային ժողովուրդները» խորագրով հոդվածում նշում է, որ շնայած կապիտալիզմի պայմաններում ժառանգած տգիտությանը, և՛ Աննամի գյուղացուն և՛ Դադոմեյի որսորդին հասել էին շշուկները հեռավոր այն երկրի մասին, որի ժողովուրդը քշել էր իր ինքնակալներին ու շահագործողներին և իր ձեռքը վերցրել երկրի իշխանությունը:

«Լսել էին նրանք և այն, — շարունակում է ընկ. Խո-Շի-Մինը, — որ այդ երկիրը կոչվում է Ռուսաստան և նրան ղեկավարում են շատ անվեհեր մարդիկ, իսկ երանցից ամենից անվեհերը Լենին է կոչվում: Դա արդեն բավական էր, որպեսզի առաջացներ խորը, խանդավառ հիացում այդ երկրի և նրա առաջնորդի հանդեպ...»: Հոդվածի վերջին տողերը հեղինակը նվիրում է մեծ լենինին: «Կենդանության ժամանակ նա մեր հայրն էր, տառցիչը, ընկերը, խորհրդատուն: Այժմ նա մեր ուղեցույց աստղն է, որը տանում է դեպի սոցիալական ուղղուցիտ»:

Լենինը ապրում է մեր մեջ, նա ամմահ է<sup>2</sup>:

Ժողովրդական հզոր շարժումները Արևելքում իրավամբ կապում են Ռուսական ուղղուցիտի, լենինի անվան ու նրա գործունեության հետ, տեսնելով այդ կապը ազգային-գաղութային հարցի

<sup>1</sup> С. М. Киров, Избранные статьи и речи, Госполитиздат, М. 1957, стр. 155.

<sup>2</sup> «Великий Октябрь и народы Востока.» Изд. восточной литературы, 1957, стр. 68—69.

լենինյան ուսմունքի մեջ, առաջնորդի անձնական կապի, խորհուրդների ու ցուցումների մեջ, որոնք մշտապես տրվում էին Արևելքի կոմունիստներին և այլ քաղաքական գործիչներին:

Խոսելով հետհեղափոխության ուսուցիչներին վերելքի մասին Չինաստանում, ընկ. Մաո Ցզե-դունը համարում է այն պատասխան «համաշխարհային ուսուցիչայի կոչին, ռուսական ուսուցիչայի կոչին, լենինի կոչին»<sup>1</sup>:

Հետաքրքրական է նշել նաև, որ Վ. Ի. Լենինի մեծության և ուսակա ուսուցիչայի ազդեցության հետևանքով Արևելքում կատարված փոփոխությունների մասին խոսում են ոչ միայն կոմունիստները, բանվորական և գյուղացիական կազմակերպությունների ներկայացուցիչները, այլև կառավարություններ, բուրժուական պետական ու հասարակական գործիչներ:

Ի պատասխան Սովետական Ռուսաստանի կառավարության ազնիվ վերաբերմունքի (զորքերի հեռացումը, ցարական Ռուսաստանի բոլոր արտոնություններից հրաժարվելը, պետությունների և մասնավորապես Իրանի հանդեպ իրավահավասարության սկզբունքի կիրառումը), Իրանական կառավարությունը ժողովրդական կոմիսարների խորհրդին հղած իր ողջուն ուղերձում նշում է, որ Վ. Ի. Լենինը «Արևելքի ազատության գլխավոր ստեղծողն է»<sup>2</sup>:

Երբ ժողովրդական կոմիսարների խորհրդի 1917 թ. վերջին հրապարակված՝ Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր-մուսուլմաններին դիմումը հայտնի դարձավ, Հնդկաստանի մահմեդական ականավոր գործիչներից մեկը, բարձր գնահատելով այդ փաստաթուղթը, գրում է դրան նվիրված հատուկ հոդվածում.

«Ռուսաստանի հորիզոնի վրա ծագում է մարդկության ազատագրման առավոտը, և Ուլյանով-Լենինը հանդիսանում է մարդկության համար այդ երջանիկ օրվա լուսատու արեգակը»<sup>3</sup>:

Անցել են արդեն տասնյակ տարիներ, որոնց ընթացքում ազատության արշալույսը ծագել է շատ երկրների հորիզոնների վրա. բազմաթիվ ժողովուրդներ ստացել են իրենց անկախությունը շնորհիվ Սոցիալիստական լագերի առկայության: Բայց մինչև օրս էլ թե՛ հասարակ ժողովրդի և թե՛ տիրող դասակարգերի ներկայացուցիչները չեն մոռացել, որ Արևելքի ազատագրումը անքակտելիորեն կապված է մեծ Լենինի անվան հետ:

<sup>1</sup> Мао Цзе-дун, Соч., т. 3 стр. 258, М. 1953.

<sup>2</sup> «Современный Восток», № 4, 1959, стр. 2.

<sup>3</sup> «Великий Октябрь и народы Востока», стр. 18.



1959 թ. մարտի սկզբին, ն. Ս. Խրուշչովի Աֆղանստան կա-  
տարած այցելության ժամանակ, Աֆղանստանի վարչապետ Մու-  
համմեդ Դաուդը ճառերից մեկում ընդգծեց, որ իր երկրի անկա-  
խությունը առաջինը «ճանաչվեց Սովետական կառավարության  
կողմից, որի գլուխն էր կանգնած, պետական մեծ գործիչ Լենինը»<sup>1</sup>:

Եվ եթե քառասուն տարի առաջ շատերը աղոտ կերպով, շշուկի  
միջոցով էին լսել Լենինի անունը, ապա այսօր նրա անունն ու գոր-  
ծերը լայն ճանաչում են գտել Արևելքի բոլոր երկրներում: Նրա եր-  
կերը հրատարակվում են շատ արևելյան լեզուներով: Չինաստանում  
իրագործված է Վ. Ի. Լենինի երկերի 4-րդ հրատարակության 38  
հատորների և առանձին աշխատությունների թարգմանությունը:

Վյետնամում վերջին հինգ տարվա ընթացքում հրատարակվել  
է Լենինի 73 աշխատություն՝ մոտ 350,000 օրինակ տպաքանակով:  
Կորեական ժողովրդա-դեմոկրատական ռեսպուբլիկայում հրատա-  
րակվել էին Լենինի ընտիր երկերը՝ 20 հատորով, իսկ վերջերս  
արդեն թարգմանվել և տպագրվել են նրա երկերի 4-րդ հրատա-  
րակության 29 հատորները:

Սիստեմատիկաբար լույս են տեսնում Լենինի առանձին կարևոր  
աշխատությունները Յապոնիայում, Հնդկաստանում, արաբական  
երկրներում, Հարավային Ամերիկայում և Աֆրիկական որոշ երկր-  
ներում:

Այսպիսով Վ. Ի. Լենինի ամենահաղթ գաղափարները գնալով  
ավելի լայն շահերով մուտք են գործում Արևելքի երկրները, օգնե-  
լով այնտեղ դեռևս ծավալվող ազատագրական շարժումներին և  
տնտեսական ու քաղաքական անկախության ամրապնդման համար  
մղվող պայքարին:



Վ. Ի. Լենինի բացառիկ ուշադրությունը դեպի Արևելքի երկր-  
ները և նրանց ժողովուրդների պայքարը բացատրվում է այն շա-  
փազանց կարևոր դերով, որ նրանք բանվոր դասակարգի ղեկավա-  
րությունը խաղացել և խաղում են իմպերիալիզմի կործանման հա-  
մար մղվող պայքարում:

Իրենց ազատագրման անհրաժեշտությունը հասկացած և պայ-  
քարի ելած գաղութային ժողովուրդները մեծ ուժ են ներկայացնում  
նախ՝ քանակով: Վ. Ի. Լենինը բազմիցս նշել է, որ վերջին հաշվով  
գաղութների և կիսագաղութների ազգաբնակչությունը կազմում է  
երկրագնդի ազգաբնակչության մեծագույն մասը: Նրա արթնացու-

<sup>1</sup> «Правда», 5 марта 1960.

մը, քաղաքական ակտիվության ուժեղացումը, միջազգային կյանքում նրա կշռի բարձրացումը, համաշխարհային կարևոր գործոն է դարձել իմպերիալիզմի դարաշրջանում:

Նշելով այս բոլորից, Արևելքի ժողովուրդների Կոմունիստական կազմակերպությունների համառուսաստանյան II համագումարում 1919 թ. նոյեմբերի 22-ին արած իր զեկուցման մեջ, Վ. Ի. Լենինը ընթացիկ մոմենտի ամենակարևոր հարցը համարում է «Արևելքի ժողովուրդների վերաբերմունքը դեպի իմպերիալիզմը և ռևոլյուցիոն շարժումը այդ ժողովուրդների մեջ»<sup>1</sup>:

Այսպիսով, այդ հարցը, որպես միջազգային քաղաքականության հիմնական հարցերից մեկը մշտապես եղել է Վ. Ի. Լենինի և Կոմունիստական պարտիայի ուշադրության կենտրոնում:

Վ. Ի. Լենինին Արևելքի ժողովուրդների վիճակը հետաքրքրել է նաև այն պատճառով, որ նրանք՝ անցյալում մարդկային քաղաքակրթությանը իրենց մատուցած պատմական ծառայություններով հայտնի ժողովուրդները, կարևոր դեր ունեն կատարելու համայն մարդկության ապագայի բախտորոշ գործերում:

Հիշյալ զեկուցման մեջ, նշելով այս հանգամանքը, Լենինը ասում է.

«Արևելքի արթնացման շրջանից հետո արդի ռևոլյուցիայի մեջ մտանում է այն շրջանը, երբ Արևելքի բոլոր ժողովուրդները կմասնակցեն ամբողջ աշխարհի բախտի լուծմանը, որ միայն հարստացման օբյեկտ չլինեն: Արևելքի ժողովուրդներն արթնանում են այն բանի համար, որպեսզի պրակտիկորեն գործեն և որպեսզի ամեն մի ժողովուրդ վճռի ամբողջ մարդկության բախտի հարցը»<sup>2</sup>:

Դեպի Հարավ-Արևելյան Ասիայի երկրները կատարած ուղևորության ընթացքում Ն. Ս. Խրուշչովը, իր ճառերից մեկում վերհիշելով Լենինի այս խոսքերը նշում է. «Վլադիմիր Իլյիչ Լենինը իր խորաթափանց մտքով դեռ 1919 թվականին հստակորեն տեսնում էր, որ անխուսափելիորեն կգա ամբողջ աշխարհի բախտի լուծմանը Արևելքի բոլոր ժողովուրդների մասնակցության շրջանը, որ Արևելքի ժողովուրդներն արթնանում են այն բանի համար, որպեսզի պրակտիկորեն գործեն»<sup>3</sup>:

Նման գործելակերպի դրսևորումներից մեկն էլ մեր օրերում այն է, ասում է մեկ ուրիշ տեղ Ն. Ս. Խրուշչովը, որ նախկինում գաղութային կամ կիսագաղութային հանդիսացող երկրներից

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր. հատ. 30, էջ 174:

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 186—187:

<sup>3</sup> «Մովետական Հայաստան», 23 փետրվարի 1960:

շատերի բախտը արդեն որոշվում է ոչ թե մետրոպոլիտների մայրաքաղաքներում, այլ Ասիայի, Աֆրիկայի և Հարավային Ամերիկայի երկրների մայրաքաղաքներում:

Իմպերիալիստները անվերադարձ կերպով կորցրել են իրենց ազդեցությունը նախկին գաղութներից մեծ մասում:

Սակայն այս պրոցեսը նոր շէր սկսվել: Դեռևս մինչև համաշխարհային պատերազմը գրած իր մի շարք աշխատություններում Լենինը արձանագրել է ինքնուրույնության տենդեցի ծագումը և աստիճանական ուժեղացումը գաղութներում: Նրա կարծիքով Ռուսական 1905 թ. ռևոլյուցիային հետևող ժողովրդական շարժումների վերելքի առաջին էտապում արդեն, դեմոկրատական ուժերը Արևելքում այնքան էին առաջ տարել ազատագրական շարժումը, որ «աշխարհում ոչ մի ուժ Ասիայում հին ճորտատիրությունը չի վերականգնի, չի ջնջի աշխարհի երեսից ասիական և կիսասասիական երկրների ժողովրդական մասսաների հերոսական դեմոկրատիզմը»<sup>1</sup>:

Վ. Ի. Լենինի ուշադրությունից շեն վրիպել նույնիսկ ամենախուլ, մակերեսի վրա շերեացող խլրտումներն անգամ: Հետադարձ հայացք ձգելով ազատագրական շարժումների անցած ուղու վրա, նա 1922 թ. նշում է, որ Արևելքի երկրներում ռևոլյուցիան քսան տարվա ընթացքում դարձել է մի անհաղթահարելի ուժ: Ներգրավելով մինչև մեկ միլիարդ մարդ, որոնք ապրում են Ասիայում և Աֆրիկայում: Վերջինիս մասին Լենինը ակնարկում է, որնա ևս սկսել է շարժվել և հիշեցնել ոչ «պառլամենտական» միջոցներով, իր հավակնությունը կոչվելու մասին, այլ ոչ թե ստրուկ»<sup>2</sup>:

Այս խոսքերը գրվելուց հետո անցել էր ընդամենը երեք տասնյակ տարի, որ Աֆրիկան շարժվեց և այնպես, որ ավելի քան երկու տասնյակ երկրներում գաղութատիրության միայն թեկոսները մնացին:

Եվրոպայի առաջավոր պրոլետարիատի պայքարը իշխանության համար և Ասիայի արթնացումը Լենինը համարում է XX դարի այն երկու խոշորագույն երևույթները, որոնք սկիզբ են գնում համաշխարհային պատմության նոր փուլին:

Արևելքի արթնացման այդ երկրների դեմոկրատական ուժերի ամրապնդման մեջ Վ. Ի. Լենինը տեսնում է չափազանց կարևոր նշանակություն ունեցող մի նոր ուժ, որը իր հերթին ազդեցություն

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 739:

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 414:

կունենա Եվրոպայի երկրների վրա, այնտեղի ուղևորներն շարժում-  
ների վրա:

«Պորտ-Արտուրի անկումը», «Ասիայի զարթոնքը», «Կարլ  
Մարքսի ուսմունքի պատմական բախտը», «Հետամնաց Եվրոպան և  
առաջավոր Ասիան» ու մի շարք այլ աշխատություններում Լենինը  
ցույց է տալիս, որ իմպերիալիստական, գաղութատիրական Եվրո-  
պան, որտեղ բուրժուազիան հանդես է գալիս արդեն որպես  
հետադեմ ուժ, շատ հարցերում ավելի հետամնաց ու ոեակցիոն է,  
քան թե գաղութային Ասիան:

Ռուսաստանի պարտությունը ռուս-յապոնական պատերազ-  
մում նա զնահատում է, որպես նաև այդ բանի ապացույց, որպես  
մի անուղղելի հարված, որ հասցրեց «պրոգրեսիվ, առաջավոր  
Ասիան», «հետամնաց և ոեակցիոն Եվրոպային»:

Մինչև այդ արհամարհված, «վայրենի» համարված Արևելքը  
նոր պայմաններում, իմպերիալիզմի աճող ճգնաժամի պայմաննե-  
րում իր պատշաճ տեղն է գրավում պատմության մեջ: Նա երբեմն  
Եվրոպային ու Ամերիկային ցույց է տալիս դեմոկրատական առաջ-  
ընթացի ուղին, շատ խնդիրների դեմոկրատական լուծման ձևը,  
ինչպես օրինակ, ազգային և առաջադեմ պրոբլեմների և այլն:

Հիմնավորելով այս բոլոր տվյալները, Վ. Ի. Լենինը իրավամբ  
դեմոկրատիայի ու սոցիալիզմի հաղթանակի բախտը կապում է  
Արևելքի հետ:

«Պայքարի ելքը, վերջին հաշվով, կախված է նրանից, որ Ռու-  
սաստանը, Հնդկաստանը, Չինաստանը՝ և այլն կազմում են բնակ-  
չության հսկայական մեծամասնությունը: Իսկ բնակչության հենց  
այդ մեծամասնությունն է, որ վերջին տարիների ընթացքում արտա-  
սովոր արագություններով է իր ազատագրման պայքարի  
մեջ, այնպես որ այդ իմաստով կասկածի նշույլ անգամ չի կարող  
լինել, թե ինչպիսի վերջնական լուծում կունենա համաշխարհային  
պայքարը: Այդ իմաստով սոցիալիզմի վերջնական հաղթանակն  
ապահովված է միանգամայն և անպայման»<sup>1</sup>:

Անցած քառասուն տարիների ընթացքում Լենինի այդ կանխա-  
տեսումը իրագործվեց: Առանձնապես ակնառու դարձավ Արևելքի  
դերը միջազգային հարցերում երկրորդ համաշխարհային պատե-  
րազմից հետո:

Իրերի իրական վիճակը ՄՄԿՊ XX համագումարի հաշվետվու-  
թյան մեջ արձանագրված է այսպես.

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 507:

«Հասել է համաշխարհային պատմության՝ Լենինի կանխագուշակած նոր ժամանակաշրջանը, երբ Արևելքի ժողովուրդները ակտիվ մասնակցություն են ունենում ամբողջ աշխարհի բախտի վճռմանը, դառնում միջազգային հարաբերությունների նոր հզոր գործոնը»<sup>1</sup>։

\*\*\*

Ազգային և գաղութային հարցերի մեկնաբանումը Վ. Ի. Լենինը տվել է՝ ելնելով պրոլետարիատի դասակարգային շահերից, տվյալ պատմական ժամանակաշրջանից, իմպերիալիզմի աճող հակասությունների և սոցիալիստական ռևոլյուցիայի զարգացման ժամանակաշրջանի պայմաններից։

Ժամանակակից գաղութային սիստեմը Լենինը համարում է իմպերիալիզմի արգասիքը։ «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա» և այլ աշխատությունների մեջ նա ցույց է տալիս, որ XIX դարի վերջին և XX դարի սկզբին գաղութները դադարում են լոկ շուկաներ լինելուց և վեր են ածվում կապիտալի ներդրման վայրերի։

Արտադրական ուժերի արագ զարգացումը կապիտալիստական երկրներում հասցնում է այնպիսի վիճակի, երբ ազգային նեղ շրջանակները չեն կարողանում տեղավորել կապիտալը և տնտեսապես ամրապնդված, խոշոր պետությունները ձգտում են արտահանել այն։

Պայքարը գաղութների համար սրվում է, և նրանք ի վերջո բաժանվում են կապիտալիստական երկրների միջև։ Անցյալ դարի վերջին այդ պրոցեսն արդեն ավարտվել էր, որի հետևանքով ասում է Լենինը, առանձին կարևորություն է ստանում պայքարը կիսասակախ (Չինաստան, Իրան, Թուրքիա և այլն) երկրների համար։

Իմպերիալիստական պետություններին չի բավարարում գաղութային երկրների ենթարկումը լոկ տնտեսական տեսակետից։ Նրանք ձգտում են ենթարկել այդ երկրները նաև քաղաքականապես։

«Բայց հասկանալի է, — գրում է Լենինը, — որ ֆինանսական կապիտալին ամենամեծ «հարմարություններ» և ամենամեծ օգուտներ տալիս է այնպիսի հպատակեցումը, որը զուգորդված է հպատակվող երկրների և ժողովուրդների քաղաքական անկախության կորստի հետ»<sup>2</sup>։

<sup>1</sup> Ն. Ս. Խրուշչով, ՄՄԿՊ հենարոնական հոմիտեի հաշվետու զեկուցումը պարտիայի XX համագումարում, Հայպետհրատ, 1956, էջ 39։

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, Ծրկեր, հատ. 23, էջ 344։



Նպատակը բոլոր դեպքերում մեկն է՝ ուժեղացնել շահագործումը: Կառուցվում են հումք մշակող գործարաններ ու ֆաբրիկաներ, բնական հարստությունները շահագործող արդյունաբերություն, երկաթուղագծեր, նավահանգիստներ, առաջ են գալիս նոր քաղաքներ, կազմակերպվում են առևտրական ընկերություններ, բանկեր և այլ անհրաժեշտ հիմնարկություններ: Դարերով կուտակված գաղութային քաղաքականություն վարելու փորձը հարստանում է նոր, ավելի նուրբ, բայց շահագործման ավելի բարձր ձևերով ու միջոցներով:

Նախքան առաջին համաշխարհային պատերազմը, մոտ քառասուն տարվա ընթացքում, վեց մեծ տերություններ՝ Անգլիան, Ռուսաստանը, Ֆրանսիան, Գերմանիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները և Յապոնիան թալանում էին 25 միլիոն քառ. կմ. տարածութամբ գաղութներ, որտեղ ապրում էր 523 միլիոն մարդ: «Մեծ» պետությունների ամեն մի 4 բնակչին, նշում է Լենինը, ընկնում է «ներանց» գաղութներում հնգական բնակիչ<sup>1</sup>: Տասնյակ և հարյուրավոր տարիներով շարունակվող շահագործումն ու կողոպուտը, որ կատարվում էր բնիկների քրտինքի և արյան գնով՝ Արևելյան երկրների զարգացումը պահում էր անասելի ցածր մակարդակի վրա: Նման դրությունը, սակայն, հնարավորություն էր ընձեռում գաղութատեր երկրներին կուտակել խոշոր հարստություններ, ապահովելով տնտեսության զարգացման բարձր տեմպեր և բարեկեցիկ կյանք իրենց երկրների քաղաքացիների համար: Հարստահարման այս մեթոդը, այսինքն գաղութային սիստեմի առկայությունը Լենինը համարում է «կապիտալիզմի անկման արհեստական կասեցման» աղբյուրներից մեկը<sup>2</sup>:

Այսպիսի արհեստական, բայց չափազանց ուժեղ պատվարը և իրենց գոյության կարևոր գործոնը պահպանելու համար գաղութարարները օգտագործում են ամեն մի միջոց, ըստ հնարավորին օրինականացնելով դրանք: Այդ միջոցների մասին Լենինը ասում է. «...որ, բացի ուղղակի պետական իրավական կախումից, գաղութային կախումը ենթադրում է ֆինանսական և տնտեսական կախման մի ամբողջ շարք հարաբերություններ, ենթադրում է մի ամբողջ շարք պատերազմներ, որոնք պատերազմ չէին համարվում, որովհետև հաճախ հանգում էին սպանդի, հրե՛ եվրոպական և ամերիկյան իմպերիալիստական զորքերը, զինված բնաջնջման ամենակատարելագործված զենքերով, կոտորում էին գաղութային երկրների անզեն ու անպաշտպան բնակիչներին»<sup>3</sup>:

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 384:

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, էջ 461:

<sup>3</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 259:

Այդպես էին վարվում անգլիացի գաղութարարները Հնդկաստանում, Աֆրիկայում և այլ գաղութներում: Օգտվելով այդ «իրավունքից», ռուսական և անգլիական զորքերը խեղդեցին ռևոլյուցիոն շարժումը Իրանում: Նույնը կատարում էին ֆրանսիացիները Աֆրիկայում և Հնդկաչինում, հոլանդացիները՝ Ինդոնեզիայում ու այսպես տասնյակ տարիներ:

Լենինը նշում է, որ մետրոպոլիտանների ներսում կիրառվող դեմոկրատական որոշ տրադիցիաներ, ոչ մի բանով չեն փոխում այդ երկրների գաղութային քաղաքականությունը: Նա գրում է այն մասին, որ ամերիկական «դեմոկրատիան», այսինքն դեմոկրատական կապիտալիստները անամոթաբար թալանել ու թալանում են Ֆիլիպինները և Մեքսիկան, իսկ Յապոնիան կռվում է Միացյալ Նահանգների հետ, որպեսզի շարունակի թալանել Կորեան, «որին նա կողոպտում է շլված գազանութամբ, միացնելով տեխնիկայի և ղուտ ասիական խոշտանգումների բոլոր նորագույն գյուտերը»<sup>1</sup>:

Հարյուրամյակներ շարունակվող այս խայտառակ ու արյունոտ գաղութային քաղաքականությունը թողել է իր խոր հետքերը այն երկրներում, որոնց մենք անվանում ենք տնտեսապես թույլ զարգացած երկրներ:

Ըստ ամերիկյան մամուլի տվյալների, վերջիններիս մեկ շնչին ընկնում է 10—20 անգամ պակաս գյուղատնտեսական մթերքներ, 11 անգամ պակաս գործվածքեղեն, 16 անգամ պակաս հագուստեզեն և կոշիկ, քան կապիտալիստական երկրներում:

Մեկ շնչին ընկած տարեկան միջին եկամուտը, ըստ ՄԱԿ-ի տվյալների, 1958 թ. կազմում էր՝

Միացյալ Նահանգներում՝	1453	դոլլար
Անգլիայում	773	»
Հնդկաստանում	57	»
Ֆիլիպիններում	44	»
Ինդոնեզիայում	25	»
Աֆրիկայի երկրներում	8—16	» և այլն:

Ամերիկյան «Քեմիկլ Ուիկ» ամսագրի տվյալներով, գաղութների և մետրոպոլիտանների միջև եղած այսպիսի տարբերության հետագա զարգացումը կանխելու և ճեղքվածքը փակելու համար անհրաժեշտ է հետամանաց երկրներին հատկացնել տարեկան քառասուն միլիարդ դոլլար: Առայժմ նրանք ստանում են տարեկան միայն 15 միլիարդ դոլլար:

Հիշյալ բոլոր տվյալները ասում են այն մասին, որ այդ երկրը-

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 558:

ներում ժողովրդի կենսամակարդակը չափազանց ցածր է: Բանվորի աշխատավարձի տարբերությունը, համեմատած կապիտալիստական երկրների բանվորի հետ, ցածր է տասնյակ անգամներ, իսկ Աֆրիկայի բանվորինը՝ 50, նույնիսկ հարյուր անգամ: Արևելքի երկրների բարեբեր հողը չի բավարարում գյուղացու մինիմալ պահանջները, տրովհետև ֆեոդալական հարաբերությունները ու այստեղից բխող պարտականությունները մի կողմից, իմպերիալիստների քաղաքականության հետևանքով հողի մշակման նախապատմական կուլտուրան մյուսից, հնարավորություն չեն տալիս նրան ստեղծելու իր և ընտանիքի համար տանելի վիճակ:

Ցույց տալու համար այդ ժողովուրդների ժայռ աստիճանի աղքատությունը, բերենք մի փաստ միայն: Բելգիայի «Խնամակալության» տակ գտնվող աֆրիկական Ռուանդա-Ուտունդի տերիտորիայի 794 ուսումնասիրված ընտանիքներում եղել են ընդամենը՝ 28 մահճակալ, 29 սեղան, 9 կոստյում, 91 շալվար, 190 զույգ կոշիկ<sup>1</sup>:

Այս անելանելի դրություն և քաղաքական իրավազուրկ պայմանների դեմ գաղութային ժողովուրդների պայքարը դառնում էր հետզհետե ավելի լայն ու վազմակերպված:

Կապիտալիզմի զարգացումը Արևելքի երկրներում ուժեղացրեց շահագործումը, միաժամանակ ստեղծեց և կոփեց նոր, երիտասարդ դասակարգերին՝ բուրժուազիային ու պրոլետարիատին, որոնք կանգնեցին ժավալվող ազգային-ազատագրական շարժման գլուխ: Որոշ երկրներում սկսվեց ազգերի ձևավորման պրոցեսը, որի հետևանքով շարժման նպատակը դարձավ ավելի որոշակի, անկախութան համար պայքարի անհրաժեշտությունը՝ ավելի հասկանալի:

Ձևով ազգային այս շարժումները միավորվելով կազմեցին հակաիմպերիալիստական պայքարի մի հզոր ճակատ:

Առաջին համաշխարհային պատերազմը ստիպեց իմպերիալիստական երկրներին գաղութներից արտահանել մեծ քանակությամբ զանազան ապրանքներ և գյուղատնտեսական մթերքներ: Պատերազմը ստիպեց նաև գաղութային ժողովուրդների ամբողջ զնդեր Եվրոպայի իմպերիալիստների պայքարի մեջ քաշել: Իմպերիալիստական պատերազմն Արևելքն էլ արթնացրեց, նրա ժողովուրդներին միջազգային քաղաքականության մեջ քաշեց<sup>2</sup>:

Գաղութային ժողովուրդների քաղաքական ակտիվությունը միանգամայն համապատասխանում էր ժամանակի պահանջներին:

<sup>1</sup> «Коммунист», № 4, 1960, стр. 91.

<sup>2</sup> Վ. Ի. Լեճիճ, Երկր, հատ. 30, էջ 186:



Այն դարձավ միջազգային ուղղութիւնն շարժման կարևոր և անբաժանելի մասը:

1908 թ. գրված՝ «Դյուրավառ նյութը համաշխարհային քաղաքականութեան մեջ» հանրահայտ հոդվածում Վ. Ի. Լենինը, անալիզի ենթարկելով ազգային-աղատադրական շարժումները Ասիայի մի շարք երկրներում, ցույց է տալիս, թե ինչպես գաղութային երկրների հանդեպ իմպերիալիստների վարած քաղաքականութեան հետևանքով լցվել է Արևելքի ժողովուրդների համբերութեան բաժակը՝ Չինաստանում ու Հնդկաստանում, Իրանում և ասիական այլ երկրներում: Այս իսկ պատճառով մասսայական քաղաքական պայքարը, օրինակ, Հնդկաստանում հասցրել է այն բանին, որ այնտեղ «անդր-ոռուսական կարգերի» երգը երգված կարելի է համարել: Գաղութակալները կամովին, իհարկե, չեն հրաժարվի և կդիմեն զենքի, խեղդելու համար ասիական դեմոկրատիան: Սակայն վերջինիս կռիվը իմպերիալիստական ուժերի դեմ ավելի ու ավելի կկոփի պրոլետարիատին:

Ընկերական գիտակից բանվորն արդեն ասիական ընկերներ ունի, և այդ ընկերների թիվը կաճի ոչ թե օրերով, այլ ժամերով<sup>1</sup>:

Իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի զարգացման տրամաբանությունը այնպիսին է, որ հետզհետե ավելի կազմակերպված է դառնում թե գաղութային ժողովուրդների, թե կապիտալիստական երկրների բանվորական մասսաների շարժումը:

Ընկերական միջազգային սոցիալիզմի այդ առաջընթաց քայլը,— շարունակում է Լենինը,— Ասիայում ուղղութիւնն-դեմոկրատական պայքարի սրման հետ միաժամանակ, ուսական ուղղութիւնն ղնում է առանձնահատուկ և հատկապես դժվարին պայմանների մեջ: Ռուսական ուղղութիւնն միջազգային մեծ դաշնակից ունի և՛ Եվրոպայում, և՛ Ասիայում, սակայն դրա հետ միասին և ճեճք դրա ճեճեքով նա ունի ոչ միայն ազգային, ոչ միայն ուսաստանյան, այլ նաև միջազգային թշնամի<sup>2</sup>:

Իմպերիալիզմի դեմ բարձրացած պրոլետարիատի և նրա դաշնակիցները հանդիսացող գաղութային ժողովուրդների պայքարի միջազգային բնույթը, նշում է Լենինը, ունի նաև ազգային նշանակություն ամեն մի երկրի բուրժուազիայի համար, քանի որ նա մահացու կերպով վախենում է դեմոկրատիզմի լայնացումից դեռ իր սեփական տանը: Իսկ կոմունիստները և գիտակից պրոլետարիատը չպետք է նեղացնեն պայքարի ճակատը: Ազգային շահերը նրանք

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 15, էջ 219:

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 15, էջ 223:

պետք է տանեն հետին պլանի վրա, առաջնահերթ դարձնելով միջազգային պրոլետարիատի ինտերնացիոնալ շահերը ու դասակարգային պահանջները: Ելնելով սրանից, Լենինը կոչ է անում լարել բոլոր ջանքերը ռուսացի մերձենանք և միաձուլվենք մոնղոլների, պարսիկների, հնդիկների, եգիպտացիների հետ, մենք մեր պարտքը և մեր շահն ենք համարում անել այդ, որովհետև այլապես սոցիալիզմը Եվրոպայում ա ն կ ա յ ու ն կ լինի: Մենք կաշխատենք դրանով մեզնից ավելի հետամնաց ու ճնշված ժողովուրդներին ցույց տալ «անշահախնդիր կուտուրական օգնություն», յեհական սոցիալ-դեմոկրատների հիանալի արտահայտությունը, այսինքն նրանց օգնել՝ անցնելու մեքենաներ գործադրելուն, աշխատանքը հեշտացնելուն, անցնելու դեմոկրատիային, սոցիալիզմին»<sup>1</sup>:

Առաջնորդի այս ծրագրային պահանջը, ունեն և դեռ կունենա կարևոր նշանակություն իմպերիալիզմի վերջնական ջախջախման համար, կոմունիստական և բանվորական պարտիսանների գործունեության համար: Ռևոլյուցիայի ստրատեգիան, մշակելով ռևոլյուցիայի հիմնական ուժերի, նրա ավանգարդի՝ պրոլետարիատի և դաշնակիցների՝ գյուղացիության և դադուսային ու կախյալ երկրների ժողովուրդների ճիշտ համագործակցելու պլանը, ցույց է տալիս, որ սոցիալիզմի հաղթանակը հնարավոր է այդ ուժերի ճիշտ դասավորման և ներդաշնակորեն գործելու դեպքում:

«...Սոցիալիստական ռևոլյուցիան,— ասում էր նա,— միայն և գլխավորապես ռևոլյուցիոն պրոլետարների պայքարը չի լինի ամեն մի երկրում իր բուրժուազիայի դեմ,— ոչ, նա իմպերիալիզմի կողմից ճնշված բոլոր գաղութների և երկրների, բոլոր կախյալ երկրների պայքարը կլինի միջազգային իմպերիալիզմի դեմ»<sup>2</sup>:



Վ. Ի. Լենինը ամենամեծ լրջությամբ ու էներգիայով զբաղվել է Արևելքի պրոբլեմներով նաև Հոկտեմբերյան Սոցիալիստական Ռևոլյուցիայի հաղթանակից հետո: Չնայած իր դերժանրաբեռնվածությանը և առողջական վատ վիճակին՝ Կոմունիստական պարտիայի աշխատանքները ղեկավարելու և երիտասարդ Սովետական Ռեսպուբլիկայի պետական գործերը վարելու հետ միասին, նա մեծ սիրով ու ուշադրությամբ հետևում էր դեպքերի զարգացման ընթացքին Արևելքում: Անհրաժեշտության դեպքում կամ անձամբ, եթե հնարավոր էր, կամ գրավոր ձևով միջամտում էր, խորհուրդներ և ցուցումներ էր տալիս: Նա ելույթներ էր ունենում Կոմիտեներ-

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 77:

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 185:

նի կոնգրեսներում, արևելյան երկրների կոմունիստների կոնֆերենցիաներում, ղանադան հավաքներում: Վերջապես, անձամբ ծանոթ էր Արևելքի շատ գործիչների հետ և միշտ ժամանակ էր գտնում նրանց լսելու, պահանջելով մանրամասն տեղեկություններ իրերի վիճակի մասին Արևելքում:

Նրան հատկապես հետաքրքրում էր, թե ինչ արձագանք է դրսևում Հոկտեմբերյան Ռևոլյուցիայի հաղթանակը Արևելքի երկրներում:

Ռևոլյուցիայի հաղթանակի անմիջական նախօրյակին, 1917 թ. մայիսին, Լենինը համոզված դրում էր. «Ոչ մի կասկածի ենթակա չէ այն, որ պրոլետարիատի հաղթանակը Ռուսաստանում արտակարգ բարենպաստ պայմաններ կտար ռևոլյուցիայի զարգացման համար և՛ Ասիայում և՛ Եվրոպայում»:

Վ. Ի. Լենինը տարբերում էր Հոկտեմբերյան Ռևոլյուցիայի միջազգային նշանակության երկու կողմերը՝ լայն իմաստով, այսինքն ռևոլյուցիայի ազդեցությունը պատմության զարգացման ընթացքի, միջազգային ռևոլյուցիոն շարժումների վրա ընդհանրապես, և նեղ իմաստով՝ երբ անհրաժեշտորեն մեր ռևոլյուցիայի որոշ գծեր, որոշ հիմնական օրինաչափություններ կրկնվեն մյուս բոլոր երկրներում:

Չափազանց կարևոր համարելով ռևոլյուցիոն պայքարի փորձի անմիջական նշանակությունը, Լենինը ասում էր, որ Կարմիր Բանակի հաղթանակը քաղաքացիական պատերազմների ժամանակաշրջանում Արևելքի ժողովուրդներին ցույց կտա, որ ինչքան էլ թույլ են այդ ժողովուրդները, ինչքան էլ անհաղթելի է թվում Եվրոպական ճնշողների հզորությունը, որոնք պայքարում կիրառում են տեսնելիս և ռազմական արվեստի բոլոր հրաշքները, այնուամենայնիվ ճնշված ժողովուրդների կողմից մղվող ռևոլյուցիոն պատերազմը, եթե այդ պատերազմն իսկապես կկարողանա արթնացնել միլիոնավոր աշխատավորներին և շահագործվողներին, իր մեջ այնպիսի հնարավորություններ, այնպիսի հրաշքներ է թաքցնում, որ Արևելքի ժողովուրդների ազատագրությունը գործնականորեն այժմ լիովին իրագործելի է ոչ միայն միջազգային ռևոլյուցիայի հեռանկարների տեսակետից, այլև Ասիայում, Սիբիրում կատարած անմիջական ռազմական փորձի տեսանկետից, փորձ, որը կատարված է իմպերիալիզմի բոլոր հզոր երկրների ռազմական արշավանքին ենթարկված Սովետական ռեսպուբլիկայի կողմից»<sup>1</sup>:

Հոկտեմբերյան Ռևոլյուցիայի մեծ ազդեցությունը, նրա փորձի

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 24, էջ 492—493:

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 177—178:

ընդօրինակումը դարձավ օրինաչափ երևույթ ազգային-ազատագրական, ռևոլյուցիոն, ժողովրդական բոլոր շարժումների համար:

Սոցիալիստական կարգերի հաղթանակը ժողովրդական-գեմեկրատիայի երկրներում, և մասնավորապես, Չինաստանում, Վյետնամում, Կորեական ժողովրդա-գեմեկրատական ռեսպուբլիկայում ցույց տվեցին լենինյան դրույթի ճշմարտությունը:

Սակայն ռևոլյուցիայի փորձը և ազգային հարցի լուծումը ՄՍՌՄ-ում ընդօրինակեցին և մի շարք ուրիշ արևելյան երկրներ՝ իրենց ազգային-ազատագրական պայքարի ընթացքում: Ազգային անկախության և ժողովուրդների ու պետությունների իրավահավասարության պահանջը դարձավ միջազգային քաղաքականության կարևոր գործոններից մեկը:

Նշելով Հոկտեմբերյան Ռևոլյուցիայի ազգեցությունը Արևելքի ժողովուրդների ազատագրական պայքարի վրա, Ինդոնեզիայի պրեզիդենտ Սուկառնոն գրում է. «Այդ պայքարը դարձավ ավելի կազմակերպված, նրա նպատակը դարձավ ավելի պարզ, անզիջող, այսինքն՝ անկախություն և այն էլ անմիջապես»<sup>1</sup>:

Վ. Ի. Լենինը, խոսելով մեր ռևոլյուցիայի միջազգային նշանակության մասին, գտնում էր նաև, որ Սովետների ռեսպուբլիկան պետք է ունենա չափազանց ակտիվ դեր Արևելքի երկրների պայքարում իրենց ազատության և իմպերիալիզմի դեմ մղած պայքարում:

«Այժմ մեր Սովետական ռեսպուբլիկան,— ասում էր նա,— պետք է Արևելքի բոլոր արթնացող ժողովուրդներին իր շուրջը համախմբի, որպեսզի նրանց հետ միասին պայքար մղի միջազգային իմպերիալիզմի դեմ»<sup>2</sup>:

Արդեն 1919—1922 թթ. բարձրացավ հակաիմպերիալիստական շարժումների հսկա ալիք: Ռևոլյուցիոն պայքարը ընդգրկեց Չինաստանը, Կորեան, Հնդկաստանը, արաբական մի շարք երկրներ, Յապոնիան: Պայքարի ելան կապիտալիստական երկրների բանվորներն ու գյուղացիները: Այս պայմաններում կապիտալիստական, նույն թվում նաև ասիական մի շարք երկրներում ստեղծվեցին կոմունիստական պարտիաներ:

Մյուս կողմից, շնայած Սովետական ռեսպուբլիկայի համար անասելի դժվարին պայմաններին, շնորհիվ Վ. Ի. Լենինի ջանքերի, այդ տարիներին փոխադարձ օգտավետ պայմանագրեր կնքվեցին հարևան Աֆղանստանի, Իրանի և Թուրքիայի հետ: Գործնականում

<sup>1</sup> «Правда», 11 октября, 1956.

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, Ծբկեր, հատ. 30, էջ 188:

ցույց տրվեց, որ այսուհետև սկսվել է պետությունների միջև նոր լիիրավ և հավասար փոխհարաբերությունների դարաշրջան: Առաջին քայլերին հետևեցին ուրիշները: 1924 թ. կնքվեց պայմանագիր Չինաստանի հետ:

Օր-օրի ուժեղանում էր Սովետների ռեսպուբլիկայի ազդեցությունը Արևելքի վրա: Մասսայական կազմակերպություններ, բանվորական կոլեկտիվներ, գյուղացիական համայնքներ դիմում էին լենինին և Սովետական կառավարությանը, խնդրելով միջամտել, խորհուրդ տալ, թե ինչպես կարելի է և պետք է ուղղել իրերի վիճակը իրենց մոտ:

1920 թ. մայիսին Սովետական կառավարությանը ուղղած իրենց դիմումի մեջ չինական բանվորները գրում էին «... Մենք հույսներս դնում ենք ձեզ վրա, եղբայրներ, մեզնից առաջ ոտքի ելած: Մենք հույս տւնենք, որ դուք ցույց կտաք մեզ, այնպես ինչպես հնդկական, յապոնական, կորեական, աննամական բանվորներին՝ չափազանց մեծ օգնություն: Մենք գիտակցում ենք, որ մենք բանվորներս, որ չափազանց խեղճ ենք գիտելիքներով և կապիտալիստական դասակարգերի ու կառավարության գարշահոտության հրապույրի պայմաններում գտնվելով, ավելի ևս հույսներս դնում ենք ձեր ղեկավարության վրա...»<sup>1</sup>:

Սովետական երկրի օգնությունը, ըստ լենինի պետք է տւնենար երկու ուղղություն: Նախ՝ ամեն կերպ պաշտպանել Արևելքի ժողովուրդների շահերը միջազգային բոլոր կազմակերպություններում, կոնգրեսներում, կոնֆերանսներում և այլն: Մյուս կողմից նրանց օգնություն ցույց տալ տնտեսական, քաղաքական, գիտական, կուլտուրական և այլ ասպարեզներում:

Այս տեսակետից չափազանց հետաքրքիր են լենինի նշումները Գ. Վ. Չիչերինի 1922 թ. մարտին գրած նամակում, որի մեջ վերջինս մի շարք առաջարկություններ է անում Սովետական Ռուսաստանի արտաքին քաղաքականության հարցերի վերաբերյալ:

Խոսելով եվրոպական երկրների Արևելյան ժողովուրդների նկատմամբ վարած քաղաքականության մասին, Չիչերինը քննադատում է այդ քաղաքականությունը և գրում.

«Մեր միջազգային սխեմայի նորությունը պետք է կայանա նրանում, որ նեգրական, ինչպես և մյուս գաղութային ժողովուրդները, մասնակցեն հավասարապես եվրոպական ժողովուրդների հետ միասին կոնֆերանս-»

1) ճիշտ է:

<sup>1</sup> «Коммунист», № 3, 1960, стр. 11.

ներում ու կոմիսիաներում և իրավունք ունենան չթույլատրել միջա-  
մըտութիւն իրենց ներքին կյանքում<sup>1</sup>:

Չիչերինի նամակում շափազանց հատկանշական է սպառազինութիւնների ընդհանուր կրճատման և միջազգային տնտեսութեան վերականգնման ծրագիրը, որը նա համարում է ընդհանուր և կամավոր գործ: Լենինը միանգամայն համամիտ է նրա հետ այս հարցերում: Հետաքրքրական է Լենինի ընդգծած հետևյալ միտքը. «Թույլներին պետք է ցույց տրվի օգնութիւն»<sup>2</sup>:

Վ. Ի. Լենինի ընդգծումներն ու նշումները ցույց են տալիս նրա վերաբերմունքը այս սկզբունքային շափազանց կարևոր հարցերում, և ինչպես նա գրում է իր պատասխան նամակում, որպես ծրագիր Չիչերինի առաջարկները «շարադրված են շատ լավ», իսկ կետերը (որոնք լուսանցքներում նշել էր ինքը Լենինը) «հիանալի են»<sup>3</sup>:

Այնուհետև Լենինի ղեկավարութեամբ և նրանից հետո Կոմունիստական պարտիայի անշեղ քաղաքականութեան շնորհիվ, Սովետական Միութիւնը դարձավ Արևելքի ժողովուրդների պաշտպանը և բարեկամը բոլոր միջազգային գործերում:

1922 թ. հետո, երբ Լենինի նախաձեռնութեամբ ստեղծվեց Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միութիւնը, որպես հավասար և լիիրավ պետութիւնների կամավոր միութիւն, այդ ակտը հանդիսացավ ազգային քաղաքականութեան լենինյան ծրագրի իրականացումը կյանքում և ունեցավ խոշոր միջազգային նշանակութիւն: Սովետական երկիրը դարձավ ավետյաց երկիր, բաղձալի մի վայր, որի ձգողական ուժը հետզհետե ավելանում էր, ներքին հաջողութիւններին զուգընթաց: Նրա հաջողութիւնների վրա զարմանում էին բոլորը՝ լինելով դա առաջավոր կապիտալիստական, թե՛ արևելյան երկրների ներկայացուցիչ, պետական գործիչ, գիտնական կամ աշխատավոր: Հատկապես մեծ էր Սովետական Միութեան հմայքը արևելյան ժողովուրդների համար:

Հնդկական մեծ գրող Ռաբինդրանատ Տագորը, որը 1930 թ. այցելեց մեր երկիրը, իր նամակներում գրում էր, որ ընդամենը մի քանի տարի առաջ համարյա նույն մակարդակի վրա էին գտնվում Ռուսաստանը և Հնդկաստանը, սակայն այս կարճ ժամանակվա ընթացքում նրանց մոտ կայծակնային արագութեամբ փոփոխու-

<sup>1</sup> Ленинский сборник, XXXVI, стр. 451.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 453:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 454—455:

թյուններ են կաարվում, իսկ մենք խրվել ենք անզգայության ճահճի մեջ»<sup>1</sup>։ Որպես հետևություն իր մտքերի, նա խոսում է սովետական փորձի փոխանցման անհրաժեշտության մասին։

«Մեր օրերում,— շարունակում է Տազորը.— ուսական ուսուցիչի լողունները, դարձան ամբողջ աշխարհի լողունները։ Այժմ երկրի վրա կա միայն մի ժողովուրդ, որը մտածում է ոչ թե միայն իր ազգի, այլ բոլոր մարդկանց շահերի մասին»<sup>2</sup>։

Նա այնուհետև կոչ է անում իր հայրենակիցներին սովորելու համար գնալ Սովետական Միություն։ Նման մտքեր մենք կարող ենք գտնել Արևելքի այնպիսի ականավոր գործիչների մոտ, ինչպես Ջ. Ներուն, Սուկառնոն, Կասեմը և շատ ու շատ ուրիշներ։ Իսկ Կոմունիստական պարտիաները այդ երկրներում տանում են լայն մասսայական աշխատանք՝ բացատրելու համար այն հսկայական նշանակությունը, որ ունի սովետական օրինակը իրենց երկրներում նոր կյանք ստեղծելու գործում։

Սովետական իրականությունը, իր հերթին տալիս է նորանոր փաստեր լենինյան ազգային քաղաքականության կիրառման ասպարեզում։ ՍՄԿՊ XX I արտակարգ համագումարը արձանագրեց, որ ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը 1958 թ. աճել է 1913 թ. համեմատությամբ՝ Ուզբեկստանում՝ 17 անգամ, Ղաղախստանում՝ 44, Ադրբեջանում՝ 14, Կիրգիզիայում՝ 50, Տաջիկստանում՝ 31, Թուրքմենիայում՝ 20 անգամ<sup>3</sup> և այլն։

Ղաղախստանում 1958 թ. արտադրված էլեկտրաէներգիայի՝ մեկ մարդուն հասնող չափը հավասար էր 920 կիլովատ ժամի։ Այլ նույն տարում Ցապոնիայում արտադրվել է մեկ մարդուն ընկնող նորմայի չափով 877, Թուրքիայում 1956 թ. 60, Իրանում՝ 1957 թ. 57 կ. վ. ժամ և այլն։

Ղաղախստանում տասը հազար մարդուն ընկնում է 13 բժիշկ, իսկ Թուրքիայում ընդամենը 3։

Այս փոփոխությունները և տարբերությունները քաջ հայտնի են համայն աշխարհին։ Նրանք ուրախացնում են մեր բարեկամներին և անհանգստություն են պատճառում կապիտալիստական աշխարհի տիրող շրջաններին։

Մեր երկրում ԱՄՆ-ի նախկին դեսպան Ա. Հարրիմանը 1959 թ. Սովետական Միությունում կատարած իր շրջագայությունից հետո

<sup>1</sup> P. Тагор, Письма о России, М., 1956, стр. 11.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 18։

<sup>3</sup> Внеочередной XXI съезд КПСС. Стенографический отчет, т. I, 1959, стр. 389.

հրատարակեց «Խաղաղություն Ռուսաստանի հետ» խորագրով գիրքը:

Հեղինակի կարծիքով «առավել տաքնապալի ասպեկտը» միջինասիական ռեսպուբլիկաների այդպիսի զարգացման «աղքատ գյուղական համայնքից, մի տերնդի կյանքի կարճ ժամանակամիջոցի ընթացքում՝ հանդիսանում է այն ազդեցությունը, որ նա (զարգացումը— Ն. Ի.) կարող է ունենալ թույլ զարգացած երկրների ժողովուրդների վրա»:

«Ամեն տարի,— գրում է Հարրիմանը,— Տաշքենդի միջազգային հսկայական օդանավակայանի վրայով գալիս են հազարավոր այցելուներ Հարավ-Արևելյան Ասիայի երկրներից: Նրանց տանում են հսկայական օրինակելի կուլեկտիվ ֆերմաներ, ցուլց տալիս նրանց մալարիայից ազատված գյուղեր, խոշոր ֆաբրիկաներ, որոնք արտադրում են ամեն ինչ, սկսած կոշիկից մինչև խոշոր գյուղատրնտեսական մեքենաներ, շխտսելով արդեն դպրոցների, համալսարանների, հիվանդանոցների և օպերային թատրոնների մասին: Այդ նվաճումները հանդիսանում են համոզիչ զենք Հարավ-Արևելյան Ասիայի երկրների կոմպարտիաների համար, որոնք այս բոլորը մատնացուց են անում նրանց, ովքեր այրվում են անհամբերությունից զարգացնելու իրենց սեփական երկրները»:

Սովետական փորձի միջազգային նշանակության մասին ավելի լավ չես ասի:

Վ. Ի. Լենինի կանխատեսությունը Սովետների միջազգային նշանակության մասին, նրանց օրինակի գործուն ուժի վերաբերյալ իրականանում է լավագույն կերպով:

Այն համապատասխանում է պարտիայի XIV համագումարի բանաձևի հայտնի դրույթին, որտեղ նշված է, որ տնտեսական շինարարության լայն թափը, սոցիալիզմի հաջողությունները ցուլց են տալիս, որ Սովետական Միությունը չի տնտեսական աճման շնորհիվ, ընդունակ է ծառայել որպես հզոր միջոց ռեուլյուցիոնացնելու բոլոր երկրների բանվորներին և գաղութների ու կիսագաղութների ճնշված ժողովուրդներին»:



Սոցիալիզմի հաղթանակը մեր երկրում, ազգային-ազատագրական շարժումների վերելքը և իմպերիալիզմի հակասությունների հետագա խորացումն ու զարգացումը սրեցին փոխհարաբե-

<sup>1</sup> «Правда», 4 января 1960.

<sup>2</sup> ՄՄԿԳ համագումարների, կոնֆերենցիաների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում, Հայպեհրատ, Երևան, 1955, էջ 246:



րությունները գաղութների և կապիտալիստական երկրների միջև:  
1925—1927 թթ. Չինաստանում ծավալված ռևոլյուցիոն խո-  
շոր շարժումը նոր խթան հանդիսացավ ազգային-ազատագրական  
պայքարի համար: Չինաստանի օրինակին հետևեցին Ինդոնեզիա-  
յի, Հնդկաչինի, Հնդկաստանի, արաբական մի շարք երկրների ժո-  
ղովուրդները:

Կրկին անգամ հաստատվեց Վ. Ի. Լենինի այն դրույթը, որ  
իմպերիալիզմի ժամանակաշրջանը անհրաժեշտորեն պետք է  
առաջ բերի ու սնի ազգային ճնշման ու բուրժուազիայի դեմ պրո-  
լետարիատի կողմից մղվող պայքարի քաղաքականութուն, ուստի  
և պետք է առաջ բերի «նախ՝ ազգային ռևոլյուցիոն ապստամբու-  
թյունների ու պատերազմների, երկրորդ՝ պրոլետարիատի կողմից  
ընդդեմ բուրժուազիայի մղվող պատերազմների ու ապստամբու-  
թյունների, երրորդ՝ ռևոլյուցիոն երկու տեսակի պատերազմների  
միավորման և այլն և՛ հնարավորության և՛ անխուսափելիու-  
թյան»<sup>1</sup>:

Ֆաշիզմի ջախջախումը և Սովետական Միության ու դեմո-  
կրատական ուժերի հաղթանակը երկրորդ համաշխարհային պա-  
տերազմում հիշյալ հնարավորությունները դարձրին իրականու-  
թյուն:

Ժողովրդա-դեմոկրատական կարգերի հաղթանակը Արևմուտքի  
և Արևելքի մի շարք երկրներում և համաշխարհային սոցիալիս-  
տական լագերի ստեղծումը խորացրեց գաղութային սիստեմի  
ճգնաժամը, որ սկսվել էր Հոկտեմբերյան Ռևոլյուցիայի հաղթա-  
նակից հետո: Այն ժամանակ ճգնաժամի էությունը, ինչպես նշել էր  
Լենինը, կայանում էր Ազգերի լիգայի մանդատային սիստեմի,  
գաղութային երկրներում ռեֆորմներ անցկացնելու փորձերի և այդ  
երկրներում (Եգիպտոս, Իրաք, Սիրիա, Լիբանան և այլն) «ան-  
կախ» կառավարություններ ստեղծելու մեջ:

Սակայն այդ միջոցառումները ուժեղացրին միայն ժողովրդ-  
դական շարժումները գաղութարարների դեմ: Իմպերիալիստների  
համատեղ ջանքերը գաղութային սիստեմի պահպանման համար  
միավորեցին գաղութային ժողովուրդներին ընդհանուր թշնամու-  
ղեմ: Ինչպես նշում է Լենինը, մանդատային սիստեմը փաստորեն  
հանգեցրեց որոշ երկրների գրավմանը Ազգերի լիգայի կողմից,  
որի հետևանքով ստեղծվեց հետևյալ պատկերը: «Միասնական»  
ճնշողը: Պայքարի կենտրոնացում: Ահտապների բաղմաղանու-  
թյունը»<sup>2</sup>:

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 96:

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 109:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի երկրորդ փուլում, արդեն անհնար եղավ կասեցնել գաղութային սիստեմի փլուզումը: Կարճ ժամանակամիջոցում, մոտ երեք տասնյակ երկրներ ազատագրվեցին, դարավոր, ծանր ու արյունոտ գաղութային լծից:

Ազատագրման այդ պրոցեսը ընթացավ շափազանց անհավասարաչափ և հաստատեց լենինյան այն միտքը, «որ հետագա ուղղությունները բնակչությամբ անչափ ավելի հարուստ և սոցիալական պայմանների զանազանակերպությամբ անչափ ավելի աչքի ընկնող Արևելքի երկրներում... մատուցելու են, անկասկած, ավելի շատ յուրատեսակություն, քան ուսական ուղղություն»:

Ներքին պայմանների (բանվոր դասակարգի և նրա պարտիայի առկայությունը, դեմոկրատական ուժերի կազմակերպվածությունը և նրանց հարաբերակցությունը իմպերիալիստական, ֆեոդալական և ռեակցիոն տարրերի հետ, և այլն) յուրահատկությունների, արտաքին բարենպաստ պայմանների հետևանքը եղավ ազատագրական պայքարի և նրա արդյունքների անհավասարաչափությունը: Այն արտահայտվեց մի շարք երկրների՝ Չինաստանի, Վյետնամի և Հյուսիսային Կորեայի,— որտեղ ստեղծվեցին ժողովրդա-դեմոկրատական կարգեր և սկսվեց սոցիալիզմի շինարարությունը,— թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական յրիվ անկախության հաստատմամբ:

Մյուս կողմից բավական մեծ թվով երկրներ, ինչպես Հնդկաստանը, Ինդոնեզիան, Բիրման, Կոմբոջան, Ցեյլոնը, արաբական Արևելքի և Աֆրիկայի մի շարք երկրներ նվաճեցին իրենց քաղաքական անկախությունը, սակայն շարունակեցին ազատվել մոնոպոլիստական կապիտալի ճիրաններից և մնացին կապիտալիստական սիստեմի մեջ, իմպերիալիստական երկրներից որոշ տնտեսական կախման մեջ:

Վերջապես երկրների մի երրորդ խումբ (մեծ մասամբ Աֆրիկայի մայր ցամաքում) դեռ շարունակում է պայքարը իր ազատագրման համար:

Բուքոուա-դեմոկրատական ուղղության վերաճումը սոցիալիստական ուղղության և սոցիալիզմի հաղթանակը Ասիայի որոշ երկրներում հնարավոր դարձավ, որովհետև առկա էին այնպիսի հուժկու գործոններ, ինչպիսին են համաշխարհային սոցիալիստական սիստեմը ՄՍՄ-ի գլխավորությամբ և ազգային-ազատագրական վիթխարի շարժումը Արևելքում: Եվ ի՞նչ իմպերիալիս-

<sup>1</sup> Վ. Ի. Լեճիճ, Երկեր, հատ. 33, էջ 570—571:

տական 14 պետություններ քաղաքացիական կռիվների ժամանակաշրջանում ինտերվենցիա սկսեցին առաջին սոցիալիստական պետության՝ Սովետական Ռուսաստանի դեմ, ներկա պայմաններում նրանք այլևս ի վիճակի չեղան նորից փորձելու խեղդել ժողովրդական ռեյուցիան և կասեցնել սոցիալիզմի շինարարությունը ժողովրդական-դեմոկրատիայի երկրներում: Սակայն անհրաժեշտ է նշել, որ ռեյուցիայի հաղթանակը Արևելքի երկրներում և մասնավորապես Չինաստանում, իրենց հերթին ունեցան հրակայական ազդեցություն ամբողջ Արևելքի ժողովրդական շարժումների հաղթանակի գործում:

Մարքսիզմի կլասիկները շափազանց մեծ նշանակություն են տվել Չինաստանի դերին Արևելքի աղատագրման գործում: Ավելի քան մեկ դար առաջ Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը կանխատեսել են հին Չինաստանի կործանումը և նորի ստեղծումը, համարելով այն խթան ամբողջ Ասիայի աղատագրման համար: «Կանցնեն տարիներ,— դրել է Էնգելսը 1857 թ.,— և մենք վկա կլինենք աշխարհի ամենահին կայսրության մահվան օրհասին և միաժամանակ համայն Ասիայի նոր դարաշրջանի արշալույսին»<sup>1</sup>:

Չինական մեծ ժողովրդին և նրա պայքարին Վ. Ի. Լենինը նվիրել է մի շարք աշխատություններ, ինչպես օրինակ՝ «Չինական պատերազմը», «Դեմոկրատիա նյութը միջազգային քաղաքականության մեջ», «Դեմոկրատիան և նարոդնիկությունը Չինաստանում», «Նորոգված Չինաստան», «Չինական ռեսպուբլիկայի խոշոր հաջողությունը», «Լավ է քիչ, բայց լավ» և ուրիշ երկեր, մի շարք զեկուցումներ, ելույթներ և այլն: Լենինը հետևողական կերպով զարգացրել է մարքսիզմի հիմնադիրների այն միտքը, որ չինական ժողովրդի պայքարը բախտորոշ նշանակություն կունենա համաշխարհային ռեյուցիոն շարժման համար:

1912 թ. հունվարին ՌՍԴԲՊ Պրագայի կոնֆերանսը ընդունեց Վ. Ի. Լենինի դրած բանաձևը Չինաստանի մասին, որի մեջ արձանագրվում է չին ժողովրդի ռեյուցիոն պայքարի համաշխարհային նշանակությունը, պայքարի, որը ազատագրություն է բերում Ասիային ու խարխուլում եվրոպական բուրժուազիայի տիրապետությունը...»<sup>2</sup>:

Այժմ, երբ Չինական ժողովրդական Ռեսպուբլիկան ի մի է բերել իր գոյության տաս տարվա արդյունքները, Լենինի այդ

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 12, изд. II, М. Госполитиздат 1958, стр. 224.

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 17, էջ 599:

միտքը մարմնավորվել է կոնկրետ հաջողությունների մեջ, ցույց տալով Արևելքի մյուս երկրներին զարգացման ճիշտ ճանապարհը:

Այսպես, 1959 թ., 1949 թ. կիսագաղութային երկրի մակարդակի համեմատությամբ արդյունաբերության ընդհանուր արտադրանքը աճել է ավելի քան 9 անգամ, պողպատի արտադրությունը՝ 13 անգամ, ածուխինը՝ 9 անգամ, էլեկտրաէներգիայինը՝ 7 անգամ և այլն: Ավարտվել է գյուղատնտեսության կոոպերացումը ամբողջ երկրում: Կոմունիստական պարտիայի և կառավարության ղեկավարությամբ չին ժողովուրդը արդեն պայքարում է արդյունաբերական իր մակարդակով հասնելու Անգլիային:

Նույնպիսի հաջողությամբ սոցիալիզմ են կառուցում Կորեական Ժողովրդա-Գեմոկրատական, Վյետնամի և Մոնղոլական Ժողովրդական ռեսպուբլիկաները: Վերջինիս տնտեսությունը, որի հիմքը կազմում էր անասնաբուծությունը, ապրում է սոցիալիստական բարեփոխումների բուռն շրջան: Հաջողությամբ վերջացել է արատական տնտեսության կոոպերացումը, հիմնադրվել և զարգանում է արդյունաբերությունը: Այս բոլորի շնորհիվ Մոնղոլական Ժողովրդական Ռեսպուբլիկան անասնապահական երկրից դարձավ ագրարային-ինդուստրիալ երկիր:

Սոցիալիզմի շինարարության մեջ «մոնղոլական ժողովրդի փառավոր հաջողությունները, — նշում է ընկ. Ցեդենբալը, — հանդիսանում են մեծ Վ. Ի. Լենինի՝ առաջավոր սոցիալիստական պետությունների օգնությամբ նախկինում հետամնաց երկրների ոչ կապիտալիստական ուղիով զարգանալու մասին ուսմունքի ճշմարտության և կենսունակության ակնառու հաստատումը»<sup>1</sup>:

Ավելի բարդ և դժվարին պայմաններում են զարգանում ազատագրված, բայց կապիտալիստական սիստեմում մնացած Արևելքի երկրները:

Հնդկաստանում, Ինդոնեզիայում, արաբական Արևելքում և այլ ազատագրված երկրներում տնտեսությունը, ինչպես նշվեց, գրտնըվում է դեռևս մոնոպոլիստական կապիտալի ազդեցության ներքո: Որպեսզի ապահովվի պետական ղեկավարությունը տնտեսության նկատմամբ և նրա հնարավորին չափ արագ զարգացումը, հիշյալ երկրների կառավարությունները օգտագործում են պետական կապիտալիզմի ուղին:

Միանգամայն իրավացի են ներուն և Սուկառնոն, երբ ընդգծում են, թե տնտեսական ազատագրման համար մղվող պայ-

<sup>1</sup> «Правда», 19 февраля, 1960.

քարը կրում է ավելի սուր բնույթ, քան պայքարը քաղաքական անկախության համար:

Տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման հաջողությունները այստեղ կախված են ազգային ուժերի համախըմբվածությունից, բանվոր դասակարգի կազմակերպվածությունից և ազգային բուրժուազիայի ու նրա կառավարությունների դեմոկրատական ճիշտ քաղաքականությունից:

Վ. Ի. Լենինը բազմիցս նշել է Արևելքի ազգային բուրժուազիայի դեմոկրատական տենդենցների և բուրժուական նացիոնալիզմի պատմականորեն արդարացի լինելու մասին:

«Ասիայում,— գրում է նա,— կա դեռևս բուրժուազիա, որն անդունակ է ներկայացնելու անկեղծ, մարտական, հետևողական դեմոկրատիա, որն արժանավոր ընկերն է Ֆրանսիայի XVIII դարի վերջի մեծ քարոզիչների և մեծ գործիչների»<sup>1</sup>:

Մարքսիստական այս տեսակետը լիովին արդարացվել է Արևելքի ազգային-ազատագրական շարժումների և առանձին ժողովուրդների անկախության համար մղած պայքարի բազմամյա փորձով:

Պատմական կոնկրետ այս երևույթի ճիշտ ըմբռնումը մեծ նշանակություն ունի պրոլետարիատի և նրա պարտիայի ստրատեգիական և տակտիկական գծի որոշման համար:

Արևելյան երկրների ազգային բուրժուազիայի դեմոկրատիզմի դասակարգային հիմքը Լենինը համարում է գյուղացիությանը, որը ինչպես հայտնի է, կազմում է տվյալ երկրների ազգաբնակչության մեծագույն մասը: Այս պատճառով Լենինի հիմնական պահանջներից մեկն էլ այն է, որ բանվոր դասակարգը և նրա պարտիաներն այս երկրներում կարողանան հետևողական պայքար տանել գյուղացիության արմատական շահերի պաշտպանման համար: Հիմնականը այս հարցում՝ առանց զիջումներ կատարելու ֆեոդալական սարբերի օգտին հողային ռեֆորմի իրականացումն է:

«Ուտոպիա կլինեք կարծել,— գրում է Լենինը,— թե պրոլետարական պարտիաները, եթե առհասարակ նրանք կարող են ծագել այդպիսի երկրներում, որոշակի հարաբերությունների մեջ չգտնվելով գյուղացիական շարժման հետ, շաջակցելով նրան գործնականում, այդ հետամուտաց երկրներում կարող են անցկացնել կոմունիստական տակտիկա ու կոմունիստական քաղաքականություն»<sup>2</sup>:

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, *Ծրկեր*, հատ. 18, էջ 199:

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, *Ծրկեր*, հատ. 31, էջ 291: .

Այնքան, որքան ազգային բուրժուազիայի շահերը բախվում են և՛ իմպերիալիզմի, և՛ ֆեոդալիզմի շահերի հետ, նա ևս հաճախ պաշտպանում է հողային ռեֆորմը, ցանկանալով դրկել թե իր երկրի և թե՛ օտար հողատերերին նրանց տնտեսական հիմքից:

Հողային և հետևողական դեմոկրատական այլ ռեֆորմների կենսագործումը կյանքում, կարող են ստեղծել պայմաններ, երբ բանվոր դասակարգի և նրա պարտիայի ղեկավարութայմբ, հենվելով բանվորների և գյուղացիների ամուր դաշինքի վրա, հնարավոր կլինի կազմակերպել ազգային ճակատ՝ ազգային բուրժուազիայի մասնակցութայմբ:

Վերջինս դեմոկրատական քաղաքականութայմուն է տանում բուրժուազյն դեպքերում և երկրներում, որտեղ Երկրի հիմնական դասակարգերի՝ բանվորների և գյուղացիների կազմակերպվածութայմունն ու ակտիվութայմունը, Կոմունիստական պարտիաների հեղինակութայմունը, ապահովում են մշտական կոնտրոլը ներքեից և թույլ չեն տալիս այն տատանումներն ու շեղումները, որոնց ընդունակ է բուրժուազիան:

Իրաքում, Ինդոնեզիայում, Հնդկաստանում և այլ երկրներում, որտեղ ազգային բուրժուազիան հանդես է դալիս թե ներքին և թե արտաքին քաղաքականութայման շատ հարցերում որպես առաջավոր, դեմոկրատական ուժ, այնտեղ նրա բոլոր պրոգրեսիվ միջոցառումները գտնում են լայն մասսաների ընդունելութայմունը, իսկ կոմունիստական և բանվորական պարտիաները օգնում են համապատասխան կառավարութայմուններին կիրառելու այդ միջոցառումները:

Այդպիսի երկրներում աշխատանք է տարվում պահպանելու համար ազգային բուրժուազիայի այն լիզերներին, որոնք պատմական խոշոր գործ են կատարում իմպերիալիզմի ու ֆեոդալիզմի դեմ, իրենց երկրի անկախութայմունը ամրապնդելու համար մղած պայքարում:

Թե որքան ճիշտ է պրոլետարական պարտիաների և նրանց լիզերների դիրքը այս հարցում, ցույց են տալիս Լենինի հետևյալ տողերը:

«Չի կարելի մարքսիստ լինել, չտածելով ամենախոր հարգանք դեպի բուրժուական մեծ ռևոլյուցիոներները, որոնք համաշխարհային-պատմական իրավունք են ունեցել խոսելու բուրժուական «հայրենիքների» անունից, որոնք ֆեոդալիզմի դեմ մղվող պայքարի մեջ քաղաքակիրթ կյանքի են բարձրացրել տասնյակ միլիոնավոր նոր ազգեր»<sup>1</sup>:

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 273:

Մեր կարծիքով ներկա պատմական ժամանակաշրջանում այդ կարգի մարդկանց թվին կարելի է դասել Ֆիդել Կաստրոյին, Արդու ֆեբրիմ Կասեմին, Սուկաոնոին, Ու-Նուին, Ջ. Ներուին և նման աիպի ազգային բուրժուազիայի այլ գործիչների:

Բայց բուրժուազիան շատ հաճախ ցուցաբերում է անհետևորականություն: Դրա պատճառը, ինչպես նշում է Լենինը, այն է, որ շահագործվող երկրների բուրժուազիան մեծ մասամբ, ազգային շարժմանը օգնելու հետ միասին, համաձայնության է գալիս իմպերիալիստական երկրների բուրժուազիայի հետ և միասին ելնում են կոմի բոլոր տեսակի ռևոլյուցիոն շարժումների և ռևոլյուցիոն դասակարգերի դեմ: Թուրքիայի, Պակիստանի և մի շարք այլ երկրների տիրող շրջանների հակաժողովրդական քաղաքականությունը, Հնդկաստանում, Արաբական Միացյալ Ռեսպուբլիկայում և այլուր տեղի ունեցած որոշ դեպքեր հաստատում են պատմական այս ճշմարտությունը:

Ազգային բուրժուազիայի տատանումները առանձնապես ակնառու են այնպիսի կարևոր հարցերում, ինչպիսին են՝ ազրարային ԽՍՀՄ-ում, դեմոկրատական ազատությունների կենսագործումը և միջազգային քաղաքականության ճիշտ դիրքավորումը:

Պետք է ասել նաև այն, որ ինչքան թուլանում են իմպերիալիզմի դիրքերը Արևելքում, այնքան ավելի բազմազան են դառնում այն միջոցառումները, որոնք անց են կացվում իմպերիալիստական պետությունների կողմից: Իմպերիալիստական այսպիսի քաղաքականության դրսևորումներից են ՍԵՆՏՈ և ՍԵԱՏՈ (իմպերիալիստական այս խմբավորումների երեքից երկուսը Ասիայում են գտնվում), ռազմական բլոկների կազմակերպումը և գործունեությունը, ասիական որոշ երկրների ներգրավումը ՆԱՏՕ-ի մեջ, զանազան երկրների հետ կնքած (Յապոնիա, Թուրքիա, Իրան, Պակիստան) միակողմանի ռազմական համաձայնագրերը, այսպես կոչված «էյզենհաուերի դոկտրինան» և «օգնությունը» թույլ զարգացած երկրներին և այլն:

Երբեմն իմպերիալիստները, չբավարարվելով հիշյալ միջոցառումներով, փորձում են վերականգնել իրենց իրավունքները կամ ամրապնդել իրենց վիճակը զենքի ուժով: Այդպիսին էին՝ Անգլո-Ֆրանկո-Իսրայելյան ազրեսիան Եգիպտոսի դեմ 1956 թ., Լիբանանի և Հորդանանի օկուպացիան Միացյալ Նահանգների և Անգլիայի կողմից 1958 թ., Ֆրանսիայի քաղաքականությունը Ալժիրի նկատմամբ և այլն:

Բայց ժամանակները ուրիշ են և դրա համար մեծ մասամբ

իմպերիալիստների քաղաքականությունը Արևելքում ձախողվում է:

Ազատագրված ժողովուրդները, որոնք պայքարում են իրենց անկախության ամրապնդման համար, ուսկական փորձով գիտեն թե ո՞վ է իրենց բարեկամը և ո՞վ թշնամին: Նրանք մեծ անհրաժեշտություն են զգում անշահախնդիր օգնության իրենց տնտեսության, կուլտուրայի, գիտության զարգացման ասպարեզում:

Իրագործելով Վ. Ի. Լենինի պատգամները, նրանց այդպիսի օգնություն է ցույց տալիս Սովետական Միությունը և մյուս սոցիալիստական երկրները, ներառյալ ժողովրդական Չինաստանը: Այդ օգնությունը տարբերվում է իմպերիալիստների ցույց տված «օգնությունից», նախ նրանով, որ այն չի պայմանավորվում որևէ քաղաքական պահանջով և ապա տրվում է շահագնաց արտոնյալ պայմաններով ու այնպիսի ապրանքներով (մեքենաներ, սարքավորումներ), որոնք անհրաժեշտ են ստեղծելու սեփական արդյունաբերություն և ապահովելու երկրի տնտեսական անկախությունը:

Սովետական Միության արտահանության մեջ մեքենաների և սարքավորումների տոկոսը 1938 թ. 5-ից բարձրացել և հասել է 21 %-ի՝ 1959 թ.: Այդ արտահանության  $\frac{3}{4}$  մասը գնում է սոցիալիստական երկրները, գլխավորապես Արևելյան երկրները: Մնացած մասը ուղարկվում է թույլ զարգացած երկրներին, որոնց հետ վերջին 5 տարում ապրանքափոխանակությունը ավելացել է ութ անգամ:

Ինչպես հայտարարեց Ն. Ս. Խրուշչովը ինդոնեզիական պառլամենտում, ընթացիկ տարում Սովետական Միությունը օգնություն ցույց կտա աշխարհի 22 երկրում՝ 383 տարբեր արդյունաբերական ձեռնարկությունների կառուցմանը:

Բազմապիսի է Սովետական Միության և մյուս սոցիալիստական երկրների օգնությունը, որը հզոր քրաշխիք է հանդիսանում գաղութատիրությունը վերականգնելու բոլոր փորձերի դեմ:

«Պատմաբանները, ուսումնասիրելով մարդկային հասարակարգի զարգացումը, — ասում է Ն. Ս. Խրուշչովը, — բոլոր հիմքերը կունենան XX դարի կեսերն անվանելու նոր աշխարհի, ազատության ու անկախության աշխարհի կառուցման ժամանակաշրջան:

Մարդկության շատ խայտառակ երևույթի՝ գաղութատիրության կործանում. ահա ժամանակի հատկանիշներից մեկը»<sup>1</sup>:

Այս մեծ պատմական խնդրի իրագործման յ Արևելքի երկրը-

<sup>1</sup> «Սովետական Հայաստան», 28 փետրվարի 1960:



ների տնտեսութեան դարգացման անհրաժեշտ պայմանն է խաղա-  
րութեան ամրապնդումը ամբողջ աշխարհում: Այստեղ ևս նրանց  
օգնութեան է գալիս Սովետական Միութեան և ամբողջ սոցիալիս-  
տական լադերի լենինյան խաղաղ քաղաքականութիւնը, որը  
պաշտպանութիւն է գտնում Արեւելի անկախ պետութիւններին  
շատերի կողմից:

Վ. Ի. Լենինի հիմնական պատգամներից մեկն էլ հետևողական  
պայքարն է խաղաղութեան և խաղաղ գոյակցութեան համար: Ամե-  
րիկյան թերթերից մեկի թղթակցի հարցին, թե ինչպիսի պլաններ  
ունի Սովետական կառավարութիւնը Ասիայում, Վ. Ի. Լենինը  
1920 թ. փետրվարին, պատասխանում է այսպես.

«Նույնն են, ինչ որ նվրոպայում. այն է՝ խաղաղ համակեցու-  
թիւն բոլոր ազգերի, ժողովուրդների, բանվորների և գյուղացիների  
հետ, որոնք արթնանում են նոր կյանքի՝ առանց շահագործման.  
առանց կալվածատերերի, առանց կապիտալիստների, առանց վա-  
ճառականների կյանքի համար: 1914—1918 իմպերիալիստական  
պատերազմը... արթնացրեց Ասիան և ուժեղացրեց աքնտեղ, ինչպես  
նաև ամենուրեք, ազատութեան, խաղաղ աշխատանքի, այլևս պա-  
տերազմներ թույլ չտալու ձգտումը»<sup>1</sup>:

Լենինի նշած բոլոր երևույթները, մանավանդ վերջին ձգտումը,  
տասնապատիկ և հարյուրապատիկ անգամ շատ ավելի են իրենց  
լզալ տալիս ներկայումս:

Վ. Ի. Լենինի ուսմունքը ազգային և գաղութային հարցերում  
հիմք ծառայեց Կոմունիստական պարտիայի և Սովետական պե-  
տութեան ազգային քաղաքականութեանը: Նա ցույց տվեց թե ինչ-  
պես պետք է զարգանա ազգային-ազատագրական շարժումը գա-  
ղութային և կախյալ երկրներում, որ այդ շարժումը վազմելու է  
միջազգային պրոլետարիատի ուղղութիւնի անբաժանելի մասը,  
որ այդ երկու ուղղութիւնն ուժերը՝ բանվոր դասակարգի ղեկավա-  
րութեամբ ապահովելու են իմպերիալիզմի կործանումը և սոցիա-  
լիզմի հաղթանակը համայն աշխարհում:

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 404:

О. Г. ИНДЖИКЯН

## В. И. ЛЕНИН И НАРОДЫ ВОСТОКА

### Резюме

В статье изложены основные положения учения В. И. Ленина о национально-колониальном вопросе в связи с национально-освободительным движением народов Востока в эпоху империализма.

Анализируя процесс пробуждения народов Востока автор показывает величие ленинских идей, влияние русских революций и строительства социализма в СССР на Востоке; говорит о возрастающей роли народов Востока в решении международных проблем; о стратегии и тактике коммунистических и рабочих партий в странах Востока в условиях кризиса и распада колониальной системы империализма.

В свете ленинского учения рассматривается влияние народных революций и успехов строительства социализма в Китае, Северной Корее и Вьетнаме на судьбы многих народов Востока.

В статье приводятся указания В. И. Ленина о необходимости проведения политики мира и дружбы между народами; об оказывании систематической и бескорыстной помощи отсталым и слаборазвитым странам.

Все эти положения обоснованы фактическим материалом, отражающим современную историческую обстановку.

ՀՈՂԱՅԻՆ ՌԵՆՏԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՐԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ

Ժամանակակից Իրանի սոցիալ-տնտեսական կյանքի պատմության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի ագրարային հարաբերությունների հիմնական պրոբլեմներից մեկը հանդիսացող հողային ռենտայի ձևերի և առանձին հողատիրական ինստիտուտների առկայության պայմաններում նրանց մեջ տեղի ունեցող փոփոխությունների վերլուծությունը:

Իրանում գոյություն ունեցող հողային հարաբերությունների ներկա էտապը բնորոշ է հատկապես այն տեսակետից, որ հետըհետև ուժեղանում է կապիտալիստական հարաբերությունների ներթափանցումը գյուղատնտեսության մեջ, որը իր հերթին նոր կերպարանք է հաղորդում կալվածատիրական հողատիրության և հողօգտագործման եղանակներին<sup>1</sup>:

Ներկայումս Իրանում գոյություն ունի հողային սեփականության չորս հիմնական ձև. առաջին՝ մալեքիյաթե արբաբի (مالکیت اربابی), այսինքն խոշոր և միջակ կալվածատիրություն, երկրորդ՝ մալեքիյաթե խորդեմալեքի (مالکیت خرد مالکی) — մանր հողատիրություն, երրորդ՝ մալեքիյաթե խալիսե (مالکیت خالص) — պետական հողատիրություն և չորրորդ՝ մալեքիյաթե վակֆ (مالکیت وقف) — մղկիթապատկան և այլ նվիրատուական հողատիրություն<sup>2</sup>: Բացի հողային սեփականության այս հիմնական ձևերից, կան նաև ամլաքե իլյաթի (املاك ایلاتی) — քոչվոր ցեղերին և

<sup>1</sup> Այս հարցին անդրադարձել ենք մեր «Կապիտալիստական հարաբերությունների ներթափանցումը Իրանական գյուղ» հոդվածում (տես ՀՍՍՌ ԳԱ Հասարակական գիտությունների «Տեղեկագիր», 1957, № 9):

<sup>2</sup> مسعود کیهان جغرافیای مفصل ایران قسمت ۳ اقتصادی تهر ان {۳} Մասուդե Կեյհան, Իրանի բնագրական աշխարհագրություն, երրորդ տնտեսական մաս, Թեհրան, 1951, էջ 55:

ներանց պետերին պատկանող հողերը, որոնք փաստորեն կարելի է դասել խոշոր կալվածատիրական հողերի շարքը և երկրորդ՝ ամլաքե ումումի (املاك عمومى), որոնք հին համայնական հողերի վերջին մնացուկներն են և կազմում են աննշան մի տարածութիւն:

Իրանական աղբյուրների համաձայն, գյուղացիության 60 % միանգամայն հողազուրկ է, 22 % մեկ հեկտարից պակաս հող ունի, 10 % 1—3 հեկտար, 6 % 3—20 հեկտար և այլն: Մշակվող հողերի ամբողջ տարածության ընդամենը 17 % է պատկանում նրանց, ովքեր երեք հեկտարից պակաս հող ունեն, մինչդեռ 56 % պատկանում է խոշոր կալվածատերերին, որոնք ըստ հողատերերի մեկ տոկոսն են կազմում<sup>1</sup>:

Ըստ Սովետական Մեծ հանրագիտարանի տվյալների, մշակվող հողերի մոտ 80 % գտնվում է կալվածատերերի ձեռքում, 15 % կազմում են պետական, վակֆային և շահի հողերը, և միայն մշակվող հողերի 5 % է պատկանում գյուղացիությանը: Գյուղացիության ոչ պակաս քան 85 % հողազուրկ է և աշխատում է կալվածատիրոջ հողի վրա:

Պատկերը ավելի պարզ է դառնում, երբ քննում ենք առանձին նահանգների հողային սեփականության հարաբերությունը: Այսպես, օրինակ՝ Արաքի շրջանի կես միլիոն բնակչությունից ընդամենը 40 հազարն է ապրում քաղաքում, իսկ մնացածը ռամբողջովին թշվառության և զրկանքների մեջ՝ գյուղերում: Այստեղ վարելահողերի «82 տոկոսը պատկանում է խոշոր կալվածատերերին և միայն 18 տոկոսը գյուղացիներին ու մսնր հողատերերին»<sup>2</sup>:

Մազանդարանի նահանգի վարելահողերի 60 % պատկանում է կալվածատերերին, 15 % կազմում են վակֆային հողերը, 5 % գյուղացիներին է, իսկ մնացածը պետական և շահի հողերն են:

Գյուղատնտեսական խոշոր նշանակություն ունեցող իրանական Ադրբեջանի նահանգում մշակվող հողերի 75—80 % պատկանում է կալվածատերերին, 12 % պետությանն ու մզկիթներին և մի-

<sup>1</sup> «Ռեհա» (رها) 1952, № 28, և «Բանդե Մարզում» (بانك مردم) 21 մարտի 1953 թ.: Միավորված ազգերի անտեսական գործերի դեպարտամենտի տվյալներով, գյուղացիության 60%-ը միանգամայն հողազուրկ է, 25%-ը ունի մեկ հեկտարից պակաս հող, 10%-ը՝ 1—3 հեկտար: (United Nations Department of Economic Affairs, Land Reform, Defects in Agrarian Structure as obstacles to Economic Development, New-York, 1951, էջ 14):

<sup>2</sup> (سوی آینه) «Բեսուլե Այենդե», 13 փետրվարի, 1953:

ախ մնացած շնչին մասն է պատկանում սակավահող գյուղացիներին:

1949 թ. Իրանի, այսպես կոչված, «Յոթնամյա պլանի ադմինիստրացիայի» Վիճակագրական բաժինը Քեհրանի և Դամավանդի շրջանի 1300 գյուղերում տվյալների փորձնական հավաք կազմակերպեց: Արդյունքները ցույց տվեցին, որ գյուղական ընտանիքների 60 % միանգամայն հողազուրկ է, 25 % ունի ավելի պակաս քան մեկ հեկտար և մոտ 10 % 1—3 հեկտար հող: Այլ խոսքով, գյուղացիության 95 % տիրում էր մշակելի հողերի ընդամենը 17 %: Հողատերերի մեկ տոկոսը կազմում էին 20 հեկտարից ավելի հող ունեցողները, որոնց մեկ հինգերորդը ուներ 100 հեկտարից ավելի<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, տվյալների բազմազանությունը չի փոխում խնդրի էությունը, այն, որ ժամանակակից Իրանում հողերի գերակշռող մեծամասնությունը պատկանում է կալվածատերերին. հատկապես խոշոր կալվածատերերին: Նրանց է պատկանում նաև գյուղատնտեսական արտադրության համար էական նշանակություն ունեցող ջուրը: Գյուղացիական բազմամիլիոն մասսաները հողազուրկ են և ստիպված են աշխատել կալվածատերերի հողերի վրա: Հենց այդտեղից էլ բխում է երկրի գյուղատնտեսության մեջ իշխող ֆեոդալա-կալվածատիրական հարաբերությունների բնույթը, հետևաբար և ամբողջ Իրանի տնտեսության հետամնացությունը:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե հողից ստացված ամբողջ եկամուտը ինչպե՞ս է բաշխվում բնակչության տարբեր դասակարգերի միջև, մի եկամուտ, որ ներկայումս տարեկան մոտավորապես 25,5 միլիարդ դրամ, կամ 785 միլիոն դոլլար է, և որը կազմում է ազգային ամբողջ եկամտի մոտ 85 տոկոսը<sup>2</sup>:

Մարքսը զանազանում էր ռենտայի հետևյալ ձևերը՝ աշխատանքային, մթերային, դրամական (որպես մթերայինի փոխարկված ձև), կիսրարային տնտեսություն և կապիտալիստական ռենտա: Ֆեոդալական ռենտան իր զարգացման ընթացքում անցել է երեք ստադիա՝ աշխատավճարային, մթերային և դրամական: Հողային ռենտայի զարգացման այդ երեք ստադիաները միաժամանակ հանդիսանում են ֆեոդալիզմի զարգացման ստադիաներ: Խոսելով ֆեոդալական ռենտայից դեպի կապիտալիստականը տանող անցումնաձևի մասին, Մարքսը գրում էր.

<sup>1</sup> «Middle East Journal», 1951, № 2, էջ 195:

<sup>2</sup> Экономика и внешняя торговля капиталистических стран, Москва 1954, стр. 213.

«Իբրև ունեւոր սկզբնական ձևից դեպի կապիտալիստական ունեւոր տանող մի անցումնաձև կարող է նկատվել Metairie System-ը, տնտեսութեան կիսրարային սիստեմը, որի ժամանակ մշակողը (վարձակալը), բացի իր (անձնական կամ թե ուրիշի) աշխատանքից, մատակարարում է կապիտալի մի մասը տնտեսութեանը վարելու համար, իսկ հողի սեփականատերը, բացի հողից՝ այդ կապիտալի մեկ ուրիշ մասը (օրինակ տավարը), իսկ արդյունքը, տարբեր երկրներում փոփոխվող որոշ համամասնութեամբ, բաժանվում է վարձակալի [Maier] ու հողի սեփականատիրոջ միջև»<sup>1</sup>: Մարքսը շարունակում է. «Մի կողմից՝ կիսրար-վարձակալը, անկախ նրանից, թե իր անձնական կամ մի ուրիշի աշխատանքն է կիրառում, պետք է արդյունքի մի մասի վերաբերմամբ պահանջ առաջադրի ոչ թե բանվոր լինելու իր որպիսութեամբ, այլ իբրև իր աշխատանքի գործիքների մի մասի տերը, որպես մեկը, որ հենց ինքը իրեն համար կապիտալիստ է: Մյուս կողմից՝ հողի սեփականատերն իր բաժինն է պահանջում ոչ թե բացառապես հողի իր սեփականութեան վրա հիմնված, այլև որպես կապիտալ փոխադրող անձ»<sup>2</sup>:

Կապիտալիստական հողային ունեւոր, ի տարբերութեան ֆեոդալականի, հենվում է ոչ թե անմիջական տիրապետութեան և հպատակեցման, ոչ թե արտադրական հարկադրման հարաբերութեանների վրա, այլ կապիտալիստական շահագործման հարաբերութեանների վրա: Կապիտալիստական հողային ունեւոր իրենից ներկայացնում է ոչ թե անմիջական արտադրողի ամբողջ հավելյալ աշխատանքը, այլ միայն նրա մի մասը, որը հանդիսանում է ավելցուկ միջին շահույթի վրա:

Ի՞նչպիսին է իրերի վիճակը Իրանում:

Ֆեոդալիզմը Իրանում իմպերիալիստական կապիտալի ներթափանցման ազդեցութեան ներքո կառչեց կիսրարային սիստեմին: Այնտեղ կիրառվում են թե՛ աշխատանքային, թե՛ մթերային և թե՛ դրամական ունեւորի ձևերը: Բայց կիսրարային վարձակալութեան պայմաններն Իրանում խորապես տարբերվում են այն կիսրարութեանից, որը հանդիսանում է ֆեոդալականից կապիտալիստականի անցնելու ունեւորի ձևը, որի ժամանակ ունեւորն արդեն երևան չի գալիս որպես հավելյալ արժեքի նորմալ ձև: Իրանում գերիշխողը հավելյալ պրոդուկտի լրիվ յուրացման ձևն է, և կիսրարութեանը

<sup>1</sup> Կ. Մարքս, *Կապիտալ*, հատ. 3, մաս 2, էջ 341:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 342:

այստեղ դեպի կապիտալիստական տնտեսածե շի տանում: Իրանական գյուղացին շահագործողներին տալիս է ոչ միայն հավելյալ պրոդուկտը: «Այն ինչ որ նա, — դրում է Մարքսը, խոսելով հողային ունեւորի մասին, — իրրե կալուածարձ վճարում է հողի սեփականատիրոջը, հաճախ կլանում է ոչ միայն նրա շահույթի մեկ մասը, այսինքն՝ նրա սեփական հավելյալ աշխատանքի մեկ մասը, որի վրա նա իրավունք ունի որպէս աշխատանքի սեփական գործիքների տեր, այլ այն նորմալ աշխատավարձի մի մասն էլ, որ նա աշխատանքի միւնույն քանակի համար կստանար ուրիշ պայմաններում: Սրանից դատ՝ հողի սեփականատերը, որն այստեղ ոչինչ չի անում հողը բարելավելու ուղղութեամբ... սեփականազրկում է սրան այն փոքրիկ կապիտալից, որը սա մեծ մասամբ իր սեփական աշխատանքով միակցում է հողին, — սեփականազրկում է ճիշտ այնպէս, ինչպէս որ մի վաշխառու կաներ նման հանգամանքներում»: Իսկ ի՞նչ է ստացվում երկրի գյուղատնտեսութեան մեջ այդպիսի սիստեմի գերիշխանութեան հետեանքով: Արդյունքը հանդիսանում է աշխատանքի ցածր արտադրողականութունը, տընտեսութեան ձեւերի հետամնացութունը:

Քննելով իրանական իրականութիւնը, տեսնում ենք, որ մինչկապիտալիստական ունեւորների երեք ձեւերն էլ գոյութիւն ունեն, բայց գերակշռում է մթերային ունեւորն, շնայած որոշ տեղերում կարելի է հանդիպել մինչև իսկ աշխատանքային ունեւորի: Իսկ դրամական ունեւորն աւելի հազվադեպ է:

Կալվածատիրական հողերի մեծագույն մասում, որտեղ գյուղատնտեսական պրոդուկտները արտադրվում են գլխավորապէս վաճառքի համար, կալվածատերերը շարունակում են իրենց բաժինը գանձել մինչկապիտալիստական ունեւորի ձեռով: Այդուհանդերձ որոշ կալվածատերերի համար, հատկապէս ոռոգվող հողերի շըրջաններում և խոշոր առևտրական կենտրոնների մոտակայքում, բնորոշ է որոշ շափով անցումը տնտեսութեան ֆեոդալական ձեւից կապիտալիստականին: Բայց հողի և ոռոգման միջոցների նկատմամբ ֆեոդալ-կալվածատիրական սեփականութեան գերիշխանութեան պայմաններում, մինչև իսկ այդ շրջաններում, տնտեսութեան ղեկավարման նոր սիստեմին լրիվ և վերջնական անցում չի կարող լինել: Անգամ այն կալվածատերերը, որոնք ընդարձակում են վարձու աշխատանքի կիրառումը, իրենց հողերի մեծ մասը շարունակում են մշակել վարձակալների աշխատանքով:

Ընդհանրապէս կալվածատերերն իրանում հողը մշակելու հա-

<sup>1</sup> Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 3, մաս 2, էջ 169:

մար գյուղատնտեսական բանվորներ չեն վարձում, այլ ամբողջ հողը տալիս են արենդով: «Այսպես, ուրեմն,— գրում է Վ. Ի. Լենինը, խոսելով Ռուսաստանի մասին,— կապիտալիստական տնտեսությունը չէր կարող մեկ անգամից առաջ գալ, կոռային տնտեսությունը չէր կարող մեկ անգամից շքանալ: Հետևաբար, տնտեսության միակ հնարավոր սիստեմն անցումնային սիստեմն էր, մի սիստեմ, որն իր մեջ զուգորդում էր թե՛ կոռային և թե՛ կապիտալիստական սիստեմների՝ «գծերը»<sup>1</sup>:

Իրանական գյուղի անցումնային սիստեմում նույնպես գերիշխում են վերևում նշված ֆեոդալական գծերը: Արդենի ամբողջ բազմազանությունը, վերջին հաշվով, կարելի է ի մի բերել կապիտալիստական և ֆեոդալական հարաբերությունների միահյուսման տարբեր ձևերի, իհարկե ֆեոդալական հարաբերությունների մնացորդների գերիշխանության պահպանումով:

Իրանում վարձավճարը գանձելու երեք ձև գոյություն ունի: Զինս (مخمس) (մթերք), այսինքն՝ վարձավճարի ստացումը նատուրայով, երկրորդ՝ նաղդ ٢٤٠ (կանխիկ), այսինքն՝ երբ վճարվում է կանխիկ դրամով և վերջապես, խառը ձևը, երբ մի մասը գանձվում է նատուրայով, մյուս մասը՝ դրամով, վարձատուի և վարձակալի համաձայնությամբ: Խառը ձևը հատկապես տարածված է պետական հողերում, որի մեջ երբեմն մտնում է նաև մթերքը պետական պահեստ հասցնելու պարտականությունը: 1930 թ. օրենքով կառավարությունն ուզում էր վարձավճարի միայն նաղդ (կանխիկ) ձևը միասնական դարձնել ողջ երկրի Կամար: Բայց այդ շիրականացավ, և մինչև այսօր էլ Իրանում պահպանվել են վերոհիշյալ երեք ձևերը, քանի որ խոշոր կալվածատերերը հիմնականում գերադասում են նատուրալ վարձավճարը, որը նրանց ապահովում է լրացուցիչ եկամուտներ՝ ի հաշիվ արտագրողի՝ գյուղացու:

Ինչպես ասվեց, Իրանի վարելահողերի գերակշռող մասը պատկանում է կալվածատերերին, որը նրանք վարձու են տալիս սուբարենդատորներին կամ գյուղացիներին: Հազվագյուտ դեպքերում է, որ կալվածատերերը անմիջականորեն զբաղվում են հողերի մշակումով՝ օգտագործելով բատրակներին: Կալվածատերերը հողերը վարձով են տալիս երեք սիստեմով:

1. Մոգարեե կամ կիսրարային սիստեմ: Այս դեպքում հողը

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 226:



վարձով է արվում վարձակալ-մշակողին որոշակի ժամկետով. բեր-  
սից որոշ մաս ստանալու պայմանով:

Կալվածատերը լրիվ հսկողություն է սահմանում գյուղացինե-  
րի և նրանց աշխատանքների վրա:

2. Ահմմանված վնարի սիստեմ: Այս դեպքում վարձակալ-մշա-  
կողը կալվածատիրոջը վճարում է նախապես որոշված մի գումար,  
անկախ ստացվող բերքի քանակից:

3. Պայմանագրային սիստեմ: Այս մեծապես տարբերվում է  
նախկին երկու ձևերից նրանով, որ հողը վարձով է տրվում այն-  
պիսի անձնավորության, որն ինքը անմիջականորեն չի մշակում  
հողը: Նա, կալվածատիրոջը մի գումար վճարելով, իրավունք է  
ստանում նրան հասանելիք բաժինը զանձել գյուղացիներից: Սա  
հենց սուբարենդան է:

Անհրաժեշտ է նշել, որ բոլոր պարագաներում էլ կալվածատի-  
րոջ բաժինը վճարվում է թե՛ բնավարձով, թե՛ կանխիկ, բայց գե-  
րակշռում է իհարկե առաջինը:

Վերոհիշյալ երեք սիստեմից ամենից տարածվածը առաջինն  
է՝ մողարեն կամ կիսրարային սիստեմը:

Հողը վարձով վերցնելը կոչվում է էջարե (عجارة), վարձակալը  
կոչվում է էջարեդար (عجارتدار), իսկ պայմանագիրը էջարենամե  
(عجارتنامه):

Ինչպես արդեն ասացինք, իրանում տիրող ագրարային հարա-  
բերությունների համար բնորոշ է հողերի կուտակումը փոքրաթիվ  
հողատերերի ձեռքում՝ մի կողմից, և բազմամիլիոն հողազուրկ  
գյուղացիության առկայությունը՝ մյուս կողմից: Ակնհայտ է, որ  
այս երկու դասակարգերի հասարակական-տնտեսական հարաբերու-  
թյունները բխում են մեկի հողային սեփականության մոնոպոլիայի  
և մյուսի հողազրկության հիմքերից:

Այդ հարաբերությունների զլխավոր առանձնահատկությունը  
հանդիսանում է այն, որ հողատերը, առաջին հերթին, յուրաց-  
նում է անմիջական արտադրողների հավելյալ պրոդուկտները: Հա-  
վելյալ արժեքը կամ հավելյալ պրոդուկտը այստեղ ձեռք է բերվում  
պրոդուկտային ռենտայի ձևով: Պրոդուկտային ռենտային ուղեկ-  
ցում են նաև ռենտայի նախորդ ձևի մնացուկները՝ կողը և աշ-  
խատանքատարի ուրիշ ձևերը, որոնք ապացուցում են անմիջա-  
կան արտադրողի տնտեսական և մասամբ էլ անձնական կախումը  
իր կալվածատիրոջից:

Պաշտպանելով կալվածատիրական սեփականությունը ճնշված  
և հողազուրկ գյուղացու «տնտեսություններից», հռչակելով և ամ-

րացնելով մասնավոր սեփականությունը հողի նկատմամբ. Ռիզա շահի միապետությունը ընդունեց մի շարք օրենքներ, որոնց օբյեկտիվ հետևանքը հանդիսացավ նախկին ֆեոդալական շահագործման մեթոդների, ֆեոդալական հարաբերությունների և, վերջին հաշվով, արտադրության ֆեոդալական եղանակի կոնսերվացիան և ամրացումը որպես գերիշխող եղանակ: Այս բանը պարզ երևում է իրանի Քաղաքացիական Օրենսգրքի այն հոդվածներում, որոնք վերաբերում են կալվածատիրոջ ու գյուղացու փոխհարաբերությունների կարգավորմանը: Օրենսգրքը չի սահմանում, ո՛չ կալվածատիրոջ կողմից գանձվող ռենտայի և ո՛չ էլ անմիջական արտադրողին՝ գյուղացուն կալվածատիրոջ կողմից ավանս տրվող գումարի չափը: Ամեն մի առանձին դեպքում հողատիրոջ և վարձակալ գյուղացուն հասանելիք բաժինը որոշվում է պայմանագրով կամ ըստ տեղի սովորույթի: Այդ մասին մենք մանրամասն կխոսենք, այժմ միայն տեսնենք, թե Քաղաքացիական Օրենսգրքը ինչպես է կանոնավորում գյուղացու և կալվածատիրոջ հարաբերությունները:

Քաղաքացիական Օրենսգրքի հոդվածներում ասվում է. «Մոզարեբեն մի պայմանագիր է, ըստ որի մի կողմը հող է վարձով տալիս մյուս կողմին որոշակի ժամկետով, որպեսզի վերջինս մշակելով այն, բաժանի բերքը հողի սեփականատիրոջ հետ» (Հոդված 518)<sup>1</sup>:

«Մոզարեբեն պայմանագրի ժամանակ թե՛ հողը վարձու տվողի և թե՛ մշակողի բաժինը պիտի սահմանվի հեշտ բաժանելի մասերով, ինչպես՝ քառորդ, երրորդ, կես և այլն; իսկ եթե կսահմանվի որևէ ուրիշ ձև, ապա մոզարեբի պայմանները վավերական չեն լինի» (հոդված 519)<sup>2</sup>: «Մոզարեբեում թույլատրվում է պայմանավորվել, որ կողմերից մեկը մյուս կողմին տա բերքից հասանելիք բաժնից ավելին և կամ ուրիշ որևէ ունեցվածք» (հոդված 520)<sup>3</sup>:

Վարձակալը, այսինքն հողազուրկ գյուղացին Քաղաքացիական Օրենսգրքում կոչվում է ամել (عامل): Վարձակալներն ամրացվում են տվյալ հողամասին՝ հողատերերի շահերի համաձայն: Դա իր արտահայտությունն է գտնում Օրենսգրքի այն հոդվածներում, ըստ որոնց վարձակալ գյուղացին պարտավոր է ժամանակին կատարել պայմանագրով իր վրա դրված պարտականությունները, այլապես՝ «եթե մոզարեբի ժամկետը լրանա, իսկ ցանքսը պատահաբար հասունացած չլինի, ապա մշակելու համար հողը վարձով

<sup>1</sup> (قانون مدنی) «Քաղաքացիական Օրենսգրք», էջ 113:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

տված կողմը իրավունք ունի դադարեցնելու ցանքսի աշխատանքները, կամ թե չէ թողնելու այն, ստանալով դրա դիմաց փոխհատուցում» (հոդված 540)<sup>1</sup>։

Գյուղացին պարտավոր է հետևել ցանքսին մինչև վերջ։ 534-րդ հոդվածում ասվում է. «Եթե ցանողը պայմանագիրը կնքելու ժամանակ կամ թե աշխատանքների սկզբում թողնի ցանքսը և ոչ ոք չիփոխարինի նրան՝ սկսած դործը ավարտելու համար, ապա հոյը վարձով տվողի խնդրանքով դատարանը կարող է պարտագրել ցանողին ավարտելու այն կամ թե թույլ տալ հոյը վարձու տվողին դործը շարունակել մշակողի միջոցներով, իսկ եթե դրա հնարավորությունը չլինի, ապա հոյը վարձու տվողը իրավունք ունի շեղյալ համարել պայմանագիրը»<sup>2</sup>։ Մի այլ հոդվածում սահմանվում է. «Եթե մշակողը ժամկետին հոյը չցանի, ապա հոյը վարձու տվողը իրավունք ունի վնասների հատուցում պահանջել» (հոդված 535)<sup>3</sup>, կամ «Եթե մշակողը համընդհանուր ընդունված կարգով չհետևի ցանքսին, որի հետևանքով բերքը քիչ լինի, կամ հոյը վարձու տվողին որևէ այլ վնաս պատճառի, ապա մշակողը վնասի համար պատասխանատուֆյուն կկրի» (հոդված 536)<sup>4</sup>։ Հոդված 537-ում ասվում է. «Եթե մոզարեհ պայմանագրում ցույց է տրված որոշակի տեսակ ցանքս, իսկ մշակողը ցանի ուրիշը, ապա պայմանագիրը անվավեր կհամարվի»<sup>5</sup>։ Պայմանագիրը, շեղյալ համարվելու դեպքում բերքը բաժանվում է հետևյալ կերպ. «...ամբողջ բերքը հասնում է սերմի տիրոջը (որը համարյա միշտ կալվածատերն է լինում, — Ն. Ծ.), իսկ մյուս կողմը՝ հողի, ջրի, կամ աշխատուժի տերը իրավունք ունի հատուցում ստանալու նրա դիմաց, ինչի տերը որ նա հանդիսանում է։ Եթե սերմացուն պատկանում է թե՛ հողը վարձու տվողին և թե՛ մշակողին, ապա բերքը և հիշյալ հատուցումը բաժանվում են նրանց միջև, սերմացուից նրանց ունեցած բաժնի համապատասխան» (հոդված 533)<sup>6</sup>։

Պայմանագրի մի ուրիշ ձևը կոչվում է «մոսակաթ», (مساقات). որը կնքվում է ծառերի կամ այգիների տերերի և, այսպես կոչված, ամենների (վարձակալ գյուղացիների) միջև։ Ըստ Քաղաքացիական Օրենսգրքի դա ենթակա է նույնպիսի կանոնադրության, ինչ կիսրարայինը, միայն այն տարբերությամբ, որ երբ մոսակաթը

<sup>1</sup> (قانون مدنی) «Քաղաքացիական Օրենսգրք», էջ 117։

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 116։

<sup>3</sup> Նույն տեղում։

<sup>4</sup> Նույն տեղում։

<sup>5</sup> Նույն տեղում։

<sup>6</sup> Նույն տեղում։

չեղյալ է համարվում կամ բեկանվում, ամբողջ արտադրանքը պատկանում է տիրոջը, իսկ վարձակալին միայն որոշ փոխհատուցում պահանջելու իրավունք է վերապահվում (հոդված 544):

Քաղաքացիական Օրենսգրքի «մոզարեբ» և «մոսակաթ» պայմանագրերին վերաբերող ամբողջ բաժինը ապացուցում է, որ իրանի ժամանակակից օրենսդրությունը միայն օրինականացնում է շահագործման նախկին ֆեոդալական մեթոդները: Կալվածատիրոջ բաժինը, ինչպես և նախկինում, երբ այն սահմանվում էր տրվյալ տեղի սովորույթի համաձայն, իրավաբանական ձևակերպում է գտնում Քաղաքացիական Օրենսգրքի հոդվածներում: Գյուղացու ամրացումը հողին և հողօգտագործման ազատության բացակայությունը արտացոլվել են այն հոդվածներում, որտեղ ասվում է, որ արտադրողը իրավունք չունի «աշխատանքի սկզբում թշնամի այդ գործը» և որ գյուղատնտեսական կուլտուրայի ընտրության մեջ պարտավոր է ենթարկվել հողատիրոջը:

Կալվածատերերի ու գյուղացիության փոխհարաբերությունը կարգավորող դրույթները ցույց են տալիս այնուհետև, որ Քաղաքացիական Օրենսգրքը ամրապնդում է հողատիրոջ և գյուղացու միջև իշխող ֆեոդալական արտադրահարաբերությունները: Իրանական «Նամեհ Մարդոմ» ամսագիրը-միանգամայն ճիշտ է գնահատում Քաղաքացիական Օրենսգրքի նշանակությունը կալվածատիրոջ և գյուղացու հարաբերությունների կարգավորման տեսակետից: «Իրանի Քաղաքացիական Օրենսգրքում,— գրում է ամսագիրը,— գյուղացիներին ապրուստի միջոցներ ապահովելու և կալվածատերերի ոտնձգություններից այդ դասակարգին պաշտպանելու տեսակետից ոչ մի կետ չկա: Մոզարեբ և մոսակաթ բաժնում, 513-ից մինչև 545-րդ հոդվածներում, այնպիսի կարգ է սահմանվել... որ դրանցից չի կարելի օգտվել այդ դասակարգին հովանավորելու և նրանց կյանքի պայմանները բարելավելու համար: Քանի որ իրանի օրենսդրական մեջլիսները բոլոր ժամանակներում էլ կալվածատերերի շահերի հովանավորողն ու պաշտպանն են եղել և նրանց ազատ են թողել գյուղացիներին շահագործելու ասպարեզում, ուրեմն օրենքներ հորինողներն ու գործադրողները հենց իրանի կալվածատերերն են... որի հետևանքով երկրում հարստություն ստեղծող դասակարգերի հովանավորության, իրավունքների պաշտպանման և նրանց ապրուստի նվազագույն միջոցների ապահովման համար ոչ մի օրենք չի հրատարակվել»<sup>1</sup>:

<sup>1</sup> (نامہ مردم ۱۳۲۵ نمبر ۳ صفحہ ۳۳) «Նամեհ Մարդոմ» 1947, № 3, էջ 33:

Իսկ ի՞նչ պայմաններով է գյուղացին հողը վարձակալում:

Մոզարեբի կամ կիսրարային սիստեմի հիմքում ընկած է հին, միջնադարյան հինգանդամյա ֆորմուլան, ըստ որի բերքը բաժանվում է հինգ մասի, ամեն մի մասը գյուղատնտեսության բաղկացուցիչ հինգ տարրերից մեկի դիմաց: Այսպես ուրեմն, ըստ այդ կարգի, հողագործությունը բաղկացած է հետևյալ տարրերից՝ 1) հողից, 2) ջրից, 3) սերմացուից, 4) անասուններից, 5) աշխատուժից: Որոշ հազվագյուտ դեպքերում էլ հողագործական գործիքները հաշվում են որպես ինքնուրույն, առանձին ֆակտոր և այդ դեպքում դառնում է վեց տարր, բայց ընդհանրապես հողագործական գործիքները, որոնք շատ պրիմիտիվ են, պատկանում են գյուղացուն: Այսպիսով, ստացված բերքը բաժանվում է հինգ մասի, չորաքանչյուր մաս հատկացվում ըստ տարրերի պատկանելիության: Քանի որ գյուղացին, որպես կանոն, չունի ո՛չ հող և ո՛չ էլ ջուր, և շատ հաճախ էլ սերմացու ու աշխատող անասուն, որը նա «որոշ շրջաններում ստիպված է առանձին վարձակալել, ապա նա այդ գործարքում հանդես է գալիս միայն իր աշխատուժով, հետևաբար ստանում է ամբողջ բերքի միայն հինգերորդ մասը: Սա չի բերի բաժանման ամենատարածված եղանակն է ամբողջ Իրանում: Բայց նույն հիմունքներով կա նաև բաշխման այլ եղանակ, որը կիրառվում է երկրի առանձին շրջաններում: Այդ եղանակը կոչվում է սեյբբար, նիսֆեբար և շարեբդար (سبب، نصفه کار، چرکار): Սեյբբար եղանակով է բերքը բաշխվում, երբ գյուղացին կալվածատիրոջից վերցնում է հողը, սերմացուն և անասունները: Բերբահավաքի ժամանակ կալվածատերը հողի դիմաց նախ վերցնում է բերքի մեկ հինգերորդ մասը, ապա մնացածը բաժանվում է երեք մասի, որից երկու մասը կալվածատիրոջն է հասնում, մեկ մասը՝ գյուղացուն:

Նիսֆեբար եղանակը կիրառվում է այն դեպքում, երբ անասուններն ու հողագործական գործիքները պատկանում են գյուղացուն. այս դեպքում ևս բերքի մեկ հինգերորդ մասը կալվածատերը վերցնում է հողի դիմաց, իսկ մնացածը կիսվում է, որից մի մասը հասնում է կալվածատիրոջը, իսկ մյուս մասը՝ գյուղացուն:

Չարեբդարի եղանակի ժամանակ կալվածատերը, նախ վերցնում է բերքի չորս հինգերորդ մասը, այնուհետև մնացած մեկ հինգերորդը բաժանում է չորս մասի, որից միայն մեկ մասը հատկացնում է գյուղացուն, այսինքն՝ գյուղացին ստանում է ամբողջ բերքի մեկ քսաներորդը միայն: Չարեբդարը կիրառվում է հազվագյուտ դեպքերում, այն էլ բրնձի ցանքսերի շրջաններում:

Սեյեքբարի և շարեբզարի ժամանակ գյուղացին պետական հարկ չի վճարում, իսկ նիսֆեբարի ժամանակ վճարում է հարկերի կեսը:

Եթե պատահի, որ գյուղացին անասուններ, սերմացու ու գործիքներ տրամադրի և կալվածատիրոջից վերցնի միայն հողն ու ջուրը, ապա բերքը բաժանվում է երեք մասի (ا، ڪ، ۛ ասեքուփե), որից երկու մասը գյուղացին է ստանում, մի մասը՝ կալվածատերը: Բայց այսպիսի վարձակալություն ընդհանրապես քիչ է պատահում: Նման դեպքերում ավելի հաճախ կարելի է հանդիպել երկքուփե (ا، ڪ، ۛ դոքուփե) եղանակին, այսինքն՝ կիսով կես:

Այն գյուղացիները, որոնք, բացի իրենց աշխատուժից ուրիշ ոչինչ չունեն, մինչև իսկ վարձակալ չեն համարվում, պարզորեն կոչվում են «բարզեգար», և ստանում են բերքի մեկ հինգերորդ մասը: Սերմացուն մեծ մասամբ տալիս է կալվածատերը նաև այն պատճառով, որ ըստ օրենքի, նախքան բերքահավաքը պայմանագիրը բեկանվելու պարագայում, ցանքսը պիտի անցնի սերմացուն տրամադրողին:

Բայց բերքի բաժանման այդ սիստեմները գործնականում կիրառվում են ոչ լրիվ, գյուղացու բաժինը շատ ավելի պակաս է լինում, քան նշված քանակը: Այդ մասին խոստովանում է մինչև իսկ Լամբտոնը: Նա գրում է. «Բերքը բաժանելիս տրադիցիոն ձևով հաշվի են առնվում հինգ տարրերը... մինչդեռ դա փաստորեն տեսական արատրակցիայից մի բան էլ ավելի է և իրական բաժանումը, չնայած նյութապես կախված է այն բանից, թե այդ տարրեր տարրերը ում են պատկանում և ով է տրամադրում, հազվագյուտ է կատարվում այն հիմունքներով, որ հինգ տարրերի համար հատկացվեն հավասար բաժիններ»:

Գործնականում հինգանդամյա ֆորմուլան Իրանի բոլոր շրջաններում նույն ձևով չի կիրառվում: Գոյություն ունեն բազմաթիվ տարաձևություններ: Նայած տեղական պայմաններին, առանձին տարրերի տեսակարար կշիռը աճում է կամ նվազում: Կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, թե ցանքսը ոռոգվում է, թե ոչ: աշնանացան է, թե գարնանացան և այլն: Ոռոգման եղանակը՝ գետից, կանաթից (քահրիզ), կամ ջրհորից, նույնպես ազդում է բերքի բաշխման վրա:

Ընդհանրապես բերքի բաշխումը կատարվում է կալում. հացահատիկը և դարմանը անջատում են և կուտակում ըստ մասերի:

<sup>1</sup> A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, London, 1953, page 306.

Այսպես, օրինակ, ենթադրենք կալվածատիրոջ բաժինը երկու երրորդ է, իսկ գյուղացունը մեկ երրորդ, ապա հացահատիկը և դարմանը առանձին բաժանում են երեք մասի: Որոշ տեղերում, ինչպես օրինակ Քուրդիստանում կալվածատիրոջ իրավունքն է ընտրելու իր մասը: Սովորաբար գյուղացին իրավունք չունի բերքի իր բաժինը կալից հեռացնել, քանի դեռ կալվածատերը իր բաժինը չի տարել: Երբ բերքը բաժանվում է մասերի, կալվածատիրոջ կամ նրա մուրաշիրի՝ ներկայացուցչի կողմից դրանք կնքվում են բերքը անձեռնմխելի դարձնելու համար, որը կոչվում է «մոհր քարդան» կամ «գաջ քարդան» (محر کردن با داج کردن): Բայց այդ «կնքումը» այնքան պրիմիտիվ է, որ ամենաշնչին քամին կարող է խախտել: Այդ հանգամանքը հաճախ է շարաշահվում կալվածատերերի կողմից, գյուղացիներին դողոթյան մեջ մեղադրելու և նրանց թալանելու համար, էնդհանրապես, որոշ բացառությամբ, ընդունված է, որ կալվածատիրոջ բաժինը կալից մինչև պահեստ (որը երբեմն զբտնրվում է քաղաքում) փոխադրելը մտնում է գյուղացու պարտականությունների մեջ:

Գարնանացան բերքի կալվածատիրական բաժինը՝ ի տարբերություն աշնանացանի, սովորաբար որոշվում է զնահատումով: Որոշ դեպքերում դա կատարվում է տշմիայն գարնանացանի, այլ նաև աշնանացանի հացահատիկի նկատմամբ: Բերքը զնահատողը՝ մոմայիղը (مميز), որը երբեմն գյուղի քեդիսուդան է լինում, երբեմն էլ մի ուրիշ անձնավորություն, ուղղակի նայում է բերքին և զնահատում այն, ըստ դրա էլ գյուղացին պետք է վճարի կալվածատիրոջ բաժինը: Հասկանալի է, թե կալվածատերերի կամակատար մարդկանց քմահաճույքը ինչպիսի ավերածություններ պատի կատարի հետամնաց գյուղում:

Կալվածատերերը իրենց բաժինը վերցնելուց հետո բազմաթիվ տուրքն էր են պարտադրում գյուղացիներին: Բոլոր այն դեպքերում, երբ գյուղացու բաժինը անասուն կամ սերմացու տրամադրելու հետևանքով ավել է լինում, կալվածատերը ծանրացնում է մյուս տուրքերը:

Իրանի նահանգներում և տարբեր շրջաններում գյուղացիների ու կալվածատերերի միջև բերքի բաժանման, ինչպես նաև, պահահակների տարբեր ձևեր գոյություն ունեն, բայց այդ բոլորի հիմքում, իհարկե, ընկած է բերքի բաժանման հնգանդամյա ֆորմուլան:

<sup>1</sup> A. K. S. Lambton... 306:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 307:

Անհրաժեշտ է նշել, որ այդ հարցի պարզաբանումը դժվարին գործ է, թեկուզ այն պատճառով, որ ժամանակակից Իրանում բա-  
ղակայում է ստույգ ու լրիվ վիճակագրությունը: Սակայն հրապա-  
րակված տեղեկությունները որոշ պատկերացում տալիս են:

Այսպես, 1952—1953 թթ. «Իրանի տարեգիրքը» երկրի տար-  
բեր շրջաններում կալվածատիրոջ և գյուղացու բաժինների մասին  
հրապարակել է մի աղյուսակ, որը կազմվել է պաշտոնական ղե-  
կուցումների հիման վրա և բավականին հետաքրքիր տվյալներ է  
պարունակում<sup>1</sup>: Աղյուսակի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ  
անհամեմատ ավելի ծանր է հարավային և կենտրոնական Իրանի  
գյուղացիության վիճակը: Այսպես, Գուլիսթանի, Մահալաթի, Իս-  
ֆահանի, Յաղդի, Քերմանի, Բոջնուրդի և Մոքրանի շրջանների  
գյուղերում կարելի է հանդիպել այնպիսի փաստերի, երբ կալվա-  
ծատիրոջ բաժինը կազմում է մինչև բերքի  $\frac{3}{4}$ -ը: Խորասանի որոշ  
շրջաններում կալվածատիրոջ բաժնի առավելագույնը հասնում է  
մինչև հսկ բերքի  $\frac{5}{6}$  մասի: Բայց այս երևույթները, ինչպես ցույց  
է տալիս աղյուսակը, բնորոշ չեն Իրանի համար: Ամենատարած-  
ված ձևը սեքուֆեն (երեք մաս) է, որը կիրառվում է երկրի բազ-  
մաթիվ շրջաններում: Այսպես, Ղազվինի, Մոքրանի, Արաքի, Նա-  
հավանգի, Թուլսերագանի և այլ շրջանների գյուղերում գյուղացու  
բաժինը կազմում է մինչև բերքի  $\frac{2}{3}$  մասը: Կան դեպքեր երբ դա  
լինում է ավելին, ինչպես օրինակ Արևմտյան Ադրբեջանի գյուղե-  
րում՝ մինչև բերքի  $\frac{9}{10}$ -ը, Խուզիստանում՝ մինչև  $\frac{6}{7}$ -ը, Արևմտյան  
Ադրբեջանում, ինչպես նաև Քուրդիստանում՝ մինչև  $\frac{4}{5}$ -ը և այլն:  
Աղյուսակը ցույց է տալիս, որ գյուղացու բաժնի նվազագույն չա-  
փի կարելի է հանդիպել Խորասանում ( $\frac{1}{10}$ ): Բերքը երկու հավասար  
մասի բաժանելու դեպքերի ավելի հաճախ կարելի է հանդիպել  
Բրուջերդի, Խորամարագի, Քուրդիստանի, Արևմտյան Ադրբեջանի,  
Ղազվինի, Վարամինի շրջանների գյուղերում:

Այժմ, օգտագործելով իրանական և օտարերկրյա աղբյուրնե-  
րում եղած, հաճախ իրար հակասող, փաստերը և վիճակագրական  
տվյալները փորձենք քննել Իրանի տարբեր նահանգներում և շր-  
ջաններում կիրառվող բերքի բաշխման եղանակների և չափերի ըն-  
դունված ձևերն ու առանձնահատկությունները և գյուղացիների  
բազմազան պարհակները:

Քերմանի նահանգ: Այստեղ կալվածատերերը հետևյալ կարգն

<sup>1</sup> «Իրանի տարեգիրք», 1952—1953 թթ., Քեհերան, էջ 184:



ան հաստատել. ամեն տարի գյուղացիներին որևէ հողամաս տալու համար նրանցից մի գումար են կորզում, որը կոչվում է թակազմե (تفدیه) կամ թաարոֆ (تعارف): Այս պրակտիկան գյուղացիության մեջ մրցակցություն է ստեղծում, որի հետևանքով ավելի շատ թաարոֆ վճարողը կարող է ավելի ընտիր հող ստանալ. հակառակ դեպքում գյուղացին կամ ցածր բերքատու հող կստանա. կամ էլ անհող կմնա: Իսկ հողերը բաժանվում են մեկ տարի ժամկետով և սահմանափակ քանակությամբ<sup>1</sup>:

Քերմանում կալվածատերը տալիս է հողը, ջուրը, սերմացուն և երբեմն էլ անասունները: Նրա բաժինը բոլոր տեսակի կուլտուրաներից, բացի ափիոնից, կազմում է բերքի 75—80 %: Քերմանի պայմաններում առանց ջրի հողը ոչ մի արժեք չունի և փաստորեն կալվածատերերը ոչ թե միայն այս կամ այն հողամասի, այլ ջրի տերն են: Այնպես որ «կալվածատերերին հասնող բերքի բաժինը կարելի է համարել այն կապիտալի տարեկան շահույթը, որ նրանք ներդրել են ջուր հանելու համար»<sup>2</sup>:

Քերմանի մոտ գտնվող Գավխանեում, Աքբարաբադում և Մուհամեդաբադում կալվածատիրոջ բաժինը կազմում է բերքի <sup>7</sup>/<sub>10</sub> մասը: Իրանական «Շահբադ» թերթը, խոսելով Քերմանի բատրակների (կարարիների) մասին, գրում է. «Կարարիները գյուղի ամենատաժանակիր և ամենազրկված մարդկանցից են համարվում: Նրանց վարձում են մեկ կամ մի քանի տարով «երեք ջինսի» (ցորեն, գարի և կորեկ) բավական շնչին քանակի դիմաց... Այն գյուղացիները, որոնք այդ պայմանով աշխատում են կալվածատերերի հողերի վրա մեծ մասամբ նոր տաբուն (մարտի 21) մեկ ամիս մնացած իրենց ամբողջ պաշարը վերջացնում են ու ընտանիքների հետ սովի մատնվում, և այդ ժամանակ է, որ մի քիչ գարի կամ կորեկ ձեռք բերելու համար ստիպված են լինում դիմել գյուղի կալվածատիրոջը. անամոթ թալանչիները գյուղացիներին գարի են տալիս պայմանով, որ ամեն մի ման (3 կիլո) գարու դիմաց բերքահավաքի ժամանակ մեկ ու կես ման ցորեն ստանան: Այսպիսով, հաճախ պատահում է, որ գյուղացիները ստիպված են լինում բերքահավաքի ժամանակ իրենց ամբողջ ցորենը պարտքի դիմաց հանձնել արբաբի ներկայացուցչին և էլի դեռ պարտք մնալ: Իսկ գյուղացիներից շատերը, որոնք այդ հնարավորությունից էլ զուրկ են, ստիպված են իրենց և երեխաների ստամոքսները լցնել դաշտային խոտով: Քերմանի գյուղերից շատերում վաղ գարնանից

<sup>1</sup> (شهناز), «Շահբադ», 25 ապրիլ, 1953:

<sup>2</sup> „Royal Central Asian Journal“ 1953, Jan.; vol. VI, Part 1, p. 55.

մինչև բերքահավաքը գյուղացիների ընտանիքների անգամները կերակրվում են խոտով<sup>1</sup>:

Ինչ վերաբերում է վարձով աշխատող գյուղացիներին, ապա նրանք ստանում են օրական ոչ ավելի քան 10 ուիալ: Անշահահասների առավելագույն աշխատավարձը կազմում է տարեկան 10 ման ցորեն; 10 ման գարի և 10 ման կորեկ<sup>2</sup>:

Քերմանի Ռաֆսանջան գավառում կիսրարային պայմանագիրը կալվածատերը կնքում է գյուղացու հետ ամեն տարի աշնանը, այսպես կոչված՝ աբբանգի (أب بندی) ժամանակ: Հողը վարձակալող գյուղացին կոչվում է «սարղաիմ» (سارزاع): Նա կարող է իր վարձած հողը կամ մենակ մշակել, կամ էլ մասնակից դարձնել լծկան և գյուղատնտեսական գործիքներ ունեցող այլ գյուղացիների: Հողագործության միջոցներ ունեցող յուրաքանչյուր գյուղացի համարվում է մի «մարդ» (دمر), և եթե աշխատել են 10 հոգի, ապա գյուղացուն հասնող բերքը բաժանվում է 10 մասի, իսկ եթե գյուղացին շունի այդ բոլոր միջոցները, ապա նա համարվում է «կես մարդ» (نیم دمر), և մի մարդու բաժնի կեսն է ստանում: Գյուղացիների երեխաները մինչև 18 տարեկան հասակը նույնպես կես մարդ են համարվում:

Հողը վարձակալող գյուղացին, որն ուղղակիորեն կալվածատիրոջ հետ պայմանագիր է կնքել, եթե անասուններ և գործիքներ ունենա, ապա մի «մարդու» բաժին ստանալու փոխարեն ստանում է նախապես որոշված մի բաժին՝ «կարարի»: Այստեղ ևս կալվածատերը իրավունք ունի գյուղացուն գյուղից վտարել: Կալվածատերը նոր եկած գյուղացուն «խեթաբ» (حظاب) է տալիս, այսինքն՝ թույլ է տալիս, որ իր հողում աշխատի: Այդ խեթաբները միայն հողագործությամբ զբաղվելու թույլտվություններ են և նրանց մեջ չեն նշվում բերքի բաշխման կարգը: Բայց այդ խեթաբներում հաճախ նշվում է, որ եթե հանձնված հողի բերքը առավելագույնից (դահթիրից) և նվազագույնից (դահփայեից) պակաս լինի, ապա գյուղացին պարտավոր է փոխհատուցել այդ տարբերությունը: Ռաֆսանջանի գյուղերի վարելահողերը ընդհանրապես բաժանվում են հարասանների, որոնք մշակվում են երբեմն մի քանի «մարդ»-երի միջոցով՝ մի սարզաիմի գլխավորությամբ, կրբմն էլ միայն մի «մարդ»-ի և մի սարզաիմի կողմից: Սերմացուն տալիս է կալվածատերը: Գյուղացին, մինչև իսկ եթե սերմացու ունենա,

<sup>1</sup> (شهباز) «Շահբազ», 25 ապրիլի, 1953:

<sup>2</sup> (شهباز) «Շահբազ», 23 ապրիլի, 1953:

իրավունք չունի այն օգտագործելու: Ինչպես ասվեց, ամեն մի գյուղացի, երբ կալվածատիրոջից հողամաս է ստանում մշակելու համար, պետք է մի գումար վճարի կալվածատիրոջը, որպես թաարոֆ: Սակավամարդ գյուղերում, ինչպես օրինակ Նորմաշիրում, ամեն մի գյուղացի հողամասը վերցնելիս կալվածատիրոջից ստանում է նաև մի գումար մոսաեդե **مساجد** (օժանդակություն) անունով: Քանի դեռ գյուղացին շարունակում է աշխատել կալվածատիրոջ հողի վրա, մոսաեդեն հետ չի պահանջվում: Միայն հողից հեռանալու պարագայում է, որ գյուղացին ստիպված է այդ գումարը վերադարձնել, մի հանգամանք, որը հաճախ միջոց է հանդիսանում գյուղացուն հողի հետ կապելու համար:

Սովորաբար Ռաֆսանջանում բերքը հավաքելուց, կալսելուց և մաքրելուց հետո, նախքան նրա բաշխումը բերքի 7% հանվում է հատուկ ծախսերի համար, այնուհետև մնացածը շորս մասի է բաժանվում, որից երեքը վերցնում է կալվածատերը, մի մասն էլ՝ գյուղացին: Դարմանը սովորաբար կիսվում է, իսկ եթե անասունները կալվածատիրոջն են լինում, ապա գյուղացին դարմանից բաժին չի ստանում:

Ռաֆսանջանի գյուղերից Քաշքուլիյում մի գյուղացու եկամուտը, եթե նա աշխատելիս լինի մի քանի գյուղացիների հետ, և ցանած լինի հինգ հեկտար շաթվի, 2,5 հեկտար բամբակ և մի քիչ էլ կորեկ և բանջարեղեն, կալվածատիրոջ եկամտի համեմատությամբ, կազմում է հետևյալը.

	Ինքնագնա՝ թեղի քանակ	Ինչպե՞ս մեծ է	Գնված կալվածատիրոջ համար	Գնված մշակող գյուղացու համար	Գնված մշակող գյուղացու համար	Գնված մշակող գյուղացու համար
Ցորենի բերքը . . . . .	7500	50000	—	13500	2700	25500
Գարու բերքը . . . . .	1500	5000	—	1350	270	2550
Բամբակի բերքը . . . . .	4500	33000	—	9000	1800	19000
Չմերուկ և վարունգ . . . . .	—	10000	—	3000	600	7000
Կորեկ . . . . .	900	3000	—	1500	300	1400
Ցորենի սերմացու 750 կգ . . . . .	—	—	5000	—	—	—
Գարու սերմացու 150 կգ . . . . .	—	—	500	—	—	—
Կորեկի սերմացու 30 կգ . . . . .	—	—	100	—	—	—
Բամբակի ցանքսի ծախս . . . . .	—	—	5000	—	—	—
Կանաթների մաքրման ծախսերը . . . . .	—	—	6000	—	—	—
<b>Գումար . . . . .</b>		<b>101000</b>	<b>16600</b>	<b>28350</b>	<b>5670</b>	<b>55450<sup>1</sup></b>

<sup>1</sup> Ցորենի և գարու գինը 1947 թ. դեկտեմբերի 10-ի խաբվարը 1000 սիլա է հաշված: (دس دال) «Նամեհ Մարզում», 15 օգոստոսի, 1947:

Աղյուսակից երևում է, որ յուրաքանչյուր գյուղացու եկամտի ընդամենը մեկ տասներորդն է մնում իրեն, իսկ մնացած ինը տասներորդը անցնում է կալվածատիրոջը:

Մազենդարանի նահանգ: Մազենդարանում մշակվում են բրինձ, բամբակ և այլ կուլտուրաներ. այստեղ աճում են նաև մեծ քանակությամբ ցիտրուսային պտուղներ: Կալվածատերերը ցիտրուսային բերքը մշակում են վարձու աշխատանքի միջոցով:

Ի տարբերություն Իրանի մյուս նահանգների, կալվածատերերը Մազենդարանում կանաթներ (ստորերկրյա ջրի անցուղիներ) կառուցելու և դրանք նորոգելու ու մաքրելու ծախսերից ազատված են, քանի որ այդտեղ հոսում են բազմաթիվ գետեր, որոնցից հնչտուֆյամբ կարելի է օգտվել, իսկ տեղումներն էլ ընդհանրապես շատ բարձր են: Կալվածատիրոջ բաժինը գանձվում է երկու եղանակով, որոնք Մազենդարանում հայտնի են որպես «էջարե» (اجاره) և «նեսֆեքարի» (نصفه کاری) անուններով:

Կալվածքի էջարեն՝ վարձակալումը կապված է հողի բերրիության կամ ինչպես Մազենդարանում է ասվում «մաբղուբիաթի» (مرغوبیت) հետ: Զրի քանակը, տարեբային աղետները կամ տարվա բերրիությունը ոչ մի նշանակություն չունեն «էջարե բահա»-ի (اجاره بهه) այսինքն՝ վարձավճարի որոշման գործում:

Մազենդարանի տարրեր մասերում, նայած հողի որակին՝ վարձը գանձվում է հեկտարից՝ հետևյալ չափերով.

1. Շահսովարում և նրա շրջակայքում՝ յուրաքանչյուր հեկտարից 300—750 կգ.

2. Քաշուրում, Նոշահրում և Չալուսում՝ 280—740 կգ.

3. Բաբոլում և Ամոլում՝ 300—840 կգ.

4. Սարիում, Շահիում և Բեհշահրում՝ 495—900 կգ.

5. Կանգաուղում յուրաքանչյուր 2000 քառակուսի մետրի գանձվում է 150—225 կգ. բրինձ<sup>1</sup>:

Նեսֆեքարի կոչվող պայմանագրով գյուղատնտեսական տարվա սկզբին կալվածատերը որոշ քանակությամբ մթերք է տալիս գյուղացուն՝ որպես «օժանդակություն», որի դիմաց գյուղացին պարտավոր է բերքահավաքի ժամանակ ամբողջ բերքի կեսը տալ կալվածատիրոջը, իսկ մնացած կեսից վերոհիշյալ էջարեի կարգով կալվածատերը ստանում է իր բաժինը:

Կալվածատիրոջ կողմից գյուղացուն տրվող օժանդակությունը ըստ տեղերի տարբերվում է: Օրինակ՝ Նովշահրի, Չալուսի և Քաշա-

<sup>1</sup> (نام مردم) «Նամե Խարդոմ», 28 սեպտեմբերի, 1947:

րի շրջաններում մի հեկտար հող ցանելու համար կալվածատերը գյուղացուն տալիս է 120 կիլոգրամ բրինձ, 6 կիլոգրամ յուղ, 9 կիլոգրամ շամիչ՝ շաքարի փոխարեն, մեկ կիլոգրամ ծխախոտ, մի քիչ թեյ և գյուղացու կողմից վարձվող անասունների վարձի գնի կեսը:

Շահիի և Բարոլի շրջաններում այդ «օժանդակութունը» կազմում է 120 կիլոգրամ բրինձ, 50 թուման կանխիկ դրամ և անասունի վարձի կեսը, որի դիմաց բերքահավաքի ժամանակ, բացի բերքի կեսից, կալվածատերը վերցնում է այդ նույն քանակի բրինձն ու սրամբ<sup>1</sup>:

Մաղենդարանի բազմաթիվ գյուղերում գյուղացիները տալիս են հինգ աքաղաղ, որոշ քանակի ձմերուկ, սեխ, խաղող, սոխ և այլն՝ «բարխանե» (بارخانہ) անվան տակ:

Կալվածատերերի կողմից գյուղացիներին տրվող օժանդակութունը հաճախ կատարվում է հետևյալ ձևով. գյուղացուն տրվող 120 կիլոգրամ բրինձի դիմաց կալվածատերը ստանում է պաշտոնական ստացական 100 թումանի համար, իսկ աշնանը, երբ բրինձի գինը շատ ցածր է, գյուղացին կալվածատիրոջը վերադարձնում է 100 թումանի բրինձ, որը երբեմն կազմում է մոտ 250 կիլոգրամ<sup>2</sup>:

Որոշ դեպքերում կալվածատերերը իրենք են մշակում հողը վարձու աշխատանքի միջոցով և բատրակին վճարում են օրական 25 ոխալ, այն ժամանակ, երբ բրինձի կիլոն արժի 18 ոխալ<sup>3</sup>:

Իրանական պաշտոնական «էթթելաթ» թերթը, քննարկելով Մաղենդարանի գյուղացիության վիճակը, գրում է. «Եթե այժմ որևէ մեկը Մաղենդարան գնա և ուսումնասիրի, ցավոք սրտի այն եզրակացության կհասնի, որ առաջին ձեռքը, այսինքն՝ գյուղացին, որ ամեն օր մինչև ծնկները տիղմի մեջ խրված, մալարիայի մոծակներով շրջապատված, իր օրվա ապրուստը հայթայթելու և քաղաքների բնակչությանը սննդամթերքով ապահովելու համար ճիգ ու ջանք է թափում, չքավորության և դրամագլուխ շունենալու պատճառով դեռևս իր չհասունացած ցանքսը ցածր գնով նախապես վաճառում է և բերքահավաքի ժամանակ դատարկաձեռն տուն վերադառնում»: Չորս հոգիանոց գյուղացիական մի ընտանիքի նվազագույն ծախսերը թերթը հետևյալ կերպ է ներկայացնում.

<sup>1</sup> (دام و دام) «Նամեե Մաբդոմ», 2 օկտեմբերի 1947:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> «The fortnightly» 1952, № 1022, page 102.

Մուուսը և հաղուստ	Ամսական	Տարեկան	Գումարը
Բրինձ . . . . .	28 ման	336 ման	5040 ուիալ
Թեյ և շաքար . . . . .	150 ուիալ	—	1800 ուիալ
Միս, հաց և ծխախոտ . . . . .	300 ուիալ	—	3600 ուիալ
Հաղուստի և կոշիկի միջնիմում . .	—	—	3000 ուիալ
Ծախսի ընդհանուր գումար . . .			13440 ուիալ

Այդ ծախսի դիմաց նրա ընդհանուր եկամուտն է կազմում 12.700 ուիալ: Այնուհետև թերթը նշում է, որ մինչև իսկ այս հաշվով էլ գյուղացին տարեկան 740 ուիալ պակասորդ է ունենում, եթե իհարկե տարին բարեհաջող լինի, ջուրը առատ, բերքն անվնաս, ինքն ու իր ընտանիքը առողջ լինեն, հիվանդության ծախսեր չունենան, լծկան էլ չվարձի, կառավարության գործակալների ոտնձգության և հարստահարման չենթարկվի, և վերջապես բերքն էլ նախապես վաճառած չլինի<sup>1</sup>: Իսկ այս բոլոր պայմանականությունները՝ հոգուտ գյուղացու պրակտիկայում համարյա անհնար են:

Գիլանի նձեռնագ: Անասուններ, սերմացու և հողագործական գործիքներ ունեցող, քիչ թե շատ ունևոր գյուղացիների ավելի հաճախ կարելի է հանդիպել Իրանի հյուսիսային նահանգներում: Հարավային նահանգներում գյուղացիները տրամադրում են միայն իրենց աշխատուժը:

Գիլանում հինգ տարրերից միայն՝ հողն է կալվածատիրոջը պատկանում. ջրի համար գյուղացին առանձին է վճարում: Եթե կալվածատերը տալիս է նաև սերմացուն, ապա բերքահավաքի ժամանակ, նախքան բերքի բաշխումը, գանձում է այն:

Գիլանում նույնպես կալվածատիրոջ և գյուղացու բաժինները տարբերվում են. եթե պայմանը էջարեի է, ապա գյուղացին կալվածատիրոջից հող վարձելով, բերքի ժամանակ ամեն մի հեկտարի դիմաց վճարում է՝ Ռուզսարում 375—900 կիլոգրամ, Փեհլեիում՝ 800—850 կիլոգրամ, Լահիջանում՝ 740—1000 կիլոգրամ, և մյուս տեղերում, ըստ հողի որակի՝ 600—750 կիլոգրամ<sup>2</sup>:

Կիսրարային եղանակի դեպքում կալվածատերը տալիս է սեր-

<sup>1</sup> (C. A. V. I.) «Եթթեյաթ», 9 հուլիսի, 1953:

<sup>2</sup> «Նամեե Մարչոմ», 23 սեպտեմբերի, 1947:

մացու և որոշ նյութական օժանդակություն, որը նա հետ է ստանում տոկոսներով՝ ընդհանուր բերքից. մնացածը կիսվում է հավասար չափով: Լանգարուդում, Ֆումենաթում, Ռեշտում սերմացուն գյուղացին է տրամադրում, ուստի և ստանում է բերքի երկու երրորդը: Բայց այս դեպքում բոլոր մյուս ծախսերը, ինչպես օրինակ լծկանների վարձը, առունների նորոգումը, բերքի փոխադրումը և այլն, գյուղացու վրին է: Մեկ հեկտար հողի համար օգտագործվող մի կոն վարձը կազմում է 5—6 արկղ (դա հավասար է 11 մանի, կամ 33 կգ) բրինձ: Ջրի համար էլ ամեն մի արկղ բերքի դիմաց 2 ուիալ է վճարվում:

Եթե վարձակալ գյուղացին չմշակված հող է ստանում, որը կոչվում է խարաբի (خرابی), ապա նա առաջին երկու-երեք տարին ունտա չի վճարում: Այդպիսի հողերում կալվածատերը գյուղացուն շինանյութ է տալիս՝ բնակարան կառուցելու համար, բայց գյուղացու աշխատանքով կառուցված տունը, այդուհանդերձ, համարվում է կալվածատիրոջ սեփականությունը:

Լահիջանում մոտավորապես 3400 հեկտար տարածություն թեյ է ցանվում: Թեյը կամ մշակում են իրենք կալվածատերերը՝ օգտագործելով օրավարձ բատրակներին, կամ էլ ամբողջ տնտեսությունը վարձով են տալիս ինչ-որ մի երրորդ անձնավորության: Այս դեպքում ամեն մի հեկտարի դիմաց նրանք ստանում են 230—260 կիլոգրամ շոր թեյ: Իրանական «Շահբաղ» թերթը գրում է, որ թեյի պլանտացիաներում ագարնանն ու ամռանը օրական ավելի քան ութ հազար բանվորուհիներ են աշխատում: Օրական ավելի քան 14 ժամ աշխատանքի դիմաց նրանք առավելագույնը ստանում են 15 ուիալ, իսկ երեխաները՝ 10 ուիալ: Չինական տեսակի թեյի պլանտացիաներում աշխատող բանվորների վայրագ շահագործումը աննախադեպ է: Բանվորների աշխատուժից առավելագույն օգուտը քաղելու նպատակով կալվածատերերը թեյի հավաքը կապալով են տալիս՝ յուրաքանչյուր կիլոգրամ թաց տերևի դիմաց 2 ուիալ վարձ վճարելով: Լահիջանի թեյի ֆաբրիկաներում ամեն մի կիլոգրամ թաց թեյի գինը միջին հաշվով 13 ուիալ է, այսինքն՝ կալվածատերը ամեն մի կիլոգրամ թեյից, մյուս ծախսերը դուրս գալուց հետո, 6 ուիալ օգուտ է քաղում: Եթե ամեն մի բանվոր՝ միջին հաշվով օրական տասը կիլոգրամ թեյ հավաքելով, քսան ուիալ վարձ է ստանում, ապա այդտեղից այդ վաճառում է 130 ուիալով և առնելվազն 60 ուիալ մաքուր օգուտ է ստանում<sup>2</sup>:

<sup>1</sup> (آمد مرد) «Նամեհ Մարզոմ», 23 սեպտեմբերի, 1947:

<sup>2</sup> (؛ ل. ٥٠) «Շահբաղ», 10 հուլիսի, 1953:

Այս բոլոր տվյալները ցույց են տալիս, որ Գիլանում նույնպես կալվածատերերը հսկայական եկամուտներ են ստանում: Այսպես օրինակ՝ 1946 թ. Կավամ-էս-Սալաթանեն Գիլանի իր կալվածքներից մեկ միլիոն 800 հազար ուիալ եկամուտ է ունեցել:

Գիլանի թեյի և բրինձի պլանտացիաներում բատրակություն են անում թե՛ հողազուրկ, և թե՛ սակավահող գյուղացիները: Բատրակություն են անում ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք ու անչափահասները: Գիլանում գլխավորապես բատրակություն են անում խալխալցիները՝ հարևան լեռնային շրջանի բնակիչները: Խալխալում դրուժությունը շատ ավելի ծանր է, և գյուղացիները ստիպված գալիս են Գիլան աշխատանքի. նրանք, լեռնաբնակ լինելով, առողջ են և ուժեղ, սակայն Գիլանի բրնձի դաշտերում սոսկալի ծանր պայմաններում աշխատելով ամբողջովին հյուծվում են, քայքայում իրենց առողջությունը, իսկ շատերը մահանում են:

Գորգան: Գորգանում բնակվում են թուրքմենական քոչվոր ցեղերը, որոնք բացի անասնապահությունից զբաղվում են նաև հողագործությամբ: Այդտեղ, ինչպես ընդունված է, ամեն մի «եղեսմաթից», որը հավասար է 1,4 հեկտարի, կալվածատերը ստանում է 1800 կիլոգրամ բերք: Միաժամանակ գյուղացին ստիպված է ջրի համար ամեն մի դեսմաթին վճարել 36 կիլոգրամ:

Թուրքմենսարայում քանի որ գյուղացիներն ունեն իրենց անասուններն ու սերմացուն, ապա վարձած հողի դիմաց նրանք պարտավորվում են կալվածատիրոջը տալ ցանված սերմի չափ վարձ: Այն թուրքմենները, որոնք ստիպված են լինում բատրակություն անել կալվածատերերի մոտ, կոչվում են կուլլուղչի (قوللوچى): Ռիդա շահի ժամանակ անասնապահությամբ զբաղվող թուրքմենները արոտավայրերի համար վճարում էին յուրաքանչյուր գլուխ ոչխարին՝ մեկ ու կես ուիալ, էջին՝ 3 ուիալ, կովին՝ 5 ուիալ, գոմեշին՝ 10 ուիալ, ձիուն, ուղտին, ջորուն՝ 12 ուիալ:

Այբբեջանի նահանգ: Դրուժությունը նույնն է նաև Իրանական Ադրբեջանում: Կալվածատիրոջն է պատկանում հողը, ջուրը և հաճախ էլ անասուններն ու սերմացուն: Կալվածատիրոջ բաժինը այստեղ ևս փոփոխական է. այն լինում է ընդհանուր բերքի  $\frac{1}{5}$ ,  $\frac{2}{3}$ ,  $\frac{1}{2}$  և այլ մասերը: Ադրբեջանում էլ, ինչպես գրում է «Բեսուլե Այնեդե» թերթը, կալվածատերերը հետևյալ ձևերով են թալանում գյուղացիներին.

1. Կալվածատիրոջ բաժին.
2. Պարհակներ և հարկեր.

<sup>1</sup> (امام مردم) «Նամե Մարդոմ», 11 սեպտեմբերի, 1947:



3. «Օժանդակութիւն» և պարտք, որ հետ է գանձվում կրկնակի շափերով:

4. Տուգանքներ:

5. Կոո. և Կեզար:

Մանր և բազմազան են իրանական Ադրբեջանի գյուղացիութեան պարհակները: Իրանական Մեջլիսի XIV նստաշրջանում հյուսիսային Իրանի դեպուտատներից մեկը Մեջլիսի նախագահին ուղարկած իր նամակում, խոսելով այդ պարհակների մասին, գրում է, որ Իրանական Ադրբեջանում կալվածատերերը բռնի ուժի և խռտանգումների եղանակով շարունակում են գյուղացիներից գանձել միջնադարյան «Երեզաթ» (عتد) կոչվող տուրքերը:

«Բեդաթները» հետևյալներն են՝

Հաֆթ Աբբասի, «եղդի արբասի», (այս տուրքը կոչվում է թե՛ պարսկերեն անունով և թե՛ միևնույն ժամանակ եղդի արբասի թուրքերեն դարձվածքով), մեկ քառասուներորդ, մարդագլուխ, հավ, ձու, անվարձ աշխատանք, ոչխար, ներքնակի դրամ, եզան տուրք, յուղ, ձիու դարի, հյուրերի ծախս և այլն, մինչև իսկ Մակուի գյուղերից մեկում նասրեդդին շահի մոր պատանքի անվամբ տուրք են ստանում... Լիզվանում հաջի էհթեշամը իր գյուղերից հետևյալ տուրքերն էր ստանում.

1. Ի հավելումն գյուղատիրական բաժնի, ամեն մի տնից մի հավ ու տասը ձու:

2. Ամեն մի տնից հինգ հարյուր ուիալ կանխիկ, ամեն մի հոտից մի գառ:

3. Հարյուր ուիալ մի զույգ եզից:

4. Ամեն մի գյուղացուց «մարդագլուխ» տասը ուիալ:

5. Անվարձ աշխատանք:

6. Մեկ քառասուներորդ:

7. Խարմանչիլիք և այլն<sup>2</sup>:

Ռիզաիեում, եթե կալվածատերը տալիս է հող ու սերմացու, ապա ստանում է բերքի կեսը, իսկ երբեմն էլ բերքի երկու երրորդը: Խոյի շրջանում կալվածատերերը «բաշփուլի» անվան տակ յուրաքանչյուր ոչխարից տուրք են ստանում երկու արբասի, ձիուց և կովից՝ 2,5 ուիալ, և էջից 3 ուիալ: Որոշ գյուղերում գյուղացիական ամեն մի ընտանիք տարեկան պետք է տա նաև մի զույգ ոչխար:

Մակուի շրջանի որոշ գյուղերում գյուղացիները տալիս են նաև հետևյալ հարկերը. մի աման պահեստի համար (ամեն մի ամանը

<sup>1</sup> (بسوی آينده) «Բեսուլե Այենդե», 3 մարտի 1952:

<sup>2</sup> «Հակաֆաշիստ թերթ», հայերեն, Թավրիզ, 12 սեպտեմբերի, 1945:

8,5 կիլոգրամ է), երկու աման քեդխուղային, որոշ քանակի յուղ և մի քանի ոչխար և այլն՝ «փեշքաշ» անվան տակ, յուրաքանչյուր կալից մի աման «աթ հակկի» (ձիու բաժին) անվան տակ: Բացի այս բոլորը 1—5 թուման էլ գլխահարկ են վճարում<sup>1</sup>:

Թավրիզից 40 կիլոմետր հյուսիս գտնվող Մուժումբար գյուղում գյուղացու տնկած ծառերի 5-ից մեկը պատկանում է աղային, ինչպես և խոտի՝ հինգ մասից մեկը: «Չբավականանալով դրանով, — կարգում ենք Թավրիզի «Հակաֆաշիստ թերթում», — պարոն գյուղատիրոջ մտքում հղացել է այն անհեթեթ գաղափարը, թե այդ հողամասի վրա փոխանակ ծառ տնկելու կամ աճեցնելու, գյուղացին կարող է ցորեն ցանել, և ահա մի նոր աուրք՝ չցանված ցորենի համար:

Այն գյուղացիները, որոնք այլևս գյուղում չեն և քաղաքում բանվորություն են անում, թեկուղ բացակա, համենայն դեպս նրանցից էլ ազահ կալվածատերը տուրքեր է գանձում<sup>2</sup>:

Եվ այսպիսով կալվածատերերը հսկայական եկամուտներ են քաղում իրենց կալվածքներից: Մակուի կալվածատերերից՝ Անալիխանումը հավաքում է տարեկան միայն հազար տոննա ցորեն:

Իրանական Ադրբեջանում և Քուրդիստանում իշխող ֆեոդալական հարաբերությունների մասին հետաքրքիր վկայություն ունի անգլիական «Contemporary Review» ժուռնալը. «Եթե որևէ մեկը, — կարգում ենք այնտեղ, — իսկապես ցանկանում է տեսնել գործող ֆեոդալիզմը, թող ճամփորդի դեպի Քուրդիստան և Ադրբեջան... Այդ մասերում խոշոր կալվածատերերը իրենց վարձակալներից պահանջում են բերքի երկու երրորդը և միաժամանակ հանդես են գալիս որպես վաշխառուներ 40 տոկոս շահույթով<sup>3</sup>:

Քուրդիստանի նահանգ: Այստեղ նույնպես վարկահողերի հիմնական մասը պատկանում է խոշոր կալվածատերերին՝ մալիքներին և խաներին: Վարձակալության պայմանները բազմազան են. նայած տեղին և սովորույթին: Կալվածատիրոջ բաժինը հիմնականում կախված է երկու գործոնից՝ հողի ու նրա վրա ցանվող կուլտուրայի բնույթից և արդեն մեր կողմից նշված գյուղատնտեսական տարրերի մեջ կալվածատիրոջ ունեցած մասնակցությունից: Միայն հողի դիմաց շոռոգվող հողերում կալվածատերը ստանում է բերքի մեկ տասներորդ մասը, իսկ ոռոգվող հողերում՝ մեկ հինգերորդը, բամբակի, բրնձի և ծխախոտի ցանքսից՝ մեկ երկրորդը, սակայն

<sup>1</sup> (سوی آینه) «Բեսուլե Այենդե», 3 մարտի, 1952:

<sup>2</sup> «Հակաֆաշիստ թերթ», Թավրիզ, 4 փետրվարի, 1944:

<sup>3</sup> «Contemporary Review», 1953, № 1055, page 263:

բնական է, որ կալվածատերերը բացի հողից, տրամադրում են նաև սերմացու և գործիքներ, որոնք գյուղացու բաժինը իջեցնում են մինչև մեկ երրորդ մասի: Դրանով, իհարկե, քուրդ գյուղացին չի փրկվում: Նա պարտավոր է նաև բազմաթիվ այլ տուրքեր վճարել:

Իրանական պաշտոնական «էթթելյաթ» թերթը 1952 թ. օգոստոսի 30-ի համարում տպագրել է մի հոդված, որտեղ մանրամասն խոսվում է քուրդ գյուղացիների պարհակների մասին: Հոդվածում նշվում է, որ օրինակ՝ Քուրդիստանի գյուղերում մի ջուֆթի դիմաց կալվածատերը ստանում է՝ 1) կանխիկ դրամ՝ 100—200 ուիալ, 2) յուղ՝ 2—3 ման, 3) պանիր՝ 1—2 ման, 4) միջակ գիրուֆյան հավ՝ 6 հատ, 5) բեգարային աշխատող գյուղից՝ 10—25 հոգի, 6) էշի փող՝ 200—480 ուիալ, շնայած կալվածատերը ավտոմեքենա է օգտագործում, 7) նոր տարվա նվեր՝ 150 ուիալ տարեկան: 50 զույգ լծկան ունեցող գյուղը պարտավոր է կալվածատիրոջը տալ 10 ուիար, 8) որոշ գյուղերում՝ 100—120 հատ քակոր, 9) ձու՝ 6—10 հատ, 10) 3—5 օր աղալի ջոֆթ» (այսինքն՝ գյուղացու լծկանը պետք է ձրի աշխատի կալվածատիրոջ համար), 11) որոշ գյուղերում՝ դարմանի երկու տասներորդը, 12) ցորենի և գարու բերքի երկուս ու կես տոկոսը՝ որպես պետական հարկ, 13) երկու բիդոն ցորեն հավելյալ ձևով, որը կազմում է մոտ 20 ման:

Թերթը նշում է, որ այս բոլորից բացի կալվածատերերը ստանում են նաև թիֆլիսանե, թեհրանանե, նոր տարվա, ոչնչի (تفلیسانه-تهرانانه-انانهداده-حاجانه) կոչվող տուրքերը:

Թիֆլիսի կոչվող տուրքի էությունն այն է, որ գյուղացին այժմ պարտավոր է հարյուր տարի առաջ կալվածատիրոջ պապի Թիֆլիս կատարած ճամփորդության ծախսերը հոգալու համար ըստ իր կարողության մի գումար վճարել:

Թեհրանանե տուրքը վճարվում է կալվածատիրոջ կնոջ Թեհրան կատարած ճամփորդության ծախսերի համար:

Կալվածատիրոջ ներկայացուցիչը՝ մոբաշիրը, իր հերթին ևս տուրք է գանձում, որը կոչվում է «ոչնչի» համար:

Իրանական Քուրդիստանի որոշ մասերում կա մի ուրիշ տուրք ևս, որը կոչվում է «սուրանե»։ Գյուղացին դա վճարում է կալվածատիրոջը, ամուսնության թույլտվություն ստանալու համար:

«Բեսուլյե Այնդե» թերթը այսպես է նկարագրում քուրդ գյուղացիության վիճակը. «Քուրդիստանի գյուղացիությունը բավական դժվարին պայմաններում է ապրում: Դեռևս հիմա էլ, XX դարի երկրորդ կեսին, ֆեոդալական տնտեսությունն է իշխում ամբողջ Քուր-

դիստանում: ...Ֆեհդալ-խոշոր կալվածատերը, տարբեր անվան տակ խլում է գյուղացիների ամբողջ ունեցվածքը»:

Իսֆահանգի նահանգ: Իսֆահանի նահանգում մեծ մասամբ բերքը բաշխվում է հետևյալ ձևով. երկու բաժին կալվածատիրոջը, մեկ բաժին գյուղացուն:

Իսֆահանի Հայդարաբադում և Ամիրաբադում բերքի երեք հինգերորդը հասնում է կալվածատիրոջը, երկու հինգերորդը՝ գյուղացուն: Իսֆահանից Շիրազ տանող ճանապարհի վրա գտնվող Գեհրիզ գյուղում կալվածատեր Չուբինեի հողերը մշակում են մոտ 4 հազար գյուղական ընտանիքներ: Գյուղացիներն իրենց աշխատութից բացի ուրիշ ոչինչ չունեն: Կալվածատերը տալիս է հողը, ջուրը, սերմացուն, անասունները, գյուղատնտեսական գործիքները, և վերցնում բերքի  $\frac{1}{5}$  մասը, շահաված դեռ մյուս տուրքերը:

«Էթթեկաթ» թերթը, խոսելով Իսֆահանի գյուղացիության վիճակի մասին, գրում է. «Չնայած Իսֆահանի գյուղացու գործադրած ամբողջ ջանքերին... բերքի սակավության և ապրուստի միջոցների թանկության պատճառով, նա մեծ մասամբ սոված է, իսկ շոր ու աղետային տարիներին սովից ստիպված կամ փախչում է ուրիշ վայրեր, կամ էլ ոչնչանում: Հատկապես Գարգան գյուղում նկատվել է, թե ինչպես գյուղացիները խոտով են սնվում»<sup>2</sup>:

Հավաղան: Համազանի շրջանը աչքի է ընկնում բերքի բաշխման բազմազանությամբ: Իրանական «Բանդե Մարդում» թերթը տպագրել է մի հետաքրքիր փաստաթուղթ, որը ցայտուն կերպով ցույց է տալիս Համազանի շրջանի գյուղացիների ծանր պարտավորությունները:

1953 թ. պատահում է այսպիսի մի դեպք: Համազանի շրջանում Նիգար Խաթուն գյուղի գյուղացիները մերժում են կալվածատիրոջ բաժինը տալ: Կալվածատերը արդարադատության օրգանների միջոցով պաշտոնական գրություններ է ուղարկում ամեն մի առանձին գյուղացու անունով, որով և պահանջում է իր բաժինը: Գրության մեջ ասվում է. «Ձեզ հայտնում ենք, որ Համազանի նահանգապետության, ժանդարմերիայի և արդարադատության մոտ ձևակերպված և գոյություն ունեցող գործերի, հետաքննությունների և կենտրոնական մարմիններին ուղղված բազմաթիվ զանգատների համաձայն, դուք այս տարի գյուղում խլրտում ստեղծելով և իմ ներկայացուցչին սպառնալով ու ճնշելով, տանուտերին փոխելով և վերջապես անընդունելի և ինքնագլուխ կերպով, ձեր ցանկությամբ

<sup>1</sup> (سوی آئندہ) «Բեսուլե Այենդե», 21 հունվարի, 1953:

<sup>2</sup> (اطلاعات) «Էթթեկաթ», 22 հուլիսի, 1953:

րևրբը հավաքել և ր և ամեն մեկը ըստ ձեր հայեցողության և առանց կալվածատիրոջ ուղղակի հսկողության, որոշ քանակի ցորեն հանձնելով, խուսափել ևք վճարել կալվածատիրական բաժնի մնացած ցորենը և դարին, նույնպես և դարմանն ու խոտը, այգուց և բանջարանոցից (սեյֆի) հասանելիք բաժինը, արոտավճարը (ալաֆ-չար), րևրբը քաղաք փոխադրելու վարձը և հողավճարը: Կալվածատիրոջ բաժինը ապահովելու համար արդարադատության պաշտոնական մասնագետը սահմանել է, որ յուրաքանչյուր զոջի (զույգ ևզ) դիմաց դուք պարտավոր եք վճարել՝ 1) ցորեն և գարի 6 խարվար, 2) դարման՝ 2 խարվար, 3) խաղող՝ 1 թանաբից (չվան) 150 ման, 4) բանջարանոցի 1 թանաբից՝ 500 ոհալ, 5) խոտի մեկ թանաբից՝ 1230 ման չոր խոտ, 6) խոտարածի դիմաց ամեն մի կովին, ևշին և այլն 20 ոհալ և ամեն մի այծին ու ոչխարին 10 ոհալ, 7) րևրբը քաղաքի պահեստը փոխադրելու վարձ՝ խարվարը 50 ոհալ, 8) տան հողավճարը մետրը մեկ ոհալ... Այս ամենը պետք է երեք օրվա ընթացքում վճարեք, եթե ոչ համաձայն իմ վրա, որպես կալվածատիրոջ ներկայացուցչի, դրված պարտականությունների, ես ստիպված կլինեմ՝ օգտվելով պետական օրենքի 3-րդ հոդվածից, ձևողանից այդ բոլորը պահանջել և գանձել կրկնակի շափով, ավելադնելով դրան նաև դատական ծախսերը»<sup>2</sup>: Այնուհետև թերթը շարունակում է, որ այդ միայն օրինական պահանջներ են, և եթե դրան ավելացնենք նասրեղդին շահի մոր պատանքի փողը, բեսմելահի, թուշուն թոցնելու, ծխելու, արևի, մոլայի և այլ տուրքերը, ապա «թալանչիների ոճրագործությունների միայն մի մասը թվարկած կլինենք»:

«Վահդաթե Ասիա» թերթը հաղորդում է, որ Համադանի խանդաբ գյուղի գյուղացիները, քաղաք գալով, գանգատվել են կալվածատիրոջ արարքներից: «Գյուղացիները ասել են, որ կալվածատերը, բացի իր բաժնից, մեզանից հետևյալ տուրքերն է գանձում. ամեն շաբաթ մի շարաք կաթ, խաղողի յուրաքանչյուր 10 վազ ունեցող այգուց 5 ոհալ, փոխանակ խաղողի յուրաքանչյուր 30 վազ ունեցող այգուց 5 ոհալ ստանալու, ամեն մի մարդուց մի հալ և ամեն մի պտուղի ծառից բերքի մեկ շորրորդ մասը: Այս տարի, որովհետև հավի վաճառքը իրեն համար դժվար էր, մեզանից ամեն մի հավի փոխարեն 40 ոհալ պահանջեց: Գյուղացիներին ստիպում էր, որ սարից մինչև գյուղ, որը 10 ֆարսախ (70 կիլոմետր) տարածություն է, մի բեռ ձյուն բերեն իրեն համար, և ով որ չէր

<sup>1</sup> Թանաբը հավասար է 0,8 հեկտարի:

<sup>2</sup> (بانك مردم) «Բանգե Մարդոմ», 24 ապրիլի, 1953:

բերում 50 ուիալ տուգանվում էր: Իսկ այս տարի մտագիր էր ձյունի փոխարեն 5 ման ցորեն ստանալ<sup>1</sup>:

Թեհրան: Թեհրանի շրջանում տարածված է գավառների ձև (گاو بندی) (լծկանի տեր գյուղացիներ): Յուրաքանչյուր գավառնորունենում է 4—6 հզ: Թեհրանի շրջանի գյուղացիները անասուններ չունեն, ուստի և նրանք պայմանագրային կարգով գավառների հետ միասին ձեռնարկում են հողի մշակման: Յուրաքանչյուր ևզ չորս աշխատավոր գյուղացու հետ միասին կազմում է մեկ միավոր, որը կոչվում է «բունեհ» և ի վիճակի է 8—10 խարվար հացահատիկ մշակելու: Բունեհի մեջ ներգրավված գյուղացիներից ամեն մեկը ունի առանձին պարտականություն՝ մեկը «սարաբյար» է, մյուսը՝ «դոմբի արյար», որոնք հիմնականում զբաղվում են հողի ոռոգումով ու քաղհանով, իսկ մյուս երկուսի պարտականությունն է հողի հերկումը և ցանքսը:

Բերքը սկզբից բաշխվում է գավառների և կալվածատիրոջ, իսկ եթե կալվածատերը արենգով է տվել ինչ-որ երրորդ անձնավորության, ապա նրանց միջև, որից հետո գավառների բաժինը բաշխվում է նրա և գյուղացիների միջև: Երբեմն այդ բաշխումը հետևյալ պատկերն է ունենում: Բերքի 50% վերցնում է կալվածատերը՝ հողի և ջրի դիմաց, 25% գավառնոր՝ անասունների և սերմացուի դիմաց, իսկ մնացած 25% էլ բաժանվում է գյուղացիների միջև: Մյուս կողմից գյուղերում, — գրում է «Էթթեկաթ» թերթը, — միայն գավառների դրուժյունն է համեմատաբար լավ, իսկ գյուղացիների դրուժյունը շատ վատ է և միշտ հուսահատ վիճակում են ապրում, քանի որ բացարձակապես ապագայի նկատմամբ վստահ չեն և միշտ գավառների կողմից ենթակա են վտարման...»<sup>2</sup>:

«Էթթեկաթ» թերթը հետաքրքիր տվյալներ է տալիս Թեհրանի շրջակայքում չորս հզ ունեցող մի գավառների եկամտի մասին: Երկու հզան օգնություն չորս գյուղացիները կարող են ցանել 10 խարվար աշնանացան և 2 հեկտար զարնանացան: Աշնանացանը մեկին տասներկու հաշվով տալիս է 120 խարվար հացահատիկ և 150 խարվար դարման, իսկ զարնանացանից ստացվում է 16 հազար ուիալ բերք: Կալվածատիրոջ բաժինը առանձնացնելուց հետո մնում է 60 խարվար հացահատիկ, 75 խարվար դարման և 8 հազար ուիալ դրամ, որի կեսը վերցնում է գավառնոր անասունների և

<sup>1</sup> (وحدت آسیا) «Վահդաթե Ասիա», 21 սեպտեմբերի, 1953:

<sup>2</sup> (اطلاعات) «Էթթեկաթ» 20 հուլիսի, 1953:

սերմացուի դիմաց և միայն մնացած մասը բաժանվում է 4 գյուղացիների միջև<sup>1</sup>։

Բայց այս կատարվում է լավագույն դեպքում։ Շատ գյուղերում դրուժյունը անհամեմատ ավելի վատ է։ Օրինակ, Խարում և Վարամինում գավառները շորս գյուղացիների և մեկ եզան օգնությամբ, տարեկան ստանում է միջին հաշվով 100 խարվար հացահատիկ։ Հողերականներին և այլոց տրվող բաժինը, որի մասին կխոսենք քիչ հետո, մոտավորապես կազմում է 5 խարվար։ Մնացած 95 խարվարը բաժանվում է կալվածատիրոջ և գավառների միջև։ Գավառները իր բաժնից՝ 47,5 խարվարից վերցնում է սերմացու, մոտավորապես 8—10 խարվար։ Այնուհետև նա առանձնացնում է վարչական պաշտոնյաների բաժինը, որից հետո մնացածը բաժանում է երկու մասի՝ մեկը իրեն, իսկ մյուսը՝ շորս գյուղացիներին։ Շատ գյուղերում դրուժյունը էլ ավելի վատ է. օրինակ՝ Իտալական կոմունիստական պարտիայի օրգան «Ունիտա» թերթի հատուկ թղթակից Մաշոկին, 1951 թ. այցելելով Իրան, գրում է. «Իմ հավաքած տեղեկությունները վկայում են հետևյալի մասին. Շարեզանում (Թեհրանից 20 կիլոմետր հեռավորության վրա հինգ հոգուց բաղկացած գյուղական ընտանիքը մեկ տարվա աշխատանքի համար ստացել էր 50—55 կիլոգրամ ցորեն, 105 կիլոգրամ գարի և 30 թուման դրամ։ Ընդ որում պետք է նշել, որ տարվա ընթացքում աշխատել են ընտանիքի բոլոր հինգ անդամները... Մի իտալացի բժիշկ, որն աշխատում էր Իրանում... պատմեց ինձ, որ... ամսական 150 ուիալ փող աշխատող գյուղացին Իրանում համարվում է երջանիկ։ Իրանական գյուղերում այսպիսի ասացվածք կա՝ «ուտում ես այնքան, որպեսզի չմեռնես սովից»<sup>2</sup>։

Հետաքրքրական է նաև հետևյալ փաստը։ 1954 թ. փետրվարին Թեհրանի շրջակայքի Խանլը գյուղի հողերը վաճառելու կապակցությամբ ծիսակատարության ժամանակ շահը մի գյուղացուց հետաքրքրվում է նրա տարեկան եկամտի մասին։ Գյուղացին պատասխանում է, որ տարեկան 60 խարվար ցորեն և 2 խարվար բամբակի բերք է ստանում, որից միայն 10—12 խարվարն է իրեն մնում<sup>3</sup>։

Աբալ (նախկին Սուլթանարադ)։ Արաքում ընդունված պրակտիկական «սեքուլիզմ» է։ Եթե բերքի մեկ երրորդը կալվածատերն է վերցնում և երկու երրորդը գյուղացուն թողնում, ապա դա կոչվում

<sup>1</sup> (اطلاعات) «Թթեկաթ», 30 հուլիսի, 1953։

<sup>2</sup> М. Мачокки, Иран в борьбе, Москва, 1953, стр. 112.

<sup>3</sup> (اطلاعات) «Թթեկաթ», 3 փետրվարի, 1954։

է սեքութ, բայց երբ կալվածատերը տրամադրում է նաև սերմա-  
դուն, մի բան որ շատ հաճախ է պատահում, և վերցնում է բերքի  
երկու երրորդը, ապա դա կոչվում է «սեքութն մաաքուս» (سكوت  
معهور): Առաջին ձևը հաճախ խախտվում է կալվածատերերի կող-  
մից: «Բեսուլյե Այենդե» թերթը գրում է. «Գյուղերի մեծ մասում կալ-  
վածատերերը խուսափում են հենց այդ շինծու կանոնից էլ: Օրինակ՝  
Սողուզ գյուղում շնայած, որ իրենք գյուղացիներն են հողերը մշա-  
կելի դարձրել, անասունը և սերմացուն էլ գյուղացունն է, այդու-  
հանդերձ կալվածատերերը բերքի կեսը վերցնում են որպես արբա-  
րի բաժին: Ցարահանի՝ Ցարմահին գյուղում այդպիսի հողերից  
կալվածատերերը բերքի երկու երրորդն են վերցնում: Ցարահանի  
հողք և Քալխար գյուղերում կալվածատեր Ալի Մանսուրը (նախ-  
կին պրեմիեր) դեյմի հողերից մեկ հինգերորդ բաժին էր վերցնում,  
մինչդեռ անցյալներում մեկ քառասուներորդ էին վերցնում... Որոշ  
գյուղերում «արևի տուրք» է գանձվում: Այս կարգը տարածված է  
այն վայրերում, որտեղ շամիչ պատրաստելու համար խաղողը  
արևի տակ են փռում, և կալվածատերը արևի ճառագայթների հա-  
մար գյուղացուց տուրք է պահանջում»<sup>1</sup>:

Արաքում կան նաև մի քանի հայաբնակ գյուղեր: Հայ գյու-  
ղացիները էլ ավելի ուժեղ շահագործման են ենթարկվում: «Նո-  
վիդե Այենդե» թերթը գրում է. «Սեփահարիները Արաքում հայ  
գյուղացիներին գյուղերից «մուսուլման շինելու» անվան տակ  
վտարում են: Կալվածատերերը «հայ լինելը», պատրվակ են դարձ-  
րել և հայ-գյուղացիներին մշակելի հող տալու համար 200 թուման  
կաշառք են պահանջում: Հայաբնակ վայրերում խաղողի վաղերի  
հարկերը 4 անգամ ավելացրել են և հակառակ սովորության առ-  
վույտից էլ հարկ են վերցնում»<sup>2</sup>:

Սավեի շրջանի Բայաթ գյուղում կալվածատիրոջ բաժինը բեր-  
քի 1/5 մասն է կազմում: Խոսելով Արաքի գյուղացիության վիճակի  
մասին, «Նազմեյե Նո» թերթը գրում է. «Արաքի 400 հազար բնակ-  
չության 90 տոկոսը անհող գյուղացիներ են: Մեկ գյուղացու ըն-  
տանիքի միջին եկամուտը տարեկան 150—200 ման ցորենից ու  
գարուց ավելին չի»<sup>3</sup>:

Յագդ: Յագդի շրջանում անձրևները շատ հազվադեպ են և վար  
ու ցանքի համար ջուրը ստացվում է միայն կանաթներից:

<sup>1</sup> (بسو، آئندہ) «Բեսուլյե Այենդե», 13 փետրվարի, 1953:

<sup>2</sup> (نويد آئندہ) «Նովիդե Այենդե», 2 հուլիսի, 1953:

<sup>3</sup> (نغمه نو) «Նազմեյե Նո», 14 հոկտեմբերի, 1953:



Յաղղի կալվածատիրական գյուղերում բերքի բաշխումը միանգամայն տարբեր ձևով է կատարվում: Գյուղացին կալվածատիրոջից հողը և ջուրը առանձին-առանձին է վարձում, որոնց դիմաց վճարում է որոշակի գումար: «Այսպես օրինակ, — գրում է «Էթթելաթ»-ը, — հողի յուրաքանչյուր կաֆիզը (հողի միավորը Յազգում կաֆիզն է, որը հավասար է 936 մետրի) վարձում են 50 ման ցորենով, իսկ ջուրն էլ առանձին՝ մինչև կումը 70 թումանով»<sup>1</sup>:

Յաղղի մոտ գտնվող Ալիաբազ, Հուսեյնաբազ և Հասանաբազ գյուղերում ջրի վարձի միջին գումարը 1945 թ. ամեն մի սարույ (10 րոպեի ջուր) դիմաց 7—10 ման ցորեն կամ գարի էր<sup>2</sup>:

Անարայի շրջանում շնայած միայն հողը, ջուրը, սերմացուն և կալվածատիրոջը պատկանում, իսկ գյուղացիներին՝ անասունները, այգուհանդերձ կալվածատերը փոխանակ բերքի <sup>3</sup>: վերցնելու, վերցնում է <sup>1</sup>/<sub>6</sub>-ը և գյուղացիներին մնում է <sup>1</sup>/<sub>6</sub>-ը:

Ֆարսի նահանգ: Ֆարսի նահանգի Ֆասայի շրջանում կալվածատերերը վերցնում են բերքի <sup>1</sup>/<sub>3</sub> մասը:

Եիրալի, Բելղայի, Մաբվդաշտի, Սարվիստանի շրջաններում. արհեստական ոռոգվող հողերում կալվածատերը տալիս է հողը, ջուրը, սերմացուն և վերցնում է բերքի <sup>2</sup>/<sub>3</sub> մասը: Այն հողերում, որոնք առաջ չէին ցանվում և որտեղ կալվածատերերը վաչկատուն ցեղերի թախանի վախից չէին համարձակվում գյուղացիներին սերմացու տալ, այժմ մշակելով սովորութուն է դարձել, որ սերմացուն իրենք գյուղացիները տան: Այս պարագայում գյուղացին կալվածատիրոջը հողի և ջրի դիմաց տալիս է բերքի <sup>1</sup>/<sub>3</sub> մասը: Հողը օգտագործելու դիմաց նովրուզին (իրանական նոր տարուն) գյուղացին կալվածատիրոջը պարտավոր է 100 ձու, կամ երկու հավ տալ:

Քամֆիրուղ գյուղում, որտեղ բրինձ է ցանվում, կալվածատիրոջ բաժինը յուրաքանչյուր հեկտարին սահմանված է 220 ման բրինձ, և 5 ման չամփա (բրնձի մի տեսակ)<sup>3</sup>:

Ջահրումում տարածված է նաև գավառադալին սիստեմը: Եթե երկու դավրանդ միասին են աշխատում և յուրաքանչյուրն ունի մեկ հզ, ապա բերքի իրենց բաժինը նրանք կիսում են հավասարապես: Եթե որևէ գավառադ ունի երկու հզ և աշխատում է երկու գյուղացու օգնությամբ, ապա իրեն հասանելի բաժնի կեսը նա:

<sup>1</sup> (اطلاعات) «Էթթելաթ», 22 սեպտեմբերի, 1953:

<sup>2</sup> A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, London, 1953, page 318.

<sup>3</sup> (اطلاعات) «Էթթելաթ», 18 հոկտեմբերի, 1953:

վերցնում է որպես գավառահրե (եզան բաժին, ٥ ٠٠٠), հով մնացածը երկու գյուղացիները կիսում են հավասարապես: Դեյմի հողերում գավառահրեները իրենց օգնող գյուղացիներին վճարում են երկու ձևով:

1) եթե անձրևներ չեն լինում և ցանքսը ոչնչանում է, սերմացուի կեսի չափ, 2) իսկ եթե բերքը հաջող է լինում՝ բերքի մեկ հինգերորդ մասը: Այս ձևը կոչվում է «յակթար»:

Խիրում յուրաքանչյուր հողամասում աշխատում են հինգ հոգի, որոնցից մեկը ինքը գավառահրե է և տրամադրում է մի զույգ եղ: Բերքի երեք քառորդը վերցնում է կալվածատերը՝ հողի, շրի և սերմացուի դիմաց, մնացած մեկ քառորդի կեսը վերցնում է գավառահրե, իսկ մյուս կեսը բաժանվում է շորս գյուղացիների միջև: Այսպիսով յուրաքանչյուր գյուղացի ստանում է աշնանացանի մեկ երեսուներկուերորդ մասը, և գարնանացանի մեկ քսանչորսերորդ մասը: Ի հավելումն այս շնչին վարձատրության նրանք ստանում են նաև «թահի քուրեհ» կոչված վարձը, որը տրվում է նրանց նախքան բերքի բաշխումը. դա հավասար է 25 ման հացահատիկի յուրաքանչյուր 1000 մանից, այսինքն՝ բերքի 2,5%: Այս գումարը հավասարապես բաժանվում է շորս գյուղացիների միջև և գավառահրե նրանից մաս չի ստանում: Մի շնչին գումար էլ ընդհանուր բերքից հատկացվում է շորս գյուղացիներին հետևյալ երեք անվան տակ. մալիբի՝ կոշիկի համար (Ֆարսում կտորից կարված գիվե պարսկական կոշիկը կոչվում է մալիբի), դրոքոնի՝ հնձելու համար և խարմանքուբի՝ կալսելու համար:

Սիստանի նահանգ: Սիստանում կալվածատերերը հողից և օրից բացի սովորաբար տալիս են նաև սերմացուն, իսկ գյուղացիները անասունները վարձում են ուրիշից: Կալվածատերերը վերցնում են բերքի  $\frac{2}{3}$ -ը, իսկ որոշ դեպքերում էլ  $\frac{3}{5}$ -ը:

Գյուղատնտեսական տնտեսության միավորը Սիստանում «Փագավի» (١٥٠٠) է կոչվում. սա բաղկացած է հինգ գյուղացուց, որոնք ցանում են 8 խարվար (2400 կիլոգրամ) սերմացու: Գյուղացիները անասունները վարձում են գավառահրեից (անասնատերերից), որոնց որպես վարձ տալիս են բերքի երկու տոկոսը, որպես կալսող եզան դրունի կոչվող վարձ, իսկ 30 տոկոսը՝ որպես հերկող եզան վարձ:

Իրանական «Նամեհ Մարդոմ» թերթը հաշվել է, որ այուրաքանչյուր սիստանցի գյուղացու ընտանիքի բաժինը միջին թվով

<sup>1</sup> (نام مراد) «Նամեհ Մարդոմ», 1948, № 253:

«արևկան 823 կգ ցորեն և գարի է կազմում... այսինքն՝ միայն 2569 տիալ»:

Սխտանի որոշ մասերում մինչև այժմ էլ կիրառվում է մի պրակտիկա, ըստ որի բերքը բաժանվում է երեք մասի, մի մասը յվերցնում է կալվածատերը, մնացածից հանվում է սերմացուն, որը նույնպես վերցնում է կալվածատերը, այնուհետև պակասեցվում է անասունների վարձը և գյուղական պաշտոնյաներին հասանելիք մյուս բաժինները, որից հետո միայն մնացածը բաժանվում է 7 մասի: Հինգ մասը հասնում է փաղավի վրա աշխատող հինգ գյուղացիներին, վեցերորդ «մարդեմուրդ» (մեռած մարդ) կոչվող մասը նորից վերցնում է կալվածատերը, այն պատրվակով, որ իբր թե ինքն էլ որպես վեցերորդ մարդ աշխատել է, իսկ յոթերորդ մասը հատկացվում է սալարին՝ դաշտային աշխատանքները հսկողին:

Բերքի բաշխման վերահիշյալ բազմաթիվ ձևերից բացի Իրանի տարբեր մասերում կիրառվում են այլ ձևեր էլ, որոնք այս կամ այն կերպ առնչվում են մեր հիշատակած ձևերին:

Այն ամենը ինչ ասվեց, գյուղացիներից գանձվող բազմաթիվ սուրբերի, պարհակների մասին դեռ ամբողջը չէ: Գյուղացին իր վրա կրում է բազմաթիվ ուրիշ ծանր պարտավորություններ ևս:

Գյուղացու նկատմամբ դաժան վերաբերմունքի և խիստ շահագործման լավագույն ասպացույց է միջնադարյան կոռային աշխատանքի պահպանումն իրանական գյուղում: Բացի այն, որ գյուղացին պարտավոր է կալվածատիրոջը տալ բերքի առյուծի բաժինը, նա պարտավոր է նույնպես որոշ շրջաններում բեգարություն անել հօգուտ կալվածատիրոջ: Գյուղացու համար շատ ծանր է և անտանելի կոռային աշխատանքը՝ այսպես կոչված «բիգարին» (بیگاری), Բիգարին ընդունված է հատկապես Քուրդիստանում, Ազրբեջանում, Խուզիստանում, Ֆարսի որոշ մասերում, Քերմանում և Արևելյան Իրանում: Այգ մասին խոսելով, «Բանգե Մարգոմ» թերթը գրում է. «Իրանի արևմտյան, հարավային և կենտրոնական շրջանների ֆեոդալական գյուղերում, մինչև իսկ հյուսիսում և Ադրբեջանում՝ դեռևս տարածված է բեգարության դաժան սովորությունը»<sup>2</sup>:

Կոռային աշխատանքի համատարած ձև է գյուղացու կողմից կալվածատիրոջ բաժնի փոխադրումը կալից մինչև պահեստ, որը հաճախ գտնվում է քաղաքում: Ադրբեջանում, գյուղացու պարտավորությունների մեջ է մտնում ոչ միայն կալվածատիրոջ բաժնի

<sup>1</sup> (نامه مردم) «Նամե Մարգոմ», 1948, № 263:

<sup>2</sup> (بانك مردم) «Բանգե Մարգոմ», 21 մարտի, 1953:

փոխադրումը, այլ մինչև իսկ կալվածատիրոջ կողմից պետութայնը տրվող նատուրալ հարկի փոխադրումը: Նույնը կատարվում է նաև Քուրդիստանում, Քերմանում և այլ նահանգներում:

Գյուղացիներից բեզարային աշխատանքը պահանջվում է տարբեր ձևերով. օրինակ՝ յուրաքանչյուր տնից, վարելահողից կամ ջրի բաժնից, և այն բաղկացած է լինում սահմանված օրերի՝ գյուղացու կամ թե նրա անասունների ձրի աշխատանքից: Գյուղացու ձրի աշխատանքը օգտագործվում է շենքերի շինարարության, իրիզացիոն կառուցումների, ճանապարհաշինության մեջ, կամ և՛ գյուղատնտեսական աշխատանքներում: Քուրդիստանում, օրինակ. սահմանված է, որ յուրաքանչյուր ջուֆթի դիմաց գյուղացին որ պարտավոր են մի քանի օր բեզարային աշխատանք կատարել, կամ անասուններ տրամադրել: Սանանդաջի մոտ գտնվող Հասանաբադ գյուղում ամեն մի ջուֆթից պահանջվում է տարեկան 7 օրվա գյուղացու աշխատանք և 4 օրվա էջի աշխատանք: Դա կոչվում է «հաֆթ նաֆարի» 7 հոգանոց (هفت نفری) և «չահար օլադի» շորս էջանոց (چهار آغی) պարտականություն: Բացի այդ գյուղացիները պարտավոր են զարնանը հողատիրոջ այգում աշխատել: Յուրաքանչյուր տնից էլ պահանջվում է երկու օրվա ձրի աշխատանք<sup>1</sup>:

Արաքում որոշ օրեր գյուղացիները գնում են կալվածատիրոջ մոտ և աշխատում են նրա այգում, նորոգում շենքերի կտուրները. ձյունից մաքրում կտուրներն ու բակերը, տնկում ծառեր և այլն<sup>2</sup>:

Դայանում ամեն մի ջուֆթից գյուղացու շորս օրվա աշխատանք է պահանջվում: Կալվածատերը տալիս է ընդարձության գնացող գյուղացիների սնունդը և ուրիշ ոչինչ:

Մանր է հատկապես կառավարության կողմից բռնի կերպով գյուղացիներին ձրի աշխատեցնելը: Ժանդարմները գյուղացիներին քշում են ուղմական նշանակություն ունեցող ճանապարհաշինության կամ զորանոցների կառուցման համար, երբեմն մինչև իսկ բերքահավաքի ժամանակ:

Բեզարային աշխատանքներ կատարելուց հրաժարվելը մեծ հանցանք է համարվում. «Բեսուլե Այենդե» թերթը գրում է, որ «այն գյուղացիները, որոնք հրաժարվում են բեզարությունից. խստագույն ձևով պատժվում են: Այս տարի աշնանը կալվածատեր Ահմադ Ազիզին Մահաբադի շրջանում մի գյուղացու ստիպում է բեզարություն անել, բայց գյուղացին բողոքում է և ասում. աշխատանքը պետք է վարձի դիմաց կատարվի: Ահմադ Ազիզին

<sup>1</sup> (بسوی آینده) «Բեսուլե Այենդե», 21 հունվարի, 1953:

<sup>2</sup> (بسوی آینده) «Բեսուլե Այենդե», 13 փետրվարի 1953:

կարգավորում է, որ այդ դյուղացուն, կնոջ, եղբխանների և գուլքի հետ այրել իր տնակում: Ռիշսֆիդների (ծերունիների) խնդրանքով կալվածատերը այդ մտքից հրաժարվում է: Բայց պնդում է, որ վիրավորանքի հատուցման համար գյուղացին թրիք ուտի»: Այս լրորից հետո թերթը ավելացնում է, որ «կարելի է հազարավոր նման օրինակներ բերել»<sup>1</sup>:

Անկախ սահմանված օրերից կալվածատերը հարկ եղած դեպքում կարող է կանչել գյուղացուն իր հողերի վրա աշխատելու: Այս պարտականությունը Քուրդիստանում կոչվում է գալ, որը կատարվում է ի հավելումն որոշակի սահմանված աշխատանքային օրերի: Կոռի այս ձևից օգտվում են ոչ միայն խոշոր կալվածատերերը, այլ նաև խուրդեմալիքները:

Իրանական Ադրբեջանի Վարդաբան, Ուզունդիլ գյուղերում չորս օրվա անվարձ աշխատանք է պահանջվում յուրաքանչյուր «փանզդահից»՝ տասնհինգյակից (գյուղի վարելահողերը բաժանվում են 93 փանզդահի): Խուրդիստանում պահանջվող բեգարային աշխատանքը համեմատաբար այլ նահանգների ավելի թեթև է, յուրաքանչյուր վարելահողի դիմաց գյուղացին պարտավոր է մեկ օր բեգարություն անել:

Ջանջանի Խամսեում ջուֆթից մեկ էջ է տրվում բերքի կալվածատիրոջ բաժինը փոխադրելու համար և ամեն մի ընտանիք էլ մեկ օրվա բեգարություն է անում կալվածատիրոջ շենքը կառուցելու կամ այգիները մշակելու համար<sup>2</sup>:

Որոշ շրջաններում կիրառվում է մի այլ պրակտիկա: Կալվածատերը իր հողերը վարձով տալիս մի կտոր էլ թողնում է իրեն համար: Գյուղացի-վարձակալները բացի արենդով վերցրած հողերից, ձրի կերպով մշակում են նաև կալվածատիրոջ այգ կտոր հողամասը: Դա Դիդֆուլում հայտնի է որպես «գարա», իսկ Իրանի արաբաբնակ վայրերում՝ որպես «շիքարթե»<sup>3</sup>:

Քերմանում բեգարը կոչվում է «քալուն»: Քալունը ավելի ծանր է այն շրջաններում, որտեղ խաները դեռևս շարունակում են իրենց իշխանությունը:

Ջավհհում բեգարային աշխատանքը կատարվում է մի այլ ձևով: Ամեն մի սահրային կցված է մի մարդ, որը կոչվում է «բիգրեհ»: Նա ծառայում է կալվածատիրոջը, բայց նրան վճարում են սահրան մշակող գյուղացիները:

<sup>1</sup> (سوی آینه) «Բեհուլե Այենդե», 21 հունվարի, 1953:

<sup>2</sup> (سوی آینه) «Բեհուլե Այենդե», 28 դեկտեմբերի, 1952:

<sup>3</sup> A. K. S. Lambton... p. 332:

Չատուկ մի ձևի բեգարային աշխատանք է կիրառվում Սիսթանում, որը կոչվում է «հաշար»: Դա պահանջվում է իրիզացիոն ցանցերի կառուցման և դրանց նորոգումների համար: Սիսթանի խալիսե հողերում այդպիսի բեգարային աշխատանք է ստանում կառավարությունը: Կառավարական պաշտոնյաները Սիսթանի գյուղացիների բեգարային աշխատանքը օգտագործում են ոչ միայն իրիզացիոն ցանցի, այլև ուրիշ աշխատանքների համար, ինչպես օրինակ ճանապարհաշինության և այն էլ ոչ միայն Սիսթանում, այլ մինչև իսկ ուրիշ նահանգներում, օրինակ՝ Բլուչիստանում:

Բեգարային աշխատանք է նաև այն պարտականությունը, ըստ որի գյուղացին պարտավոր է որոշ քանակի վառելիքայտ մատակարարել կալվածատիրոջը: Դա տարածված է համարյա իրանի բոլոր շրջաններում:



Մենք կանգ առանք իրանի տարրեր շրջաններում գյուղացիներից գանձվող ունտայի, տուրքերի և պարհակների բազմաթիվ ձևերի ու շահիների վրա: Փաստերը ցույց են տալիս, որ միջնադարյան, ֆեոդալական դաժան եղանակներով շահագործվող իրանի բնակչության գերակշռող մեծամասնությունը կազմող գյուղացիությունը, իր վրա է կրում կալվածատերերին տրվող ունտայի, ամբողջ պետական հարկերի ծանր բեռը, և այլ տնտեսական ու արտատնտեսական պարտավորություններ, որոնք հասցրել են նրան ծայրահեղ չքավորության: Անհրաժեշտ է նշել, որ իրանի գյուղացիության այս վիճակը իր հերթին հանդիսանում է երկրի տնտեսության զարգացումն ու ժողովրդական մասսաների ամենատարրական իրավունքների պահպանման գործն արգելակող էական հանգամանքներից մեկը:

Г. М. ЕГАНЯН

ЗЕМЕЛЬНАЯ РЕНТА В СОВРЕМЕННОЙ  
ИРАНСКОЙ ДЕРЕВНЕ

Резюме

На основе критического анализа иностранных источников и, в первую очередь, материалов современной иранской прессы, в статье освещаются формы угнетения крестьянских масс Ирана. Ввиду специфики экономического развития окраин Ирана в статье дано общее и дифференцированное исследование существующих налоговых институтов и земельной ренты в Мазендаране, Гиляне, Азербайджане, Курдистане, Хорасане, Фарсе, Исфагане, Систане, а также в районах Тегерана, Хамадана, Арака, Иезда и других городов.

В статье также рассматриваются многообразные формы повинностей, категории и размеры дани, виды и способы распределения урожая, основанные на «унифицированной» старинной «пятичленной формуле разделения урожая», узаконивающей произвол и жестокую эксплуатацию крестьян.

Иранское крестьянство несет на себе всю тяжесть выплачиваемых помещикам ренты, государственных налогов и других экономических и внеэкономических повинностей, способствующих росту крестьянского движения, усилению борьбы за землю, за демократические свободы и изгнание из Ирана империализма.

Р. Г. СААКЯН

### К ВОПРОСУ О СОВЕТСКО-ТУРЕЦКОМ ДОГОВОРЕ 1925 ГОДА

Договор о ненападении и нейтралитете, заключенный между Советским Союзом и Турцией 17 декабря 1925 г., слабо освещен в нашей исторической литературе. В работах советских авторов по новейшей истории Турции этому вопросу (и вообще советско-турецким взаимоотношениям) уделено незаслуженно мало места. Между тем, вся история советско-турецких отношений и, в частности, рассматриваемого периода как в турецкой, так и в западной буржуазной историографии освещается тенденциозно, а очень часто грубо фальсифицируется.

Турецкие политические деятели и историки в своих работах либо просто умалчивают значение договора для Турции, «забывая» при этом о положительной оценке, данной самой же турецкой прессой того времени, либо, вопреки истине, заключение договора объясняют страхом Советского Союза перед блоком капиталистических государств. Так, например, реакционный турецкий журналист Ахмед Шюкрю Эсмер в своей книге «Siyasi tarih» пишет, что Советский Союз заключил договор перед страхом Локарно<sup>1</sup>, пытаясь скрыть тот факт, что в заключении договора была прежде всего заинтересована сама Турция. Подобное ложное объяснение он дает и в статье, опубликованной в газете «Улус»<sup>2</sup>. Грубо

<sup>1</sup> Ahmet Şükrü Esmer, Siyasî tarih (1919—1939) Ankara, 1953, s. 33.

<sup>2</sup> См. „Ulus“ 21/X 1957.

Подробно об этом см. А. Ф. Миллер, Против фальсификации истории советско-турецких отношений. По поводу статьи Ахмеда Шюкрю



фальсифицирует историю советско-турецких отношений начала 20-х годов и бывший посол Турции в Москве генерал Али Фауд Джебесой<sup>1</sup>.

Английские историки советско-турецкому договору дают противоречивые и односторонние оценки. Одни авторы считают договор победой турецкой дипломатии<sup>2</sup>, другие—дипломатическим успехом Г. В. Чичерина<sup>3</sup> или же утверждают, будто Советское правительство воспользовалось спором, возникшим между Великобританией и Турцией из-за Мосула<sup>4</sup>. Английский историк Арнольд Тойнби, написавший совместно с К. Керквудом большую книгу о Турции, наоборот, признает, что Чичерин не воспользовался благоприятной возможностью, создавшейся для него решением Лиги наций о Мосуле<sup>5</sup>. В книге другого английского автора—Эдуарда Верс-Ходжа—о внешней политике Турции 1918—1948 гг. просто утверждается, что Турция, имевшая в то время в лице Великобритании «ненавистного империалистического врага, вынуждена была вернуться к своему русскому якорю». Не разобравшись в сложившейся тогда обстановке автор пишет, что «подписание этого пакта может показаться странным в свете отказа турецкой республики допустить распространение большевистской доктрины в Турции»<sup>6</sup>.

Работы французских авторов<sup>7</sup> более поверхностны, носят компилятивный характер; о советско-турецких взаимоотношениях говорится очень мало, в общих чертах. В объемистой книге французского историка Дюрозеля, посвящен-

Эсмера в газете „Улус“, „Международная жизнь“, 1958, № 2, стр. 103—106, его же, Еще раз об исторических экскурсах Эсмера, „Международная жизнь“, 1958, № 6, стр. 108—111.

<sup>1</sup> См. *Ali Fuat Cebesoy*, *Moskova hatıraları* (21/11 1920—2/6 1922) İstanbul, „Vatan“ Neşriyatı, 1955.

<sup>2</sup> *G. L. Lewis*, *Turkey*. London, 1957, p. 114.

<sup>3</sup> „Survey of International Affairs“, Vol. 1, London, 1927, p. 525.

<sup>4</sup> См. „Documents on International Affairs, 1928“. Ed. by *Johon W. Wheeler-Bennett*, London, 1929. p. 199.

<sup>5</sup> *Arnold J. Toynbee and Kenneth P. Kirkwood*, *Turkey*, London, 1926, p. 291.

<sup>6</sup> *Edward Reginald Vere-Hodge*, *Turkish Foreign Policy (1918—1948)*, Genève, 1950, pp. 63, 71.

<sup>7</sup> См. напр. *Gentizon, Paul*. *Mustafa Kemal ou l' Orient en marche*, Paris, 1929, *Philippe de Zara*. *Mustapha Kemal dictateur*, Paris, 1936.

ной истории дипломатии новейшего периода, советско-турецкий договор вовсе не разбирается<sup>1</sup>. Освещение же договора на страницах французского ежемесячника «L'Asie française» крайне тенденциозное. Повторяя избитую ложь об идентичности советской внешней политики с царской, журнал пишет, что Турция выбрала наименьшее зло, заключив соглашение с Россией, «несмотря на опасность, могущую угрожать ее независимости»<sup>2</sup>.

Что касается работ, изданных в США, то в них тенденциозно толкуются как отношения Турции с Советским Союзом, так и с другими странами. В этих работах много говорится об американской «филантропии», всячески восхваляется «помощь» Соединенных Штатов Турции<sup>3</sup>. Значение договора в этих работах раскрывается односторонне, без тщательного анализа фактов, конкретной обстановки. Так, например, Гарри Говард пишет, что «решение Лиги наций о Мосуле бросило Турцию в открытые объятия Советской России, которая в случае войны ввела бы свои войска на территорию Турции и оставила бы там»<sup>4</sup>.

Однако имеются и такие авторы, которые признают, что договор был заключен именно в тот момент, когда решения Локарнской конференции с одной стороны, и Лиги наций—с другой взаимно были направлены против СССР и Турции<sup>5</sup>.

В вышедшей в 1953 г. книге Крейга и Джильберта «Дипломаты» есть главы, посвященные Г. В. Чичерину и М. М. Литвинову, т. е. советской внешней политике того периода. Авторы вынуждены признать, что «Советская Россия поддержала кемалистскую Турцию в ее борьбе с западными державами»<sup>6</sup>.

<sup>1</sup> См. J.-B. Duroselle, *Histoire diplomatique de 1919 à nos jours*. Paris, 1953.

<sup>2</sup> «L'Asie française», Août-Septembre 1926, p. 271.

<sup>3</sup> См. Ross, F. *The Near East and American Philanthropy*, New York, 1929.

<sup>4</sup> Harry N. Howard, *The Partition of Turkey. A Diplomatic History 1913—1923*. Oklahoma, 1931, pp. 339, 342.

<sup>5</sup> См. J. C. Hurewitz, *Diplomacy in the Near and Middle East. A Documentary Record: 1914—1956*, Princeton, 1956, p. 142.

<sup>6</sup> Cordon A. Craig and Felix Gilbert, *The Diplomats 1919—1939*, Princeton, 1953, p. 266.

О важном значении советско-турецкого договора в деле обеспечения мира и безопасности говорит американский профессор М. В. Грэхэм, опубликовавший большую статью в журнале «International Conciliation», посвященную советской политике безопасности<sup>1</sup>.

В настоящей статье мы ставим задачу показать подлинное значение советско-турецкого договора 1925 г. как в деле укрепления и развития дружественных отношений между СССР и Турцией и защиты интересов обеих стран, так и для упрочения безопасности и мира на всем Ближнем Востоке.



Международная обстановка, сложившаяся к концу 1925 г., была чревата опасностью возникновения новых конфликтов и организации интервенции против Советского Союза.

В резолюции XIV съезда партии (декабрь 1925 г.) отмечалось: «Относительная стабилизация и так называемое «замирение» Европы под гегемонией англо-американского капитала привели к целой системе экономических и политических блоков, последним из которых является конференция в Локарно и так называемые «гарантийные договоры», острием своим направленные против СССР.

Эти блоки и договоры, прикрываемые якобы пацифистской Лигой наций и фальшивой шумихой II Интернационала о разоружении, означают по сути дела не что иное, как расстановку сил для новой войны»<sup>2</sup>.

К этому времени Советский Союз завершил восстановление народного хозяйства и приступил к осуществлению программы социалистической индустриализации страны. Поэтому главная задача Советского правительства в области международных отношений состояла в том, чтобы обеспечить максимально благоприятные внешнеполитические условия для социалистического строительства и прежде всего — индустриализации страны. А это означало активную борьбу за сохранение мира, против попыток сколачивания

<sup>1</sup> См. *Malbone W. Graham, The Soviet Security System*, „International Conciliation“, September 1929, № 252, pp. 360—376.

<sup>2</sup> КПСС в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК, ч. II, М., 1954, стр. 194—195.

всевозможных антисоветских блоков капиталистических государств.

Заключенные в октябре 1925 г. Локарнские соглашения имели резко выраженный антисоветский характер. «Урегулирование» отношений с Германией нужно было для создания «объединенной» Европы против СССР. Обеспечив тыл Германии и отказавшись от гарантий западных границ Польши и Чехословакии, авторы Локарнских соглашений, английские и французские империалистические круги и их закулисные вдохновители—финансовые магнаты США, давали понять германским империалистам, что ради агрессии против СССР эти страны могут быть принесены в жертву.

Однако английские гарантии и «умиротворение» Западной Европы нужны были Англии не только для ведения более активной антисоветской политики. Обеспечение максимума «спокойствия» в Европе развязывало Англии руки, давало ей возможность освободить свои силы для борьбы на Востоке, в частности для оказания сильного давления на страны Ближнего Востока с целью их вовлечения во всякого рода империалистические и антисоветские блоки. Заключение Локарнских соглашений способствовало усилению позиций английского империализма на Востоке, поэтому эти соглашения были направлены безусловно и против стран Востока, следовательно, и против интересов Турции.

Турецкая официальная газета «Миллиет» писала по этому поводу: «Нами до сих пор еще не постигнуты те тайные и коварные помыслы, долженствующие быть направленными против Востока, наличие коих интуитивно нами осознано»<sup>1</sup>.

Однако в тот период усилия английской дипломатии, направленные на вовлечение Турции в орбиту своей антисоветской политики, на включение ее в общий антисоветский фронт, оказались бесплодными. Намерения Англии натолкнулись на серьезные препятствия. В тот период англо-турецкий конфликт из-за Мосула обострился до такой степени, что пресса обеих стран открыто писала о возможности войны между Великобританией и Турцией. Англия, которая заняла Мосульский вилайет после 30 октября 1918 г., т. е.

<sup>1</sup> Цит. по ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, ед. хр. 60, л. 49.

после подписания Мудросского перемирия, включив этот район в состав подмандатного ей Ирака, теперь не собиралась уступить Мосул Турции, тем более, что к этому времени огромные потенциальные возможности мосульской нефти были налицо.

В указанный период и внутреннее положение Турции было не совсем устойчивым. Правящие круги, воспользовавшись мятежом шейха Саида, с особой жестокостью преследовали курдских крестьян, безжалостно уничтожали десятки тысяч курдов, сжигали с землей сотни курдских деревень. Но свободолюбивый курдский народ не покорился. В Курдистане партизанская война продолжалась. Ссылаясь на связи прогрессистов с шейхом Саидом, кемалистское правительство в июне 1925 г. вынесло постановление о роспуске прогрессивно-республиканской партии и закрыло все ее местные отделения, но оппозиция не прекратила своей деятельности, используя при этом тяжелое состояние экономики и финансов страны.

В несравненно затруднительном положении была Турция в области международной политики. Английское правительство оказывало сильное давление на Турцию в связи с Мосулом.

Вопрос о Мосуле был предметом длительных споров на Лозаннской конференции в 1922—1923 гг. В результате в статье 3 Лозаннского договора было включено постановление о том, что «граница между Турцией и Ираком будет полюбовно определена между Турцией и Великобританией в девятимесячный срок. При отсутствии согласий между обоими правительствами в предусмотренный срок, спор будет внесен в Совет Лиги наций»<sup>1</sup>.

<sup>2</sup> «Правда», 25 ноября, 1951 г.



կան կառավարությունը նշում է, որ այդ պլանը նպատակ ունի Մերձավոր և Միջին Արևելքի երկրները մասնակից դարձնել Ատլանտյան ագրեսիվ բլոկի կարևոր միջոցառումներին:

«Միջինարևելյան հրամանատարություն կազմակերպելու համառ ջանքերը նույնպես հաջողություն չունեցան և ամերիկյան իմպերիալիստները 1953 թ. ամռանը, Մերձավոր և Միջին Արևելքի համար, առաջ քաշեցին նույն ագրեսիվ բլոկի նոր վարիանտ՝ այս անգամ արդեն «Միջինարևելյան երկրների Հյուսիսային գոտի» անվան տակ: Սովետական Միության հարավային սահմանների մոտ նոր ագրեսիվ խմբավորում ստեղծելու գաղափարը առաջինը զարգացրեց ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի քարտուղար Ջ. Ֆոստեր Դալեսը 1953 թ. մայիսին՝ Ասիայի երկրներում կատարած ուղևորությունից վերադառնալուց հետո: 1953 թ. հունիսի 1-ին իր ռազիո-ելույթում Դալեսը հայտարարեց, որ «Միջին Արևելքի պաշտպանության կազմակերպումը» ավելի շուտ ապագայի գործ է, քան թե ներկայի...»<sup>1</sup> և շարադրեց նոր ագրեսիվ բլոկ կազմակերպելու իր նախագիծը:

Ըստ այդ նախագծի, պակտին պետք է մասնակցեին ՍՍՌՄ հինգ հարևան երկրները՝ Թուրքիան, Իրանը, Իրաքը, Աֆղանստանը և Պակիստանը: Դալեսյան այդ նախագծի անմիջական կազմակերպչի և իրականացնողի դերը, ինչպես առաջ, դրված էր Թուրքիայի վրա: Նախագծի կենսագործումը հեշտացնելու նպատակով որոշվեց, որ «Միջին Արևելյան երկրների Հյուսիսային գոտու պակտը» հանդես գա ոչ թե կոլեկտիվ պայմանագրի ձևով, այլ առանձին պետությունների միջև համաձայնությունների սխեմայով:

Ամերիկյան իմպերիալիստները ծրագրում էին, որ դրանից հետո հեշտ կլինի պակտի մեջ ներքաշել նաև բոլոր արաբական երկրներին և, այսպիսով, իրականացնել Արևմուտքի գլխավորությամբ միջինարևելյան երկրների ռազմական ագրեսիվ դաշինք ստեղծելու պլանը, պլան, որն արդեն երկու անգամ ձախողվել էր խաղաղասեր ժողովուրդների հաստատուն դիրքի շնորհիվ:

«Միջին արևելյան երկրների Հյուսիսային գոտու պակտը» ստեղծելու կապակցությամբ ամերիկյան կառավարությունը հատուկ ուշադրություն էր նվիրում Պակիստանին, ձգտելով բոլոր միջոցներով նրան ներգրավել այդ բլոկի մեջ և դարձնել իր հենարանը՝ Միջին Արևելքում: Այդ է վկայում «Նյու-Յորք թայմսի» 1953 թ. հունվարի 24-ի այն հայտարարությունը, որի մեջ ասված

<sup>1</sup> «В защиту мира», Февраль 1954, № 33; стр 22.

էր, թե «Ուժեղ Պակիստանը, մարտնչող Քուրքիայի հետ դաշնակցած... կարող է դրուժյունը փոխել և ամբողջ այդ շրջանը վերածել արևմտյան տերութունների հուսալի և հզոր հենարանի»<sup>1</sup>: Ասհրա-  
 ժեշտ է նշել, որ այս հանգամանքը միակ պատճառը չէր, որ ամե-  
 րիկյան իմպերիալիստներին մղում էր Պակիստանը ներգրավելու  
 իրենց ագրեսիվ քաղաքականության ոլորտը: ԱՄՆ-ի ղեկավար  
 շրջանների «պրոպակիստանյան» կողմնորոշումը նպատակ ունե-  
 բռունցք ստեղծել Չինական ժողովրդական Ռեսպուբլիկայի դեմ,  
 ինչպես նաև մեկուսացնել Հնդկաստանը, որն ակտիվորեն հանդես  
 էր գալիս խաղաղության օգտին: Իսկ գլխավորը այն էր, որ Պա-  
 կիստանը Սովետական Միության անմիջական հարևանության մեջ  
 գտնվող երկիր է:

Պակիստանը ամերիկյան իմպերիալիստների քաղաքականու-  
 թյանն էլ ավելի ամուր կապելու նպատակով, ԱՄՆ-ի ղեկավար  
 շրջանները ջանում էին ամենից առաջ ռազմական համաձայնու-  
 թյուն կնքել հենց Պակիստանի հետ, նրա տերիտորիայի վրա  
 ստեղծելով ամերիկյան ռազմական բազաներ: Ամերիկյան «Նյուդ-  
 Ուիկ» ժուռնալը, նշելով, որ Միացյալ Նահանգների ցանկութունը  
 Պակիստանին իր բանակով և ստրատեգիական ավիաբազաներով  
 Միջին Արևելքի պաշտպանության սիստեմի մեջ ներգրավելու վերա-  
 բերյալ «ոչ ոքի համար գաղտնիք չէ», — գրում էր, որ ԱՄՆ-ի ու  
 Պակիստանի միջև տարվող ոչ պաշտոնական բանակցութունները  
 վերաբերում էին «Պակիստանին էական ռազմական օգնութուն  
 ցույց տալու հնարավորությանը, այնպիսի օգնութուն, ինչպիսին  
 ցուցաբերվել էր Քուրքիային...: Այսպիսով շատ արագ կերպով  
 Պակիստանը կարելի է վերածել այնպիսի մի բաստիոնի, որը  
 ոչնչով հետ չէր մնա Քուրքիայից»<sup>2</sup>:

1953 թ. նոյեմբեր ամսվա ընթացքում ԱՄՆ-ի և Պակիստանի  
 միջև բանակցութուններ էին գնում ռազմական համաձայնութուն  
 կնքելու համար: Այդ ժամանակ ամերիկյան մամուլում բացահայտ  
 խոսվում էր այն մասին, որ Միացյալ Նահանգները շեն հրաժար-  
 վի Պակիստանը Միջին Արևելքում և Հարավ-Արևելյան Ասիայում  
 «ուժի աղբյուրի» վերածելու մտքից: «Ուոլ Ստրիտ Ջորնլը» ամերիկ-  
 յան թերթը 1954 թ. մարտին մի հոդված տպագրեց հետևյալ վեր-  
 նագրով. «Ռուսաստանի շուրջն ատոմային ռազմածիշների ամե-  
 րիկյան բների օղակի կառուցումը մոտենում է ավարտման»<sup>3</sup>: Այս  
 վերնագիրն ինքնին խոսում է իր մասին, բայց էլ ավելի բնորոշ է

<sup>1</sup> «The New York Times», 1953. Jan. 1.

<sup>2</sup> «Правда», 27 ноября 1953 г.

<sup>3</sup> «The Wall Street Journal», 1954, March 11.

հողվածի բովանդակությունը: Նրա մեջ ասված էր, որ ներկայումս Պակիստանի տերիտորիան իրենից ներկայացնում է «Ռուսաստանը շրջապատող ամերիկյան ավիաբազաների օդակի վերջին խոշոր բացը» և համոզմունք է հայտնում, որ այդ «բացը» շուտով կլիկվիղացվի, քանի որ ամերիկյան դիվանագետները «անաղմուկ» բանակցություններ են վարում Պակիստանում ռազմական բազաներ կառուցելու համար:

Չնայած ԱՄՆ-ի և Պակիստանի միջև ռազմական պայմանագրի նախագծի բովանդակությունը գաղտնի էր պահվում, այնուամենայնիվ մամուլում լուրեր էին սպրդում, որոնք հաստատում էին նման համաձայնության առկայությունը: «Տրիբուն դ'նասիոն» փարիզյան շաբաթաթերթը դեկտեմբերին հաղորդեց, որ Պակիստանի գեներալ նահանգապետ Գուլամ Մոհամեդը նոյեմբերին Վաշինգտոնում էլզենհաուսերի և Դալեսի հետ քննարկեց պայմանագրի նախագիծը, որի հիմնական կետերը հետևյալներն էին. 1. Պակիստանը «հարմար մոմենտին» միանում է «Միջին Արևելքի պաշտպանական կազմակերպությանը»: 2. Պակիստանը Միացյալ Նահանգներին իրավունք է տալիս իր տերիտորիայում բազաներ ստեղծել և զորք տեղադրել: Արևելյան Պակիստանը և Հյուսիս-Արևմտյան նահանգը կհանդիսանան հատուկ ստրատեգիական գոտիներ՝ ռազմական միջոցառումների իրականացման տեսակետից՝ առաջնահերթ նշանակությամբ: 3. Միացյալ Նահանգները Պակիստանին կտրամադրեն 200 միլիոն դոլլար՝ ամերիկյան սպառազինություն զնելու և բանակը վերակազմելու համար, որի թիվը կհասցվի մինչև 900 հազար մարդու: Միացյալ Նահանգները Պակիստանին կտրամադրեն 400 տանկ և 700 ինքնաթիռ, այդ թվում: 150 ռեակտիվ ինքնաթիռ: 4. Պակիստանի բանակի վերակազմումը և վարժեցումը կիրականացվի ամերիկյան ռազմական մասնագետների օգնությամբ և ամերիկյան բանակի բարձրատիճան զինվորականների հսկողությամբ<sup>1</sup>:

Կասկած չի կարող լինել, որ այսպիսի պայմանագիրը առաջին հերթին ուղղված էր հենց Պակիստանի ժողովրդի շահերի դեմ, քանի որ նպատակ էր դրվում Պակիստանի տերիտորիան օգտագործել ամերիկյան ռազմական բազաներ ստեղծելու համար, և հարյուր հազարավոր պակիստանցիների դարձնել ԱՄՆ-ի վարձու զինվորներ:

Պակիստանի կառավարող շրջանների պատրաստակամությունը ԱՄՆ-ից ռազմական «օգնություն» ստանալու հարցում լրիվ կերպով բավարարեց ամերիկյան ագրեսիվ շրջաններին: «Բավտ-

<sup>1</sup> «Правда», 21 декабря, 1953 г.

կան է մի հայացք գցել քարտեզի վրա,— գրում էր «Նյու-Յորք Հերալդ Տրիբունի» թղթակից Բիգարտը,— տեսնելու համար, որ Պակիստանը վճռական դիրք է գրավում Սովետական Ասիայի հարավային թևի շուրջն ամերիկյան ավիաբազաների կամարի նախատեսված ընդարձակման որևէ պլանի համար...»<sup>1</sup>:

Այսպիսով, 1953 թ. սկզբին իշխանության գլուխ անցած ամերիկյան նոր կառավարությունը, հույս ունենալով Միջինարևելյան հրամանատարության պլանի ձախողումից հետո, Երկրորդականի ռազմական համաձայնագրեր կնքել Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների հետ: Դրան արձագանքեցին Պակիստանի ղեկավար շերշանները և 1953 թ. վերջին միջոցներ ձեռնարկվեցին ամերիկա-պակիստանյան ռազմական դաշինք կնքելու ուղղությամբ, որն ԱՄՆ-ին հնարավորություն կտար Պակիստանին սպառազինություն մատակարարել և օգտագործել նրա ռազմական բազաները: Սակայն, այդ պլանի կենսագործումը ժամանակավորապես հետաձգվեց, քանի որ Պակիստանի նման դիրքորոշումը վճռականորեն դատապարտվեց Չինաստանի, Հնդկաստանի, Ինդոնեզիայի, Ինչպես նաև արաբական Արևելքի պետությունների կողմից, որոնք հանձինս այդ պայմանագրի իրենց անվտանգության նկատմամբ արդարացիորեն սպառնալիք էին տեսնում:

Դրանից հետո ամերիկյան ղեկնազդիտությունը առաջ քաշեց «նոր» պլան: Պակիստանին առաջարկվեց ռազմական դաշինք կնքել Թուրքիայի հետ, իսկ հետո դիմել ԱՄՆ-ին, խնդրելով օժանդակել նրա «պաշտպանական ջանքերին», այսինքն ռազմական օգնություն ցույց տալ: Այդ պլանը իրականացվեց: «Նոր» պլանը, այսպիսով, ավելի քողարկված էր և նպատակ ունենալու ժողովուրդներին, որոնք հանդես էին գալիս ասիական երկրներին ատլանտյան ագրեսիվ քաղաքականության ոլորտը ներգրավելու դեմ: Սակայն Հարավային և Հարավ-Արևելյան Ասիայի մի շարք երկրների հասարակական և պաշտոնական շրջանների արձագանքները ցույց տվեցին, որ ամերիկացիների այդ հաշիվը նույնպես սխալ դուրս եկավ: Այսպես «Նեյշնլ Հերալդ» հնդկական թերթը, հիշեցնելով իր այն նախազգուշացումները, որ ժամանակին արել էր ամերիկա-պակիստանյան ռազմական դաշինք կնքելու պլանի կապակցությամբ, գրում էր, որ հենց այդ պատճառով էլ «ժխտելիքի վարձույթի կարիք չգաղվեց, ինչպիսինն է Թուրքիայի հետ կնքած պակտը» և որ այն դարձավ «Պակիստանին ամերիկյան ռազմական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ քա-

<sup>1</sup> «Правда», 21 декабря 1953 г.  
112<sup>h</sup>

յարական շիրմա»։ Նույն ոգով էր գրում նաև «Ինդիեն էքսպրես»  
թերթը, նշելով, որ Թուրքիայի հետ համագործակցելը նպատակ  
ունի լուսնակ Հնդկաստանի և արաբական երկրների բողոքները  
Պակիստանին ամբրիկյան սպառազինություն տրամադրելու  
դեմ<sup>2</sup>։

Թուրքական կառավարությունը պատրաստակամությամբ ըն-  
դունեց Պակիստանի հետ ռազմական պակտ կնքելու միտքը։ Դա  
որոշակի քաղաքական նշանակություն ունեւր ինչպես Թուրքիայի,  
այնպես էլ ԱՄՆ-ի համար, քանի որ Հյուսիս-ատլանտյան բլոկի  
մեջ մտնելուց հետո Թուրքիայի համար առաջին հնարավորու-  
թյունն էր ստեղծվում ռազմական պակտ կնքել Միջին Արևելքի  
մուսուլմանական երկրներից մեկի հետ։ Այդպիսով ԱՄՆ-ի և  
Թուրքիայի ղեկավար շրջանները հույս ունեին խաբել Մերձավոր և  
Միջին Արևելքի մյուս մուսուլմանական երկրների հասարակական  
կարծիքը, ինչպես նաև բարձրացնել Թուրքիայի հեղինակությունը,  
որը պետք է ղառնար ծրագրված ռազմական բլոկների միջուկը։  
Թուրքիայի վրա դրված հույսերը հետապնդում էին նաև այլ նպա-  
տակներ։ Մերձավոր կամ Միջին Արևելքի յուրաքանչյուր պետու-  
թյուն, դաշինքի մեջ մտնելով Թուրքիայի հետ, իրեն կապում էր  
նաև ագրեսիվ Հյուսիս-ատլանտյան բլոկին՝ նրա անդամ Թուրքիա-  
յի միջոցով։ Այնուամենայնիվ, Թուրք-պակիստանյան ռազմական  
դաշինքի գլխավոր նպատակը Թուրքիայի և Պակիստանի տերիտո-  
րիաների օգտագործումն էր, որպես պլացդարմ Սովետական Միու-  
թյան վրա հարձակվելու համար։ Այսպես, «Նյու-Յորք Թայմս»  
թերթը գրում էր այն մասին, որ Թուրքիան վերածվում է «հարձա-  
կողական գործողությունների պլացդարմի» և կոչ էր անում Անկա-  
րային ասվելացնել իր ղինված ուժերի հարձակողական ընդունա-  
կությունը<sup>3</sup>։ Իսկ ամբրիկյան մի ուրիշ թերթ՝ «Նյու-Յորք Հերալդ  
Տրիբունը» գրում էր, որ Պակիստանը կվերածվի ամբրիկյան ուղմ-  
բակոծիչների համար հարմար բաղայի, որոնք կարող են այնտեղ  
վայրէջք կատարել Կենտրոնական Ասիայի ռուսական արդյունաբե-  
րական կենտրոնները ումբակոծելուց հետո<sup>4</sup>։

Թուրք-պակիստանյան պակտի կնքմանը նախորդել էին ԱՄՆ-ի,  
Թուրքիայի և Պակիստանի պետական գործիչների մեջ կայացած  
բանակցությունները 1952—1954 թթ.։ Դեռևս 1952 թ. փետրվարին

<sup>1</sup> «National Herald», 1954 Feb. 20.

<sup>2</sup> «Indian Express», 1954, Jan. 23.

<sup>3</sup> «The New York Times», 1954, Feb. 20.

<sup>4</sup> «The New York Herald Tribune», 1954, Feb. 23.

Անկարար այցելեց Պակիստանի արտաքին գործերի մինիստր Ջաֆ-րուլախանը: 1953 թ. սեպտեմբերի կեսերին Թուրքիայում էր գտնվում Պակիստանի բանակի գլխավոր հրամանատար էյուբխուսնը, իսկ 1953 թ. նոյեմբերի վերջին Անկարա ժամանեց Պակիստանի գեներալ-նահանգապետ Գուլամ Մոհամեզը: Անկարայում գտնվելու ժամանակ Պակիստանի պետական գործիչները «բանակ-ցություններ էին վարում Միջին Արևելքի հյուսիսային գոտու պաշտպանության պլանի մասին», այդ սիստեմի մեջ մտցնելով Պակիստանը, Իրանը, Թուրքիան և հավանաբար Իրաքը:

Անդրադառնալով Պակիստանի գեներալ-նահանգապետի Թուրքիայում մղած բանակցություններին, «Պրավդան» գրում էր, որ Միջին Արևելքի հյուսիսային մասում ռազմական սիստեմ է ստեղծվում, որի մեջ կմտնեն Թուրքիան, Իրանը, Իրաքը, Պակիստանը և հնարավորության դեպքում նաև Աֆղանստանը<sup>2</sup>: Հենց նույն նպատակն էր հետապնդում Թուրքիայի պրեզիդենտ Ջ. Բայարի 1954 թ. հունվարի սկզբին Պակիստան կատարած այցելությունը:

Թուրք-պակիստանյան պակտի ստորագրման վերաբերյալ Պակիստանի պետական գործիչների հետ բանակցելուց հետո, Թուրքիայի պրեզիդենտ Ջ. Բայարը 1954 թ. հունվարի վերջին մեկնեց ԱՄՆ: Այդ այցելության իսկական նպատակները, ինչպես նշում էր Թուրքական մամուլը, կապված էին Թուրքական բանակի սպառազինման ուժեղացման և Մերձավոր ու Միջին Արևելքում ռազմական բլոկներ ստեղծելու հարցերի հետ: Թուրքական ռեակցիոնները մեկ անգամ ևս, իրենց պրեզիդենտի միջոցով հայտնեցին ամերիկյան իմպերիալիստներին, որ պատրաստ են նրանց հետ համագործակցել նոր համաշխարհային պատերազմ նախապատրաստելու համար: «Ջաֆեր» թերթը գրում էր. «ՆԱՏՕ-ի սիստեմում ամերիկա-թուրքական միաձայնությունը և միասնությունը համաշխարհային հարցերում մեզ կհասցնի մեր նպատակներին»<sup>3</sup>:

1954 թ. փետրվարի առաջին կեսին Կարաչիում ավարտվեցին Թուրքիայի և Պակիստանի միջև քաղաքական, տնտեսական և կուլտուրական համագործակցության պայմանագիր կնքելու շուրջը մղված բանակցությունները: Այս փաստը նշելով Թուրքական մամուլը հայտարարում էր, որ Իրանի, Իրաքի և արաբական մյուս պետությունների պայմանագրին միանալը կհասցնի միջինարևել-

<sup>1</sup> «Istanbul», 10 սեպտեմբերի, 1953:

<sup>2</sup> «Правда», 19 сентября, 1953 г.

<sup>3</sup> «Zafere», 10 հունվարի, 1954:

յան «պաշտպանական» սխտեմի ստեղծմանը: «Միջին Արևելքի երկու ծայրամասերում շտապ կազմակերպվող պաշտպանական այդ սխտեմը,— գրում էր «Ջաֆեր» թերթը,— ԱՄՆ-ի համար քաղաքական հենարան կհանդիսանա և կնպաստի ռազմական օգնության ուժեղացմանը»<sup>1</sup>: Իսկ «Նյու-Յորք Քայմս» թերթը փետրվարի 20-ի համարում նշում էր, որ «Թուրքիան ու Պակիստանը հանդիսանում են այն ամուր հենարանը, որը կոչված է երկու կողմից պաշտպանելու Միջին Արևելքի շրջանը, որտեղ գտնվում են ռազմական տեսակետից դեռևս թույլ, քաղաքական տեսակետից ոչ կալուն պետություններ»<sup>2</sup>: Ամերիկյան իմպերիալիստները նկատի ունեին արաբական Արևելքի երկրներին, որոնց, թուրքական և պակիստանյան ռեակցիոն շրջանների օգնությամբ, փորձում էին ներգրավել ագրեսիվ բլոկի մեջ:

Թուրքիայի և Պակիստանի միջև ռազմական և այլ համագործակցության վերաբերյալ առաջիկայում կնքվելիք պակտի մասին 1954 թ. փետրվարի 19-ին հրապարակված թուրք-պակիստանյան կոմյունիկեն, երկու երկրների պետական գործիչների պաշտոնական հայտարարությունները, ինչպես նաև օտարերկրյա, այդ թվում և թուրքական մամուլի վկայությունը, իսկապես հաստատում էին, որ ծրագրված պակտը ոչ մի ընդհանուր բան չունի խաղաղության և անվտանգության պաշտպանման շահերի հետ: Դեռ ավելին, նա անմիջական սպառնալիք էր ստեղծում մի շարք պետությունների անվտանգությանը և ուղղված էր նաև այն երկրների ժողովուրդներին անկախության դեմ, որոնց կառավարությունները պետք է ստորագրեին այդ պակտը:

Թուրքական կառավարությունը, մասնակից դառնալով պակտին, ԱՄՆ-ի թելադրանքով իր վրա վերցրեց ստեղծվող ռազմական բլոկի ընդլայնման պարտականությունը: Անգլիական «Օբսերվեր» թերթի Անկարայի թղթակից Վիլյամ Կլարկը այդ կապակցությամբ գրում էր, որ «Թուրքիան Միացյալ Նահանգների լիակատար հովանավորությամբ մտադիր է ընդլայնել թուրք-պակիստանյան պակտի շրջանակները՝ արևելյան և հարավային ուղղությամբ...»: Արտաքին գործերի մինիստր Քոփոլդուոն, ասաց. «Այն փաստը, որ այս համաձայնության մեջ մտնելու դռները բաց են, ըստ էության առաջարկություն է ուրիշ երկրներին պակտին միանալու համար»<sup>3</sup>:

Այսպիսով «միանալու» հրավերը, որը Քոփոլդուոն ուղղում էր

<sup>1</sup> «Zafer», 15 փետրվարի, 1954:

<sup>2</sup> «The New York Times», 1954, Feb. 20.

<sup>3</sup> «Правда», 21 марта, 1954 г.

մյուս երկրներին, գործնականում նշանակում էր համատեղ ագրև-սիվ միջոցառումներին մասնակցելու հրավեր:

Ամերիկյան թերթերն այդ պակտը բացահայտ զնահատում էին որպես «հիմք» Մերձավոր ու Միջին Արևելքում ռազմական բլոկներ ստեղծելու համար: Այսպես՝ «Նյու-Յորք Հերալդ Տրիբունը» ուղղակիորեն պակտն անվանում էր «բացահայտ հակասովետական»<sup>1</sup>: «Նյու-Յորք Քայմսը» բաց էր անում նրա ստեղծման գաղտնիքը հայտարարելով, որ այն «խթանվում է» Պակիստանին ռազմական օգնություն ցույց տալու ԱՄՆ-ի մտադրությամբ<sup>2</sup>:

ԱՄՆ-ի ազդեցության տակ ընկնելով, Պակիստանն իրեն կապեց ամերիկյան իմպերիալիստների քաղաքականությանը, և կանգնեց Միջին Արևելքում և Հարավ-Արևելյան Ասիայում ագրեսիվ մտադրությունների իրականացման ուղու վրա:

Թուրքիայի, Իրանի և Պակիստանի վերածումն ամերիկյան ռազմական լազերի ու Սովետական Միության և ժողովրդական դեմոկրատիայի երկրների դեմ ագրեսիայի պլանցդարմի, չէր կարող համապատասխան ռեակցիա առաջ չբերել Սովետական կառավարության կողմից, քանի որ ինչպես դեռևս Վ. Ի. Լենինն էր նշել «Մեր Մերձավոր-արևելյան քաղաքականությունը Ռուսաստանի և նրա հետ ֆեդերացիայի մեջ գտնվող մի շարք պետությունների ամենախրախիվ և անմիջական կենսական շահերի գործ»<sup>3</sup>:

Սովետական Միության միջինարևելյան քաղաքականության «ամենախրախիվ և անմիջական կենսական շահերը» ամենից առաջ կայանում են նրանում, որպեսզի թույլ չտրվի, որ Թուրքիան և Մերձավոր ու Միջին Արևելքի մյուս երկրները ագրեսիայի պլանցդարմ դառնան ՍՍՌՄ-ի և ժողովրդական դեմոկրատիայի երկրների դեմ: ՍՍՌՄ-ը վարում է Մերձավոր և Միջին Արևելքի բոլոր երկրների հետ տնտեսական և կուլտուրական կապերի ընդլայնման և ամրապնդման, միմյանց ներքին գործերին չմիջամտելու, փոխադարձ շահավետության ու հավասարության հիմունքներով բոլոր տեսակի լայն կապեր հաստատելու քաղաքականություն: Սովետական Միությունը կենսականորեն շահագրգռված է Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների անկախության ու սուվերենության պահպանման, իմպերիալիստական լծից նրանց լրիվ ազատագրման, ազատ և խաղաղ զարգացման մեջ:

Ինչպես մյուս երկրների, այնպես էլ Մերձավոր ու Միջին Արև-

<sup>1</sup> «The New York Herald Tribune», 1954, March 3.

<sup>2</sup> «The New York Times», 1954, Feb. 25.

<sup>3</sup> Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 33, էջ 456:



վելքի Երկրներին, այդ թվում և Թուրքիայի, Իրանի ու Պակիստանի նկատմամբ Սովետական Միության դիրքորոշումը բխում է նրա սոցիալիստական խաղաղասիրական քաղաքականությունից, որն իրականացվում է սերտորեն համագործակցելով դեմոկրատական լազերի երկրներին հետ:

Սոցիալիզմի լազերի երկրներն աղատ են ներքին անտազոնիստական հակասություններից, նրանք միմյանց հետ կապված են լիակատար փոխադարձ վստահության և հարգանքի, անկեղծ բարեկամության և անշահախնդիր փոխադարձ օգնության ամուր կապերով:

Սովետական Միությունն անշեղորեն ձգտել և ձգտում է ամրապնդել բարի դրացիական հարաբերություններ բոլոր երկրներին հետ: Չունենալով տերիտորիալ պահանջներ որևէ պետության նկատմամբ, այդ թվում և հարևան պետությունների նկատմամբ, Սովետական Միությունը չի միջամտում նրանց ներքին գործերին:

Սովետական պետությունն իր արտաքին քաղաքականությունը կառուցում է ազգերի հավասարության և համագործակցության հիմքերի վրա: Սովետական կառավարությունը հետևողականորեն պայքարում է Թուրքիայի, Պակիստանի և ամբողջ աշխարհի բոլոր մյուս գաղութային ու կախյալ երկրներին միասնության և անկախության, ազատության և սուվերենության համար: Թուրքական ռեսպուբլիկայի ստեղծման առաջին իսկ օրից, Սովետական կառավարությունն անշեղորեն ձգտել է ամրացնել այդ երկրի հետ ունեցած բարեկամությունը և բարի դրացիական հարաբերությունները, օգնել է նրան վերականգնելու, զարգացնելու իր տնտեսությունը, ցույց է տվել քաղաքական ու դիվանագիտական հովանավորություն: Նույնպիսի քաղաքականություն է տարվել նաև Պակիստանի ռեսպուբլիկայի նկատմամբ:

Սակայն Սովետական կառավարությունը չէր կարող անտեսել ԱՄՆ-ի, Թուրքիայի, Իրանի և Պակիստանի ազդեցիվ գործունեությունը:

Թուրքիայի և Պակիստանի միջև ռազմական պակտ կնքելու վերաբերյալ 1954 թ. փետրվարի 19-ին հրապարակված թուրք-պակիստանյան կոմյունիկեի կապակցությամբ, Սովետական կառավարությունը 1954 թ. մարտի 18-ին թուրքական կառավարությանն ուղարկած նոտայում նշում էր, որ այդ պակտի նպատակն է Թուրքիայի և Պակիստանի միջև հաստատել ակտիվ ռազմական համագործակցություն, հիմքեր դնել ավելի ընդարձակ ռազմական բլոկ՝ «Միջինարևելյան ռազմական բլոկ» ստեղծելու համար: «Քանի որ

ոչ Թուրքիային և ոչ էլ Պակիստանին, ինչպես հայտնի է, ոչ մի հարձակում չի սպառնում,— ասված էր Սովետական նոտայում,— այս պակտը չի կարող պաշտպանողական համարվել... Դրա նախապատրաստումը սերտորեն կապված է Ատլանտյան բլոկի ռազմական պլանների հետ և սպառնում է մի շարք երկրների, հատկապես Մերձավոր ու Միջին Արևելքի, ինչպես և Հարավ-Արևելյան Ասիայի շրջանի երկրների անվտանգությանը<sup>1</sup>։

Այնուհետև ընդգծելով, որ Մերձավոր ու Միջին Արևելքի շրջանում բլոկներ ստեղծելու փորձերը նպատակ են հետապնդում այդ շրջանի երկրները վերածել ագրեսիվ ատլանտյան դաշինքի զինված ուժերի համար պլացդարմի, Սովետական կառավարությունը նախազգուշացնում էր, որ Թուրքական ռեսպուբլիկայի կառավարության նման քաղաքականությունը չչի կարող չվնասել սովետա-թուրքական հարաբերություններին»։

Սովետական կառավարությունը 1954 թ. մարտի 26-ին նույն բովանդակությամբ նոտա ուղարկեց նաև Պակիստանի կառավարությանը։ Այդ նոտայով ուշադրություն էր հրավիրվում Պակիստանի տերիտորիայում ամերիկյան ռազմական օդային բազաների ստեղծման և Միջին Արևելքում ռազմական բլոկի պլաններին Պակիստանի միանալու փաստի վրա։

Սովետական կառավարությունը նշում էր, որ ստեղծվելիք ագրեսիվ բլոկին Պակիստանի մասնակցությունը, նրա տերիտորիայում ամերիկյան զինված ուժերին ռազմական բազաներ տրամադրելը չչի կարող չվնասել սովետա-պակիստանյան հարաբերություններին, և որ այդպիսի դրության պատասխանատվությունն ընկնում է Պակիստանի կառավարության վրա<sup>2</sup>։

Թուրքիային և Պակիստանին ուղղված հիշյալ նոտաները հանդիսանում էին Սովետական Միության՝ հանուն միջազգային լարվածության թուլացման և ժողովուրդների միջև կայուն խաղաղության հաստատման հոգատարության նոր արտահայտությունը։

Օտար պետությունների տերիտորիաներում ռազմական բազաների ստեղծումը ուժեղացնում է նոր համաշխարհային պատերազմի վտանգը, հարցականի տակ է դնում շատ պետությունների ազգային սովերենությունը և անկախությունը։ Այդ մասին էր խոսում մասնավորապես, 1953 թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի գլխավոր Ասամբլեայի քննարկմանը ներկայացված Սովետական պատվիրակության բանաձևի երկրորդ կետը։ Նոր համաշխարհային պատերազ-

<sup>1</sup> «Правда», 20 марта, 1954 г.

<sup>2</sup> Там же.

Մի սպառնալիքը նվազեցնելու և ժողովուրդների անվտանգությունն ու խաղաղությունն ամրապնդելու նպատակով, Սովետական պատվիրակությունը հանձնարարում էր Անվտանգության խորհրդին միջոցներ կիրառել օտար երկրներում ռազմական բազաների լիկվիդացման համար, համարելով այն միջազգային անվտանգության և կայուն խաղաղության ապահովման կարևորագույն խնդիրը»<sup>1</sup>:

Սակայն, չնայած Սովետական կառավարության նախազգուշացումներին և աշխարհի առաջադեմ ուժերի բողոքներին, ԱՄՆ-ի և Անգլիայի ղեկավար շրջանները շարունակում են ռազմական բրիգադներ կազմակերպելու, օտար տերիտորիաներում, այդ թվում՝ Թուրքիայում, Իրանում, Պակիստանում, Հորդանանում, Իսրայելում և այլուր ռազմական բազաներ ստեղծելու իրենց քաղաքականությունը:

1954 թ. ապրիլի 2-ին Պակիստանի մայրաքաղաք Կարաչիում կնքվեց Թուրք-պակիստանյան պակտը<sup>2</sup>:

Պայմանագիրը պարունակում էր 7 հոդված, բայց դրանցից ամենակարևորը 4-րդ հոդվածն էր, որի մեջ ասվում էր. «Պայմանավորվող կողմերը պարտավորվում են հետևյալ համագործակցությունը՝ պաշտպանության բնագավառում.

ա) դիտական փոխանակումներ, տեխնիկայի նվաճումների միատեղ օգտագործման նպատակով.

բ) հնարավորության չափով հասնել պայմանավորվող կողմերի կարիքների բավարարմանը՝ սպառազինության և զինամթերքի արտադրության գործում.

գ) այն դեպքում, երբ կողմերից մեկի վրա հարձակման ակտ տեղի ունենա, ապա Միավորված Ազգերի կազմակերպության 51-րդ հոդվածի<sup>3</sup> համաձայն կողմերը պետք է ուսումնասիրեն և որոշեն թե ինչ ձևով և ինչ աստիճանով նրանք կարող են համագործակցել»:

Այս հոդվածներից երևում է, որ Թուրք-պակիստանյան պակտը փաստորեն երկու պետությունների ռազմական դաշինք է, որ երկու կողմերը պատրաստ են միատեղ ռազմական գործողություններին՝ ընդդեմ դեմոկրատիայի և սոցիալիզմի ուժերի:

Սակայն երկկողմանի այդ պակտը, ամերիկյան իմպերիալիստների վերջնական նպատակը չէր: Նրանք ձգտում էին ընդարձակ ռազմական դաշինք ստեղծել Թուրքիայի, Իրաքի, Իրանի, Պակիս-

<sup>1</sup> «Правда», 29 сентября, 1953 г.

<sup>2</sup> Թուրքիայի և Պակիստանի միջև «Բարեկամության ու համագործակցության պայմանագրի» ստորագրումը տե՛ս «Zafers» 3, 4, 1954:

տանի, Աֆղանստանի և այլ երկրների միջամտությամբ: Այս առթիվ ուշադրության արժանի է թուրք-պակիստանյան պակտի 6-րդ հոդվածը, որտեղ խոսվում էր որևէ երրորդ պետության պակտի միանալու հնարավորության մասին, ընդ որում ընդգծվում էր, որ միացվող պետությունը պետք է ընդունի թուրք-պակիստանյան համաձայնագրի բոլոր հոդվածները: Դա նշանակում էր, որ նա իր վրա կվերցնի ռազմական համագործակցության նույն պարտավորությունները, ինչ թուրքիան և Պակիստանը:

Այն բանից հետո, երբ Պակիստանը թուրք-պակիստանյան պակտի հետևանքով մասնակից դարձավ Միջին Արևելքում ԱՄՆ-ի ազդեցիկ պլաններին, ամերիկյան իմպերիալիստները ձեռնամուխ եղան Պակիստանի կառավարության հետ անմիջականորեն ռազմական պայմանագիր կնքելու գործին, որպեսզի Պակիստանը վերջնականապես դարձնեն ազդեցիկ ատլանտյան բլոկի ռազմաքաղաքական կցորդը:

Դեռևս 1954 թ. փետրվարի 25-ին Կարաչիում և Վաշինգտոնում միաժամանակ տեղեկություն հրապարակվեց Պակիստանին ամերիկյան ռազմական օգնություն ցույց տալու երկու երկրների համաձայնության մասին<sup>1</sup>: Սակայն դա չէր բավարարում ԱՄՆ-ի ղեկավար շրջաններին: 1954 թ. մայիսի 19-ին Կարաչիում ստորագրվեց ԱՄՆ-ի և Պակիստանի միջև փոխադարձ պաշտպանության և օգնության համաձայնագիրը<sup>2</sup>, որը սահմանում էր ռազմական օգնություն ցուցաբերելու երկու կողմերի փոխադարձ պարտավորությունները:

Այս ռազմական համաձայնությունն ուղի էր հարթում Պակիստանի զինված ուժերի վրա ԱՄՆ-ի լիակատար հսկողությունը հաստատելու համար: Կարևոր նշանակություն ունեն համաձայնագրի առաջին հոդվածի երկրորդ կետը, որով Պակիստանի կառավարությունը պարտավորվում էր տրամադրված ամերիկյան սպառազինությունը շօգտագործել առանց Միացյալ Նահանգների կառավարության «նախնական համաձայնության»: Նման պարտավորությունը նշանակում էր, որ Պակիստանի զինված ուժերը պետք է օգտագործվեն ամերիկյան կառավարության հայեցողությամբ: Իսկ 4-րդ հոդվածում նշված էր, որ Միացյալ Նահանգները Պակիստանի կողարկեն այնպիսի անձնակազմ, որը «հնարավորություն և լիազորություն կունենա հետևելու օգնության իրականացման ընթացքին»: Կարևոր էր նաև 5-րդ հոդվածը, ըստ որի Պակիստանը

<sup>1</sup> «Правда», 28 марта 1954 г.

<sup>2</sup> «Zafar», 20 մայիսի, 1954:

սյարաավորվում էր Միացյալ Նահանգներին մատակարարել հումք և կիսաֆաբրիկատներ, Միացյալ Նահանգների սեփական ռեսուրսների գեֆիցիտը կամ պոտենցիալ գեֆիցիտը լրացնելու համար՝ ժամանակի այնպիսի տևողությամբ, այնպիսի քանակությամբ և պայմաններով, ինչպիսին կհամաձայնեցվի կողմերի միջև<sup>1</sup>։

Այսպիսով, մայիսի 19-ի համաձայնագիրը Պակիստանի զինված ուժերը օտարերկրյա քաղաքականության գործիք էր դարձնում։ «Պակիստան Թայմս» թերթն ամենայն իրավացիությամբ նշում էր, որ մայիսի 19-ի համաձայնությունը ոտնձգություն է Պակիստանի սուվերենության դեմ, իսկ նրա մի քանի հոդվածները «վիրավորանք են հանդիսանում Պակիստանի նկատմամբ, որպես սուվերեն պետության»<sup>2</sup>։ Պակիստանի «Ջամիաթե Իսլամի» պարտիան իր բանաձևում դրում էր, որ մայիսի 19-ի համաձայնությունը Պակիստանը դնում է «Ամերիկայի համար հումք արտադրող գաղութային երկրի»<sup>3</sup> վիճակում։

Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների ընդլայնված ռազմական ղաշինք ստեղծելու ամերիկյան պլաններում թուրք-պակիստանյան պակտը առաջին էտապն էր։ Սակայն այդ պլանների լրիվ իրագործումը բավականին դժվարին խնդիր էր։

«Միջինարևելյան հրամանատարության» պլանների ձախողման փորձով ամերիկյան իմպերիալիստները համոզվեցին, որ արաբական երկրների ժողովուրդները վճռականորեն դեմ են այդպիսի ազդեցիվ բլոկներին։ Այնուամենայնիվ ԱՄՆ-ի ղեկավար շրջանները, Թուրքիայի ու Պակիստանի կառավարությունների հետ միատեղ ձեռնամուխ եղան Միջինարևելյան բլոկի ստեղծմանը։

Միջինարևելյան բլոկի մեջ Իրանին և արաբական երկրներին ներգրավելու նախապատրաստական աշխատանքները տարվում էին երկու ուղղությամբ։ Թուրքիայի և Պակիստանի կառավարությունները բանակցություններ էին վարում, համոզում էին և հորդորում նման բլոկի անհրաժեշտության մասին, իսկ ամերիկյան իմպերիալիստները առաջարկում և այդ երկրների վզին էին փաթաթում ռազմական «օգնության» համաձայնագրեր։

1954 թ. մայիսի 11—14-ին Ստամբուլում կայացավ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում լիազորված ամերիկյան դիվանագետների խորհրդակցությունը։ Խորհրդակցություն հրավիրելու պատճառներից մեկը, այդ շրջանում Միացյալ Նահանգների ռազ-

<sup>1</sup> «Новое время», № 42, 16 октября, 1954 г. стр. 13—14.

<sup>2</sup> «Новое время», № 22, 29 мая, 1954 г. стр. 4.

<sup>3</sup> Նույն տեղում, № 42, 16 հոկտեմբերի, 1951, էջ 14։

մական ագրեսիվ միջոցառումների հետագա պլանների մշակումն էր: Իրանական «Քեյհան» թերթը գրում էր, որ «Ստամբուլի խորհրդակցությունը ամենից առաջ կապված է Միջին Արևելքի պաշտպանության հարցի հետ», որովհետև թուրք-պակիստանյան պակտի ստորագրումից հետո այդ հարցը ևս մտավ անոր փուլի մեջ: Այնուհետև թերթը նշում էր, որ խորհրդակցությունում կբերենարկվի «ամբողջ Մերձավոր ու Միջին Արևելքի վրա պակտի տարածման հարցը»<sup>1</sup>:

Ամերիկյան դիվանագետների Ստամբուլյան խորհրդակցության շտապ գումարումը, նրա «արտակարգ գաղտնի» լինելը, բացատրվում է այն բանով, որ «ուժի քաղաքականությունը» հանդիպել էր ժողովուրդների ուժեղ դիմադրությանը:

«Նյու-Յորք թայմս»-ը փաստորեն խոստովանում էր այդ գրելով, որ Ստամբուլի խորհրդակցությունը հրավիրվել է, քանի որ ամերիկյան դիվանագետներն «անհանգստացած» էին «չեզոք քաղաքականության կողմնակից արաբական շարժումից»<sup>2</sup>:

Իսկ ի՞նչ էին առաջարկում Ստամբուլի խորհրդակցության մասնակիցները, Մերձավոր և Միջին Արևելքում ամերիկյան հեղինակությունը բարձրացնելու համար: Թուրքական «Իսթանբուլ» թերթը հաղորդում էր, որ նրանք համաձայնվեցին այս շրջանում Միացյալ Նահանգների կողմից ավելի դինամիկ քաղաքականություն անցկացնելու անհրաժեշտության վերաբերյալ<sup>3</sup>, որը սովորական լեզվով նշանակում էր Մերձավոր ու Միջին Արևելքում արադկերպով իրականացնել ռազմական ագրեսիվ միջոցառումները:

Ինչպես երևում է օտարերկրյա մամուլի հաղորդումներից, Ստամբուլի խորհրդակցությունում հիմնականում քննարկվում էր թուրք-պակիստանյան պակտի ընդլայնման հարցը, արաբական երկրները նրան միացնելու միջոցով: Լիբանանի «Ռաշիք ալ-ահ-վալ» թերթը հաստատելով, որ Ստամբուլի խորհրդակցությունում քննարկվել է արաբական երկրների, Իրանի և Աֆղանստանի թուրք-պակիստանյան դաշինքի մեջ ներգրավելու մեթոդների հարցը, գրում էր, որ հանձնարարված է հետագայում էլ այդ հարցում հիմնականում հենվել թուրքիայի և Պակիստանի վրա: «Նորհրդակցության մասնակիցները եկան այն եզրակացության,— հաղորդում էր թերթը,— որ թուրքիայի ժառանգությունների դիմաց ԱՄՆ-ը պետք է հարմար պայմաններում պաշտպանի նրա հավակ-

<sup>1</sup> «Новое время», № 29, 29 мая 1954, էջ 4:

<sup>2</sup> «The New York Times», 1954, May 12.

<sup>3</sup> «Istanbul», 8 мая 1954:

նությունները Սիրիայի, Իրաքի և Իրանի տերիտորիաների մի մասի նկատմամբ, այն է, Ալեպոյի (Հալեպ), Մոսուլի և իրանական Ադրբեջանի նկատմամբ: Իսկ Պակիստանի ծառայությունների գի-  
ւաց, որոշվել էր պաշտպանել նրա հավակնությունները Քաշմիրի և իրանական Բելուջիստանի նկատմամբ»:

Ինչպես տեսնում ենք, Թուրքիայի և Պակիստանի ղեկավար շրջանները, ամերիկյան իմպերիալիստների հետ համագործակցելը կապում էին մի շարք հարևան երկրների նկատմամբ սեփական լավթողական պլանների հնարավոր իրականացման հետ:

1954 թ. մայիսի 9—12-ը Թուրքիայում էր գտնվում Պակիս-  
տանի պրեմիեր-մինիստր Մուհամեդ Ալին: Պակիստանի պրեմիերի  
այցելությունը Անկարա կապված էր թուրք-պակիստանյան պակտի  
ընդլայնման հարցերի հետ, ի հաշիվ Մերձավոր ու Միջին Արևելքի  
մյուս պետությունների: Այդ կապակցությամբ Թուրքիայի պրեմիեր-  
մինիստր Մենգեբեքը հայտարարեց, որ «Պակիստանը և Թուրքիան  
երկու հակադիր ծայրամասում գտնվող ամրոցներ են: Այժմ պետք  
է լցնել այդ երկուսի մեջ ընկած տարածությունը»<sup>2</sup>: Մուհամեդ  
Ալու Անկարայում վարած բանակցությունները նվիրված էին հենց  
այդ հարցին: Թուրքական ղեկավար շրջանները փորձում էին ապա-  
ցուցել, որ թուրք-պակիստանյան պակտի ընդլայնումը ծառայում է  
հյուսիսից եկող հնարավոր «հարձակումից» Միջին Արևելքի թույլ  
ազգերի պաշտպանության նպատակներին և ցավով նշում էին, որ  
որոշ պետություններ (նկատի ունեին Սիրիան, Լիբանանը և Եգիպ-  
տոսը), մինչև իսկ հանդես են գալիս այդ պակտի դեմ<sup>3</sup>:

1954 թ. հունիսի սկզբներին պրեմիեր-մինիստր Ադնան Մեն-  
դեբեքի գլխավորությամբ Թուրքիայի կառավարության դելեգա-  
ցիան բանակցություններ էր վարում Վաշինգտոնում: Հետաքրքիր  
է նշել, որ «Զաֆեր» թերթի 1954 թ. մայիսի 28-ի առաջնորդողում  
Մենդեբեքի դեպի Վաշինգտոն կատարելիք ճամփորդության կա-  
պակցությամբ շոշափվում էր Մերձավոր ու Միջին Արևելքի երկրնե-  
րի քաղաքական դրությունը վերաբերող հարցերը: Հոդվածում խոս-  
տովանվում էր արաբական Արևելքի երկրներում «կոմունիստական  
ազդեցության ուժեղացման»՝ այսինքն՝ ազգային-ազատագրական  
շարժումների վերելքի առկայությունը: Այս հանգամանքը անհան-  
գըստացնում էր իմպերիալիստներին և նրանց կամակատարներին՝  
Մերձավոր Արևելքում:

<sup>1</sup> «Правда», 8 июня, 1954 г.

<sup>2</sup> «Zafar», 10 հունիսի, 1954:

<sup>3</sup> Եււյն տեղում:

<sup>4</sup> «Zafar», 28 մայիսի, 1954:

Ինչպես հայտնի դարձավ թուրքական և ամերիկյան մամուլից, Վաշինգտոնում տեղի ունեցող բանակցություններում հատուկ տեղ էր հատկացվել թուրք-պակիստանյան դաշինքի ընդլայնման հարցին՝ ի հաշիվ Իրանի, Իրաքի, Եգիպտոսի և այլ արաբական պետությունների նրան միանալուն։ Թուրքիային հետագայում ցույց տրվող ռազմական և տնտեսական, հատկապես ռազմական օգնության հարցը նույնպես կարևոր տեղ էր զբաղեցրել, քանի որ ինչպես նշում էր «Դեյլի Նյուսը», «մինչև օգնություն տրամադրելու թուրքիան թույլ էր թե՛ ռազմական և թե՛ տնտեսական տեսակետից»<sup>1</sup>։ Իսկ «Իսթանբուլ» թերթը ԱՄՆ-ից խնդրում էր «Թուրքիային օգնություն ցույց տալ, որպեսզի ԱՄՆ-ի շահերի համաձայն թուրքիան վերածվի Միջին Արևելքի Բաստիոնի»<sup>2</sup>։

Այս հարցի մասին ՏԱՍՍ-ի հաղորդման մեջ ասվում էր. «Ոչ ոքի համար զաղտնիք չէ, որ, օրինակ, նույնիսկ Թուրքիան, որը, չգիտես ինչու, առանձնապես ակտիվ դեր է խաղում Բաղդադի խմբավորման մեջ, տարիներ շարունակ չի կարողանում ԱՄՆ-ից օգնություն ստանալ իր ազգային արդյունաբերությունը զարգացնելու համար։ Թուրքիային ցույց տրվող ԱՄՆ-ի ամբողջ օգնությունը՝ ուղղված է սոսկ նրա ռազմականացմանը»<sup>3</sup>։

Բանակցությունների հետևանքով որոշվեց ավելացնել Թուրքիային տրվող ռազմական օգնությունը։ Վաշինգտոնից մեկնելուց առաջ Մենդերեսը հայտարարեց. «... Կարող եմ ասել, որ լիակատար պայմանավորվածություն կա Թուրքիային տրվելիք ռազմական օգնության մասին»<sup>4</sup>։

Ինչպես գրում էր «Իսթանբուլ» թերթը, Թուրքիայի պրեմիեր-մինիստրի ուղևորությունը ԱՄՆ հանդիսանում էր Ստամբուլում կայացած (մայիսի 11—14)՝ Մերձավոր և Միջին Արևելքի ամերիկյան դիվանագիտական ներկայացուցիչների խորհրդակցությունում մշակված «պլանի մի մասը»։ Մեկնաբանելով պլանի այն մասի էությունը, որը վերաբերում էր Թուրքիային, թերթը նշում էր, որ «Թուրքիան պետք է դառնա միջնաբերդ, պլացդարմ և բազա, որտեղից անհրաժեշտության դեպքում կարելի է հակահարձակման անցնել»<sup>5</sup>։ Ստացվում է այնպես, որ Վաշինգտոնում վարած թուրք-ամերիկյան բանակցությունների հիմնական թեման եղել է ռազմական թեման, ըստ որում գլխավոր հարցն այն էր,

<sup>1</sup> «Daily News», 1954, june 3.

<sup>2</sup> «Istanbul», 7 հունիսի, 1954:

<sup>3</sup> «Սովետական Հայաստան», 23 հունվարի, 1958:

<sup>4</sup> «Istanbul», 7 հունիսի, 1954:

<sup>5</sup> «Istanbul», 9 հունիսի, 1954:



Քե ինչպես թուրքական ղեկավար շրջանների օգնությամբ Մերձավոր և Միջին Արևելքում ռազմական բլոկ ստեղծեն, որի միջուկը կհանդիսանա թուրք-պակիստանյան դաշինքը: «Ըս վստահ եմ,— ասաց Մենդեբեքը հունիսի 3-ին Վաշինգտոնում,— որ կապահովվի այնպիսի դրուժյուն, երբ կվերանա այն դատարկությունը, որ աշխարհագրական տեսակետից գոյություն ունի այսօր երկու պայմանավորված կողմերի միջև<sup>1</sup>, այսինքն թուրքիայի և Պակիստանի միջև:

Թուրք-պակիստանյան պակտի ստորագրումից հետո ծավալված իրադարձություններն ամենայն ակնհայտությամբ ցույց են տալիս, որ ԱՄՆ-ի ագրեսիվ շրջանները, արհամարհելով ժողովուրդների խաղաղասիրական կամքը, շարունակում են Մերձավոր ու Միջին Արևելքում և Հարավ-Արևելյան Ասիայում ռազմական բլոկներ ստեղծելու իրենց փորձերը: 1954 թ. հունիսի 11-ին թուրքական ՄԼՋԻԽԻ Մուհամեդ Ալու ներկայությամբ վավերացրեց թուրք-պակիստանյան պայմանագիրը<sup>2</sup>:

Հունիսի 14-ին հրապարակված թուրք-պակիստանյան համատեղ կոմյունիկեում<sup>3</sup> ասված էր, որ պրեմիեր-մինիստրները ուսումնասիրեցին թուրք-պակիստանյան պակտի էֆեկտիվության ուժեղացման ուղիները: «Պրեմիեր-մինիստրները հույսով են, որ այս շրջանի (Մերձավոր և Միջին Արևելքի—Ս. Ա.) մյուս երկրները նույնպես կզգան, որ այդ պայմանագրին միանալը համապատասխանում է նրանց բարձր շահերին»: Քե ինչպիսի «բարձր շահերի» մասին էր խոսվում, կարելի է եզրակացնել կոմյունիկեի բովանդակությունից: Այնտեղ նշված էր, որ թուրքիայի և Պակիստանի շտաբների ներկայացուցիչների և ռազմական էքսպերտների միջև, «պաշտպանության» համար անհրաժեշտ պլան մշակելու նպատակով, անհապաղ բանակցություններ կսկսվեն և միջոցներ կկիրառվեն սպառազինության ու ռազմամթերքների արտադրության աճի ուղղությամբ և այլն:

Այսպիսով Անկարայում տեղի ունեցած բանակցությունների ժամանակ ռազմական բնույթի մի շարք միջոցառումներ մշակվեցին:

«Իսթանբուլ» թերթը, մեկնաբանելով բանակցությունների արդյունքները, ընդգծում էր, որ թուրքիայի ու Պակիստանի միջև համագործակցությունը կհասցնի «երկու երկրների ռազմական պո-

<sup>1</sup> «Zafer», 12 հունիսի, 1954:

<sup>2</sup> «Zafer», 15 հունիսի, 1954:

<sup>3</sup> Նույն տեղում:

տենցիալի ուժեղացմանը», ինչպես և «Իրանում և Իրաքում հնարավոր քաղաքական փոփոխություններին»<sup>1</sup>։

Պատահական չէ, որ ամերիկյան իմպերիալիստները թուրք-պակիստանյան պակտն ընդլայնելու իրենց հույսերը առաջին հերթին դնում էին Իրանի, Իրաքի և նման երկրների վրա, որոնք նշանակալից շահով ընկել էին ԱՄՆ-ի ազդեցության տակ։ Օգտագործելով անգլո-իրանական կոնֆլիկտը, ԱՄՆ-ի ղեկավար շրջանները միջամտում էին Իրանի ներքին գործերին և իրենց վրա վերցնում «կոնֆլիկտը լուծելու միջնորդի» դերը։

Ահալայն ամերիկյան մոնոպոլիստների ներկայացուցիչները վարած բանակցությունների նպատակը միայն Իրանի նավթի զավթումը չէր։ Ամերիկյան շրջաններում չէին թաքցնում, որ «նավթային հարցի լուծման» պլաններն անմիջականորեն կապված էին Միջինարևելյան բլոկի մեջ Իրանին ներգրավելու փորձերի հետ։ Այսպես, Քեհրանի «Խանդանիհա» ժուռնալը գրում էր, որ «ամերիկացիները, հավանաբար, Իրանի կառավարությանը տրվող օգնությունը կապում են նավթի վերաբերյալ վերջնական բանակցությունների և թուրք-պակիստանյան դաշինքին միանալու վերաբերյալ Իրանի պարտավորության հետ»<sup>2</sup>։

Իրանական ժողովրդի ազգային հարստության հիմնական աղբյուրը հանդիսացող նավթի անզլիական վերահսկողությունը ամերիկյանով փոխարինելով, ամերիկյան իմպերիալիստները մտադիր էին վերջնականապես ստրկացնել Իրանը և նրան ներգրավել Մերձավոր ու Միջին Արևելքում կիրառվող ագրեսիվ միջոցառումների մեջ։

Ամերիկյան մոնոպոլիստների համար նավթային հարցը հանդիսանում է ոչ միայն հարստացման և առավելագույն շահույթի աղբյուր, այլև քաղաքական ճնշման միջոց։

Այսպիսի քաղաքականության օրինակ կարող են ծառայել Իրանը, Իրաքը, Ստուգական Արաբիան և ուրիշ երկրներ։ Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների նավթային հարստություններն իրենց ձեռքի մեջ հավաքելով, իմպերիալիստական պետությունները հսկողություն են սահմանում այդ երկրների կառավարությունների քաղաքականության նկատմամբ, միջամտելով նրանց ներքին գործերին։ ԱՄՆ-ը այդպես վերաբերվեց, օրինակ, Իրաքի հետ, որտեղ ամերիկյան մոնոպոլիստական կապիտալը վերջերս նշանակալից շահով ամրացրել էր դիրքերը։ Արդեն 1953 թ. ամե-

<sup>1</sup> «Istanbul», 15 հունիսի, 1954:

<sup>2</sup> «Правда», 4 января, 1954 г.

րիկյան «Ստանդարտ Օյլ» և «Սակոնի Վակուում Օյլ» ընկերու-  
թյունները տիրում էին անգլիական «Իրաք կոմպանի» խոշոր ըն-  
կերության ակցիաների 47,5%: Քուվեյթում անգլո-ամերիկյան  
խառն ընկերության ակցիաների 50% պատկանում է ամերիկա-  
ցիներին և 50% անգլիացիներին: Մերձավոր Արևելքի հետա-  
խուզված նավթային ռեսուրսների վերահսկողության ամերիկյան  
ընկերությունների բաժինն այժմ հասնում է 60%<sup>1</sup>:

Իրաքում մինչև վերջին ժամանակներս փոքր շէր այնպիսի քա-  
ղաքական և պետական գործիչների թիվը, որոնք շնայած ժողովրդ-  
դի խիստ դիմադրությանը, ընդառաջում էին միջինարևելյան ագրե-  
սիվ բոլոր ստեղծելու ամերիկյան պլաններին: «Օգնություն» ցույց  
տալու քաղաքականության իրականացումով ԱՄՆ-ին հաջողվեց  
Իրաքը ռազմական և քաղաքական տեսակետից իրեն ենթարկել:

Իրաքի նախկին պրեմիեր-մինիստր Ֆ. Ջամալին հավանություն  
էր տալիս թուրք-պակիստանյան պակտին և հայտարարում, որ  
արարական երկրները նույնպես ուժեղ պակտով կապված են մի-  
մյանց հետ (նկատի ունեն արաբական լիգան), բայց անհրաժեշտ  
սպառազինության պակասը այդ դաշինքը դարձնում է նվազ գործ-  
նական: Ֆ. Ջամալին առաջարկում էր արաբական երկրներին կա-  
պել թուրք-պակիստանյան պակտի հետ, քանի որ, ինչպես նա  
ընդգծում էր, դա արաբական պետությունների ուժեղացման միակ  
ուղին է:

Ինչպես տեսնում ենք, արաբական պետություններից մեկի  
պրեմիերն անդրադառնալով թուրք-պակիստանյան պակտին Իրա-  
քի միանալու հարցին, այն ամենից առաջ կապում էր սպառազին-  
ման պրոբլեմի, այլ ոչ թե կուլտուրական կամ տնտեսական համա-  
գործակցության հարցի հետ:

1954 թ. մայիսի կեսերին Իրաք ժամանեց ամերիկյան ռազ-  
մական հանձնաժողովը զենքերալ Մայերսի գլխավորությամբ, որը  
մինչ այդ ստուգում էր Պակիստանի զինված ուժերը: Այդ այցե-  
լությունը նախորդեց Իրաքին ամերիկյան ռազմական «օգնություն»  
ցույց տալու համաձայնության ստորագրմանը, որի հետևանքով  
Իրաքի բանակն անցավ ամերիկյան հսկողության տակ: «Նյու-  
Յորք Թայմս» թերթը գրում էր, որ «...Իրաքին օգնություն ցույց  
տալը կօժանդակի Սովետական Միությունից հարավ ընկած եր-  
կրների նոր ռեզիտնալ կազմակերպության ստեղծմանը: Այդպիսի

<sup>1</sup> «Углубление кризиса колониальной системы империализма после второй мировой войны», Москва, 1953, Госполитиздат, стр. 411.

կազմակերպությունը կընդգրկի Պակիստանը, Թուրքիան, Սաուդական Արաբիան, Իրանը, Ինչպես և Իրաքը»<sup>1</sup>:

Սիրիական «Ալ Մանար» թերթը (Սիրիական «Մուսուլմանական եղբայրություն» ասոցիացիայի օրդան) 1954 թ. հունիսի 14-ին հաղորդում էր, որ Ինչպես նշում են դիվանագիտական շրջաններում, Իրաքին ամերիկյան ռազմական օգնություն տրամադրելու համաձայնագրում մի գաղտնի հոդված գոյություն ունի, որը նախատեսում է ամենամոտակա հարմար պահին «Իրաքի միացումը Թուրք-պակիստանյան դաշինքին»<sup>2</sup>:

Իրաքը Թուրք-պակիստանյան պակտի մեջ ներգրավելով ամերիկյան իմպերիալիստները մտադիր էին անջատել նրան արաբական մյուս պետություններից, որոնք արտահայտվում էին որևէ ագրեսիվ ռազմական դաշինքի մասնակցելու դեմ: Այսպիսով ԱՄՆ-ը ցանկանում էր արաբական պետությունները պառակտել և նրանց միմյանց դեմ լարել:

1954 թ. ապրիլի 1-ին արաբական երկրների լիգայի քաղաքական կոմիտեն Կահիրեում մի հայտարարություն հրապարակեց, որը դատապարտում էր արևմտյան տերությունների փորձերը՝ արաբական երկրները ռազմական դաշինքներում ներգրավելու ուղղությամբ: Հայտարարության մեջ նշվում էր, որ «արաբական երկրները հրաժարվում են միանալ Թուրք-պակիստանյան պակտին»<sup>3</sup>: Անկասկած արաբական երկրների լիգայի այդ հայտարարությունը լիակատար կերպով համապատասխանում էր արաբական պետությունների ըսյն հասարակայնության տրամադրություններին: Խոսելով այդ մասին, «Նյու-Յորք Թայմս» թերթը գրում էր, որ շնայած Իրաքի կողմից ամերիկյան ռազմական օգնության ընդունումը «ուրախալի փաստ» է, սակայն Թուրք-պակիստանյան պակտին Իրաքի միացմանը խանգարում են մի քանի խոչընդոտներ և հավանաբար «ներանցից ամենակարևորը հանդիսանում է Իրաքի հասարակական կարծիքը»<sup>4</sup>:

1954 թ. հունիսի 12—16-ը Անկարայում, այնուհետև Ստամբուլում տեղի ունեցավ արաբական երկրներում Թուրքական դիվանագիտական ներկայացուցիչների կոնֆերանսը, որին մասնակցում էր Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Ֆ. Քոփոյունը<sup>5</sup>:

<sup>1</sup> «The New York Times», 1954, May 18.

<sup>2</sup> «Аль-Манар», 14 հունիսի, 1954:

<sup>3</sup> «Новое время», № 22, 29 мая 1954, стр. 5.

<sup>4</sup> «The New York Times», 1954, May 18.

<sup>5</sup> «Ses «Istanbul», 9 հուլիսի, 1954, 12 հուլիսի 1954, 13 հուլիսի '54, 14 հուլիսի, 1954, 17 հուլիսի, 1954:

Կոնֆերանսում հիմնականում քննվում էր արաբական երկրներում Միջինարևելյան «պաշտպանական» բլոկին մասնակից դարձնելու գործում Թուրքիայի անելիքները: Կոնֆերանսը Թուրքական դիվանագետներին հանձնարարեց կոորդինացնել իրենց դործունեությունը արաբական Արևելքի երկրների ղանազան մայրաքաղաքներում, այն նպատակով, որպեսզի արաբական երկրների միացումով ընդլայնվի Թուրք-պակիստանյան պակտը: Թուրքական դիվանագետների ստամբուլյան խորհրդակցության որոշումներն իրականացնելու նպատակով, 1955 թ. հունվարի սկզբին Թուրքիայի պրեմիեր-մինիստր Մենդերևսը շրջագայեց արաբական երկրների մայրաքաղաքները:

Պատահական չի կարելի համարել, որ Մենդերևսն իր ճամփորդությունը սկսեց հենց Իրաքից, որը հանդիսանում էր Արաբական Արևելքի պետությունների համերաշխության թույլ օղակը: Իրաքի դեկավար շրջանները բարեհաճորեն վերաբերվեցին Թուրքիայի հետ ուղղակի պայմանագիր կնքելու գաղափարին: Մենդերևսի բանակցություններից հետո, 1955 թ. հունվարի 12-ին, Բաղդադում և Անկարայում մի կոմյունիկե հրապարակվեց, որի մեջ նշվում էր, որ Մենդերևսը և Նուրի Սայիդը որոշեցին Թուրքիայի և Իրաքի միջև «փոխադարձ անվտանգության» պայմանագիր կնքել<sup>1</sup>:

Կոմյունիկեում ասված էր, որ նրանք «անհրաժեշտ են համարում» այս շրջանի նաև մյուս երկրների մասնակցությունը, առաջին հերթին արաբական երկրների մասնակցությունը, ստեղծվող ուղղակի մեջ: Սակայն, այն, ինչ ձեռք բերեց Մենդերևսը Իրաքի մայրաքաղաքում, չկարողացավ ձեռք բերել, Սիրիայի, Լիբանանի, Իգիպտոսի մայրաքաղաքներում, որոնց կառավարությունները հրաժարվեցին Թուրքիայի հետ ուղղակի դաշինքի մեջ մտնել:

Թուրքիայի և Իրաքի միջև ագրեսիվ դաշինք կնքելու պլանը իրականացվեց 1955 թ. փետրվարի 24-ին Բաղդադում կնքված Թուրք-իրաքյան համաձայնությանը, որը ստացավ Բաղդադի պակտ անունը:

Փետրվարի 25-ին Անկարայում և Բաղդադում հրապարակվեց «Թուրքիայի և Իրաքի՝ փոխադարձ համագործակցության» համաձայնագրի տեքստը<sup>2</sup>:

Սովետական Միության և Մերձավոր ու Միջին Արևելքի ազգային-ազատագրական շարժումների դեմ ուղղված երկու պետություն-

<sup>1</sup> «Zafar», 13 հունվարի, 1955:

<sup>2</sup> Պայմանագրի տեքստը տես՝ «Keesings Contemporary Archives, March» 9—26, 1955, էջ 14105:

ների դաշինքի իսկական նպատակները քողարկելու համար առաջին հոդվածում ասվում էր, որ պայմանագրի մասնակիցները «Միավորված ազգերի կազմակերպության 51-րդ հոդվածի համաձայն կհամագործակցեն իրենց անվտանգության և պաշտպանության գործում»։ Ուշագրավ է նաև պայմանագրի 5-րդ հոդվածը, որտեղ ասվում էր. «Այս պակտը բաց կլինի Արաբական երկրները Լիգայի յուրաքանչյուր անդամի և յուրաքանչյուր այլ պետության առջև...»։ Անկասկած է, որ այս հոդվածը ծառայում էր նաև արաբական երկրների համերաշխությունը պառակտելու ամերիկյան պլանին, որին նրանք ուզում էին հասնել այդ երկրները Արաբական Լիգայից կտրելու եղանակով։ Եվ, իսկապես Քուրդիայի հետ ռազմական պայմանագիր կնքելու մասին Իրաքի կառավարության որոշումը հարվածեց Արաբական երկրների Լիգային, որի մասնակիցները արաբական պետությունների պրեմիեր-մինիստրների կոնֆերանսում, որը տեղի ունեցավ Կահիրեում, 1955 թ. հունվարի 22-ից մինչև փետրվարի 6-ը, դատապարտեցին Իրաքի այդ քայլը։ Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Արաբական երկրների Լիգան որոշ դրական դեր է խաղում, հանդես գալով արևմտյան իմպերիալիստների հետ որևէ ռազմական դաշինք կնքելու դեմ։ Բոլոր արաբական պետություններն անխտիր դատապարտեցին Իրաքի կառավարության վերոհիշյալ քայլը<sup>1</sup>։

Միայն վաշինգտոնում և Անկարայում այդ ակտն ընդունվեց մեծ բավականությամբ։ Ամերիկյան «Նյուզ Ուիկ» շաբաթաթերթը բացահայտ գրում էր թուրք-իրաքյան պակտի հակաարաբական բնույթի մասին, այն մասին, որ Իրաքի կառավարության որոշումը՝ ռազմական պայմանագիր կնքելու «Հյուսիս-ատլանտյան դաշինքի անգամ Քուրդիայի՝ ոչ արաբական մի երկրի հետ, որը մինչև առաջին համաշխարհային պատերազմը հանդիսանում էր արաբների ճնշողը», հարվածեց արաբների երազանքին—մնալ շեղոք, ինչպես Հնդկաստանը» և երկպառակություն առաջ բերեց Արաբական երկրների Լիգայի անդամների մեջ<sup>2</sup>։

<sup>1</sup> 1955 թ. փետրվարի 15-ի «Պրավդայում» հրատարակվել է Սաուդական Արաբիայի թագավորի ուղերձը և Միդիայի կառավարության հայտարարությունը, որով նրանք հանդես էին գալիս Արևմուտքի հետ որևէ դաշինք կնքելու դեմ և խիստ կերպով դատապարտում էին Իրաքի դիրքավորումը և իրաք-թուրքական ռազմական պայմանագիր կնքելու նրա որոշումը ղնահատում էին, որպես դավաճանական ակտ, որը տանում է դեպի Արաբական Լիգայի փլուզումը։

<sup>2</sup> «News Week», 1955, Jan. 25.

Ինչպես նշում էր «Ալ Ջումհուրիա» թերթը, Բաղդադի պակտը սպառնալիքի տակ էր դնում արաբական երկրների անկախությունը և այդ երկրների արտաքին քաղաքականությունը ուղղակի կամ անուղղակի ենթարկում էր օտարերկրյա ազդեցության, այն է նԱՏՕ-ի ազդեցությանը<sup>1</sup>։ Այս հանգամանքը հաստատվում էր մասնավորապես Լիբանանյան թերթերի այն հաղորդումներով, որ թուրք-իրաքյան պակտը գաղտնի հողված ունի, որի համաձայն Բասրա նավահանգիստը կօգտագործվի Քուրդիայի, հետևաբար և Ամերիկայի Միացյալ Նահանգների ռազմական նպատակների համար։

Բաղդադի պակտը երկկողմանի մեկուսացված համաձայնություն չէր։ ԱՄՆ-ի ակտիվ միջամտությամբ ստեղծվեց այդ պակտը, որպես հիմք ընդարձակ ռազմական բլոկի, որի մեջ սկզբում պետք է մտնեին արաբական երկրները մեկ առ մեկ, իսկ հետո Անգլիան և Ֆրանսիան, ինչպես նաև հենց իրենք՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները։

Հնկեր Ն. Ս. Խրուշչովը XX համագումարում իր զեկուցման մեջ բացահայտեց տարբեր բլոկների բնույթը, նշելով, որ «ՍԻԱՏՕ-ն, Բաղդադի պակտը ոչ միայն ռազմական ու քաղաքական ագրեսիվ խմբավորումներ են, այլև թույլ զարգացած երկրների ստրկացման գործիք, իր բնույթով գաղութային շահագործման նոր ձև։ Չէ՞ որ ամենքի համար պարզ է, որ ՍԵԱՏՕ-ում Պակիստանն ու Տաիլանդը չեն և Բաղդադի պակտում Իրաքը, Իրանը և Քուրդիան չեն, որ տնօրինում են քաղաքականությունը։

Այդպիսի բլոկների ստեղծումը և որոշ երկրներ ուրիշ երկրների հակադրելը նաև հանդիսանում է տնտեսապես թույլ զարգացած երկրներին գծտեցնելու միջոցներից մեկը, գաղութարարների «բաժանիր, որ տիրես» վաղուց հայտնի քաղաքականության շարունակումը։ Բաղդադի պակտի միջոցով նրանք աշխատում են գծտեցնել արաբական Արևելքի երկրներին։ ՍԵԱՏՕ-ի միջոցով նրանք օգնում են գծտեցնել Հարավ-Արևելյան Ասիայի երկրներին<sup>2</sup>։

Ագրեսիվ բլոկին Իրաքի միանալուց հետո ԱՄՆ-ի ղեկավար շրջանները և նրա գործակալները Մերձավոր ու Միջին Արևելքում սկսեցին համառորեն պահանջել նաև Իրանից՝ հետևել Իրաքի օրինակին։ 1955 թ. հունվարի 23-ին Բեյրութի օդանավակայանում

<sup>1</sup> ՏՖ «Известия», 15 марта, 1955 г.

<sup>2</sup> Ն. Ս. Խրուշչով, Մովեաւան Միութան Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումը պարտիայի XX համագումարին, Հայպետհրատ, 1956, էջ 33:

Պակիստանի պրեմիեր-մինիստր Մուհամեդ Ալին հայտարարեց. «Մոտ ապագայում Պակիստանը կդիմի իրանական կառավարութ-  
թյանը՝ թուրք-իրաքյան պակտին միանալու առաջարկությամբ»<sup>1</sup>,  
որպեսզի թուրք-պակիստանյան պակտի նման մի պաշտպանակա՝  
համաձայնություն»<sup>2</sup> կնքվի Պակիստանի և Իրանի միջև:

Իրանի վրա ազդելու թուրքիայի և Պակիստանի ջանքերը քա-  
ջալեբեցին Իրաքի կառավարութայնը, որն իր հերթին սկսեց «համա-  
դել» Իրանին, հավանություն տալ Միջինարևելյան ռազմական  
բլոկ ստեղծելու ամերիկյան պլաններին:

Այդ հարցի նկատմամբ իրանական կառավարության վերա-  
բերմունքի վրա լույս էր սփռում իրանական մամուլը, հաղորդե-  
լով, թե «... թուրքիայի պրեզիդենտ Ջելալ Բայարը, Պակիս-  
տանի պրեմիեր-մինիստր Մուհամեդ Ալին և Իրաքի արտաքին  
գործերի մինիստրը շուտով կայցելեն Իրան», որտեղ 1955 թ. ապ-  
րիլի վերջին Իրանի շահի նախագահությամբ կարևոր խորհրդակ-  
ցություն կգումարվի, և որը «չի կարող շանդրադառնալ Միջին-  
արևելյան պաշտպանական պակտին»<sup>3</sup>: Դա նշանակում էր, որ Իրա-  
նը կմիանա թուրք-իրաքյան ռազմական դաշինքին, և այդպիսով  
կենթարկվի Հյուսիս-ատլանտյան բլոկին: Հենց այդպես էլ դնահա-  
տեց Ն. Ս. Խրուշչովը, ասելով, որ «Սովետական Միության հարևան  
երկիրը, լինի դա Իրանը կամ որևէ այլ երկիր, չի կարող իր տերի-  
տորիան դնել ՆԱՏՕ-ի ագրեսիվ խմբավորման տրամադրության  
տակ, եթե նա բարի ցանկություններ ունի ամրացնելու բարի դրա-  
ցիական համագործակցությունը Սովետական Միության հետ: Իսկ  
եթե դիմում է այդպիսի քայլի, ապա դա նշանակում է, որ նա  
գործնականում ագրեսիվ ակտ է իրականացնում ՍՍՌՄ-ի դեմ»<sup>4</sup>:

Ինչպես հայտնի է արևմտյան իմպերիալիստներին և Մերձավոր  
ու Միջին Արևելքում նրանց գործակալներին հաջողվեց Իրանը ներ-  
գրավել Բաղդադի պակտի մեջ, և այդպիսով արդեն 1955 թ. գար-  
նանը ռազմական այդ դաշինքի անդամ դարձան թուրքիան, Պա-  
կիստանը, Իրաքը և Իրանը: Անուղակիորեն, տնտեսական և ռազ-  
մական խորհուրդների միջոցով Բաղդադի պակտի մեջ էին մտնում  
նաև Անգլիան ու ԱՄՆ-ը: Սակայն, վերջին ժամանակներս, Մեր-

<sup>1</sup> «Zafeg», 24 հունվարի, 1955:

<sup>2</sup> «Zafeg», 28 հունվարի, 1955:

<sup>3</sup> «Известия», 13 февраля 1955 г.

<sup>4</sup> 1958 թ. նոյեմբերի 19-ին Մոսկվայում կայացած Սովետական Միու-  
թյան և Լեհական Ժողովրդական սեպտեմբրիկայի Ժողովուրդների բարեկամու-  
թյան միտինգում Ն. Ս. Խրուշչովի արատեսանած ճառը: ՏՅճ «Правда», 11  
նոյեմբերի, 1958:



ձախորու Միջին Արևելքում տեղի ունեցող իրադրությունները ցույց տվեցին, որ ԱՄՆ-ը ոչ թե Բաղդադի պակտի «անուղղակի» մասնակիցն է, այլ ակտիվ կազմակերպիչը և փաստական անդամը: ԱՄՆ-ի ղեկավար շրջաններն էին, որ ստեղծեցին Բաղդադի ագրեսիվ պակտը, նրանք են, որ զինում, ֆինանսավորում և որոշում են նրա նպատակները, խնդիրները, նրա քաղաքականությունը:

Բաղդադի պակտի ամենակտիվ մասնակիցը Թուրքիան էր: 1957—1958 թթ. Սիրիայի դեմ նախապատրաստվող ագրեսիայի կապակցությամբ ԱՄՆ-ը ուժեղ կերպով սկսեց մատակարարել և շարունակում է մատակարարել նոր սպառազինություն՝ Հյուսիս-առաջանայան բլոկի և Բաղդադի պակտի գծով իրեն դաշնակցին: Այլ մասին բացահայտ գրում էին Թուրքական թերթերը: Այսպես, օրինակ. 1957 թ. հոկտեմբերի 10-ին «Ակշամ» թերթը հոդորգում էր, որ «Ամերիկան Թուրքիային մեծ մասշտաբի ուղղակի օգնություն ցույց կտա»<sup>1</sup>: Ինչպես նշում է թերթը, այդ նպատակով Անկարայում հատուկ խորհրդակցություն է հրավիրվում՝ Թուրքական պետական գործիչների և ամերիկյան ուղղակի մասնագետների մասնակցությամբ: 1957 թ. հոկտեմբերի 9-ին Արտաքին գործերի մինիստրությունում այդպիսի մի խորհրդակցություն գումարվեց՝ արտաքին գործերի մինիստր Ֆ. Ռուշտու Ջոուլուի, ազգային պաշտպանության մինիստր Շեմի էրզինի, շորս բարձրաստիճան ամերիկյան զենքերայինների և Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Ուորենի մասնակցությամբ: Խորհրդակցությունում քննարկվում էր Թուրքիային ուղղակի օգնություն ցույց տալու հարցը, և ինչպես թերթն էր նշում, Ամերիկայի այդ «օգնությունը» ուղղակիորեն և անմիջականորեն կապված էր Սիրիայում տեղի ունեցող դեպքերի հետ:

Սովետական կառավարությունը Թուրքիային ուղարկած իր նոտաներում ընդգծում էր, որ Թուրքիան գործիք է դարձել ԱՄՆ-ի ուղղակի ավանտյուրանների և Միջին ու Մերձավոր Արևելքում միջազգային լարվածության ուժեղացման գործում: 1957 թ. հոկտեմբերի 29-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 12-րդ սեսիայի պլենար նիստում, Սիրիայի գանգատը քննարկելիս, Սովետական ղեկավարի ղեկավար Գրոմիկոն հայտարարեց. «Մենք արդեն ասել ենք և նորից կրկնում ենք... Սովետական Միությունը Թուրքիային մեղադրում է, որ նա ուղղակի հարձակում է պատրաստում Սիրիայի վրա, իսկ Միացյալ Նահանգներին մեղադրում է, որ նրանք հրահրում են Թուրքիային, նրան հրում են ճակատագրական քայլի, դրդելով ընթանալ այդ վտանգավոր ճանապարհով»<sup>2</sup>:

<sup>1</sup> «Աքսամ», 10 հոկտեմբերի, 1957:

<sup>2</sup> «Սովետական Հայաստան», 31 հոկտեմբերի, 1957:

Սովետական կառավարությունը չէր կարող անտեսել թուրքիայի ագրեսիվ գործունեությունը, որը պատրաստվում էր հարձակվել Սիրիայի վրա: Սովետական կառավարության ղեկավար Ն. Ս. Խրուշչովը հայտարարեց. «Ծթե թուրքիան ուղղակի գործողություններ սկսի Սիրիայի դեմ, ապա դա կարող է հասցնել շատ լուրջ հետևանքների, այդ թվում և հենց իրեն՝ թուրքիայի համար: Այդ կայծից կարող է պատերազմի հրդեհ առաջ գալ:

Մենք մեր կողմից ամեն միջոցի դիմում ենք, որպեսզի դեպքերը չգնան պատերազմի սանձազերծման ուղիով: Հասկանալի է, որ մենք չենք կարող անտարբեր մնալ, քանի որ Միջին Արևելքը գտնվում է Սովետական Միության անմիջական մոտակայքում, իսկ թուրքիան հանդիսանում է մեր հարևանը և մեզ հետ ունի մեծ տարածության ընդհանուր սահման: Մենք ցանկանում ենք թուրքական կառավարությանը նախազգուշացնել շմտածված ավանտյուրիստական քայլերից, որոնք կարող են նրան զցել պատերազմի անդունդը, և որից թուրքիան դժվարությամբ կկարողանա դուրս գալ»<sup>1</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ Սովետական կառավարության ամուր դիրքը, նրա հետևողականությունը Սիրիայի և Մերձավոր Արևելքի մյուս խաղաղասեր երկրների անկախությունն ու ազգային շահերը պաշտպանելու գործում, վճռական դեր խաղացին այդ շրջանում պատերազմի հրդեհից խուսափելու համար: Բայց իմպերիալիստների պլանները դատապարտված էին ձախողման: Այդ մասին նշեց ընկ. Ա. Ի. Միկոյանը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեկոլուցիայի 41-րդ տարեդարձին նվիրված իր զեկուցման մեջ.

«1956 թ. Անգլիան ու Ֆրանսիան Իսրայելի հետ հարձակվեցին Եգիպտոսի վրա:

Դրանից մի տարի էլ շանցած, ԱՄՆ-ը և Անգլիան թուրքիայի աջակցությամբ նախապատրաստեցին ուղղակի հարձակում Սիրիայի վրա: Այդ երկու դեպքում էլ Սովետական Միության, սոցիալիստական բոլոր երկրների և խաղաղասեր մյուս պետությունների ջանքերով, արաբական երկրների հերոսական պայքարով ագրեսիան խափանվեց, ագրեսորները խայտառակությամբ վճռվեցին Եգիպտոսից, նրանք չհանդգնեցին հարձակվել Սիրիայի վրա»<sup>2</sup>:

Այս փաստը հանդիսանում է Բաղդադի պակտի ագրեսիվ բնույթի վառ ապացույցը, որը իր սուր ծայրով ուղղված է աղատա-

<sup>1</sup> Տես «Правда» 11 հոկտեմբերի, 1957:

Սովետական Հայաստան», 7 նոյեմբերի, 1959:

սեր արարական պետությունների, ժողովրդական դեմոկրատիայի երկրների և Սովետական Միության դեմ:

Բաղդադի պակտը հանդիսանում է Արևմտյան իմպերիալիզմի արհեստական ծնունդը, նա ոչ մի ընդհանուր բան չունի Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների ժողովուրդների ազգային, տնտեսական, քաղաքական շահերի և անվտանգության ու խաղաղության հետ: Այդ երկրների ժողովուրդների ցանկությանը հակառակ ստեղծված Բաղդադի պակտը իր գոյության ընթացքում մի շարք ուժեղ հարվածներ ստացավ և ծանր ճգնաժամ ապրեց: Չէ որ ամբողջ արարական Արևելքը վճռականորեն մերժեց ճանաչել այդ պակտը և համագործակցել ուղղմական ազրեսիվ դաշինքի հետ: Իսկ մոնարխիստական կարգերը խորտակող և Իրաքի ժողովրդի շահերի դավաճան կլիկը լիկվիդացնող հուլիսյան ռևոլյուցիան Իրաքում շախշախիչ հարված հասցրեց Բաղդադի պակտին, որն ամենայն արդարացիությամբ այլևս չի կարող այդ անունը կրել, քանի որ Իրաքի Ռեսպուբլիկական նոր կառավարությունը հայտարարեց, թե նա իր արտաքին քաղաքականության մեջ խիստ կերպով կպաշտպանի «պոզիտիվ չեզոքություն» և չի մասնակցի որևէ ուղղմական խմբավորման: 1959 թ. մարտին Իրաքի կառավարությունը պաշտոնապես հայտարարեց այդ պակտից իր դուրս գալու մասին: Այս բանից հետո Բաղդադի պակտի կենտրոնը տեղափոխվեց Անկարա և այն այժմ կոչվում է «ՍԵՆՏՈ»:

Հայտնի է, որ Իրաքի դուրս գալու կապակցությամբ Բաղդադի պակտի ճգնաժամն էլ ավելի ակտիվացրեց ԱՄՆ-ի գործունեությունն այդ ուղղմական ազրեսիվ բլոկի ամրացման համար՝ նոր երկկողմանի ուղղմական դաշինք կնքելով ԱՄՆ-ի և Բաղդադի դաշինքի մասնակից Թուրքիայի, Պակիստանի և Իրանի հետ: Այդ նպատակով ամերիկյան պետական և ուղղմական գործիչները ԱՄՆ-ի նախկին պետական քարտուղար Դալեսը, պետական քարտուղարի օգնական Ռաունթրին, ԱՄՆ-ի պաշտպանության մինիստրը Մակելոտը, Հենդերսոնը և ուրիշները 1958 թ. վերջին և 1959 թ. սկզբին այցելեցին Թուրքիա, Իրան և Պակիստան, որտեղ հանդիպում ունեցան այդ երկրների կառավարությունների ղեկավարների հետ, և, ինչպես հետագայում հայտնի դարձավ, համաձայնություն ձեռք բերեցին մոտ ապագայում ԱՄՆ-ի հետ ուղղմական պայմանագիր ստորագրելու հարցում: Հայտնի է, որ ԱՄՆ-ի, Թուրքիայի, Պակիստանի և Իրանի ղեկավար շրջանների նման գործունեությունը չի կարող ծառայել խաղաղության և անվտանգության շահերին, ընդհակառակն, ուժեղացնում է միջազգային հարաբերությունների

լարվածությունը և Մերձավոր ու Միջին Արևելքի շրջաններում ռազմական կոնֆլիկտների սպառնալիքը: Ընդ որում, ակնյայտ է, որ ԱՄՆ-ի, Թուրքիայի, Իրանի և Պակիստանի քաղաքականության այդ կուրսը ուղղված էր ամենից առաջ Սովետական Միության դեմ: Հարցի հենց այս կողմին ուշադրություն դարձրեց Սովետական կառավարությունը 1958 թ. դեկտեմբերի 28-ին Իրանի կառավարությանը հանձնած իր հուշագրում: Ընդհանրապես, բացի այն, որ Իրանը նախապես մտել է ՍՍՌՄ-ի դեմ ուղղված Բաղդադի ռազմական բլոկի մեջ (չնայած իրանական կողմը փորձում էր մեկ հակառակ բանում համոզել), Իրանի շահնշահի կառավարությունը այնպիսի միջոցառումներ է կիրառում, որոնք էլ ավելի են ուժեղացնում Բաղդադի պակտի ռազմական ազդեցիվ կողմերը: Նա ռազմական նոր համաձայնությունների է գնում այն պետությունների հետ, որոնք բնավ էլ շահագրգռված չեն այս շրջանի խաղաղության և անդորրության պահպանումով, և որոնց, ինչպես նրանք մեկ անգամ չէ, որ ապացուցել են, խորթ են այս շրջանի երկրների իսկական ազգային շահերը:

Սովետական կառավարությունն արդեն Իրանի շահնշահի կառավարության և անձամբ շահնշահի ուշադրությունը հրավիրել է մասնավորապես այն բացառիկ կարևոր նշանակության վրա. որ ՍՍՌՄ-ի կառավարությունը տալիս է ԱՄՆ-ի հետ Իրանի ռազմական համաձայնագրի ենթադրվող կնքման տեղեկություններին և այդ քայլի միանգամայն վտանգավոր բնույթին<sup>1</sup>:

Այնուհետև հուշագրում ասվում էր, որ իրանական կառավարության նման արարքը տանում է դեպի սովետա-իրանական հարաբերությունների վատթարացումը, քանի որ Իրանը բացահայտորեն մտնում է այն իմպերիալիստական պետությունների լագերի մեջ, որոնք պատերազմ են պատրաստում Սովետական Միության դեմ: Իրանական տերիտորիան վերածվում է պլացարմի՝ Սովետական Միության և այլ խաղաղասեր հարևանների վրա հարձակվելու համար:

Սովետական կառավարության հուշագրում նշվում էր ենթադրվող իրանա-ամերիկյան պայմանագրի ազդեցիվ էության մասին: Հուշագրում ասված է. «... Մասնավորապես հայտնի է, որ համաձայնագրի հետ կապված պլանների համաձայն նախատեսվում է Իրանի ամերիկյան մտակալքում Պարսից ծոցի զոնայում ամերիկյան ռազմական ուժերի տեղադրումը<sup>2</sup>: Սովետական կառավարության

<sup>1</sup> «Правда», 17 января, 1959 г.

<sup>2</sup> Там же.

րությունը դրա մեջ տեսնում էր Մերձավոր ու Միջին Արևելքի շրջանի, ինչպես նաև ՍՍՌՄ-ի անվտանգութիան անմիջական սպառնալիք:

1958 թ. նոյեմբերի կեսերին ԱՄՆ-ի պետական դեպարտամենար պաշտոնապես հայտարարեց, որ Միացյալ Նահանգները Թուրքիայի, Պակիստանի և Իրանի հետ բանակցություններ են վարում երկկողմանի ուղղական պայմանագրեր կնքելու համար, միաժամանակ տարածելով այն կեղծ վերսիսան, թե իբր այդ պայմանագրերը միայն «սիմվոլիկ» նշանակություն ունեն: Դա նրա համար էր արվում, որպեսզի ապակողմնորոշեն ժողովուրդներին, և նրանց ուշադրությունը շեղեն Մերձավոր ու Միջին Արևելքում ամերիկյան իմպերիալիստների կողմից կազմակերպվող նոր ագրեսիվ պայմանագրերից:

Չնայած այն գաղտնի մթնոլորտին, որով շղարշված էր ԱՄՆ-ի, Թուրքիայի, Պակիստանի և Իրանի միջև մոտակա երկկողմանի նոր ուղղական պայմանագրերի բանակցությունները, այդուհանդերձ արտասահմանյան մամուլում լուրեր սպրդեցին, որոնք պատկերացում էին տալիս պայմանագրերի էության մասին:

Այսպես օրինակ՝ իրանական «էքո Օֆ Իրան» շաբաթաթերթի հավելվածում (1958 թ. սեպտեմբերի 12) հաղորդվում էր, որ Իրանում տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ Բաղդադի պակտում պետք է փոփոխություններ կատարվեն», որոնց հիմնական իմաստը հանգում է այն բանին, որ «ներկա պայմաններում Արևմուտքը պետք է ուժեղացնի իր պաշտպանական սահմանը Միջին Արևելքում, ինչպես Ռուսաստանի, այնպես էլ արաբական երկրների դեմ»: «էքո Օֆ Իրանը» գրում էր, որ Բաղդադի պակտի ուղղական կոմիտեում արդեն քննարկվել են պակտի երկրրների տերիտորիաներում նոր ռազմական բազաների շինարարության պլանները, որ ներկայումս «կենսական հարց է դարձել համապատասխան հզոր ռազմա-ծովային և ռազմա-օդային բազաներ ստեղծելու գործը»: Պարզվում է, որ մշակվել էր այսպես կոչված «Պարսից ծոցի պաշտպանության պլան», որի համաձայն ռազմա-ծովային և ռազմա-օդային ուժերի բազաները պետք է մոտեցվեին Պարսից ծոցի ափերին՝ Իրանից հարավ, և Պարսից ծոցի շրջանի մի քանի իշխանություններին: Գերիշխող ուժն այդ շրջանում նախատեսված էր դարձնել ամերիկյան հատուկ ռազմա-ծովային նավատորմը, որը ԱՄՆ-ը «մշտապես կպահի» Պարսից ծոցում:

Ակնհայտ է, որ Պարսից ծոցում, ինչպես նաև ամբողջ Մերձա-

վոր ու Միջին Արևելքում իրենց գերիշխանությունը հաստատելու և այդ շրջանների նավթային հարստություններն հսկողության տակ վերցնելու կամ պահելու նպատակով ամերիկյան իմպերիալիստները ձգտում են Բաղդադի պակտը վերածել ագրեսիայի ուղղակի գործիքի ընդդեմ արաբական պետությունների և ՍՍՌՄ-ի:

Մերձավոր ու Միջին Արևելքում ագրեսիվ բլոկներ ստեղծելու ամերիկյան քաղաքականության դեմ վճռականորեն հանդես են գալիս նոր համաշխարհային պատերազմի սպառնալիքը վերացնելու համար պայքարող խաղաղասեր ուժերն աշխարհի բոլոր երկրներում: Կայուն խաղաղության և ժողովուրդների անվտանգության համար պայքարող ուժերի ավանգարդում կանգնած է Սովետական Մեծ Միությունը, որն անշեղորեն մերկացնում է աշխարհի զանազան մասերում իմպերիալիստների ավանտյուրիստական մեքենայությունները և մասնավորապես ԱՄՆ-ի ու նրա պարտնյորների ագրեսիվ գործունեությունը Մերձավոր ու Միջին Արևելքում:

Սովետական կառավարության հետևողական խաղաղասիրական քաղաքականությունը, Մերձավոր ու Միջին Արևելքի ժողովուրդների ազգային շահերը պաշտպանելու նրա պատրաստակամությունը, և, վերջապես, այդ ժողովուրդների պայքարը իրենց ազատության և անկախության համար երաշխիք են, որ ինչպես մյուս շրջաններում, այնպես էլ այստեղ մինչև վերջ կձախողվեն արևմտյան իմպերիալիզմի ագրեսիվ պլանները:

С. С. АВАНЕСОВ

К ВОПРОСУ О СОЗДАНИИ АГРЕССИВНЫХ БЛОКОВ  
НА БЛИЖНЕМ И СРЕДНЕМ ВОСТОКЕ (1953—1958)

Резюме

В статье рассматриваются вопросы, связанные с политикой американских империалистов по созданию агрессивно-военных блоков на Ближнем и Среднем Востоке. Показывается, как правящие круги США, начиная с 1947 г. (доктрина Трумэна) усиленно проникают в район Ближнего и Среднего Востока, стремясь экономически и политически подчинить эти страны. Большое внимание уделяется превращению района Ближнего и Среднего Востока в военный плацдарм против Советского Союза, стран народной демократии, а также против освободительного движения арабских народов.

В статье освещаются некоторые вопросы, связанные с историей создания военно-агрессивных блоков—Средневоосточного и Багдадского (ныне СЕНТО), указывается особая роль Турции в этих блоках.

Определенное место занимает в статье разоблачение империалистической, агрессивной политики правящих кругов США, Англии, Турции, Ирана и Пакистана в районе Ближнего и Среднего Востока.

## Հ. Կ. ԹՈՒՐՅԱՆՑ

ՆԱՎԹԱՅԻՆ ՆՈՐ ԿՈՆՑԵՍՒԱՆԵՐԻ ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ  
ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Վերջին մի քանի տարիներին Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում հետզհետե ավելի հետևողական կերպով մուտք են գործում նավթային մոնոպոլիստական նոր և համեմատաբար ավելի փոքր խմբավորումներ, այսպես կոչված անկախներ, կողմնակիներ<sup>1</sup>: Վ. Ի. Լենինը հիշատակում է Կեստների մի աշխատություն մասին, որի մեջ նման ընկերություններին անվանում են «կողմնակիներ»:

Հանրահայտ է, որ Մերձավոր և Միջին Արևելքի պաշարներով քիչ թե շատ հարուստ շրջանները կոնցեսիաներով և կամ պրիորիտի զանազան կարգի իրավունքներով արդեն վաղուց գրավված են խոշորագույն մոնոպոլիաների կողմից: Հետևապես, անկախների, փոքրերի, կողմնակիների, նորեկների կողմից այս ասպարեզը մուտք գործելը պահանջում է բացառություն:

Քուրժուական գաղափարախոսներից շատերը նման երևույթները և՛ործում են վերագրել իրենց ջատագոված հասարակարգին հստակ լիբերալիզմին<sup>2</sup>: Ըստ որում, կապիտալիզմի, մինչև անգամ նրա մոնոպոլիստական ստադիայի պայմաններում, իբր թե տիրում է ազատություն. ամենքի առաջ բոլոր ասպարեզներն ազատ են, մոնոպոլիաների տիրապետություն իրականության մեջ չկա, և կամ եթե կա, դա շահագանց սահմանափակ բնույթ ունի:

Մինչդեռ հայտնի է, և դա լենինիզմի հիմնական դրույթն է.

<sup>1</sup> Այս կարգի ընկերություններին անգլերեն outsiders են անվանում, որը նշանակում է զբոսիչներ, այսինքն կարտելներից ու խոշոր մոնոպոլիստական խմբավորումներից զուրս մնացածներ:

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22, էջ 267:



րից մեկն է, որ իմպերիալիզմը կապիտալիզմի ամենաբարձր ստադիան է, նրա զարգացման անխուսափելի և վերջին փուլը, որ կապիտալիզմի պայմաններում մոնոպոլիան օրինաչափ երեւոյթ է:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սոցիալիզմի վերածումը համաշխարհային սիստեմի, ինչպես և նախկին գաղութային մի շարք երկրների ազատագրումը իմպերիալիզմի լծից, նոր փոխհարաբերութուններ ստեղծեցին սոցիալիզմի, կապիտալիզմի և ադատագրված երկրների միջև՝ ի վնաս միջազգային կապիտալիզմի մոնոպոլիստական սիստեմի: Գաղութային սիստեմի շարունակվող քայքայման պատճառով սեղմվեցին նաև կապիտալիստական գլխավոր տերութունների համար ոչ միայն նախկին դադութների հումուլթի աղբյուրները ու ապրանքային շուկաները այլև կապիտալ ներդրումների ոլորտը: Այս իսկ պատճառով Մերձավոր և Միջին Արևելքում անկախների կամ կողմնակիների, ինչպես նաև տեղական կապիտալի ու պետական նախաձեռնության՝ համար հսկա ասպարեզ բացվեց, որը կազմում էր անգլիական, հոլանդական, մասամբ ֆրանսիական ու Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգների մոնոպոլիաների մենաշնորհը:

Սոցիալիզմի ու կապիտալիզմի, և մյուս կողմից իմպերիալիզմի ու ազգային-ադատագրական ուժերի փոխհարաբերության մեջ տեղի ունեցող փոփոխութունները հասցրին իմպերիալիստական սիստեմի հետագա քայքայմանը: Դրանք նպաստեցին առաջին հերթին հակասութունների սրմանն ու խորացմանը կապիտալիստական խոշոր պետութունների և մոնոպոլիստական խլամբավորումների միջև և ապա մոնոպոլիաների դիրքերի թուլացմանը:

Արդարև, ազգային ինքնորոշման գաղափարների աննախընթաց զարգացման, նախկին գաղութային և կիսագաղութային մի շարք երկրների կողմից անկախութուն ձեռք բերելու, սոցիալիստական լազերի կողմից այդ երկրներին ցուցաբերվող աջակցության և պաշտպանության շնորհիվ Մերձավոր և Միջին Արևելքի մի շարք երկրների իշխանութունները մասամբ ազատվեցին օտարերկրյա մոնոպոլիաների և նրանց թիկունքում կանգնած կառավարութունների տիրապետող ազդեցութունից:

Օտարերկրյա մոնոպոլիաների ազդեցութունից ազատված դգալով տեղական իշխանութունները կողմնակի կամ անկախ ընկերութուններին նոր կոնցեսիաներ շնորհելու միջոցով փորձեցին

<sup>1</sup> Այս վերջինը աղբյուրաբան միջոցով:

խախտել մինչև այդ գործող կոնցենսիոն ընկերությունների միահեծան դրությունը: Նրանք պայմանագրային նոր կապերի մեջ մտան նաև սոցիալիստական երկրների առևտրական և այլ կազմակերպությունների հետ:

Երկրորդ կարևոր հանգամանքը այն է, որ խոշոր մոնոպոլիաները նոր կոնցեսիաներով հանձնվող տերիտորիաներով ըստ երկվույթին շահագրգռված չեն: Դրա պատճառը գուցե այն է, որ այդ տերիտորիաները նրանց կողմից անցյալում հետադուրսվել են, և դրական ոչ մի արդյունք չի ստացվել:

Վերջապես երրորդ գլխավոր հանգամանքն այն է, որ հաճախորպես անկախներ հանդես եկող ընկերություններն իրականում այդպես չեն և ուղղակի կամ անուղղակի կապերով զոգված են այդ տեղերում արդեն գործող խոշորագույն մոնոպոլիստական խմբավորումների հետ: Ուստի այդ կարգի «նորեկների» առաջ արգելք հարուցելու հարց, ինքնըստինքյան, չի ծագում:

Ներկա հոգվածում չենք անդրադառնալու Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում գործող խոշոր մոնոպոլիստական ընկերությունների գործունեությանը: Այդ մասին կան բազմաթիվ աշխատություններ և հոգվածներ<sup>1</sup>:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ հիշյալ շրջանի նավթային կոնցեսիաների պատմության մեջ նկատվել են խիստ պայքարի, ինչպես և համեմատաբար ավելի կայուն «խաղաղ» ժամանակաշրջաններ:

Ուսումնասիրությունները բերում են այն եզրակացության, որ օրինակ 1930-ական թվականներից մինչև 1940-ական թվականները պայքարը խոշոր մոնոպոլիստական խմբավորումների միջև որոշ չափով մեղմացել էր, որովհետև Մերձավոր ու Միջին Արևելքի նավթաշատ հայտնի տերիտորիաները արդեն բաժանված էին ի «կարմիր գծի»<sup>2</sup> ու կարտելային բնույթի այլ սահմանափակիչ հա-

<sup>1</sup> Տե՛ս *К. Гофман*, Нефть и англосаксонский империализм, М., 1930; *М. Авсенева*, Англо-американская борьба за нефть..., М., 1954; *В. С. Баскин*, Нефтяные монополии на Ближнем и Среднем Востоке, М. 1957; *И. П. Белая*, Американский империализм в Саудовской Аравии, М. 1957. Լ. Քրյան, Նավթարդյունաբերության տեղաբաշխումը և անվտանգության իմպերիալիստների հակառակությունները Մերձավոր և Միջին Արևելքում, Երևան, 1957 և ուրիշներ:

<sup>2</sup> 1928 թ. ստորագրված այս պայմանագրի համաձայն յուրաքանչյուր պայմանավորվող կողմ պարտավոր էր կարմիր գծով նշված տարածություններում հետախուզումներ չկատարել և կոնցեսիաներ ձեռք չբերել: Կարմիր գծով նշված տարածությունների մեջ էր մտնում Մերձավոր Արևելքի մեծա-

մաձայնագրերով «նորեկների» առաջ մուտքը փակ էր: Սակայն, այդ բաժանումը «...հզոր տրեստների միջև, իհարկե զչէր» բացառում վերաբաժանումը. եթե զարգացման անհամաչափությունը...» և այլ պատճառների «...հետևանքով ուժի հարաբերությունը փոխվում է»<sup>1</sup>:

Ուստի Լրկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող տարիներին, Լրր ամերիկյան նավթային մոնոպոլիաները ավելի վճռական և հետևողական կերպով սկսեցին ներթափանցել Մերձավոր և Միջին Արևելքի նավթարդյունաբերության ասպարեզը, այդ առաջին կայունության ժամանակաշրջանին հաջորդեց սուր պայքարի նոր ժամանակաշրջան: Պայքարը ավելի խստացավ մանավանդ այն ժամանակ, երբ Սաուդյան Արաբիայի կոնցեսիոն ընկերության մեջ փորձեցին մուտք գործել ամերիկյան նավթային մոնոպոլիաներից այն ամենախոշորները, որոնք բաժնետեր էին «Իրաք Պետրոլիում» ընկերության մեջ: Այդ կապակցությամբ փորձ արվեց «կարմիր գծի» համաձայնագրի սահմանափակիչ հոդվածը գործադրել այդ «ուխտագրուժ» ընկերությունների հետագա էքսպանսիան զսպելու համար: Սակայն, այդ և ուրիշ կարգի բոլոր արդելքները չկարողացան կասեցնել «Ստանդարդ Օյլ Օֆ Նյու Ջերսի» և «Սոկոնի Վալուտա Օյլ» ընկերությունների ներթափանցումը հիշյալ շրջանները, որի հետևանքով էլ «կարմիր գծի» համաձայնությունը 1948 թ. նոյեմբեր ամսին վերացավ:

Երբ «Արաբիան-Ամերիկըն Օյլ Կոմպանին» և «Կուվեյտ Օյլ Կոմպանին», Մերձավոր և Միջին Արևելքի նավթարդյունաբերության մեջ վերջնականապես գրավեցին և ամրապնդեցին իրենց դիրքերը, հին տիրապետողները ստիպված եղան տեղի տալ ն հաշտվել ստեղծած իրադրության հետ, ու համաձայնվեցին այս շրջանի նավթարդյունաբերության ղեկավար գիրքերը բաժանել նոր եկող հսկանների հետ:

Ստեղծվեց երկրորդ կայունության ժամանակաշրջանը, որն, 1956—1957 թթ. սկսած, մուտք գործող նոր կոնցեսիոն ընկերությունների հանդես գալու պատճառով նորից խախտվելու սպառնալիքի տակ է:

Այդ ժամանակաշրջանում էր, որ Իրանում նոր կոնցեսիոն իրա-

զույն մասը, այդ թվում Սաուդյան Արաբիան: Այս համաձայնությունը մի քանի խոշորների կողմից այդ շրջանի նավթարդյունաբերության մեջ հսկողություն ձեռք բերելու մի ցայտուն օրինակ է:

<sup>1</sup> Վ. Ի. Լեճիճ, Երկեր, հատ. 22, էջ 328:

վունքներ ձեռք բերեց իտալական ԱՋԻՊ Միներարիա՝ մոնոպոլիստական ընկերությունը, որը հիմնեց «Սոսիետե Իբանո-Իտալիեն դե Պետրոլ» կամ կրճատ ՍԻՐԻՊ-ը՝ ընկերությունը: Կոնցեսիոն պայմանագիրը՝ ստորագրվեց Թեհրանում 1957 թ. սեպտեմբերի 5-ին: Այս ընկերության կոնցեսիոն տարածությունների մեջ են մտնում.

ա) մինչև այդ թվականը կոնցեսիաներից ազատ մնացած Պարսից ծոցի հյուսիսային շրջանում 5.600 քառակուսի կիլոմետր տարածությունը, բ) Ջագրոսյան լեռնասիտեմի արևելյան շրջանում 11.300 քառակուսի կիլոմետր տարածությունը, գ) երկրի հարավում, Օմանի ծովին զուգահեռ ծովափնյա 6.000 քառակուսի կիլոմետր տարածությունը:

Այս կոնցեսիոն պայմանագրի, մեզ համար հետաքրքրություններ կայացնող հոդվածները ցույց են տալիս նախ, թե ինչ նոր էլեմենտներ են բերված հին կոնցեսիաների պայմանների հետ համեմատած, երկրորդ՝ թե այս նոր էլեմենտները ինչ հավանակա՞ն առարկարձումներ կարող են ունենալ կոնցեսիաներ շնորհող իշխանությունների և նավթային մոնոպոլիստների հետագա փոխհարաբերությունների վրա:

Կոնցեսիոն պայմանագրերի մեջ հոնորարների բաշխման պայմանների մասին հոդվածները, իհարկե, շատ կարևոր են: Նրանց հիմնական նպատակն է երկրի նավթային հարստությունների հանձնման դիմաց ապահովել, որքան կարելի է, բարձր եկամուտներ՝ կոնցեսիան շնորհող երկրի օգտին: Ուստի քննարկումը սկսենք տարրեր կոնցեսիոն պայմանագրերի հոնորարների հարցին վերաբերող հոդվածների մեկնաբանությամբ:

Մինչև ՍԻՐԻՊ-ի, հետագայում Ճապոնական և այլ կոնցեսիոն նոր ընկերությունների հանդես գալը, հոնորարային ամենանպաստավոր պայմանների բազան էր 50/50 համամասնությամբ շահույթների բաժանման սիստեմը: Սա տարածում գտավ հատկապես Իրանի նավթային հարստությունները ազգայնացնելու համար, 1951—1954 թթ. մղած պայքարի ձախողումից հետո: Մերձավոր և Միջին Արևելքում գործող մոնոպոլիստական ընկերությունները այդ սիստեմը ընդունեցին, որպեսզի Իրաքում, Սաուդյան Արաբիայում, Կուվեյտում և այդ շրջանի նավթարդյունաբերող մյուս երկրներում կանխվեն նավթարդյունաբերությունը ազգայնացնելու փորձերը:

<sup>1</sup> AGIP Mineraria.

<sup>2</sup> Societe Irano-Italienne des Petroles, (SIRIP).

<sup>3</sup> *SE» The Petroleum Times*, Supplement to vol. XI, № 1572 November 8, 1957.

Հետագայում, Իրանի նավթը ազգայնացնելու փորձի ձախողումից հետո, ևրբ Միջազգային Կոնսորցիումը ստեղծելու կապակցությամբ բանակցություններ էին վարվում, համամասնության այս սխտեմը հիմք ծառայեց երկու կողմերի համար, շնայած այն հանգամանքին, որ անգլո-իրանական վեճի ամենաեռուն օրերին դրանից ավելի նպաստավոր առաջարկներն անգամ մերժվել էին:

Սակայն, շահույթների բաշխման 50/50% նշված հարաբերությունը տվյալ դեպքում չի տալիս ճիշտ պատկերը, քանի որ Միջազգային Կոնսորցիումը աղատված է հարկեր և մաքսային տուրքեր վճարելու պարտավորությունից: Սրանումն է ՍԻՐԻՊ-ի և նրան նախորդող կոնցեսիաների միջև եղած գլխավոր տարբերություններից մեկը: Այս նոր պայմանագրի համաձայն շահույթները իրոք որ պիտի բաժանվեն 50/50% հարաբերությամբ<sup>1</sup>, քանի որ այն պիտի կիրառվի իրանական կառավարությանը հասանելի հարկերի և այլ տուրքերի վճարումից հետո միայն: Արդարև, ինչպես պայմանագրում նշված է շահույթների 50% որպես հարկ պետական գանձարանը մուծելուց հետո մնացածը պիտի բաժանվի հավասար համամասնությամբ ՍԻՐԻՊ-ի և Իրանի նավթի Ազգային ընկերության միջև, որը բաժնեկից էր նոր ընկերությանը:

Այս հանգամանքը իտալական մոնոպոլիստական շրջանների համար պրոպագանդայի առիթ ծառայեց և մեծ աղմուկով հայտարարվեց, թե ՍԻՐԻՊ-ի պայմանագրի համաձայն հոնորարների համար ընդունված բազան փաստորեն հանգում է 75/25% հարաբերությանը՝ Տօգուտ Իրանի: Սա, իհարկե, ճիշտ չէ: Մյուս կողմից, մրցակից ընկերությունները, հակառակ ծայրահեղության դիմելով, փորձում են ապացուցել, որ նոր և հին պայմանագրերի միջև տարբերություն չկա: Այս ևս ճիշտ չէ:

Այժմ անցնենք այս պայմանագրում եղած նոր էլեմենտների ինչպես և երկու հակառակորդ կողմերի առաջ քաշած փաստարկումների քննարկմանը:

Ինչպես հայտնի է, առևտրական, արդյունաբերական և տրնտեսական զանազան այլ ասպարեզներում գործող ընկերությունները, հարկերի, մաքսային և այլ տուրքերի կապակցությամբ վճարումները իրենց հաշվեմատյաններում սրձանագրում են որպես ընթացիկ ծախսեր, որոնք շահույթների բաշխման ժամանակ հանդես չեն գալիս:

Այս տեսակետից ՍԻՐԻՊ-ի պայմանագրում հոնորարների հաշ-

<sup>1</sup> Եվ մի քիչ ավելի:

վառման սիստեմը համեմատած հների հետ ինչ խոսք, որ նոր էլեմենտ է մտցնում:

Երկրորդ նորությունը այն է, որ ՍԻՐԻՊ-ի մեջ հավասար մասնակցում են ինչպես իտալական մոնոպոլիստական խումբը, ԱԶԻՊ Միներարիան, այնպես էլ Իրանի նավթի Ազգային ընկերությունը, որը, ինչպես գիտենք, պետական նախաձեռնություն է և որին հանձնված է Իրանի նավթային ողջ հարստությունների տնօրինման գործը: Նա այդ պարտականությունը կատարում է իր սեփական միջոցներով<sup>1</sup> և կամ կոնցեսիաներ շնորհելու միջոցներով: Իրանի նավթի ազգային ընկերությունը, որպես ՍԻՐԻՊ-ի բաժնեկից կապիտալ ներդրումներին մասնակցելով, որոշ բաժին է վերցնում: Պարզ է, որ այդ ուսկի դիմաց էլ շահույթների բաժինը համեմատաբար ավելի բարձր պետք է լինի:

Վերջապես երրորդ նոր էլեմենտը այն է, որ հետախուզական շախտանքների կապակցությամբ հողային վարձ տալու պարտավորությունից ՍԻՐԻՊ-ը ազատվում է: Մինչդեռ մինչև այդ, ընդունված կարգ էր, որ հետախուզումներ կատարվող տերիտորիաների համար, դեռևս մինչև կոնկրետ հայտնաբերումների հանգելը, նոմինալ վարձ էր վճարվում: Ազատված լինելով այս վարձերից ՍԻՐԻՊ-ի հոնորարային հարաբերությունը, որոշ չափով կորցնում է իր լիարժեքությունը:

Եվ ահա այս հանգամանքները մեծ «ճարտարություն» օգտագործվեցին մրցակից խմբավորումների կողմից ապացուցելու համար, թե իրականության մեջ ՍԻՐԻՊ-ի կոնցեսիոն համաձայնագրի հոգվածները վերջիվերջո հանգում են այն նույն պայմաններին, որոնցով ղեկավարվում են Կոնսորցիումը, «Իրաք Պերոլյումը», ԱՐԱՄԿՈ-ն, «Կուվեյտ Օյլը» և այլն: Հետևաբար, ասում են նրանք 50/50 % հարաբերությունը<sup>2</sup> այն օպտիմում կետն է, որից հետո Մերձավոր և Միջին Արևելքի նավթային հարստությունների շահագործումը կդառնա անգործնական, քիչ նպատակահարմար:

Այս պնդումը ևս, իհարկե, ճիշտ չէ: Եթե մտաբերենք Իրանի նավթի ազգայնացման շարժման ժամանակի մի քանի մոմենտները, ապա կտեսնենք, որ ամերիկյան բազմաթիվ ընկերություններ անգլիացիների ձեռքից այդ երկրի նավթը խլելու նպատակով իրանական իշխանություններին «շատ լիբերալ» առաջարկներ արեցին, որոնք բոլորն էլ այժմ ուժի մեջ գտնվող 50/50 % հարաբերու-

<sup>1</sup> Շատ հազվագյուտ դեպքերում միայն:

<sup>2</sup> Ոչ ուեալ հարաբերությունը:

թյունից ավելի բարձր էին: Այսպես, օրինակ, հիշենք «Տեկսաս օյլ կոմպանիի» 60 % առաջարկը, «Սոկոնի-Վակոտամ օյլի» 65 % առաջարկը, ԱՐԱՄԿՈ-ի <sup>1</sup> 72 % առաջարկը և այլն: Այնուհետև ՍԻՐԻՊ-ի պայմանները, որոնք առաջին հալացքից շատ «լիբերալ» տեսք ունեն (թեև իրականության մեջ այդպես չեն) այդուհանդերձ համեմատած մյուս կոնցեսիոն գործող պայմանների հետ, ավելի բարենպաստ են: Մասնագետների կարծիքով ամեն ինչ հաշված (որը ևրեր չի հասնում 75/25 % հարաբերությանը) տոկոսները հանգում են 56/44 ռեալ հարաբերությանը՝ հօգուտ Իրանի: Այս պատճառով հակառակորդ մոնոպոլիստական խմբավորումները վախենում են, որ նոր պայմանները օրինակ ծառայելով՝ Իրաքի, Արաբիայի և Իրանի իշխանություններին կմղեն վերանայելու իրենց կոնցեսիոն նախկին պայմանագրերը: Այդ մասին է վկայում «Պետրոլիում Թայմս» ժուռնալում լույս տեսած հոդվածը, որտեղ ասված է, թե տակավին շատ շուտ է եզրակացնելու, որ իտալական նավթայինների գործունեությունը Իրանում վտանգի տակ կդնի Մերձավոր և Միջին Արևելքում ընդունված հոնորարային 50/50 % հարաբերության սկզբունքը: Իտալացիներին շնորհված տերիտորիաներում նավթի գոյության մասին մինչև այժմ (1957 թ. սեպտեմբերը—2. թ.) ոչ մի կոնկրետ տվյալ չկա: Համենայն դեպս բանը նրանումն է, որ այս նախաձեռնությունը կարող է ձախողվել, այդ դեպքում՝ ընդունված 50/50 % հարաբերության սկզբունքը, ոչ թե միայն չի վտանգվի, այլ ընդհակառակը կամրապընդվի որպես զիջման օպտիմում աստիճան: Իսկ եթե այն հաջողությամբ պսակվի, ապա արաբական երկրների կառավարությունները պիտի սկսեն մտածել և հարց տալ արդյոք լավ չի լինի Իրանի օրինակին հետևել: Սակայն, ասում է հոդվածագիրը, տարածվող կրկյուղը փարատելու ստույգ դիտավորությամբ. «... շուտ է այդ մասին անհանգստանալու համար, արդյունքները տակավին շատ հեռու են, որպեսզի գոյություն տենեցող դրություն վրա անդրադառնան»<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք, չնայած այն պատճառաբանություններին, թե այս նոր համաձայնագիրը երկյուղ ազդելու հիմք չունի, իրականության մեջ հոդվածի ամեն մի տողից վախի շունչ է փչում:

Այս բոլորից, սակայն, չի հետևում, որ ՍԻՐԻՊ-ի պայմաններն իդեալական են, որ նրանք, հենքի համեմատ մի քայլ առաջ լինելով

<sup>1</sup> The Petroleum Times, November 22, 1957, p. 1030.

<sup>2</sup> The Petroleum Times, September 13, 1957, p. 788.

հանդերձ, կարող են վերջնական օրինակ ծառայել Մերձավոր և Միջին Արևելքի նավթային կոնցեսիոն պայմանագրերի համար:

Կարևոր հանգամանք է նաև այն, որ այս բնագավառում, նոր ընկերությունների մուտք գործելով, Մերձավոր և Միջին Արևելքի գոյություն ունեցող մրցակցությունը մոնոպոլիստական խմբավորումների միջև «կվերաշխուժանա» և հսկաների տիրապետության պայմաններում ստեղծված կայունության վիճակը կխախտվի, պայքարը մոնոպոլիստական խմբավորումների միջև կվերսկսվի, գուցե և ավելի մեծ ուժով:

Իրան ներթափանցելու իտալական նավթային մոնոպոլիստական խմբավորումների այս ակտի մեջ կարելի է տեսնել նաև Միջազգային Կոնսորցիումի մաս կազմող մոնոպոլիստական ընկերություններին հակահարված հասցնելու փորձ: Այդ մասին է վկայում նշված ժուռնալի խմբագրական մի հոդվածը, որտեղ ասված է, թե «... եթե սինիոր Մատեիի<sup>1</sup> նախաձեռնությանը իտալական տեսանկյունից մոտենանք, ինչ խոսք դա ազգասիրական խոշոր ակտ է, սակայն, նա... այդ բանը չպետք է աներ ի վնաս իտալո-անգլո-ամերիկյան բարեկամության: Սինիոր Մատեին մի քանի առիթներով մեզ հիշել տվեց, թե իտալիային մերժվեց մասնակից դառնալ Իրանի Միջազգային Կոնսորցիումին»<sup>2</sup>...: Այս կապակցությամբ, «Պետրոլյում Թայմս» ժուռնալի խմբագրությունը անհրաժեշտություն է զգում ճշտություն մտցնել հայտնելով, որ եթե իտալիային շմերժեին, դժվար պիտի լիներ մերժել գերմանական և ճապոնական այն խմբավորումներին, որոնք նույնքան ցանկություն ունենին Կոնսորցիումին մասնակից դառնալու: Կոնսորցիումի մեջ ընդունվեցին միայն նավթային այն խմբավորումները, որոնք մինչև այդ գործել էին Մերձավոր և Միջին Արևելքում:

Սրան կարելի է առարկել նշելով, որ Կոնսորցիումի կապիտալի 5% պատկանում է փոքր, անկախ ընկերություններին: «Մեր պատասխանը պիտի լինի այն, որ դրանցից մի քանիսը արդեն սկսել են մուտք գործել Չեզոք Գոտու տերիտորիան»: Ոչ այնքան համոզիչ այս պատճառաբանությունը տալուց հետո, հոդվածագիրը ընդգծում է, թե իբր անգլիական և ամերիկյան մոնոպոլիստական խմբավորումները դեմ չեն, որ իտալիան մուտք գործի նավթի միջազգային ասպարեզը, «... սակայն, ինչու, հարց է տալիս նա, անպայման այդ պետք է սկսվեր Մերձավոր և Միջին

<sup>1</sup> ԱՋԻՊ Միներաբիայի և կիսապետական էնտե նացիոնալե Իդրոկարբուրի նավթային մոնոպոլիստական այս գույք ընկերությունների զեկավար գեմբերից մեկն է:

<sup>2</sup> The Petroleum Times, September 27, 1957, pp. 837—838.



Արևելքսւլ, ու այն էլ այնպիսի պայմաններով, որ պիտի խախտեր դոյությունն ունեցող *modus vivendi*-ն<sup>1</sup>:

Չեզոք գոտին գրավում է Կուվեյտի և Սաուդյան Արաբիայի միջև ընկած 3.200 քառակուսի կիլոմետր տարածութիւնը և գտնւում է այս երկու պետութիւնների միասնական, հավասարազոր, և անբաժան իշխանութեան տակ: Այդ տերիտորիայի նկատմամբ իշխանութիւնը հավասարապես պատկանում է Կուվեյտին և Սաուդյան Արաբիային: Նավթային մոնոպոլիաները այս շրջանով սկսեցին հետաքրքրվել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, և միայն 1950—1952 թթ. է, որ առաջին գործնական արդյունքներին հասան: Այս շրջանում, հենց սկզբից սկսեցին գործել խոշոր մոնոպոլիստական խմբավորումներից անկախ ընկերութիւնները: Սակայն, որովհետև նրանցից շատերը անուղղակի կապեր ունեին խոշորների հետ, մյուս կողմից հետազոտվող տերիտորիաները ղեռնա այդ տարիներին մեծ հեռանկարներ չէին ներկայացնում, և վերջապես պայմանագրերի հոդվածները *Status quo*-ն խախտելու բնույթ չէին կրում, ուստի այս անկախները մոտաբար գործելու ժամանակ խոշոր դիմադրութեան չհանդիպեցին:

Բայց, երբ 1957 թ. վերջերին ճապոնական նավթային խմբավորումները սկսեցին այս տերիտորիայի նկատմամբ բանակցութիւններ վարել, սկզբում Սաուդյան Արաբիայի, ապա Կուվեյտի կառավարութիւնների հետ, անգլո-ամերիկյան և մյուս նավթային մոնոպոլիաները սկսեցին երկյուղի նշաններ ցուցաբերել, մանավանդ որ իրենց հիշողութեան մեջ դեռևս թարմ էր Իրանում իտալական նախաձեռնութիւնից բխող, հների համար տհաճ դրութիւնը:

Այժմ արդեն ճապոնացիներին հաջողվեց Չեզոք գոտու նկատմամբ Սաուդյան Արաբիայի և Կուվեյտի համաձայնութիւնները ապահովել:

Որպեսզի Չեզոք գոտու տերիտորիայի կամ տերիտորիալ ջրերի<sup>2</sup> նկատմամբ ձեռք բերվող որևէ մի կոնցեսիա լիարժեք լինի անհրաժեշտ է, որ կոնցեսիոներ ընկերութիւնը ապահովված լինի միաժամանակ երկու տարբեր պետութիւնների՝ Սաուդյան Արաբիայի և Կուվեյտի համաձայնութիւններով:

<sup>1</sup> The Petroleum Times, September 27, 1957, pp. 837—838.

<sup>2</sup> Ճապոնական կոնցեսիան հենց այս տերիտորիալ ջրերին է վերաբերում:

«Ճապան Պետրոլյում Տրեյդինգ Կոմպանին»-այս կապակցությամբ սկզբում համաձայնության եկավ Սաուդյան Արաբիայի իշխանությունների հետ և ձեռք բերեց կոնցեսիոն իրավունք: Սաուդյան Արաբիայի և Ճապան Պետրոլյում Տրեյդինգ Կոմպանիի միջև պայմանագիր կնքվեց 1957 թ. դեկտեմբերի 10-ին<sup>1</sup>, որը ուժի մեջ մտավ 1958 թ. փետրվարին, երբ հաստատվեց կառավարության կողմից: Սակայն, ինչպես ասացինք, Ճապան Պետրոլյում Տրեյդինգ Կոմպանին» Չեզոք գոտու տերիտորիալ ջրերի նկատմամբ լրիվ իրավունք վայելելու համար անհրաժեշտ էր ձեռք բերել նաև Կուվեյտի իշխանությունների համաձայնությունը: Այս նպատակով Ճապան Պետրոլյում Տրեյդինգ Կոմպանին» հիմնեց մի դուստր ընկերություն՝ «Արաբիան Օյլ Կոմպանի Լիմիտեդը», որի անունից նույն ինքը՝ մայր ընկերության դիրեկտոր՝ պարոն Յամաշիտոն բանակցությունների մեջ մտավ Կուվեյտի իշխանությունների հետ: Բանակցությունները հանգեցին 1958 թ. հուլիսի 5-ի՝ պայմանագրի ստորագրմանը, գրեթե այն նույն պայմաններով, ինչի համաձայնվել էր Սաուդյան Արաբիան:

Այժմ, միմյանց հետ համեմատելով, քննենք այս երկու պայմանագրերի մեզ հետաքրքրող հոգվածները:

Պայմանագրերի միջև ժամկետի հարցում հիմնական տարբերություն չկա, Կուվեյտինը նախատեսում է 44<sup>1</sup>/<sub>2</sub> տարի, իսկ Սաուդյան Արաբիայինը՝ 44 տարի: Այնուհետև, երկու պայմանագրերում էլ նախատեսված է, որ կոնցեսիոն ժամկետը լրանալուց հետո հնարավոր կլինի այն նորից երկարաձգել, մի բացառությամբ՝ այն չի երկարաձգվի եթե կառավարությունը ինքն կստանձնի շահագործել և կամ այն հանձնել տեղական նախաձեռնության (տեղական կապիտալին): Ինչ վերաբերում է կոնցեսիոն տարածությունների հարցին, ապա Կուվեյտի պայմանագիրը նախատեսում է օգտագործել տերիտորիալ ջրերը 6 ծովային մղոն տարածությամբ, ու նշում է սահմանային կետերն անհրաժեշտ մանրամասնություններով: Սաուդյան Արաբիայինը՝ նախատեսում է տերիտորիալ ջրերը ընդհանրապես, որը եթե ելնենք 1958 թ. փետրվարի 6-ի կառավարական դեկրետից, պիտի հասկանալ 12 ծովային մղոն տարածություն՝ սկսած ծովափի մի որևիցե կետից:

<sup>1</sup> The Petroleum Times, Supplement to vol. LXII, № 1575 February 14, 1958.

<sup>2</sup> The Petroleum Times, Supplement to vol. LXII, № 1590. July 18, 1958.

Այս երկու պայմանագրերի տարբերությունն այն է, որ Կու-  
վեյտին հասնող ընդհանուր եկամուտը կազմելու է ընկերության  
շահույթների 57%, մինչդեռ Սաուդյան Արաբիային՝ 56%:  
Պետր է նշել, որ այս տոկոսները ռեալ նշանակություն ունեն։ Այ-  
նուհետև, երկու դեպքերում էլ տարեկան ռենտա նշանակված է  
մեկ և կես միլիոն դոլար, իսկ շահադործման անցնելուց հետո  
այդ պիտի ավելացվի ես մեկ միլիոն դոլարով։ Հոնորարների հա-  
մար սահմանված միևնույն գումարը երկու և կես միլիոն դոլար-  
րից պակաս չպետք է լինի։ Այս պայմանագրերում նոր էլեմենտ է  
նաև այն, որ հոնորարային իրավունքները տարածվում են ընկե-  
րության բոլոր գործունեությունների վրա, ինչպես տեղական այն-  
պես էլ արտասահմանյան։

Կուվեյտի պայմանագրում կան հոդվածներ, որոնց համաձայն  
վեճի ժամանակ ընկերությունը որպես մասնավոր ձեռնարկ իրա-  
վունք չպիտի ունենա իր երկրի կառավարության՝ միջամտությու-  
նը խնդրելու։ Սա իհարկե, կարևոր պայմաններից մեկն է, որը Կու-  
վեյտին դեռ չի պիտի պահի այն տհաճ հավանականություններից,  
որոնց ենթակա եղավ իրանական կառավարությունը 1951—  
1954 թթ. երկրի նավթային հարստությունները ազգայնացնելու  
ժամանակ, երբ Բրիտանական կառավարությունը անընդհատ մի-  
ջամտում էր, որպես Անգլո-Իրանական նավթային ընկերության  
բաժնեկիցը։

Այս ասպարեզը նորեկների մուտք գործելու երևույթը բացա-  
տրելիս նշեցինք նաև, որ նորեկ համարվող ընկերություններից մի  
քանիսը ուղղակի կամ անուղղակի կապերով կապված են այդ  
շրջանում գործող խոշոր խմբավորումների հետ։ Ծիշտ է, որ Ճա-  
պոնական այս նավթային մոնոպոլիստական ընկերության մասին  
կոնկրետ տվյալներ չունենք պնդելու համար, թե «Ճապան Պետրոլ-  
յում Տրեյդինգ Կոմպանին» սերտ կապեր ունի Մերձավոր և Միջին  
Արևելքում գործող անգլո-ամերիկա-հոլանդական նավթային խո-  
շորագույն մոնոպոլիստների հետ, սակայն, հայտնի է, թե Ճապո-  
նական այս ընկերությունը իր կոնցեսիոն տերիտորիաներում հե-  
տախուզական աշխատանքների գործը հանձնեց «Ինտերնեյշնլըլ  
Դրիլինգ Կոմպանի» ն. վ. Ընկերությանը, որը Հոլանդիայում  
գրանցված լինելով հանդերձ, իրականության մեջ հանդիսանում է  
միջազգային ընկերություն, որի մեջ մաս են կազմում ամերիկա-  
յան, անգլիական և ֆրանսիական ամենախոշոր նավթային մոնո-  
պոլիստական ընկերությունները, բացի, իհարկե, Հոլանդականից։

<sup>1</sup> Տվյալ գեղջում հաղորդական կառավարություն։

«Ինտերնեյշնըլ Դրիլինգը», Մերձավոր և Միջին Արևելքում գործող մյուս կոնցեսիոն ընկերությունների հաշվին, նույնաման շատ աշխատանքներ է կատարում: Այն փաստը, որ խոշոր մոնոպոլիստական ընկերությունները չեն առարկում, որ այս ընկերությունը իր ծառայությունները մատուցի «Ճապան Պետրոլյում Տրեյդինգ Կոմպանիին», արդյոք որոշ չափով չի խոսում այն մասին, թե ճապոնական նավթային այս խմբավորումը բոլորովին էլ օտար չէ ամերիկա-անգլո-հոլանդական նավթային խոշոր մոնոպոլիստներին: Այնուհետև, այն հանգամանքը, որ ճապոնական նավթային այս խմբավորումը ֆինանսական և գործարար կապերով զոդված է ճապոնական մի շարք այլ նավթային ընկերությունների հետ, որպեսիք են՝ «Միցուրիշի Օյլ Կոմպանիին», «Նիպպոն Պետրոլյում Ռիֆայինգ Կոմպանիին», «Կոա Օյլ Կոմպանիին», «Քոա Նենրյո Կոգյո ԿԿ-ն, Շոուա Օյլ Կոմպանիին», որոնք բոլորն էլ փոխադարձ շահերով կապված են ամերիկյան և անգլիական ընկերությունների հետ, ինչպես «Քայդվատեր Օյլ Կոմպանիին», «Տեկսաս Կորպորեյշնը», «Կալաբեր Օյլ Պրոգրեսիվ Կոմպանիին», «Ստանդարդ Վակուում Օյլ Կոմպանիին», «Անգլո Սաքսոն Պետրոլյում Կոմպանիին»<sup>1</sup>, Սրանից կարելի է եզրակացնել, որ «Ճապան Պետրոլյում Տրեյդինգը» բոլորովին էլ անցանկանալի նորեկ չէ այս շրջանում վաղուց հաստատված մոնոպոլիստների համար:

«Պան Ամերիկըն Պետրոլյում Կորպորեյշնը» (ԱՄՆ) և (Սաֆֆայր Պետրոլյում Լիմիտեդը» (Կանադա) Իրան մուտք գործող վերջին նորեկներն են: Այս ընկերությունները միմյանցից անկախ են, սակայն, նրանց կոնցեսիոն պայմանները հիմնականում նույնաման են, որոնք իրենց հերթին շատ են նման ՍԻՐԻՊ-ի պայմաններին:

«Պան Ամերիկըն Պետրոլյում Կորպորեյշնը»՝ «Ստանդարտ Օյլ Կոմպանի Օֆ Ինդիանայի» դուստր ընկերություններից, 1958 թ. ապրիլ ամսին համաձայնության եկավ Իրանի նավթի Ազգային Ընկերության հետ միասին շահագործելու Պարսից ծոցի հյուսիսարևելյան շրջանի տերիտորիալ շրերի ընդերքի հարստությունները, և այդ նպատակի համար կազմվող ընկերության՝ «Իրան Պան Ամերիկըն Օյլ Կոմպանիին» (ԻՊԱԿ) շնորհվեց համապատասխան կոնցեսիոն իրավունքներ, 16 հազար քառակուսի կիլոմետր տարածության վրա, 25 տարվա ժամկետով, տասնհինգ տարով երկարաձգելու իրավունքով<sup>2</sup>:

<sup>1</sup> World Petroleum, Annual Refinery Review, July 15, 1958, p. 69.

<sup>2</sup> The Petroleum Times, Supplement to vol. LXII № 1586. May 23,

Այս ընկերության հոնորարային և շահույթների բաշխման սխեմանը ոչնչով չի տարբերվում ՍԻՐԻՊ-ի պայմաններից: ՍԻՐԻՊ-ի և ԻՊԱԿ-ի պայմանագրերի եղած տարբերությունը այն է, որ վերջինը կոնցեսիայի 13 տարուց հետո ունետա պետք է վճարի. առաջին հինգ տարին՝ 400 դոլլար՝ ամեն մի քառակուսի կիլոմետրին, երկրորդ 5 տարին՝ 480 դոլլար, այնուհետև, մինչև կոնցեսիայի վերջը՝ տարեկան 600 դոլլար: Մի ուրիշ կարևոր տարբերություն է այն, որ հետախուզական և հորատման աշխատանքների հավանական հապաղումները կանխելու նպատակով ԻՊԱԿ-ի անունից «Ստանդարդ Օյլ Կոմպանի ՕՖ Ինդիանան» ամեն մի հապաղած ամսի դիմաց երաշխավորում է վճարել 350 հազար դոլլար, բացառությամբ, անշուշտ, երբ այդ հապաղումը cas de force majeure-ի հետևանք է<sup>1</sup>:

Առաջին հայացքից այս պայմանագիրը ՍԻՐԻՊ-ի պայմանագրից ավելի շահավետ է երևում: Սակայն դեռևս հնարավոր չէ այդ մասին եզրակացություններ անել մինչև այն ժամանակ, երբ այդ ընկերությունները կանցնեն շահագործման էտապին և հոնորարների ու շահույթների հոդվածները կսկսեն իրենց գործնական դերը խաղալ:

«Սաֆֆայր Պետրոլյում Լիմիտեդը», ինչպես ասացինք, ղեկավարվում է հիմնական այն նույն կոնցեսիոն պայմաններով, որով «Իրան Պան Ամերիկըն Օյլ Կոմպանին»: Գլխավոր տարբերությունները կախանում են նրանում, որ վերջինի կապիտալը 7,5 միլիոն դոլար է, մինչդեռ Սաֆֆայրինը տասը անգամ պակաս: Այնուհետև, հապաղումների դիմաց վճարելիք փոխհատուցումների գումարը սահմանված է 350 հազար դոլլար, սակայն, այդ չի տարածվում հապաղված ամեն մի ամսի վրա, այնպես ինչպես կիրառվում է ԻՊԱԿ-ի կապակցությամբ:

«Սաֆֆայր Պետրոլյում Լիմիտեդը» այս նպատակի համար հիմնել է «Իրան Կանադա Օյլ Կոմպանին» (ԻՐԿԱ): Այս ընկերությանը շնորհված կոնցեսիոն տարածությունները գտնվում են Իրանի հարավում՝ Օմանի ծովի ափին, Մեկրանի պրովինցիայի հյուսիսում<sup>2</sup> համարյա թե կողք կողքի գտնվող երկու առանձին հատվածներով, ընդամենը հազար քառակուսի կիլոմետր տարածությամբ:

Սրանք են ամփոփ ամենաաչքի ընկնող նավթային նոր կոնցեսիաները և կոնցեսիոն ընկերությունները, որոնք սկսել են մուտք գործել Մերձավոր և Միջին Արևելք, որտեղ մինչև վերջին

<sup>1</sup> Կամքից անկախ պահանջների հետևանքով, անսպասելի պահանջներով:

<sup>2</sup> ՍԻՐԻՊ-ի կոնցեսիոն տարածություններին կից:

ժամանակներս միջազգային հսկա մոնոպոլիաները հաստատել էին իրենց անբաժան տիրապետությունը և ստեղծել կայուն վիճակ։ Սրանց զուգահեռ փորձեր արվեցին և տակավին էլ շարունակվում են արվել ուրիշ ընկերությունների կողմից, որոնք սակայն, ընդհանուր վիճակի վրա նկատելիորեն չէին կարող ազդել։ Այսպես օրինակ, 1953 թ. ապրիլին Եմենի կառավարությունը հետախուզական իրավունքներ շնորհեց Արևմտյան Գերմանիայի նավթային մոնոպոլիստական խմբավորումներից Դիլման, Բերգրաում և Բենհայմ ընկերությանը։ 1955 թ. 30 տարվա ժամկետով կոնցեսիոն իրավունքներ ձեռք բերեց «Եմեն Դեվելոպմենտ Կորպորեյշնը» ամերիկյան ընկերությունը։ Նրան հանձնվեցին նաև երկրի այլ հանքային հարստությունները հետախուզելու իրավունքը։ Ամենաթարմ տեղեկությունների համաձայն, «Ստանդարդ Օյլ Օֆ Նյու Ջերսի» դիրեկտոր Հ. Վ. Պեյջը բանակցությունների մեջ է իրանական կառավարության հետ, կոնցեսիաներից ազատ մնացած, Իրանի հարավ-արևմտյան շրջանների նկատմամբ հետախուզական իրավունքներ ձեռք բերելու համար։ Ինչպես հաղորդում է «Պետրոլյում Քայմս» ժուռնալի թղթակիցը, Պեյջը մտադիր է առաջարկել միանվագ գումարի վճարում և պահել հին 50/50 %-ի համամասնությունը։ Նրա կարծիքով այս առաջարկով իրանցիներին ավելի կարելի է շլացնել։ Իրականության մեջ, սակայն, հոնորարների կապակցությամբ՝ սա հին կարգերի վերահաստատումը կլինի։ Նման նպատակով ու Իրանի տերիտորիալ ջրերի նկատմամբ կոնցեսիոն իրավունքներ ձեռք բերելու համար դիմումներ են ներկայացրել նաև «Կոնտինենտալ Օյլ Կոմպանին», «Ամերադա Պետրոլյում Կորպորեյշնը», «Ստանդարդ Օյլ Օֆ Օհայոն» և «Սիտիզ Սերվիս Կոմպանին», որոնք բոլորն էլ «Կոնորադա Պետրոլյում» խմբի մասն են կազմում։

Գերմանական նավթային մոնոպոլիա «Դեյչ էրդոել» դուստր ընկերություն՝ «Կոնկորդիա Օյլ Կոմպանին» արդեն հորատման աշխատանքներ է սկսել Սիրիայում (ՄԱՌ) ձեռք բերած կոնցեսիոն տարածություններում, որոնք գտնվում են էլ-Հասսակիյե և Կամիշլիի միջև ընկած շրջանում, Քուրբիայի Ռամանդաղ և Իրաքի Այն-Չաբահ նավթակիր շրջաններից ոչ շատ հեռու։

Կարաչուկում (նույնպես ՄԱՌ-ի սիրիական շրջան), որտեղ «Մենհոլ Կոմպանին», «Ատլանտիկ Ռիֆայնինգ Կոմպանի» և «Պորսմութ Ստիլ Կոմպանի» հետ միասին հետախուզություններ էին կատարում, կոնցեսիոն իրավունքները նրանց ձեռքից հետ վերցվեց այն բանից հետո, երբ Միացյալ Արաբական Ռեպուբլի-

կայի կողմից ընդունվեց օրենք, որով նավթային հարստությունների կապակցությամբ կոնցեսիաների տնօրինությունը հանձնվեց այդ նպատակի համար ստեղծված նավթային հարցերի Գերագույն օտարմին: Այդ մարմինը իր հերթին տեղական կապիտալով և նախաձեռնությամբ ստեղծելով համապատասխան կազմակերպություններ, համառ որոնումներից հետո, հայտնաբերել է հարուստ նավթահանքեր: Նշենք նաև, որ ՄԱՌ-ի եգիպտական շրջանում տեղական կապիտալով և նախաձեռնությամբ հիմնվեց նավթային հարստությունների հետադոստման առաջին ազգային ընկերությունը՝ «Սոդիևաև Ժեներալ դե Պետրոլը»: Այս ընկերության դիրեկտոր Սեյիմը, մամուլի ներկայացուցիչների առաջ հանդես գալով, հայտարարեց, թե սա հանդիսանում է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների նավթարդյունաբերության պատմության մեջ առաջին ղուա ազգային ընկերությունը: Այս ասպարեղը մինչև վերջին ժամանակներս փակ էր մնացած տեղական կապիտալի առաջ, և կարծես օտարերկրյա կապիտալի մոնոպոլ սեփականությունն էր դարձել»:



Թև այս կարգի իրադարձությունները, ինչ անդրադարձումներ և հետևանքներ են ունենալու այս շրջանի նավթարդյունաբերության և այնտեղ գործող կոնցեսիոն ընկերությունների հետագա վիճակի վրա, այդ մասին կուհումներ անելու կարիքը չկա, որովհետև, ընդհանուր տեղեկները ցույց է տալիս, թե այս ասպարեզում ինչ ուղղությամբ են ընթանալու գալիք իրադարձությունները:

Եթե ազգայնացում եղավ, ինչ խոսք, որ բոլոր՝ մեծ թե փոքր՝ նավթային մոնոպոլիստական խմբավորումները կզրկվեն Մերձավոր և Միջին Արևելքի նավթը շահագործելու իրավունքից, և թալանչիական մասշտաբների հասնող շահագործումից բխող վիթխարի շահույթներից: Սակայն, մինչ ազգայնացումը հետաքրքիր է քննել, թե ինչ հետևանքներ կունենա նորեկների կողմից, այս բնագավառը մուտք գործելը:

Առաջին անմիջական հետևանքը կլինի այն, որ Մերձավոր և Միջին Արևելքում նավթային մոնոպոլիաների համար վերջերս (և ընդ որում մեծերի միջև երկար պայքարից հետո) ստեղծված կայունության վիճակը կխախտվի: Եվ երկրորդ, այս երկրների իշխանությունները հետգհետե ավելի մեծ հետևողականությամբ կպահանջեն գոյություն ունեցող կոնցեսիոն պայմանների վերանայումը:

<sup>1</sup> Le Journal d' Egypte, Le Caire. 18 Mars. 1958.

Այդ մասին է վկայում այս շրջանի նավթարդյունաբերությանը վերաբերող հարցերին մոտիկից ծանոթ հետևյալ երկու անձնավորությունների (մեկը տեղացի, իսկ մյուսը անգլիացի) խոստովանությունները: Սաուդյան Արաբիայի Ենավթային Հարցերի Խորհրդի նախագահ Աբդուլլահ Քարիբին<sup>1</sup>, այս կապակցությամբ, վերջերս հայտարարել է, որ Կուվեյտ-Ճապոնական համաձայնագրի պայմանները լավ ընդունելություն գտան արաբական շրջաններում, ուստի չի բացառվում այն հավանականությունը, որ գալիք տասը տարիների ընթացքում այդ պայմանները կիրառում գտնեն Արաբական երկրներում: Աբդուլլահ Քարիբու այս հայտարարությունը պետք է համարել համեստ կանխատեսում: Տասը տարի հետո հավանաբար այս երկրների նավթային հարստությունների շահագործման այժմյան Կուվեյտ-Ճապոնական կոնցեսիոն պայմաններից ավելի բարենպաստ պայմաններ ձեռք բերվեն: Չի կարելի նաև բացառել աղգայնացման հավանականությունը:

Որ այս ասպարեզում արդեն status quo-ի խախտում կա, այդ այսօրս չքի զարնող փրականություն է, ու այդ մասին վկայում են Գ. Քուզենդհատի (հայտնի նավթային էկոնոմիստ) խոստովանությունները, թե և... ինչ պետք է սպասել, եթե Մերձավոր Արևելյան պետությունները օգտագործելով իրենց պայմանագրային իրավունքները, գոյություն ունեցող կոնցեսիաների պայմանների վերանայում պահանջեն, դրանք նոր պայմանագրերի (իտալական, ճապոնական և այլն—Ղ. Ք.) հողվածների հետ համաձայնեցնելու համար: Իտալո-իրանական պայմանագիրը հարված հասցրեց 50/50 %-ի հարաբերության ֆորմուլային: Իսկ և... Կուվեյտ-Ճապոնական պայմանագիրը,— ինչպես ընդգծում է հողվածագիրը,— դեռևս ավելի հեռու է գնում<sup>2</sup>: Ըստ որում ըսյն ճանապարհներ են բացել նոր և ավելի բարենպաստ պայմանների ֆոնի վրա հին պայմանագրերը վերանայելու համար: Այնուհետև ասում է նա, «... անուրանալի ճշմարտություն է այն փաստը, որ միջազգային խոշորագույն խմբավորումների և հատկապես ամերիկյան նավթային մոնոպոլիաների կողմից (1920-ական թվականներից սկսած մինչև 1950-ական թվականները) ստեղծված մոնոպոլ դրությունը արդեն խախտվել է: Այս ասպարեզը մուտք են գործում գերմանական, ֆրանսիական, շվեյցարական, իտալական... և այլ նավթային մասնագետներ»<sup>3</sup>:

<sup>1</sup> The Petroleum Times, September 26, 1958, p. 793.

<sup>2</sup> The Petroleum Times, September 26, 1958, pp. 793—4.

<sup>3</sup> Նույն տեղում: (Երբ նա մասնագետներ է ասում պետք է հասկանալ մոնոպոլիստական խմբավորումներ):



Ամփոփելով նորերի կամ անկախների ներթափանցման հարցը Մերձավոր և Միջին Արեւելքի նավթարդյունաբերության մեջ անհրաժեշտ ենք համարում նշել հետևյալը:

Իմպերիալիստական խոշոր տերութիւնները և առաջին հերթին Ամերիկայի Միացյալ Նահանգները աշխատում են որևէ ձևով վարձատուտույց լինել այն երկրների նկատմամբ, որոնք ակտիվ մասնակցութիւն են ունենում զանազան իմպերիալիստական խրմբավորումներում և ռազմական բռնկներում: Հաճախ նորերը կամ անկախները որևէ ձևով կապված են լինում խոշոր մոնոպոլիաների հետ և հանդիսանում են նրանց կցորդները: Այդպիսով, տվյալ նոր երևույթը կարելի է նկատել որպես հիշյալ երկրներում գաղութարարների ազդեցութիւնը կամ գաղութականութիւնը պահպանելու բաղձազան ձևերից մեկը:

Այնուհետև, նորերի կամ անկախների երևալը հետևանք է այն կոնֆլիկտների, որոնք մեր օրերում հաճախ տեղի են ունենում գաղութատեր պետութիւնների և գաղութային երկրների միջև:

Նոր երևույթը բացատրող կարևոր գործոններից է սոցիալիստական հզոր լազերի կողմից տարվող հետևողական քաղաքականութիւնը՝ նրա եղբայրական, անշահախնդիր օգնութիւնը թույլ դարգացած երկրների ժողովրդական տնտեսութիւնը: Այս հանգամանքը որոշ չափով սահմանափակում է մոնոպոլիաների թելադրելու հնարավորութիւնները և հասկանալի է դարձնում շահույթի և հոնորարների վերանայման նոր պահանջները:

Եվ վերջապես, որոշ երկրներ իրենց ազգային անկախութիւնը ձևով բերելուց հետո ավելի կամ պակաս չափով դրսևորում են ինքնուրույնութիւն՝ տնտեսական և քաղաքական մի շարք հարցեր լուծելիս:

Այսպիսով, այս նոր երևույթը կարելի է գիտել որպես տեղաշարժ մոնոպոլիաների անառարկելի տիրապետութիւն վերացման ուղղութիւնը: Բայց մեկ մոնոպոլ կազմակերպութիւնը մյուսով փոխարինելով, նույնիսկ ավելի նպաստավոր պայմաններով, իմպերիալիզմի ջահագործման էութիւնը այս երկրներում չի փոխվում:

Մերձավոր և Միջին Արեւելքի երկրների տնտեսութիւնը, նույն թվում նաև նավթարդյունաբերութիւնը կսկսի ազատ զարգանալ, երբ կվերացվի մոնոպոլիաների հսկողութիւնը, երբ նրանք դուրս կվճռվեն այդ շրջաններից և ժողովուրդներն իրենք կդառնան իրենց Հայրենիքի բոլոր հարստութիւնների տերը:

А. К. ТУРЯНИЦ

## НОВЫЕ НЕФТЯНЫЕ КОНЦЕССИИ В СТРАНАХ БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА

### Резюме

В статье указывается, как в течение последних лет в нефтяную промышленность Ближнего и Среднего Востока стали проникать сравнительно мелкие компании (так называемые *outsiders-ы*), независимые от нефтяных картелей. Отмечая изменения, происшедшие после второй мировой войны в соотношении сил между лагерем социализма и капитализма, а в зависимых странах между империализмом и национально-освободительными силами, автор показывает, как правящие круги ряда стран Ближнего и Среднего Востока под влиянием национально-освободительной борьбы народов этих стран за самоопределение и национальную независимость, освобождаются от господствующего влияния иностранных империалистических монополий и, в свою очередь, вступают в контакты с компаниями, стоящими вне картелей и устанавливают торговые и другие связи со странами социалистического лагеря.

В статье анализируются события, связанные с деятельностью этих небольших компаний *outsiders-ов*, рассматриваются связи этих «независимых» компаний с крупными монополиями.

Ռ. Պ. ԿՈՆԴԱԿՉՅԱՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ՄՈՆՈՊՈԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՆԵՐՆՈՒԺՈՒՄԸ  
ԹՈՒՐՔԻԱ

Նրկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամերիկյան սաղմամոլ մոնոպոլիստական շրջանները հանդես եկան համաշխարհային տիրապետության ագրեսիվ պլաններով, որոնց իրականացման գործում մեծ տեղ է տրվում ամբողջ Մերձավոր և Միջին Արևելքին և առանձնապես Թուրքիային:

Թուրքիան այդպիսի նշանակություն է ստանում այն պատճառով, որ նա սահմանակից է Սովետական Միությանը ու Բուլղարիայի Ժողովրդական Ռեսպուբլիկային, գերիշխում է Սևծովյան նեղուցների ավազանում ու ստրատեգիական կարևոր դիրքեր է զբաղում Եվրոպայից դեպի Ասիա ու Աֆրիկա տանող ծովային, օդային ու ցամաքային միջազգային նշանակություն ունեցող ճանապարհների վրա:

<sup>4</sup> „Новое время“, 9 22 февраля 1914 г., „Биржевые ведомости“, 4/17 февраля 1914 года.

шегося в водах Средиземного моря пробраться в Германию, «Гебен» поднимет турецкий флаг. Таким образом, германский броненосец был бы в безопасности, а Турция приобрела бы желаемую ей морскую боевую единицу первого разряда», — писал он. Сведения, сообщаемые автором статьи в «Биржевых ведомостях», лишь до некоторой степени находят подтверждение в располагаемых нами документах и материалах. Отметим, что Штремпель сказал русскому военноморскому агенту в Константинополе капитану Щеглову, что «нельзя поручиться», что германский император не отдаст «Гебеи» и эта уступка «весьма вероятна». Русский поверенный в делах в Константинополе Гулькевич высказал убеждение, что заявление Штремпеля явилось плодом его «возбужденности» и он не видит оснований к такой откровенности немецкого офицера.

Посетивший Щеглова Мокор тоже не очень верил в осуществление продажи «Гебена»<sup>1</sup>.

Германский посол в Петербурге граф Пурталес заявил Сазонову, что передача Турции «Гебена» невозможна, т. к. этот корабль еще способен служить для германского флота<sup>2</sup>.

Русский военно-морской агент в Берлине капитан Беренс также придерживался подобного мнения<sup>3</sup>.

Халльгартен считал, что идея о продаже «Гебена» была спроектирована с целью парировать французское финансовое давление на Турцию<sup>4</sup>.

Можно допустить, что к июню 1914 г. между Германией и Турцией была кое-какая договоренность относительно «Гебена» на будущее. Однако продажа не имела место. Отчасти и потому, что он нужен был Германии, чтобы не потерять точку опоры в бассейне Средиземного моря. Но главная причина, заставившая Германию отказаться от этой сделки, заключалась в том, что она сразу (и несколько преждевременно) обострила бы всю международную обстановку, поставив под угрозу германские планы на Ближнем Востоке. Приход «Гебена» в турецкий флот серьезным образом изменил бы соотношение военно-морских сил России и Турции в

<sup>1</sup> М. О., т. 1, серия III, стр. 79—80.

<sup>2</sup> Там же, стр. 159.

<sup>3</sup> Там же, стр. 212.

<sup>4</sup> *Hallgarten*, указ. соч. Bd. 2. s. 350.

Черном море. Царизм, конечно, не отнесся бы к этому равнодушно и предпринял бы соответствующие шаги.

Наряду с крупными боевыми единицами турецкое правительство решило приобрести соответствующее количество миноносцев и контрминоносцев. В Европу с этой целью были командированы офицеры, которые посетили различные судостроительные верфи. Был поднят вопрос о приобретении подводных лодок. Лучшей считалась французская лодка системы «Лебёф»<sup>1</sup>.

30 апреля 1914 г. Турция подписала со Шнейдером-Крезо договор о строительстве двух подводных лодок стоимостью в 2,2 млн. франков каждая, а 2 мая контракт с французским судостроителем Норманом о постройке 6 контрминоносцев<sup>2</sup>. В дальнейшем число заказанных контрминоносцев достигло 12. К этому времени на верфях Сен-Назера и Гавра было сооружено для турецкого флота 7 канонерских лодок. В конце марта турецкий транспорт привез в эти порты команды для приема лодок. В июне 1914 г. указанные лодки прибыли в Турцию<sup>3</sup>.

Английские и французские монополисты и банкиры охотно финансировали и принимали заказы на строительство судов для турецкого флота, хотя объективно это было направлено против России, их партнера по Тройственному соглашению. В этом нет ничего удивительного, т. к. во-первых, английские и французские капиталисты руководствовались коммерческими соображениями, получением прибыли, во-вторых, несмотря на союзнические отношения, ни Англия, ни Франция не были заинтересованы в усилении позиций России на Ближнем Востоке, особенно в районе проливов, а скорее препятствовали этому. И рост мощи турецкого флота им в определенной степени был на руку. Кроме того, английские и французские официальные лица высказывали мнение, что если они откажут Турции в морских заказах, то последняя обратится к Германии.

Правящие круги России выражали большое недоволь-

---

<sup>1</sup> М. О. т. II, сер. III, стр. 80—81; ЦГВИА ГУГШ, ф. 2000, оп. 1, ед. хр. № 3825, л. 440.

<sup>2</sup> Там же, стр. 449.

<sup>3</sup> Там же, стр. 395, 488.



ство политикой Англии и Франции в этих вопросах. Согласно принятой царским правительством программе военного морского строительства, ввод в строй крупных военных кораблей предполагался в 1916—1917 гг.<sup>1</sup>, а заказанные Турцией дредноуты должны были вступить в строй в 1914 г. Следовательно, на определенный промежуток времени у Турции создавался перевес в дредноутах. Это обстоятельство сильно беспокоило царское правительство и оно принимало меры к ускорению постройки своих кораблей. На телеграмме Гирса (от 14 ноября 1913 г.), в которой говорилось о турецких морских заказах и необходимости ускорить строительство судов, царь сделал помету: «Продолжаю считать первейшим условием спокойного развития юга России безусловное преобладание ее Черноморского флота над турецким. Поэтому нам предстоит необходимость чрезвычайных усилий для достижения и в будущем этого преобладания на Черном море»<sup>2</sup>.

В то же время правящие круги России предпринимали шаги к недопущению усиления турецкого флота. Большое недовольство вызвали в русских финансовых и промышленных кругах операции французского банка Перье, выдавшего Турции деньги на покупку дредноута и заработавшего на этом 21 %<sup>3</sup>. Газета «Биржевые ведомости» по этому поводу писала, что «Франция жадно ловит всякое движение, всякий слух, открывающий возможность денежного обслуживания Турции и получения компенсирующих концессий»<sup>4</sup>. В подобном духе высказывалась и кадетская «Речь». «В то время, когда Россия настаивает на коллективных шагах и когда дипломатическая борьба достигает высшего напряжения (в связи с миссией Лимана фон Сандерса—А. А.), Франция, оказываясь, хлопочет об удовлетворении собственных интересов на Востоке»,—писала газета<sup>5</sup>.

Французские официальные лица оправдывались тем, что правительство не может контролировать операции частных банков. Министр иностранных дел Думерг заявил в сенате,

<sup>1</sup> См. «Константинополь и проливы», т. 1, стр. 162.

<sup>2</sup> «Красный архив», т. VII, стр. 35.

<sup>3</sup> ЦГВИА ГУГШ, ф. 2000, оп. 1, ед. хр. № 3028, лл. 753—754.

<sup>4</sup> «Биржевые ведомости», 11/24 декабря 1914 г.

<sup>5</sup> «Речь», 10/23 декабря 1913 г.

что правительству не было ничего известно об этих операциях.

Желая внести успокоение в Петербурге, Думерг сказал русскому послу в Париже Извольскому, что банк Перье выдал Турции лишь 33 млн. франков (из намеченных 80 млн.) и отказался от опциона на вторую часть выпуска, назначенного на январь. Однако Извольский получил сведения из достоверных источников, что банком Перье реализованы все 80 млн. франков<sup>1</sup>. В телеграмме Извольскому от 3 января 1914 г., Сазонов просил посла обратить внимание французского правительства на периодически оказываемую денежную помощь Турции. Сазонов писал: «Между тем помощь эта вовсе не оправдывается в настоящее время необходимостью спасти Турцию от банкротства, ибо Турция только что приобрела в Англии броненосец, что при нынешней политической обстановке может крайне неблагоприятно отозваться и на мерах понуждения, к коим мы можем быть вынуждены, если переговоры в Берлине не увенчались бы успехом (в связи с миссией Лимана фон Сандерса—А. А.)»<sup>2</sup>.

Не меньшее недовольство выражалось русскими правительственными кругами политикой Англии в связи с пребыванием военно-морской миссии в Турции и ее работе по реорганизации турецкого флота, а также в отношении продажи Турции крупных военных кораблей. После ликвидации дипломатического конфликта по делу германской военной миссии, Сазонов неоднократно просил британское правительство отозвать из Турции свою военно-морскую миссию, по возможности воспрепятствовать получению Турцией заказанных дредноутов или затянуть их строительство<sup>3</sup>.

Царское правительство было настолько обеспокоено таким оборотом дела, что летом 1914 г. конфиденциально послало капитана Щеглова в Англию с целью выяснить, в ка-

<sup>1</sup> АВПР. Канцелярия. 1913 г., Дело № 159, л. 194.

<sup>2</sup> Там же, Дело № 164, л. 209. Помета царя: „Действительно все это производит страшное впечатление: англичане продают самые сильные босвые суда туркам, а французы малыми порциями ссужают их деньгами“.

<sup>3</sup> АВПР. Канцелярия. 1913 г. Дело № 164, л. 211; М. О. т. 1, стр. 497—498, т. II, стр. 510—511.

ком состоянии находится строительство заказанных Турцией дредноутов<sup>1</sup>.

Ответ английского министра иностранных дел Эдуарда Грея носил уклончивый характер, но по существу выражал собой отказ пойти навстречу просьбам России. Английский министр отрицал, что работа английской военно-морской миссии направлена против России. Одновременно приводился довод, что если бы Англия отказала Турции в ее просьбе, то последняя обратилась бы к Германии и преобразование турецких морских сил перешло бы в немецкие руки.

Что касается заказов и покупок судов в Англии, то, по словам Грея, английское правительство не имело никаких законных способов для противодействия им. Оно пыталось через своего посла в Турции и через английских должностных лиц на турецкой службе оказать такое противодействие. В результате этого, отмечал Грей, договоры были заключены непосредственно между турецким правительством и английскими судовладельцами, без извещения английского правительства и помимо содействия английской миссии. Тем самым, по мысли Грея, британское правительство обошли и эти договоры, совершенно ускользнули от его контроля и влияния<sup>2</sup>.

В практике такие вещи бывали часто, когда монополисты в обход своего правительства совершали всевозможные сделки. Однако в данном случае не представляется правдоподобным, что Грей не знал об этом. Не верится и в то, что английская военно-морская миссия не была причастна к указанным сделкам. Наоборот, архивные и документальные материалы свидетельствуют об ее активной роли в деле передачи заказов английским фирмам и о содействии английской дипломатии в ее работе.

Сазонову ничего не оставалось, как на время воздержаться от дальнейших настояний в Париже и в Лондоне. Зависимое экономическое и политическое положение царизма от стран Антанты вынуждали его каждый раз снимать свои возражения.

Чтобы как-то сгладить недовольство правящих кругов

<sup>1</sup> ЦГАВМФ, ф. 898, оп. 1, ед. хр. № 26. лл. 123—125.

<sup>2</sup> М. О. т. III. стр. 277—301.

России, помощник Грея Никольсон заверил русского поверенного в делах Этера, что в случае столкновения между Турцией и какой-либо державой, заказанные корабли, разумеется, будут задержаны в Англии<sup>1</sup>.

Подводя итоги борьбы европейских монополистов за военные и военно-морские поставки в Турции перед первой мировой войной, можно утверждать, что, во-первых, борьба Круппа—Шнейдера в области сухопутных вооружений, как непосредственно перед войной, так и в предшествующие годы, завершилась в целом победой Круппа. Это свидетельствовало о значительном усилении позиций Германии в экономической и политической экспансии на Ближнем Востоке. Большая заслуга в этом деле принадлежала германской военной миссии Лимана фон Сандерса.

Во-вторых, в области морских вооружений приоритет принадлежал английскому монополистическому капиталу и частично французскому. Англичане и французы пресекли попытки немцев перехватить заказы. Потерпела неудачу также попытка русской дипломатии воспрепятствовать постройке заказанных Турцией дредноутов.

В-третьих, необходимо указать на тесную связь дипломатии европейских государств со своими монополиями и поддержку, которую последние получали от дипломатических представителей за границей в борьбе за военные и военно-морские поставки.

---

<sup>1</sup> М. О. т. I, стр. 4—5.

Ա. Ս. ԱՎԵՏՅԱՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՆՈՊՈԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՊԱՅՔԱՐԸ  
ՌԱԶՄԱԿԱՆ ԽԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՔԻԱՅՈՒՄ՝  
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿՈՆ  
Ա մ փ ռ փ ու մ

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան Կայսրության մեջ տնտեսական և քաղաքական գերիշխանությունն ձեռք բերելու համար Անգլիայի, Գերմանիայի և Ֆրանսիայի մղած պայքարում կարևոր տեղ էին գրավում մոնոպոլիստական կապիտալի ներկայացուցիչների ջանքերը՝ ռազմական մատակարարման ուղղությամբ:

Ցամաքային սպառազինման բնագավառում հիմնական մրցակիցները գերմանացի Կրուպը և ֆրանսիացի Շնեյդեր-Կրեդոն էին: Շնորհիվ Օսմանական Թուրքիայի հետ տնեցած իրեն հին և ամուրկապերի, «Դոլչե» բանկի, գերմանական դիվանագիտության (հատկապես Կոստանդնուպոլսի դեսպան Վանգենգեյմի), Լիման Ֆոն Սանդերսի գերմանական զինվորական միսիայի, որը գերիշխող դիրք էր գրավել թուրքական ռազմական մեքենայում, Կրուպին հաջողվեց ստանալ ռազմական պատվերների <sup>2</sup>/3-ը:

Ծովային սպառազինության բնագավառում առաջնությունը պատկանում էր Արմատորոնգին և մասամբ ֆրանսիական ընկերություններին:

Գերմանիայի, ինչպես նաև Ռուսաստանի, (որը չէր ցանկանում Թուրքիայի ուժեղացումը) բոլոր ջանքերը իրենց ձեռքը գցելու ծովային սպառազինության պատվերները, կամ էլ խոչընդոտներ ստեղծելու այդ ուղղությամբ, ձախողվեցին:

Տ. 2. ՀԱԿՈՐՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԿԱԹՈՒԿԱԿԱՆ ՄԻՍԻԱՆԵՐԻ  
ԱՍԻՄԻԼՅԱՏՈՐԱԿԱՆ ԶԳՏՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ԻՐԱՆՈՒՄ  
(XVII—XVIII դդ.)

XVII դ. վերջը և XVIII դ. սկիզբը բեկման շրջան էր Արևելքի երկրների պատմության մեջ: Այդ ժամանակ Մերձավոր և Միջին Արևելքում գոյություն ունեցող ֆեոդալական միապետությունները՝ Օսմանյան Թուրքիան, Սեֆևյան Իրանը և Մեծ Մողոլի կայսրությունը՝ Հնդկաստանում, ապրում էին ճգնաժամ, որը հետևանք էր մի կողմից՝ ֆեոդալական սխտեմի ներքին հակասությունների և արտադրողական ուժերի անկման, մյուս կողմից՝ դեպի Արևելք եվրոպական առևտրական կապիտալի հետզհետե ուժեղացող գրոհի և կապիտալի նախասկզբնական կուտակման շրջանին հատուկ գաղութային քաղաքականության:

Այն ժամանակ, երբ գնալով ուժեղանում էր գաղութային մըրցակցությունը Արևելքում (հատկապես Հնդկաստանի շուրջը) էլ ավելի էր դրսևորվում արևելյան միապետությունների քաղաքական և ռազմական թուլությունը, կենտրոնախույս ուժերի ակտիվությունը, փոփոխվող առևտրական ճանապարհների հետևանքով նվազում էին երկրի եկամուտները, ավելի ու ավելի էին սրվում ներքին հակասությունները, ուժեղանում էր հարկային լուծը, պետական ապարատի կորուպցիան, աշխատավոր մասսաների շահագործման աստիճանը և ազգային-կրոնական ճնշումը: Այս բոլորը նպաստավոր հող էին ստեղծում եվրոպական պետությունների գաղութային քաղաքականության համար:

Եվրոպական առևտրականների և գաղութարարների հետ միասին դեպի այդ երկրներն էին դիմում քարոզիչ միսիոներները՝ պապական եկեղեցու և եվրոպական տերությունների այդ գործակալները: Գաղութարար նվաճողների հետևից դեպի արևելք էին դիմում

ամեն տեսակ վանական միաբանությունների և ուսմունքի պատկանող կաթոլիկ միսիոներներ, որոնք իրենց գործունեությունները պետք է ուղի հարթեն ֆեոդալական մոնարխիայի և առևտրական կապիտալի տիրապետության համար Արևելքում:

Դեռևս XIV դ. կաթոլիկական պրոպագանդան իր համար հենակետ էր ստեղծել Թուրքիայում, Իրանում և Անդրկովկասում: Ատրպատականի Սուլթանի և Մարաղա քաղաքներում հաստատված ֆրանցիսկյան և բենեդիկտյան կրոնավորները այնքան մեծ ազդեցություն էին ձեռք բերել նախիջևանի, Երնջակի և Ջահուկի հայ աղգարանալիության վրա, որ մի շարք հայ հոգևորականներ աշակերտեցին նրանց, կաթոլիկացան և պաղմեցին միաբանողների կամ ունիթորների եղբայրությունը: XVII դ. սկզբին ունիթոր հայերի թիվը վերահիշյալ շրջաններում հասնում էր 19 հազարի: Այս ազգաբնակչությունը տեղավորված էր 3 քաղաքներում ու 12 գյուղերում և ընդհանուր առմամբ կազմում էր 1830 տուն<sup>1</sup>:

Կաթոլիկ միսիոներների գործունեությունը, նրանց կողմից գործադրված մեթոդները ու հնարքները բացահայտված են նրանց հաշվետվությունների և նամակների մեջ, որոնք հրատարակված են դեռևս XVII և XVIII դդ.: Այդ նամակներից մեկում, որը վերնագրված է «Հայերի հետ վարվելու եղանակը» կարգում ենք.

«Աստծու գործակալները (քարոզիչ միսիոներները — Տ. Հ.)... իրենց գործը պետք է սկսեն նրանից, որ կարողանան շահել հայերի վստահությունը, նրանց հետ վարվելով մեղմությամբ և հասկացնելով, որ նրանք այլ բանի չեն ձգտում, բայց եթե քարոզելու եկեղեցու (պապական — Տ. Հ.) վարդապետությունը, որը հենց նրանց (հայերի — Տ. Հ.) նախնիքների կրոնն է: Այդ դեպքում նրանք ձեզ կլսեն հոժարությամբ և դուք մեղմությամբ կկարողանաք տիրապետել նրանց մտքին ու սրտին և նրանք տրամադիր կլինեն հյու-հնազանդ ընկալել հավատքի այն ճշմարտությունները, որ դուք նրանց կբացատրեք»<sup>2</sup>:

Այնուհետև հրահանգվում է հանգամանորեն ծանոթանալ և ուսումնասիրել հայ համայնքները, թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց գրավել իրենց կողմը, ցուցաբերել համբերատարություն այն հույսով, որ ինչպես ասված է նամակում, «ցցանված սերմերը ի վերջո կտան ցանկալի պտուղը»:

<sup>1</sup> ՏՅս Ղ. Ալիշան, Մխական, էջ 365—387: Լեո, Հայոց պատմություն հատ. 3, գլ. 6: Լեո, «Խոջայական կապիտալ», էջ 94—121 և այլն:

<sup>2</sup> Lettres édifiantes et curieuses, écrites des missions étrangères, Paris, MDCCLXXX=1780 t. III, pp. 144—149.

Կաթոլիկական պրոպագանդան ավելի մեծ ակտիվություն ծա-  
վալեց XVII դ., երբ եվրոպայում սկսված կաթոլիկական ռեակցիա-  
յի հետևանքով կազմվեց եզվիտների միաբանությունը. մարտնչոշ  
կաթոլիկության այդ ջոկատը, որը առանձին հովանավորություն էր  
վայելում ֆրանսիական արսոլյուտիզմի կողմից:

Պարսկական, ինչպես նաև օսմանյան տիրապետության տակ  
գտնվող հայերը, այդ երկու հատվածներում էլ, ենթակա լինելով  
ֆեոդալական իշխանությունների ճնշումներին և հարստահարու-  
թյուններին, մաքառելով նրանց ասիմիլյատորական ձգտումների  
դեմ հանուն ազգային-կրոնական ինքնուրույնության, ստիպված  
էին միաժամանակ երկարատև և համառ պայքար մղել կաթոլիկու-  
թյան դեմ, որը հետապնդում էր «խաղաղ» պրոպագանդայի շրջա-  
նակներից դուրս ելնող նպատակներ:

Կաթոլիկությունը Հայաստանում և ընդհանրապես արևելքի  
երկրներում հանդես էր գալիս քրիստոնեական մարդասիրության  
քողի տակ, գրավիչ խոստումներով, որոշ նյութական օգնություն  
ցույց տալու միջոցով, ձրի բժշկությամբ և այլն, որի հետևանքով  
էլ այդ միսիոներներին որպես կրոնի եղբայրակիցների, սկզբում ոն-  
դոմնում էին համակրանքով, օգտվելով դրանից նրանք առաջ էին քա-  
շում երկու եկեղեցիների (հայկական և պապական) միացման հար-  
ցը՝ ունիթորությունը, որի հետևանքով էլ նրանք կոչվել են ունիթոր-  
ներ (unitores): Սակայն այդ բոլորը պայմանավորված էր պապա-  
կան եկեղեցու միակ և անվիճելի իշխանությունը ճանաչելու և իր  
հետևորդներին ազգային, կրոնական, կենցաղային տրադիցիանե-  
րից կտրելու, դրանք որպես «մոլորություն» ճանաչելու հետ:

Ավելի ուշ, այսինքն XVII և XVIII դդ. կաթոլիկական պրոպա-  
գանդան արդեն կրում էր անհաշտ և մոլի շնույթ, բացահայտելով  
ասիմիլյատորական ձգտումներ:

Պայքարը այդպիսի մի համառ և մոլի տևի դեմ դժվարանում  
էր մի շարք հանգամանքներով: Մի կողմից կաթոլիկ միսիաներն  
իրենց թիկունքում ունեին պապականության ճնշող հեղինակուսու-  
նը, վերջինիս նյութական և կազմակերպական լայն հնարավորու-  
թյունները, մյուս կողմից՝ քաղաքական իշխանությունների աջակ-  
ցությունը, այդ թվում նաև Պարսկական կամ Օսմանյան պետու-  
թյունների, որոնց հետ եվրոպական տերությունները հաստատել  
էին առևտրական-քաղաքական կապեր: Հայտնի է, որ եվրոպական  
տերությունները, առաջին հերթին Ֆրանսիան, սկզբում թուրքիա-  
յում, այնուհետև Սեֆևյան Իրանում ձեռք էին բերել մի շարք արտո-



սություններ, որոնք ձևակերպված էին «կապիտուլյացիաների» մեջ<sup>1</sup>։ Այդ կապիտուլյացիաներում հատուկ տեղ էր գրավում կրոնական պրոպագանդայի իրավունքը և կրոնակից-կաթոլիկների նկատմամբ հովանավորության իրավունքը։ Կրոնական պրոպագանդայի և կաթոլիկների հովանավորության հարցը եվրոպական դիվանագիտության կարևոր լծակներից մեկն էր։

Անհրաժեշտ է սակայն նշել, որ Սեֆեյան պետությունը, եվրոպական պետություններին տալով մի շարք արտոնություններ, որոնք օրինում էին երկրի տնտեսական և քաղաքական շահերից (եվրոպայի հետ առևտուրը կատարել առանց Թուրքիայի միջնորդության և ընդդեմ Իրանի գլխավոր ախոյան Թուրքիայի ունենալ այդ պետությունների դաշինքը), միաժամանակ շահագրգռված էր պահպանելու իր տիրապետությունը հայերի նկատմամբ, որոնց նա նայում էր թե՛ որպես հարկատու-հպատակների և թե՛ առևտրական-միջնորդների, որոնցից նա քաղում էր մեծամեծ օգուտներ։ Դրանով պիտի բացատրել Սեֆեյան իշխանությունների վարած երկդիմի քաղաքականությունը։

Պարսկական շահերին իր կողմը գրավելու և հայ կաթոլիկների նկատմամբ խնամակալություն հաստատելու գործում առանձին եռանդ էր ցուցաբերում ֆրանսիական Լյուդովիկոս XIV թագավորը։ Նա դեսպանություններ էր ուղարկում և նամակներ էր գրում Սեֆեյան շահերին, նպատակ ունենալով միջնորդել իր միսիոներներին համար, միաժամանակ խնդրում էր շահերի բարեհայեցողությունը կաթոլիկական համայնքների նկատմամբ, պահանջելով հատուկ արտոնություններ նրանց համար։

Եվրոպական միապետները երբեմն իրոք հանդես էին գալիս հայերի համար միջնորդությամբ սուլթանի կամ շահի առաջ, սակայն միշտ էլ նկատի ունենալով բացառապես կաթոլիկություն ընդունած հայերի շահերը (այդպիսին էր, օրինակ, Լյուդովիկոս XIV նամակը Շահ Աբբասին (II-ին — Տ. Հ.)» — գրում է Վ. Բրյուսովը<sup>2</sup>։

Սակայն, կաթոլիկ հայերի նկատմամբ ֆրանսիական թագավորի հոգացողությունների իսկական լատառը առևտրական կապիտալի շահերն էին։ Պատահական չէր այն հանգամանքը, որ

<sup>1</sup> Կապիտուլյացիաների էություն մասին ահա Կ. Մարքս և Փ. Էնգելս, Сочинения, т. X, стр. 8.

<sup>2</sup> - Валерий Брюсов, Летопись исторических судеб армянского народа, стр. 113.

կաթոլիկական համայնքները հաստատվել էին գլխավորապես առևտրական ճանապարհների վրա ընկած կենտրոններում:

Սպահանում 40 տարուց ավելի միսիոներություն արած Ռաֆայել Դյու Մանի Պարսկաստանին նվիրված աշխատության մեջ մենք հանդիպում ենք մի ընդարձակ տեղեկագրի հետևյալ վերնագրով՝ «Տեղեկագիր առևտրի մասին, որ Ֆրանսիան կարող է անել հայերի միջոցով: Ապրանքների տեսակները, որոնք հայերը կարող են բերել Ֆրանսիա՝ Լևանտից»:

Այս տեղեկագրի մեջ, որը հավանություն էր գտել մինիստր Կոլբերի կողմից, թվարկվում են այն թանկարժեք ապրանքները, որոնցից Ֆրանսիան կարող էր ստանալ մեծամեծ օգուտներ: Այդ ապրանքների մեջ առաջին տեղը պատկանում էր պարսկական մետաքսին, այնուհետև հիշատակվում են գունավոր կաշիները, գրգռիթորը, բամբակը և նրա մանվածքը:

Այդ նույն ժամանակ անգլիական Արևելա-Հնդկական ընկերությունը առևտրական մեծ ակտիվություն էր ծավալել Հնդկաստանում, պարսից ծոցում և ընդհանրապես Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում, որի նպատակն էր կապիտուլյացիաներ ձեռք բերել Թուրքիայում և Իրանում, հետ շմնալով Ֆրանսիայից և Հոլանդիայից:

Ահա նման առևտրական շահերի շուրջն էր գնում պայքարը եվրոպական պետությունների մեջ Արևելքի երկրներում:

Այն ժամանակ երբ ծավալվում էր եվրոպական պետությունների պայքարը Արևելքում, միաժամանակ ուժեղանում էր Ռուսաստանի ազդեցությունը (հատկապես Պյոտր I օրոք), ամրապնդվում էին հայ-ռուսական հարաբերությունները, սկիզբ էր առնում պարսկա-օսմանյան լծի տակ գտնվող Անդրկովկասի ժողովուրդների, այդ թվում և հայերի ազատագրական պայքարը, ձևավորվում էր հայ ազատագրական շարժումը (Իսրայել Օրի):

Նման պայմաններում պայքարը օտարերկրյա միսիոներների և տեղական իշխանությունների ասիմիլյատորական ձգտումների դեմ ունենր ոչ նվազ կարևոր քաղաքական նշանակություն, մի պայքար որը ապահովելով հայերի ազգային-կրոնական ինքնուրույնությունը, պետք է նպաստեր նրա ազատագրությանը պարսկա-օսմանյան լծից և հայ ժողովրդի բախտը կապեր Ռուսաստանի և ռուս ժողովրդի հետ:

Պարսկական ասիմիլյատորների և կաթոլիկական միսիոներների դեմ հայ համայնքների մղած պայքարը իր արտահայտությունն է

<sup>1</sup> P. Raphael du Mans, *Estat de la Perse en 1660* m, Paris, ed. Shefer 1890, p. 342.

գտել ժամանակակից գրականության (եվրոպական և հայ հեղինակների) և էջմիածնի կաթողիկոսական արխիվում պահպանված մի շարք վավերագրերի մեջ:

Վերոհիշյալ վավերագրերի մի մասը պարսկական շահերի հրամանագրեր (ֆարմաններ) են, և վերաբերում են կրոնադավանաբանական հարցերի, որոնք սակայն ունեն քաղաքական նշանակություն և ուղղված են կաթոլիկ միսիոնների և տեղական իշխանությունների հավատափոխական—ասիմիլյատորական ձգտումների դեմ<sup>1</sup>:



Սեֆևյան իրանի տնտեսական և քաղաքական անկումն ակնհայտ դարձավ շահ Սուլթան-Հուսեյնի օրոք (1694—1722):

Մետաքսի առևտուրը, որը պետական մենաշնորհ լինելով, կազմում էր երկրի եկամուտների զգալի մասը, XVIII դ. սկզբին կրճատվել էր 5 անգամ: Արհեստավորների և գյուղացիության աղքատացման հետևանքով խիստ կերպով կրճատվեց դրամական շրջանառությունը: Տնտեսական ճգնաժամի գլխավոր պատճառը գյուղացիության ունեզրկումն էր, որը հետևանք էր սաստկացած կեղեքումների և հարկապահանջության: 1701 թ. ավարտված (սկսվել էր 1699 թ.) մարդահամարը բերեց հարկային նոր ծանր լուծ<sup>2</sup>: խիստ կերպով կրճատվել էին ցանքատարածությունները, գյուղացիները մասսայաբար փախչում էին գյուղերից և գյուղատնտեսությունը անկում էր ապրում: Պյոտր I դեսպան Արտեմիյ Վոլինսկու վկայությամբ Ադրբեջանի դաշտերը 7 տարի շարունակ մնացել էին անմշակ, սովը դարձել էր համատարած<sup>3</sup>: Լեհ միսիոներ եզուիտ Կրուսինսկին խոսում էր քայքայված գյուղացիների մասսայական հոսանքի մասին դեպի քաղաքները, որոնց հետա-

<sup>1</sup> Հայկական ՍՍՌ Մատենադարանի արխիվային ֆոնդի մեջ կարևոր տեղ են զբաղում պարսկերեն ձեռագրերը, որոնք ընդգրկում են XV—XIX դդ. և արժեքավոր աղբյուր են հանդիսանում Անդրկովկասի և Իրանի սոցիալ-տնտեսական և հոգևոր կյանքի մի շարք հարցերի լուսարանման համար և որոնց մի մասը օգտագործվել է մեր կողմից:

<sup>2</sup> Պարսկերեն վավերագրերի առաջին և երկրորդ ժողովածուները լույս են տեսել 1938 և 1939 թթ., որը կադմեի է Ն. Դ. Փախադյանը «Մատենադարանի պարսկերեն հրովառոտակները» վերնագրի տակ (պարսկերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով):

<sup>3</sup> Տես Սուայի շասան Զալայյան, Պատմութիւն Աղուանից երկրի, էջ 14—15:

<sup>4</sup> E. Зевакин, Азербайджан в начале XVIII в., журнал Артемия Волинского, стр. 12.

պնդում էին հարուստները և հարկադրում աշխատել իրենց համար:

Շահ Սուլթան-Հուսեյնի օրոք պատական ապարատի կազմալուծումն ավելի է արագանում: Էինելով թույլ և ապիկար կառավարող, ընդամին և մոլեռանդ շիա, նա իր գլխավոր հենարանը դարձրել էր շիա հոգևորականությանը, ինքը ևս հորջորջվում էր: «մուլլա»: Իր ժամանակի մեծ մասը նա անց էր կացնում հոգևորականների շրջանում և հարեմում, արքունական շողերից առասուկվերներ էր բաշխում հոգևորականներին և ներքինիներին, որոնք վճռական ազդեցություն էին ձեռք բերել պետության կառավարման գործերում:

Գյուղացիության աղքատացման և կրճատվող առևտրի հետեվանքով պետական դատարկ գանձարանը լցնելու համար մեծ շահերի էր հասել պաշտոնների վաճառքը, որով եռանդուն կերպով զբաղվում էին ներքինիները: Երկրի եկամուտներն ավելացնելու նպատակով արտոնություններ էին տրվում օտարերկրյա առևտրականներին: Նրանք լիովին ազատվում էին մաքսերից: Պետական պաշտոնյաները տեղերում պատասխանատու էին նրանց ունեցվածքի պահպանության համար: Տեղական իշխանությունները պարտավոր էին նրանց տրամադրել ձրի շենքեր: Օտարերկրյա հյուպատոսները իրավունք ունեին ներկա գտնվել դատերին և հարթել վեճերը: Այս ամենը, սակայն, որ կազմում էր վերոհիշյալ «կապիտոլյացիաների» էությունը և նպատակ ունեւ ավելացնել երկրի եկամուտներն ու զարգացնել խախտված առևտուրը, ցանկալի արդյունքը չտվեց: Մինչդեռ, այդ նույն ժամանակ, տեղի էր ունենում հայ և հնդիկ առևտրականների ունեցվածքի բռնագրավում, որի հետևանքով Զուղայի և այլ կենտրոնների հայ առևտրականներն ու արհեստավորները ստիպված էին բռնելու գաղթի ուղին՝ դեպի Հնդկաստան, Ռուսաստան և այլ վայրեր:

Անհանդուրժելի էր նույնպես Սեֆեհիների կրոնական քաղաքականությունը:

Կրոնական անհանդուրժողականության ձևով արտահայտվող ասիմիլյացիայի քաղաքականությունը տարվում էր շիիզմի դրոշի տակ, որի գլխավոր ռզնշնողները շիա բարձրաստիճան հոգևորականներն էին:

Սեֆեհյան տիրապետության ընթացքում իրանական կառավարող շրջանների ասիմիլյատորական քաղաքականության ուսումնասիրության համար շատ ավելի կոնկրետ և հարուստ նյութ են մատակարարում մատենադարանի բազմաթիվ պարսկերեն վավերագրերը, հատկապես մուսուլմանական շարիաթական փաստաթղթե-

րրն ու զանազան վեճերի կապակցութեամբ հրապարակված «Ֆեթ-վաները»:

XVI—XVIII դդ. հրապարակված գերագույն «Դիվան ալ-սա-դաբաթի», ինչպես նաև շեյխ-ու-իսլամների ու մուֆթիների ֆեթ-վաներում, որոնք մեծ մասամբ հաստատված են ժամանակի շահերի կողմից տրված ֆարմաններով, բազմիցս շեշտված է, որ «կանոնավոր կերպով շիդյա (գլխահարկ) հատուցող հայերին ոչ որ իրավունք չունի ստիպելու, որ քրիստոնեական հավատքը թողնեն և մահմեդականութունը ընդունեն»:

Հայ ուսյաթներից գանձվող գլխահարկը և տարիների ընթացքում նրա վրա բարդվող վերադիր գումարներն ու տոկոսները բավական խոշոր գումար էին կազմում և նշանակալից տեղ էին գրավում պետութեան ֆինանսների մեջ:

Սակայն, ինչպես վերը նշվեց, վերջին Սեֆեհների, հատկապես շահ Սուլեյմանի և շահ Սուլթան-Հուսեյնի օրոք դրությունը զգալիորեն փոխվում է:

Հայկական վանքերն ու եկեղեցիները, որոնք առաջ հարկերից ազատ էին, այժմ ծանր հարկերի տակ դրվեցին: Հատկապես անտանելի էին կրոնական հարածանքները, որոնք վերջին Սեֆեհների օրոք ընդունել էին մեծ չափեր: Գործի էր գցված, այսպես կոչված, Իմամ Ջաֆարի «օրենքը», ըստ որի «մահմեդականութուն ընդունած ընտանիքի անդամը հանդիսանում էր իր բոլոր քրիստոնյա հարազատների միակ ժառանգորդը, ինչպիսի ազգակցական կապ էլ ունենար նրա հետ, սակայն ոչ միայն հարազատները, հաճախ մահմեդականութուն ընդունած միանգամայն օտարները մահմեդական վկաների սուտ վկայութունների հիման վրա ճանաչվում էին որպես ազգականներ և յուրացնում էին նրանց գույքը»<sup>1</sup>: Շիա հոգևորականների և պալատական կլիկի կողմից կազմակերպվում էին, այսպես կոչված, կրոնական դիսպուտներ, ուր հրավիրվում էին հայ հոգևորականները, ապացուցելու համար իրենց ճշմարիտ լինելը: դրանք, սակայն, հաճախ ավարտվում էին վարչական-դատական ռեպրեսիաներով և բռնի հավատափոխութեամբ<sup>2</sup>: Այդ հողի վրա հաճախակի էին նույնպես հայերի դիմադրութեան և նահատակութեան դեպքերը<sup>3</sup>:

<sup>1</sup> Г. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, М. 1898, стр. XII.

<sup>2</sup> Տես Յ. Տէր-Հովհաննես, Գաղութիւն Նոր Ջուղայում, հատ. 1, էջ 208, Խաչատուր Ջուղայեցի, Գաղութիւն պարսից, էջ 160—215, Առաքել Դավրիժեցի, Գաղութիւն, և այլն:

<sup>3</sup> Տես Հ. Մսնանդաւան և Հ. Աճառյան, Հայոց նոր վկաները:

Ուժեղ էին ազգային-կրոնական ռեպրեսիաները նաև Դաղըստանում, Ադրբեջանում, Վրաստանում և Աֆղանստանում, որտեղ հաճախակի ծագած խռովություններն ու ապստամբությունները թուլացրին Սեֆևյան պետությունը և արագացրին նրա անկումը:

Սեֆևյան պետության վերոհիշյալ ճնշումներին ու կեղծումներին ռավելանում էին Հոռմի պապի և նրա միսիոներների թշնամական գործողությունները, որոնք ձգտում էին քայքայել հայկական եկեղեցին և հայերին դարձնել կաթոլիկական հավատքի<sup>1</sup>: Այդ մասին են վկայում Մատենադարանի մի շարք վավերագրեր:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերից այստեղ մեր քննության առարկան են շորսը՝ 1705, 1709, 1711 և 1740 թվականներին վերաբերող վավերագրերը, որոնցից առաջին երեքը ձևորեն բերված շահ Սուլթան-Հուսեյնի օրոք, վերջինը՝ Նադիր շահի Դրանք բոլորն էլ արտացոլում են այն ժամանակ սրված պայքարը և ուղղված են կաթոլիկական պրոպագանդայի դեմ:

Այդ այն ժամանակաշրջանն էր, երբ Սեֆևյան պետության մեջ սոցիալ-տնտեսական հակասությունները խիստ խորացել էին, երբ ազգային ճնշումն ու կրոնական-դավանական վեճերը հասել էին ծայրահեղ սրության, երբ մի կողմից տեղական իշխանությունների, իսկ մյուս կողմից կաթոլիկ միսիոներների կողմից կիրառվում էր բռնի հավատափոխությունը:

Այս պայքարի կենտրոնը հանդիսանում էր Սպահանը և նրան կից Նոր Ջուղան: Շահ Աբբասի հիմնած Նոր Ջուղան որոշ ժամանակ բարգավաճեց ոչ միայն տնտեսապես, այլև հոգևոր-կուլտուրական տեսակետից: Այստեղ հայկական եկեղեցու կողքին գործում էր դպրոց և կար տպարան. Նոր Ջուղան դարձել էր հայ լուսավորության կենտրոններից մեկը: Սակայն պարսկական մայրաքաղաքին մոտ գտնվելու պատճառով, այստեղ ևս թափանցեց կաթոլիկ միսիոներությունը, որի հենարանը ջուղայեցիների հետ կապ էր կաթոլիկներն էին:

Սրանց մեջ կային ազդեցիկ հարուստներ, ինչպես, օրինակ, Շահրիմանյանները, որոնց ծախսով էլ շինվեց կաթոլիկ եկեղեցին, որը և դարձավ բազա՝ կաթոլիկական պրոպագանդայի համար<sup>2</sup>: Ժամանակի ընթացքում նրանք բաց արին նաև իրենց դպրոցը, սկսեցին այստեղ գրավել հայ մանուկներին, կրթել իրենց ոգով, մի

<sup>1</sup> П. Т. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII в., стр. 115.

<sup>2</sup> Տես Յ. Տեր-Ղովհաննես, Պատմութիւն Նոր Ջուղայու, հատ. Բ., էջ 267:

րան, որը վերջին հաշվով հանգեցնում էր հավատափոխության և ասիմիլյացիայի: Այս հողի վրա պայթար ծավալվեց հայկական երկու համայնքների միջև, որն իր բարձրագույն կետին հասավ XVIII դ. սկզբին Աղեքսանդր Զուղայեցի կաթողիկոսի օրոք (1706--1714): Այդ պայթարի մեջ երկու կողմերն էլ ցուցաբերում էին անհանդուրժողականություն, հաճախ դիմելով ժայրահեղ միջոցների: Հակամարտությունն ավելի բորբոքվեց, երբ ստանալով պապի հավանությունը, Սպահանի կաթողիկ հոգևորականները խիստ կերպով արգելեցին հայ կաթողիկոսներին հաճախելու հայկական «հերձվածող» եկեղեցին: Գործին շօգնեց և Աղեքսանդր Զուղայեցու նամակը Կղեմես XI պապին, որը գրված էր հաշտարար ոգով, և որտեղ խնդրվում էր ձեռք առնել միջոցներ այդ երկպառակությունների դեմ: Պապը անպատասխան թողեց կաթողիկոսի նամակը:

Նույն 1709 թ., երբ գրվեց այդ նամակը, Սեֆեյան Իրանի մայրաքաղաքում շահ Սուլթան-Հուսեյնին էր ներկայանում Պյոտր I ուղարկած դեսպանությունը՝ Իսրայել Օրիի գլխավորությամբ: Հայաստանի ազատագրման գաղափարին նվիրված գործիչը դալիս էր մոտիկից ծանոթանալու Պարսկաստանի ներքին վիճակին: Օրիի գործունեությունը մեր քննության առարկան չէ, սակայն կասկածից դուրս է, որ Սպահանի կաթողիկ միսիան, եզվիտ քարոզիչները թշնամաբար էին տրամադրված դեպի Օրիի առաքելությունը: «Օրին երկար շմնաց Իրանի մայրաքաղաքում, որովհետև ֆրանսիական դեսպանը և կաթողիկ միսիոներները գրգռում էին շահին, թե ուսական հայազգի դեսպանը, վրացիների հետ միացած, պետք է ապստամբություն կազմակերպի և հայոց թագավոր դառնա»<sup>1</sup>: «Եզվիտ Կրուսինսկին նույնիսկ հավատացնում էր, թե Օրին դեռևս Շամախիում արտասանել էր մի ճառ, որի մեջ ասել էր, թե ինքը հայոց թագավորի սերունդ է»: Ուստի նրանք շշնջում էին շահ Հուսեյնի ականջին, որքան կարելի է շուտ ճանապարհ դնել Պյոտր I դեսպանին»<sup>2</sup>:

Այդ թշնամությունը, արտաքինից կրոնական-գավանական բնույթ կրելով հանդերձ (իբր Օրին դավաճանելով կաթողիկոսությանը անցել է հայերի կողմը), հիմնականում թելադրված էր տնտեսական և քաղաքական մոտիվներով: Այդ ժամանակ կաթողիկ Ֆրանսիան իր դեսպան Միշելի ջանքերով Սեֆեյան Իրանի հետ կնքել էր ձեռնտու առևտրական պայմանագիր, որին այնպես վաղուց ձրտում էր Լյուդովիկոս XIV կառավարությունը: Ռուսաստանը, որի

<sup>1</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հատ. I, Երևան, Հայպետհրատ, 1951:

<sup>2</sup> Լեո, Հայոց պատմություն, հատ. 3, էջ 96, էջ 862:

ներկայացուցիչն էր Օրին, դիտվում էր որպես վտանգավոր առևտրական մրցակից, որի քաղաքական ազդեցությունը գնալով աճում էր թե Արևմուտքում և թե Արևելքում (այդ նույն թվականին շվեդների դեմ Պոլտավայի տակ տարած հաղթանակից հետո): Հուսախաբված Արևմուտքի երկրների և պապական եկեղեցու խոստումներից պարսկական լծի տակ գտնվող հայերը իրենց ազատագրական տենչերը կապում էին Ռուսաստանի օգնության հետ:

Եզվիտները, սակայն, չդադարեցրին իրենց քայքայիչ գործունեությունը, նրանք առաջվանից էլ ավելի բացահայտ և անհաշտ կերպով էին շարունակում թշնամական գործողությունները և հավատափոխությունը կատարվում էր ավելի ճարպիկ և խորամանկ միջոցներով:

Դեռևս 1705 թ. վերաբերող պարսկերեն մի վավերագրի մեջ պարսկական կառավարությանն են դիմում «նոր Զուլայի քաղաքաբարը, խալիֆան, քահանաները և մյուս բնակիչները» և հայտնում հետևյալը. — «Պարտք համարելով այցելել վերջերս դեսպանի անվան տակ Սպահան ժամանած Ֆրանկ փառերին (կաթոլիկ քարոզչին — Տ. Հ.) և ընդունելով նրա փոխայցելությունը, ցույց տվինք հարգանք և սիրալիր վերաբերմունք առ նա, սակայն վերոհիշյալ քարոզիչ դեսպանը սկսեց մեզ անել «չսված առաջարկներ» (تکلیفهای نامسموع), մեր առաջ դնել պարտավորություններ, որ մենք սպասել չէինք կարող և որոնց ընդունելը վեր է մեր փրավասությունից»:

Զնայած խնդրագրի մեջ չի տրված այդ առաջարկների բովանդակությունը, կասկածից դուրս է, սակայն, որ դրանք հավատափոխության առաջարկներ են եղել, քանի որ խնդրատուները վերջում աղերսում են «հասկացնել այդ փառեր-քարոզչին և նման փառերներին ձեռք քաշել» իրենցից: Խնդրագրի վրա արված է կառավարական օրգանների համապատասխան կարգադրությունը՝ խնդրատուների պահանջի ոգով:

Կաթոլիկ միսիոներների ագրեսիան հասնում է սայն աստիճանի, որ Թավրիզում տեղական իշխանությունների օգնությամբ նրանք ձերբակալել են տալիս 25 հոգու և բռնազանձում յուրաքանչյուրից 50-ական թուման որպես երաշխիք՝ արգելք չհանդիսանալու հայերին կաթոլիկ եկեղեցին հաճախելու, որի մասին հիշատակվում է մեր քննության առարկա հաջորդ № 268 վավերագրում:

Սրբ դրությունը դառնում է սպառնալից, Աղեքսանդր Զուլա-

<sup>1</sup> Մատենադարանի կաթոլիկոսական արխիվ, Թղթապանակ 1 ա, վավերագիր № 32, 1117 հիշրի=1705:



յեցին ստիպված է լինում դիմել պարսկական արքունիքի միջամբտութեանը արգելելու եղուխտների գործունեությունը հայերի մեջ: Այդ մասին են խոսում շահ Սուլթան-Հուսեյնից ձեռք բերված երկու ֆարմանները (1709 և 1711 թթ.):

1709 թ. կաթոլիկների գործունեության դեմ ուղղված ֆարմանը<sup>1</sup> կրում էր համեմատաբար մեղմ, նախազգուշական բնույթ: Այդտեղ արձանագրված է այն «ցավալի իրադրությունը, շփոթն ու տարածայնությունները», որոնք տիրում են երկրում կաթոլիկների կողմից տարվող հավատորսության պատճառով: «Նրանց այդ գործունեությունը», — ասված է վավերագրի մեջ, «խախտում է կրոնի (հայկական—Տ. Հ.) ամրությունը և հասցնում է մեծամեծ ավերումների (պարսկ. مفساد) և շարիքների», որին պետք է վերջ տալ:

Կարևոր մոմենտ է այն, որ երկու վավերագրերում էլ հիշատակվում է պետական օրենքը, շարիաթի կանոնները, որոնցով պիտի առաջնորդվեն բոլոր կրոնական-դավանական հարցերում և որը խախտվում է եվրոպական պետություններից ուղարկվող միսիոներների կողմից: Այս կապակցությամբ, վավերագրի մեջ հիշատակված է ֆրանսիական դեսպան Միշելի (վավերագրում՝ Միքայել) հետ կնքած պայմանագիրը, որը խախտվում էր հենց իրենց ֆրանսիացիների կողմից:

Ըստ այդ պայմանագրի, բացի առևտրից, կաթոլիկ քարոզիչներին թույլատրվել էր քարոզել և ուսուցանել, սակայն նրանք ձգտում են հավատափոխ անել բռնի միջոցներով: «Պետությունը դրանով զրկվում է իր հավատարիմ հպատակներից, որոնք ջիզիե—(գլխահարկ—Տ. Հ.) վճարողներ են», — ասված է հրամանագրում. — ուստի ֆրանկների վերոհիշյալ հարկադրանքները հակասում են շարիաթին»:

Այս վերջինս՝ ջիզիեն, միշտ էլ հանդիսացել է ծանրակշիռ և էական նշանակություն տնեցող արգումենտ, մի եկամուտ, որից պետությունը հրաժարվել չէր կարող:

Այնուհետև վավերագրում մանրամասն կերպով թվարկվում են այն միջոցները, որոնց դիմում են կաթոլիկ միսիոներները, իրենց նպատակին հասնելու համար: Նախ՝ դա հայ մանուկներին ու երիտասարդներին իրենց եկեղեցիները և դպրոցները գրավելը և կաթոլիկական անհաշտ ոգով դաստիարակելն է, որը խորթացնում

<sup>1</sup> Սատենադարանի կաթոլիկոսական արխիվ, Թղթապանակ 1 ա, № 268, որը համապատասխանում է Միմեն Նրեանցու—«ՋԱՄԲԻ»-ի 220 էջում հիշատակված հրամանագրին, 1122 հիջրի=1709:

ու կտրում է նրանց հայ համայնքից, և որը հարկադրում է նրանց կրոնափոխ լինել: Երկրորդ՝ ամուսնութուններն են հայ կանանց հետ, որով ավելի են ամրապնդվում նրանց հավատափոխության նվաճումները: Երրորդ՝ նրանց կողմից տուն ու տեղ, անշարժ գույք ձեռք բերելն է, որը նույնպես նպաստում է վերահիշյալին: Չորրորդ՝ բարեկամական կապերը հայերի հետ նույն նպատակով: Եվ վերջապես՝ աշխարհի ձեռքի և միջոցների գործադրումը», որոնք հակասում են ընդունված օրենքներին:

Վավերագրից իմացվում է կաթոլիկական կենտրոնների գոյության մասին. այստեղ հիշատակված են Սպահանը, Թավրիզը, Համադանը, Գյանջան, Ղարաբաղը, Գյուրջիստանը (Թիֆլիս), Շիրվանը, Չուխուր-Սաաղը (Երևանը):

Հրամանագիրը հրահանգում և զգուշացնում է, որ Պարսկաստանում ապրող ֆրանկ միսիոներները այսուհետև չպետք է զբաղվեն նման գործունեությամբ. նրանք պետք է առաջնորդվեն պարսկական պետության հետ կնքած պայմանագրով:

Վերջում իրավունք է տրվում Աղեքսանդր Ջուղայեցուն, ինչպես նաև նոր Ջուղայի առաջնորդ Մովսես Եպիսկոպոսին և մյուս հոգևոր մարմիններին համապատասխան զգուշացում անել կաթոլիկ քարոզիչներին:

Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա փաստերը, 1709 թ. այս հրամանը և զգուշացումները քիչ ազդեցություն ունեցան կաթոլիկ քարոզիչների վրա: Եզուիտներն այնքան առաջ գնացին, որ պապից համաձայնություն ձեռք բերին կաթոլիկների կողմից հայկական եկեղեցիներ հաճախելը խստիվ արգելելու մասին, դրանով պարտադիր դարձնելով միայն կաթոլիկ եկեղեցի հաճախելը, մի հանգամանք, որ ավելի պիտի խորացնեք վիհը հայկական երկու համայնքների միջև:

Դրա հետևանքը եղավ 1711 թ. (1124 հիջրի) հրամանը<sup>1</sup>, որը կազմված է կատեգորիկ տոնով: Հրամանն ուղղված է բարձր պաշտոնյաներին՝ ռեզիսանսներին, բեգլարբեգներին, նահանգապետներին, վեզիրներին և դարուղաներին, թագավորական դիվանի պաշտոնյաներին, վերահսկիչներին» և այլն՝ պահանջելով սույն հրամանագրի անշեղ իրագործումը:

Անհրաժեշտ է նկատել, որ Սեֆեյան շահերի գրասենյակից դուրս եկող բոլոր պաշտոնական հրամանագրերում և այլ վավերագրերում աշխատում էին անտեսել երկրի ֆեոդալական տրոհվա-

<sup>1</sup> Մատենադարանի կաթոլիկոսական արխիվ, թղթապանակ 1 ա, № 244 1124 հիջրի=1711, ՁԱՄԲԹ, էջ 223:  
278

ծությունը: Որպես կանոն այդ հրամաններում չէր հիշատակվում տեղական խաների, սուլթանների և այլ ֆեոդալների մասին: Տեղական ժառանգական խաները դիտվում էին որպես կենտրոնական կառավարության փոխարքաներ և պաշտոնյաներ (օրինակ, Վրաստանի թագավորը կոչվում էր «Գյուրջիստանի կամ Կախեթիայի լայի», Ադրբեջանի և Հայաստանի խաները՝ «Նայիր» կամ «Հաքիմ»:

Ինչ հարցեր են շոշափվում այս հրամանագրում: Առաջին հերթին կաթոլիկ քարոզիչներից պահանջվում է շմիջամտել հայերի ներքին կրոնական-դավանական գործերին: Այնուհետև՝ խիստ կերպով արգելվում է հայ մանուկներին և երիտասարդներին կաթոլիկ դպրոց ընդունել և դաստիարակել նրանց եղուփտական ոգով: Երրորդ՝ արգելվում է հայկական եկեղեցիների կողքին կաթոլիկական եկեղեցիներ շինել: Չորրորդ՝ արգելվում է անշարժ գույք (տներ կամ այլ մուլք) ձեռք բերելը: Վերջապես՝ հայ կանանց հետ ամուսնանալը:

Հրամանագրի մեջ հիշատակություն կա թավրիզում կաթոլիկ քարոզիչների կողմից գործադրված վերոհիշյալ բռնության ակտի մասին և պահանջվում է ազատել այդ պատանդներին և վերադարձնել նրանցից բռնագանձված գումարները:

Այս հրամանագրի մեջ առանձնապես աչքի է ընկնում կաթոլիկ քարոզիչների կողմից հավատափոխության համար գործադրված մեթոդների մերկացումը և համապատասխան որակում է տրվում դրանց:

Այսպես, արգելելով հայ մանուկներին և երիտասարդներին ելուփտական ոգով կրթելը, հրամանագրում գործածված են մի շարք բառեր և տերմիններ, որոնք ավելի ճիշտ են բնորոշում նրանց նպատակները.— «հավատափոխ անել» բառից (պարսկ. نزعيب دادان) հետո գործածված է «կցել, միացնել» բառը (مواصلت نمودن), մի այլ տեղ գործածվում է «մոլորեցնել, խաբել» բառը (اغوا دادان) և վերջապես մի այլ տեղ «ձուլել, ասիմիլյացիայի ենթարկել» տերմինը (آمیختن):

Հրամանագիրը կատեգորիկ կերպով արգելելով նրանց կողմից գործադրվող բոլոր այդ «ձեռքն ու մեթոդները» կաթոլիկոսին և Ջուղայի առաջնորդին իրավունք է տալիս արգելել կաթոլիկություն ընդունած հայերին հաճախել նրանց դպրոցներն ու եկեղեցիները և օգնել նրանց վերադառնալու հայ համայնքի մեջ:

Այսպիսով, հրամանագիրը պարզ կերպով ցույց է տալիս, որ

<sup>1</sup> Տե՛ս *И. П. Петрушевский*, Персидские официальные документы XVI—нач. XIX вв., как источник для изучения истории феодальных отношений в Азербайджане и Армении, Проблемы источниковедения, кн. III.

պարսկական կառավարութիւնը հասկացել էր կաթոլիկ միսիոնարի հետապնդած նպատակները:

Զպետք է մոռանալ, սակայն, այն հանգամանքը, որ այս, թեկուզ և խիստ տոնով գրված հրամանագրերը — «աշխարհաստատ հոքմերը» (احكام جهانمطالع), «արքայական հրամանները» (امامان همويون), «ուղամները» (رقم) և այլն XVIII դ. արդեն չունեին այնպիսի ուժ, ինչպիսին ունեին մեկ դար առաջ, օրինակ, Շահ Աբբասի օրոք: Ինչպես վերը նշվեց, XVII դ. վերջին և XVIII դ. սկզբին Իրանը և հարևան երկրները ապրում էին խոր ճգնաժամ, մասամբ նաև այն բանի հետևանքով, որ միջանցիկ (տրանզիտային) քարավանային առևտուրը Արևմուտքի հետ կորցրել էր իր նախկին նշանակութիւնը, որի հետևանքով երկիրն ապրում էր կենտրոնական իշխանութիւնի նոր անկում, ֆեոդալական մանրատվածութիւնի նոր հաղթանակ, որն ի դեպ, լիովին չէր հաղթահարված անգամ Շահ Աբբասի ժամանակաշրջանում, որը Սեֆեւիների հզորութիւնի գագաթն էր:

Աբսոլյուտ և կենտրոնացած պետութիւնի գաղափարը, այդպիսով երբեք լիովին չէր համապատասխանում իրականութիւնին, չնայած որ շահի կառավարութիւնն ամուր կերպով կառչում էր ցենտրալիստական այդ տենդենցներից, թե՛ արքունական պատմագրութիւն, և թե, Սեֆեւիների գրասենյակից դուրս եկող պաշտոնական ակտերի մեջ:

Այդ էր պատճառը, որ պաշտոնական այդ հրամանագրերն ու կարգադրութիւնները հաճախակի խախտվում էին առանձին նահանգապետների, մեծ ու փոքր ֆեոդալների և հոգևորականների կողմից, որի հետևանքով էլ հարկ էր լինում նույն հրամանագրերը քանիցս կրկնել՝ նորից ու նորից հանձնարարելով այն «ի անշեղ ղեկավարութիւն»:

Սեֆեւյան պետութիւնի անկումից հետո (1722) ևս կրոնական-դավանական հարցերը կարևոր տեղ են գրավել իրենց ինքնուրույնութիւն համար պայքարող հայ համայնքների կյանքում: Ուստի, կաթոլիկոսական արխիվում մենք նորից հանդիպում ենք կաթոլիկ պրոպագանդայի դեմ հայերի ձեռք բերած նոր հրամանագրերի:

1740 թ. Նադիր շահի կողմից Ղազար Ջահուկեցի կաթոլիկոսին տրված ֆարմանը դարձյալ ուղղված էր կաթոլիկութիւնի դեմ<sup>1</sup>:

Այս վավերագրում նորից խոսվում է հավատափոխութիւնի հաճախակի դարձած դեպքերի և կաթոլիկ միսիոնարների գործադր-

<sup>1</sup> Մատենադարանի պարսկական վավերագրեր կաթոլիկոսական արխիվ, Թղթապանակ 1 Բ, վավերագիր № 375, 1153 հիշքի=1740:

րած մեթոդների մասին: Ենթանք (Ֆրանկ միսիոներները — Տ. 2.) մոտենում են ժողովրդին փաղաքշանքով (استمالت), խորամանկութեամբ և կեղծիքով (حيلة و تزوير)», — ասված է վավերագրում:

Նրանց ձեռք բերած արդյունքները, ինչպես երևում է, որոշ դեպքերում ղգալի են, քանի որ վավերագրում ահազանգվում է, որ Ենթոր Զուղայի և Թիֆլիսի հայերի կեսը Ֆրանկացել են: Պետք է կարծել, որ հիշատակված թիվը շափազանցություն է, որը բխում է վտանգը կանխելու պահանջից: Սակայն մյուս կողմից պետք է հաշվի առնել նաև այն, որ այդ ժամանակ հայերի թիվը ղգալիորեն պակասել էր հարստահարությունների, կեղեքումների և առևտրի անկման հետևանքով, որի պատճառով էլ ղգալի էր հայերի գաղթը դեպի Հնդկաստան, Ռուսաստան և այլ վայրեր, ուստի հավանական է, որ մնացածների թվում կաթուղիություն ընդունած հայերի թիվը կազմելիս լինեք ղգալի տոկոս:

Ինչպես երևում է վավերագրից, խնդրատու Ղազար կաթողիկոսը դիմելով Նադիր շահին, նշում է, որ բունի կաթուղիկացման հետևանքով պակասում է պարսկական պետության հպատակների թիվը, հետևաբար նվազում են պետության եկամուտները, նա հայտնում է նաև, որ հեռացածների, որպես համայնքի անդամների տուրքերը, ծանրանում են մնացածների վրա:

Հնդհանրապես այս շրջանի վավերագրերում աչքի են ընկնում տնտեսական անկման փաստերը, մինչդեռ հարկերի ժանրությունը առաջվանից ոչ պակաս ճնշում է բնակչությանը: Հայտնի է, որ Նադիր շահը, եթե իր թագավորության առաջին տարիներին փոքր ինչ թուլացրեց հարկային ճնշումը ի հաշիվ Հնդկաստանից ձեռք բերած կողոպուտի, ապա դրանից հետո, շնորհիվ երկրի հետամընացության (կիսաքոչվորային-նատուրալ տնտեսության), և նրա կողմից մղված անվերջ պատերազմների, նա ավելի մեծ շափերով սկսեց ղանձել հարկերը, ավելի քան խստացնելով հարկապահանջությունը: Ուստի վավերագրում ասված է. ԵՄեր աղերսանքն է, որ եթե ղմտնեք հայերի դրության մեջ և միջոցներ ձեռք ղառնեք, ապա բնակչությունը գնալով պիտի ուժասպառ լինի և վերջնականապես քայքայվի»:

Խնդրագրի մեջ խորհուրդ է տրվում պետությանը՝ հարքունիս ղրավել հավատափոխների գույքն ու ունեցվածքը, որոնցով կավելանան պետության եկամուտները: Այնուհետև ասվում է, որ Եֆրանկները միայն մեր (հայերի — Տ. 2.) թշնամիները ղեն, այլև մեր պետության (Պարսկական — Տ. 2.) թշնամիներն են հանդիսանում»:

Այս վավերագրի մեջ ղատ կարևոր մոմենտ է լրտեսության

հարցը, որով զբաղվում են կաթոլիկ միսիանները: Այնտեղ ասված է, որ «նրանք՝ (Ֆրանկ միսիոներները—Տ. Հ.) օրերցօր այդ երկրներում, որտեղ ապրում են նրանք, լրտեսություն են անում: Ամեն դեպք, որ տեղի է ունենում այդ վայրում, դրի առնելով ուղարկում են իրենց թագավորին:

از ولایت جاسوسی می نمایند هر احوالات که هر جا ظهور رسد  
نوشته و روانه پادشاه خود می نمایند.



Այս բոլորից հետո որո՞նք էին կաթոլիկ պրոպագանդայի արդյունքները: Պետք է ասել, որ շնայած միսիոներների գործադրած ջանքերին և կիրառած մեթոդներին, նրանց ձեռք բերած արդյունքները չնչին էին: Այդ բանը վկայում են օտարերկրյա հեղինակներից շատերը, որոնք ականատես են եղել այդ պայքարին և կաթոլիկ միսիանների ձեռք բերած արդյունքներին տվել են օբյեկտիվ և անաչառ գնահատական: Այդ տեսակետից խիստ պերճախոս է Ֆրանսիացի ճանապարհորդ, Սեֆեյան իրանի մասին 10 հատորից կազմված աշխատության հեղինակ Ժան Ծարդենը: «Ծս խոսքերը շունեմ նկարագրելու այն խորամանկություններն ու այն ծախսերը, որոնց այդ նպատակով դիմում էր Հոռմի աթոռը, սակայն ոչ մի բան ցանկացած հետևանքին չհասցրեց»: Այնուհետև՝ «Միսիոներները որոշ հաջողություն ունեն արևելյան քրիստոնյաների մոտ, բացառությամբ, սակայն հայերի»<sup>1</sup>: Ծարդենը միաժամանակ նշում է, որ շնայած կրած նեղություններին, հայերը պահպանում էին իրենց ազգային կենցաղային տրադիցիաները, համառությամբ դիմադրելով մահմեդական իշխանությունների կեղեքումներին և կաթոլիկ միսիանների ոտնձգություններին:

Մենք կարող ենք բերել և ռուս արևելագետ Բարտոլդի կարծիքը այս առթիվ. «Ծվրոպական առևտրականներից զատ, 18-րդ դ. Պարսկաստան էին հաճախում նաև եվրոպական միսիոներները: Քրիստոնեության քարոզը Պարսկաստանում ավելի նվազ հաջողություն ուներ, քան Հեռավոր Արևելքում: Արևելյան քրիստոնյաները նույնպես չէին ենթարկվում կաթոլիկական պրոպագանդային և պագերների գործողությունների դեմ պաշտպանություն էին որոնում պարսկական կառավարության մոտ»<sup>2</sup>:

Անհրաժեշտ է սակայն նշել, որ հայ համայնքների պայքարը կաթոլիկության դեմ տարվեց ոչ միայն կազմակերպչական միջո-

<sup>1</sup> Voyages du chevalier Chardin... ed. Langles 1811, v. VI, p. 158.

<sup>2</sup> В. В. Бартольд, История изучения Востока в Европе и в России, 1925, стр. 113.

յառումներով՝ պարսկական արքունիքի միջամտութեանը դիմելով, այլև գաղափարական զենքերով: Իսկ ամենազլիւսովոր զենքը՝ դա ազգային կուլտուրայի, նրա հոգևոր արժեքների ուսումնասիրութեանն ու վեր հանումն էր, որով զրազվում էին ժամանակի առաջավոր գործիչները: «Պայքարը «Ֆրանկների» գաղափարների դեմ անհրաժեշտ դարձրեց ազգային գրականութեան ջանացի ուսումնասիրութեանը և նպաստեց հնութեան շատ հուշարձանների պահպանմանը», — գրում է հայ ժողովրդի բարեկամ, ոուս անվանի պոետ-բանասեր Վ. Բրյուսովը<sup>1</sup>:

Նույն ոգով է արտահայտվում նաև այս հարցին լավատեղյակ անվանի պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը իր «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմութեան» աշխատութեան մեջ: «Հայ եկեղեցին հետ մղեց ունիթորների գրոհը: Հայաստանի մի շարք վայրերում ջանքեր արվեցին ակտիվորեն պայքարելու կրոնադարձութեան և դավանափոխութեան դեմ, վերականգնելու հայ եկեղեցու հեղինակութեանը, բարձրացնելու եկեղեցականների մտավոր մակարդակը, համարելու նրանց շարքերը ժողովրդի էթնիկական պիմահեղմանը ընդունակ մարդկանցով»<sup>2</sup>:

Եվրոպական պետութեաններն ու պապական եկեղեցին դեպի Արևելք ուղարկելով իրենց միսիաները, ինչպես տեսանք հետապնդում էին ոչ միայն կրոնական, այլև քաղաքական նպատակներ: Երկու եկեղեցիների միացման՝ ունիթորութեան նշանաբանի տակ նրանք հետապնդում էին ձուլման՝ ասիմիլյացիայի քաղաքականութեան: Այդ շարժումը՝ ունիթորութեանը, հայկական ներքին կյանքի ծնունդ չէր, այլ գրսից մուծված, արհեստականորեն պատվաստվող, խորթ մի գաղափարախոսութեան, ուստի հայ համայնքների պայքարը նրա դեմ, Հայաստանի քաղաքական անկախութեան բացակայութեան պայմաններում, ուներ պրոգրեսիվ նշանակութեան և օբյեկտիվորեն հանդիսանում էր պայքար հայ ժողովրդի ազգային-քաղաքական ամբողջականութեան պահպանման համար:

Օտարերկրյա ասիմիլյատորների դեմ հայերի մղած պայքարը հնարավորութեան տվեց հաղորդակից դառնալու ավելի առաջավոր գաղափարների: XVII դ. ծնունդ առավ հայ ազատագրական շարժումը, որը բարեհաջող կերպով կապվելով Ռուսաստանի և ոուս ժողովրդի օգնութեան հետ, հասցրեց Արևելյան Հայաստանի ազատագրմանը պարսկական լծից:

<sup>1</sup> Валерий Брюсов, Летопись исторических судеб армянского народа. стр. 99.

<sup>2</sup> Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, հատ. 1, Երևան, 1957, էջ 495:

Т. А. АКОПЯН

БОРЬБА АРМЯН ПРОТИВ АССИМИЛЯТОРСКИХ  
СТРЕМЛЕНИЙ КАТОЛИЧЕСКИХ МИССИИ  
В ИРАНЕ (17—18 вв.)

Резюме

Европейские державы, проводя колониальную политику, широко использовали деятельность папской церкви и ее миссионеров. Еще с XIV века католическая церковь создала себе опору в Турции, Иране и Закавказье. Более активную деятельность развернула католическая пропаганда в XVII в., когда она носила непримиримый и воинственный характер, открыто выдавая свои ассимиляторские стремления. Особенно активную работу вели миссионеры среди армян в Иране.

Борьба армянских общин против персидских ассимиляторов и католических миссионеров нашла свое отражение в литературе (европейской и армянской) и в ряде документов, хранящихся в Архиве Католикосата в Эчмиадзине.

В настоящей статье автор по материалам 4 документов на персидском языке, хранящихся в Матенадаране (относящихся к 1705, 1709, 1711 и 1740 гг.) показывает, что борьба армянских общин против католичества в Сефевидском Иране, в условиях отсутствия политической независимости Армении, в известной мере имела прогрессивное значение и объективно являлась борьбой за сохранение национально-политической целостности армянского народа.



Ա. Խ. ՍԱՅՐԱՍՏՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ XVII ԴԱՐՈՒՄ  
(Պատմական ակնարկ)

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները և պատմական փաստերը, Օսմանյան Կայսրությունը աստիճանաբար զարգացել է և ընդարձակվել սկզբնական «Օսմանլի բեյությունից»: XV դ. Սուլթան Մուհամմեդ-Ֆաթիհի ժամանակ Օսմանյան պետությունն արդեն մեծ և հզոր կայսրության էր վերածվել: Իսկ XVI դ. այդ կայսրությունը Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի ցամաքամասերի վրա տարածված լայնածավալ ռազմա-ֆեոդալական պետություն էր:

«Այս ընդարձակ երկրում 60 միլիոնից ավելի մարդիկ էին ապրում: Սակայն, կայսրության բնակիչները միևնույն ցեղից և կրոնից չէին: Կայսրության մեջ ապրում էին թուրք, արաբ և այլ մուսուլման ազգությունները, սլավ, հույն, ուլահ, հունգարացի, հայ, հրեա և այլ ոչ-մուսուլմաններ... Օսմանյան Կայսրությունը իրար միացած, սակայն ոչ-միատեսակ երկրներ էր կազմված: Դրա համար էլ կոչվում էր Memalik-i Osmaniye—Օսմանյան երկրներ, ոչ թե Օսմանյան երկիր: Այդ երկրների վարչությունն էլ միատեսակ չէր»<sup>1</sup>:

Օսմանյան պետության հիմնական երկրամասերից Ռումելիի և Անադոլուի կարևոր մասերը վարչականորեն բաժանվում էին էյալեթների և լիվաների (սանջակներ): Էյալեթները (հետագայում վիլայեթ) կառավարում էին «բեյլերբեյիները» կամ «միրմիրանները», որոնք նշանակվում էին սուլթանի կողմից: Լիվաները բաժանվում էին կազաների, որոնց կառավարիչները կոչվում էին կազիներ, կազաները բաժանվում էին նաճիյեների, որոնց կառավարիչները կոչվում էին կայմախամ:

<sup>1</sup> Tarih, III c. yeni ve yakın zamanlar, İstanbul., 1933.

Բացի վեզիրներից, մնացած բոլոր կառավարիչները կոչվում էին *ümera* (ուամերա-էմիրներ): Օսմանյան պետությունը հանդիսանում էր ռազմական-ֆեոդալական իշխանություն, այդ պատճառով էլ բոլոր վեզիրներն ու էմիրները համարվում էին միաժամանակ թե՛ քաղաքացիական և թե՛ զինվորական պաշտոնյաներ և ունեին համապատասխան ֆունկցիաներ: Այսպես, կառավարության ղեկավարը՝ Սադրազամը (Մեծ վեզիր), պատերազմի ժամանակ համարվում էր բանակի Գերագույն Հրամանատարը և կոչվում էր «Սեր-դարի-ագամ» (Մեծ սերդար): Նույն կերպով էյալեթների և այլ վարչական միավորների պետերը ունեին և՛ վարչական և՛ զինվորական ֆունկցիաներ:

Մտումնասիրությունները ցույց են տալիս, որ Օսմանյան կայսրության կազմակերպության հիմնական էլեմենտները՝ երկրի վարչական բաժանման հիմնական սկզբունքները, քաղաքացիական և զինվորական պաշտոնները, նրանց անուններն ու ֆունկցիաները, նույնիսկ հողատիրության և հողի օգտագործման հիմնական ձևերը, հարկերն ու տուրքերը և այլն, օսմանցի թուրքերը մեծ մասամբ վերցրել են իրենցից առաջ գոյություն ունեցած իսլամական-թուրքական այլ պետություններից և իշխանություններից, ինչպես՝ Մեծ Սելջուկյան, Անադոլուի Սելջուկյան պետություններից, Իլխանիդներից և Անադոլուի թուրք բեյություններից («Անադոլու Բեյլիք-լերի»)<sup>1</sup>: Հարկավ օսմանցի թուրքերի այլ թուրքական պետություններից փոխառված կարգերը, ժամանակի ընթացքում, ենթարկվել են որոշ փոփոխությունների: Այդ մասին ժամանակակից թուրք պատմաբան Ի. Հ. Ուզունչարը լին ասում է.

«...Օսմանցիների սկզբնական շրջանին վերաբերող մի շարք գովումները, թափուի դաֆթարները, կալվածագրերը (*müik-name*), վակրֆագրերը (*vakvfnâme*) և ֆերմանները համեմատելով Անադոլուի Բեյությունների արձանագրությունների և այդ կապակի-

<sup>1</sup> Անադոլուի Բեյությունները, XIV դարի սկզբին, Անադոլուի Սելջուկյան կայսրության անկումից հետո Անադոլուի կենտրոնում և Արևմուտքում Սելջուկյան կայսրության հպատակ և ենթակա բազմաթիվ մեծ ու փոքր բեյությունները անկախություն ստացան: Պատմության մեջ «Թեվաիֆի-մուլուք» կամ «Անադոլու բեյլիքլերի» կոչված այդ բեյությունների գլխավորներն էին՝ «Կարաման-Օղլուլար»՝ Կոնիայում, «Գերմեյան-Օղլուլար»՝ Սեոյութում, «Օսման-Օղլուլար»՝ Մինոպում, «Փերվանե-Օղլուլար»՝ Կարահիսարի-Սահիբում, «Սահիբ-Աբ-Օղլուլար»՝ Բայբեքսերում, «Սուրուխան-Օղլուլար»՝ Իզմիրում, «Այլըն-Օղլուլար»՝ Միլոսում, «Համիդ-Օղլուլար»՝ Կասթեմունիում և այլն: Սրանք բոլորը հետագայում օսմանյան թուրքերի կողմից զբաղվեցին և նրանց տերիտորիան մտավ Օսմանյան կայսրության մեջ:

յությամբ Անադոլուի Անլըուկների, Իլխանիների և Մեմլուքների վերոհիշյալ կետերի մասին ունեցած կազմակերպությունների հետերեում է թե Օսմանյան Կայսրության կազմակերպությունը որտեղից է առնված»<sup>1</sup>։

Հետևաբար կարելի է ապացուցված համարել, որ օսմանցի թուրքերը իրենց նախորդող թուրք և իսլամ պետություններից մեծ չափով վերցրել են ոչ միայն կառավարության կառուցվածքի, այլ և երկրի վարչական բաժանման, հողի սեփականության և հողի օգտադրոժման հիմնական ձևերը։ Այնպես որ թուրքիայում հաստատված ֆեոդալական կարգերը պարունակում էին օսմանցիներին նախորդող ասիական թուրք և իսլամ այլ ժողովուրդների մոտ ֆեոդալական հարաբերությունների բազմաթիվ էլեմենտները։ Դրա հետ միաժամանակ, պետք է նկատի տանել, որ թուրքիայում տիրող ֆեոդալական կարգերի վրա որոշակի ազդեցություն են ունեցել նաև Բյուզանդական, Իրանյան և Արևելյան Եվրոպայի երկրների սոցիալ-տնտեսական կարգերը։

Թուրքիայի վարչական-քաղաքական բաժանումը սերտորեն կապված է երկրի հողային կազմակերպության և բաժանման հետ։ Հողային կազմակերպության և բաժանման ավելի խորը ուսումնասիրությունը թողնելով ուրիշ առիթի, մենք այստեղ կբավականանանք տալով XVI—XVII դդ. թուրքիայում գոյություն ունեցող հողային կազմակերպության համառոտ պատկերը։

Ինչպես հիշեցինք, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թուրքական հողային ռեժիմը իր հիմնական գծերով օսմանցիներից առաջ գոյություն է ունեցել Սելջուկյան պետության և այլ թուրքական երկրների մեջ։ Օսմանական բեյության ժամանակից սկսած այդ հողային ռեժիմը շարունակում է զարգանալ։ Այդ ռեժիմում, ըստ «Թարիհ»-ի՝ «Հողը մշակողի սեփականությունն էր։ Խաա և թիմարները<sup>2</sup> վրա ապրող ժողովուրդը ազատ էր, խասի և թիմարի տերերը ճորտ (serf) չէին. մի խոսքով, ամեն մի խասի և թիմարի հողը բաղկացած էր ժողովրդի սեփականությունն հանդիսացող արտերից, որոնք մշակում էին իրոք այդ հողերի վրա ապրողները և ստանում արդյունքը, թիմարի և խասի տերերին տալիս էին միայն բերքի տասանորդը (ösur) և հողի առուծախի ժամանակ որոշված խարջը (harc)»<sup>3</sup>։

<sup>1</sup> İsmail Hakkı Uzunçarşılı, Osmanlı Devleti teşkilatına medhal, İstanbul, 1941, s. XVII.

<sup>2</sup> Խասի և թիմարները մասին խոսք կլինի հաջորդ էջերում։

<sup>3</sup> Tarih, III c. sah. 5.

Խասի և թիմարի տերերը, իրենց ստացածի փոխարենն պարտավոր էին թիմարի եկամտի համաձայն, որոշ թվով վարժեցված և զինված հեծյալ զինվորներ պահել, որոնք պատերազմի ժամանակ թիմարատերերի հետ միասին պատերազմի էին գնում: Այդ դասի զինվորները կոչվում էին «Թիմարլի սեփանիներ»: Թիմարատերերը կազմում էին երկրի զինվորական ուժի կարևոր մասը: Նրանք միաժամանակ իրավասու էին իրենց խաս և թիմարների վրա ապրող ժողովրդի, այսինքն բուն գյուղացիների կառավարչական գործերում:

Օսմանական բեյերի դարաշրջանում դատական գործերը քաղաքներում վարում էին միանձնյա դատավորները՝ կադիները, իսկ կարգի ու կանոնի պահպանության համար նշանակում էին Սուլթանիներ: XVI դ.՝ հողային բաժանման հիմքն ու ձևերը հետևյալ կերպ էին սահմանված:

Պետական ամեն տեսակի ծառայության համար տրված ուժիկն ու հողը (որն հայտնի է խաս, զեամեթ և թիմար անուններով) կոչվում էր «դիրլիք» (dirlik— ապրուստի միջոց, թոշակ): Իբրև «դիրլիք» տրված հողի եկամուտը՝ տասնորդը (öşür) չէր մտնում պետության գանձարանը, այլ թողնվում ու հատկացվում էր «դիրլիքներ» ստացողներին՝ որոշ պարտականության փոխարեն: Դիրլիքի քանակությունը էին որոշվում (տարբերվում) խասը, զեամեթը և թիմարը:

Ինչպես ասացինք, հողային այս ուժիմը, օսմանցիների կողմից չի սահմանվել Օսմանյան թուրքերից առաջ Աբբասյանների և մասնավորապես Անադոլուի Անլուկյանների և սրանց քայքայումից հետո կազմված Անադոլուի Բեյությունների մեջ գոյություն է ունեցել նաև հողային ուժիմ:

Թուրքական պատմագիրների տված տեղեկություններից պարզվում է, որ սկզբում Թուրքիայում գոյություն է ունեցել միայն խասն ու թիմարը: Ավելի ուշ, 787 թ. (1385) Կարա-Թեմուր-Քաշ փաշան թիմարի և խասի միջև սահմանել է նաև զեամեթը և բացի այդ «դիրլիքները» դարձրել է ժառանգական:

Վերահիշյալ հողային ուժիմի էությունը, ըստ Ի. Հ. Դանիշմենդի, նրանումն էր, որ պետության վերաբերող «աշարի» հարկը և «թափուի» տուրքը մի շարք զինվորական պարտականությունների փոխարեն հատկացվում էր որոշ մարդկանց»<sup>2</sup>:

Այսպիսով հողատիրության սիստեմը և սրանից բխող պարտականությունները ունեին հետևյալ պատկերը:

<sup>1</sup> Սուլթան. Սուլեյման-Կանունիի իշխանության շրջանում՝ 926—974 թթ. (1520—1566):

<sup>2</sup> I. H. Danişmend, İzahl: Osmanlı tarihi kronolojisi, İstanbul, 1947 c. I, s. 60.

1. Տվյալ հողային ռեժիմի ամենաբարձր դիրքերը, խասը հատկացվում էր փաղիշահին, վեղիրներին և այլ պետական բարձրաստիճան անձնավորություններին: Խասի տերը իր ստացած եկամտի յուրաքանչյուր 5000 աղչեի փոխարեն պարտավոր էր մի օերելու կոչված հեծյալ զինվոր պատրաստել, հոգալով նրա բոլոր ծախսերը<sup>1</sup>:

Փաղիշահի և վեղիրների խասերը կառավարում էին ֆեթխուդա կոչված հատուկ և վստահելի պաշտոնյաները:

2. Զեամեթ կոչվում էին հիշյալ հողային ռեժիմի երկրորդ աստիճանի դիրքները, որոնց տարեկան եկամուտը 20 հազար աղչեից մինչև 100 հազար աղչե էր, ըստ որում այդ եկամտի 20 հազարը համարվում էր «Սրի իրավունք» (قليج حقي), իսկ մնացած գումարի յուրաքանչյուր 5000 աղչեի համար զեամեթի տերը պարտավոր էր մի շերելու տալ, վերև հիշված պայմանով:

3. Թիմար կոչվում էին երրորդ աստիճանի դիրքները, որոնց տարեկան եկամուտը երեք հազար աղչեից մինչև 20 հազար աղչե էր: Այս գումարի 3000 աղչեի համարվում էր «Սրի իրավունք», իսկ մնացածը կոչվում էր «մասս» (hisse), որի յուրաքանչյուր 3 հազար աղչեի փոխարեն թիմարատերը պարտավոր էր մի շերելու տալ:

Թիմարները երեք տեսակի էին.

ա) էջֆիճջի (արագագնաց) թիմարներ, որոնց տերերը և շերելուները ուղղակի պատերազմի էին գնում:

բ) Մյուսթանֆորդ (պահպանող) թիմարներ, որոնց թիմարատերերը պարտավոր էին բերդերում պահպանություն անել:

գ) Հիզմեթի (ծառայության) թիմարներ, որոնց տերերը և զինվորները պարտավոր էին բանակում իմամի և խաթիրի պաշտոններ վարել և Ստամբուլում փաղիշահական պալատում որոշ ծառայություններ կատարել:

Սրանք էին օսմանյան հողային ռեժիմի հիմնական էլեմենտները:

Թիմարները տրվում էին առհասարակ պատերազմում աչքի ընկնող զինվորներին: Զեամեթը տրվում էր էյալեթների կառավարության բարձր պաշտոնյաներին, բերդապահներին, կափըջի-բաշխներին<sup>2</sup>, արքունական դիվանի խոջաներին, դեֆթերդարության և այլ կառավարական գրասենյակների պետերին:

Ռազմա-ֆեոդալական այս կազմակերպության հիման վրա Օսմանյան կառավարությունն ապահովում էր իրեն անհրաժեշտ

<sup>1</sup> Այսպես օբինակ, եթե խասի տերը (վեղիրը) 300.000 աղչեի եկամուտ ուներ, պարտավոր էր 60 շերելու տալ (300 000 : 5000 = 60):

<sup>2</sup> Կափըջի՝ գնառան, կափըջի-բաշխ՝ փաղիշահական արքունիքի գրասենյակների պետը, որն համարվում էր բարձրաստիճան անձնավորություն:

զինվորական ուժերը: Թիմարատերերը և իրենք ջեբելունները պարտավոր էին իրենց պատկանող սանջակի բեյերի, իսկ այս վերջինները էյալեթների բեյերբեյիների հրամանատարության տակ պատերազմի գնալ: Ահա այս կերպով Օսմանյան կառավարությունն ապահովում էր իրեն համար անհրաժեշտ և անսպառ զինվորական ուժի աղբյուր: Պատերազմական գործողություններում սպանվածների և վիրավորվածների շարքերը լրացնում էին նույն թիմարներն ու ղեկավարները: Ի. Հ. Դանիշմենդի տված տեղեկության համաձայն, թիմարները և ղեկավարները կարող էին տալ մինչև 140—150 հազար ջեբելու<sup>1</sup>:

Ինչպես ստորև ավելի մանրամասնորեն պիտի հիշենք, որոշ էյալեթներ և երկրներ շոճեցին վերոհիշյալ թիմար-զեամեթային կազմակերպությունը: Այդ վայրերի հողերը տրվում էին տեղական բեյերին՝ իբրև սեփականություն, որի համար նրանք նմանապես պարտավոր էին իրենց տրամադրության տակ եղած զինվորներով մասնակցել պատերազմներին:

Օսմանյան կայսրության զինվորական հզորության և ռազմական հաջողությունների մեջ, անիշերիական բանակի հետ միասին, թիմարի և զեամեթների զինվորները՝ ջեբելուններն էլ մեծ դեր են կատարել:

Թիմարի և զեամեթի հողերից բացի, կային նաև.

1. Վակըֆի հողեր, որոնք բավականին կարևոր տեղ էին բռնում:

2. Յուրթլուֆ և օջաֆլըֆի հողեր, որոնք հատկացված էին սահմանապահ և բերդապահ զինվորներին: «Յուրթլուֆ և օջաֆլըֆ»-ի աշարի եկամուտը և կառավարումը պատկանում էր իրենց տերերին և դրա փոխարեն նրանք պարտավոր էին պաշտպանել պետական սահմանները և դեպի սահման բանակ ուղարկվելու դեպքում ծառայել բանակում՝ Սերասքերի տրամադրության տակ: Եթե այդ հողի տերը մահանար, հողը ժառանգաբար անցնում էր նրա որդիներին, որդի չլինելու դեպքում, ընտանիքի անդամներից որևէ մեկին:

Թուրքիայում հնուց ի վեր գոյություն ունեցող հողերի վարչության մասին թուրք պատմագիրները շատ քիչ տեղեկություններ ան տալիս և կարելի է ասել, գրեթե չեն զբաղվում այդ հարցով: «Նեթաիջ-ուլ-Վուկուաթ» (نتایج الوقعات) հայտնի երկրասիրության հեղինակը այդ մասին տալիս է հետևյալ հետաքրքիր ծանոթությունը:

<sup>1</sup> I. H. Danismend, նշվ. աշխ. էջ 60:

«Երբ որևէ Երկիր գրավվում էր, անմիջապես նրա հողը գրանցվում էր, արձանագրվում էր յուրաքանչյուր գյուղի «աշարի» եկամտի քանակը, բնակչության թիվը, քանի տնից բաղկացած լինելը, ինչպես նաև ամեն մի կաղալի կոլեկտիվ կամ առանձին օգտագործած անտառները և մարգագետինները: Օրինակ, եթե սանջակը (լիվա) 100 բեռ՝ ակչեի «աշարի» եկամուտ ուներ և եթե կալին բոլոր տեսակի դիրլիքները՝ 20 բեռը համարվում էր խաս, 10 բեռը՝ դևամեթ, 40 բեռը՝ թիմար, 20 բեռը՝ էվկաֆ, 10 բեռը՝ յուրթյուր և օջաթլըք»<sup>2</sup>:

Օսմանյան պետության որոշ մասերում, գլխավորապես ծալրամասերում վային էյալիթներ և երկրներ, որոնց հողերը խասի, դեամեթի և թիմարի կարգով չէին բաժանված և նրանց աշարի եկամուտը հատկացված էր պետական գանձարանին, որը կոչվում էր «սայանե»: Այդ եկամուտը տրվում էր միրմիրաններին, միրլիվաներին և տեղական զինվորներին («երլի-կուլու»)՝ իբրև «ուլուֆև» (թոշակ, պետական հատկացում), օրինակ, Բաղդադի և Բասրայի էյալիթներում, Եմենում, Հաբեշստանում և այլն, այս սիստեմն էր տիրում:

Փաղիշահներն երբեմն թիմարները տալիս էին վաստակավոր սիփահիներին՝ իբրև սեփականություն, որը փոխանցվում էր ժառանգաբար:

Թիմարի կամ դևամեթի տիրոջ մահանալու դեպքում, եթե նա պատերազմի ունակ որդիներ ուներ, թիմարը անցնում էր նրանց: Եթե որդին անչափահաս էր, ջերելու տալու պայմանով, թիմարը մնում էր նրան մինչև չափահաս դառնալը: Եթե թիմարի և դեամեթի տերը մահանար առանց ժառանգ թողնելու, այդ դեպքում ջերելուներին արժանավորին հանձնելու նպատակով, բեյլերբեյը հատուկ դրություն էր ներկայացնում, որը հաստատվում էր Ստամբուլում: Սակայն եթե անժառանգ մնացած թիմարը վազմեր 15 հազար ակչե, իսկ դեամեթը՝ 30—40 հազար ակչե, այդ դեպքում թիմարի կամ դեամեթի մի մասը տրվում էր ջերելուներին, իսկ մնացածը «թերեթի» (հավելում, բարձրացում) անունով բաժանվում էր

<sup>2</sup> Բեռ (յուլք), Արևելքի շատ երկրներում, ինչպես Թուրքիայում, բեռը համարվում էր նաև դրամական կշիռ և չափ: Բեռի բովանդակությունը իբրև ատրերբվել է ըստ դարաշրջանների: Թուրքական պատմագիրները որոշ նյութերից պարզվում է, որ XV—XVII դդ. Օսմանյան կայսրության մեջ բեռը հավասար է եղել 500 հազար զուրուշի, իսկ զուրուշը 120 ակչեի:

منصوری زاده مصطفی نوزی پاشا، نهایج الوقوعات (دورت جلد) 3  
Յիտատը մեթրերված է Անմեդ-Ռասիմի «Թարիհի Օսմանի»-ից:

احمد راسم، تاریخ عثمان استانبول، جلد 1 ص 720

այլ դիրլիքի տերերի միջև: Եթե սիփահիի թիմարը 20 հազար ալ-  
շեից ավելին լիներ, այդ դեպքում համարվում էր զեամեթ:

Սկզբնական ժամանակաշրջանում, Օսմանյան պետության մեջ  
100 տարին մի անգամ ընդհանուր գրանցում (աթահիր)՝ էր կա-  
տարվում: Սակայն Սուլթան Սելիմ II-ի, (974—982, 1519—1566  
թթ.) ժամանակ տեղի ունեցած ընդհանուր գրանցումից հետո, նոր  
մարդահամար տեղի չունեցավ, որի հետևանքով հողային վարչու-  
թյան տվյալները այլևս անբավարար էին և իբրև հիմք ընդունվեց  
արքունի մուրհակներով (բերաթ) որոշված ակշենների գումարը:

(Հիջրեթի 1000 թ. հետո (1596) մեծ թիմարներն ու զեամեթ-  
ներն ազատ մնալու դեպքում, այլ անձանց չէին տրվում և հա-  
մարվում էին կայսերական գանձարանի սեփականություն: Այդ  
թիմարներն ու զեամեթները ամեն տարի «իթիզամի»<sup>1</sup> (կապալ)  
կարգով տրվում էին «մյուլթեգիմներին» (կապալառու), և նրանց  
եկամուտը մտնում էր պետական գանձարանը: Այդ թիմարները  
կոչվում էին «պետական սահմանվածներ» («մուկարաա-ի միրլիե»):



Օսմանյան պետության վարչական բաժանման մասին խոսե-  
լիս, պիտի նկատի ունենալ նաև, որ կայսրության տերիտորիայի  
և տիրապետությունների հարատև և հաճախակի փոփոխություննե-  
րի հետևանքով, այդ վարչական բաժանումն էլ մշտական փոփոխու-  
թյունների է ենթարկվել: Անտարակույս, դա կապված է, առաջին  
հերթին, օսմանցիների Արևմուտքում և Արևելքում կատարած մեծ  
նվաճումների հետ: Հայտնի է, որ նոր երկրների գրավման պրոցեսը  
հիմնականում շարունակվեց մինչև XVII դ. կեսը, երբ 1683 թ.  
թուրքերը Վիեննայի դռներից հետ մղվեցին, որից հետո սկըս-

<sup>1</sup> Իթիզամ, Իթիզամի կտրգը: Այս կարգը թուրքիայում գարեջր շա-  
բունակ գործադրվել է: Կառավարությունը իր ստանալիք տասանորդի՝ աշա-  
րի (օսմի) և այլ հարկերի հավաքումը, որոշ պայմաններով (գումարը նախա-  
պես պետության գանձարանը մտցնելը, անհրաժեշտ երաշխավորությունը և  
այլն) տալիս էր հատուկ կապալառուներին, որոնք կոչվում էին «մյուլթեգիմ»,  
իսկ կարգը՝ «Իթիզամ»: Ինչպես երևում է «Իթիզամի կարգը» որոշ գարե-  
րում, գործադրվել է նաև թավուր մնացած թիմարների և զեամեթների, ինչ-  
պես նաև որոշ էյալեթների և շրջանների կառավարության վերաբերվող  
եկամուտների նկատմամբ: Իթիզամն ու մյուլթեգիմությունը, որը փաստո-  
րեն շարունակվեց մինչև ներկա գարի սկիզբը, ժողովրդական մասսաների,  
հատկապես գյուղացիության ծանրագույն ճնշման ու հարստահարման ամե-  
նադաժան միջոցն է հանդիսացել:



վեց Օսմանյան Կայսրության քայքայման շրջանը, ըստ թուրք պատմարանների՝ «կանգ առման և նահանջի շրջան» (1579—1792)՝:

Չնայած, որ XVII դ. էլ Օսմանյան Կայսրությունը շարունակում էր իր մշտատև պատերազմները պետության նվազանց և Ասիական մասերում, սակայն նրա պետական սահմանները, համեմատաբար ավելի կայուն էին:

Կայսրության վարչական բաժանման մասին թուրք պատմագիրները շատ ժյատ տեղեկություններ են տալիս: Պաշտոնական աղբյուրների հիման վրա կազմված և ներքևում հիշված Օսմանյան պետության XVII դ. վարչական բաժանման ցուցակը որոշ պատկերացում կտա այդ մասին:

Օսմանյան պետության վարչական բաժանման այդ ցուցակում Արևմտյան Հայաստանի տերիտորիայի գլխավոր մասը՝ էրզրումի, Վանի, Դիարբեքի, Սվադի, Կարսի շրջանները բաժանված էին Արևելյան Անադոլուի էյալեթների մեջ (հետագայում վիլայեթ): Ինչպես երևում է, այդ դարում Բիթլիսն ու Խարբերդն առանձին էյալեթներ չէին, նրանց տերիտորիաները մտնում էին հարևան էյալեթների մեջ իբրև սանջակներ (լիվա):

Ստորև հիշված վարչական բաժանման ցուցակը (էյալեթները և նրանց լիվաները), էյալեթի և սանջակների պետերի (միրմիբան և միրլիվա) տարեկան «օրինական եկամուտը» ակնհերոյ, ինչպես նաև թիմարի և դեամեթի տերերի իրենց «դիրլիքների» եկամտի համաձայն ղինվորական պարտավորությունները (հեծյալ ղինվոր, «չեբելու» տալու պարտավորությունը), մեր կարծիքով, պետք է համարել թուրքիայի XVII դ. վարչական բաժանման համապատասխանող ցուցակ, քանի որ մենք այդ ցուցակները վերցրել ենք երկու արժանահավատ պետական-պաշտոնական աղբյուրներից:

ա) Թուրքիայի արքունական (փադիշահական) դեֆթերխանի պետի՝ Այնի-Ալի-էֆենդիի «օրենքների գրքույկներից»<sup>2</sup>,

<sup>1</sup> SŞ. Afe Hanım (Afet Inan), Türk—Osmanlı tarihinin esas hatlarına bir nazar. Թուրքական պատմության երկրորդ կոնգրեսում արտասանած ճառը:

<sup>2</sup> عینی علی آقندی: قوانین آل عثمان در خلاصه مضامین دیوان (Ալ-Օսմանի օրենքները՝ ըստ Դիվանի համառոտ բովանդակության): Թուրք պատմագիր Ահմեդ-Ռասիմը այս ցուցակը սպառել է իր «Օսմանյան պատմության» մեջ իբրև հավելված,

բ) Ֆերիզուն-Բեյի «Սուլթանների գրություններից» («Մուն-շեաթ-ուս-Սելաթին»)¹:

Յուցակը բերվում է որոշ կրճատումներով և վարչական միավորումների վերագասավորումով (աշխարհագրական սկզբունքով)²:

XVII դ. Թուրքիայի վարչական բաժանումը ներկայացնում է հետևյալ պատկերը:

### I. Օսմանյան Կայսրության Եվրոպական մասի էյալերները

1. Ռումելիի էյալեթը, որի կենտրոններն էին Մանասթր և Սոֆիա քաղաքները (լիվաները). էյալեթն ուներ նաև 23 սանջակ (լիվա): Բեյլերբեյն ուներ տարեկան 1.100.000 աղչեի և միրլիվաները՝ 200—500 հազար աղչեի եկամուտ տվող խասեր: էյալեթում կային 914 զեամեթ և 8360 թիմարներ: էյալեթի գրանցված ընդհանուր եկամուտը 56.800.000 աղչե էր: Զինվորական ուժը՝ դիրլիջների տերերի ջեբելուններով միասին, 33.000 հեծյալների էր հասնում:

Ավելի ուշ, այս էյալեթի կազմում կազմակերպվեցին Սիրիսթերի և Մորայի էյալեթները:

2. Բուսինայի էյալեթն ուներ 8 սանջակ: Բեյլերբեյն ուներ տարեկան 6.500.000 աղչեի, իսկ միրլիվաները՝ 170 հազար աղչեի խասեր. էյալեթում կային 389 զեամեթ և թիմարներ: Ամբողջ էյալեթի գրանցված եկամուտը 12.000.000 աղչե էր: Զինվորական ուժը ջեբելուններով միասին 3000 հեծելազորի էր հասնում:

ريدون بك: منشآت السلاطين، ايكنجي، جلد ۲۰۰-۲۹۰

Այնի-Ալի-էֆենդիի և Ֆերիզուն-Բեյի Օսմանյան կայսրության վարչական բաժանման ցուցակները, ժամանակի տեղակիտից, համընկնում են: Այնի-Ալի-էֆենդիի ցուցակը վերաբերում է) XVI դ. վերջին և XVII դ. սկզբին:

Ֆերիզուն-Բեյի ցուցակը, բերված է Ֆերիզուն-Բեյի հայտնի «Սուլթանների գրությունների» մեջ, որն արժանահավատ թուրք պատմագիր Մելանիկիի վկայությամբ Սուլթան Մուրադ III-ին է ներկայացված 982 թ. (1574) Տե՛ս ۱۲۷ ص ۱۲۷: تاريخ سلاطيني مصطفى: تاريخ سلاطيني ص ۱۲۷. պատմագիրների ցուցակների մեջ կան որոշ տարբերություններ թե էյալեթների և լիվաների թվի և թե անունների մասին: Մենք այդ բացատրում ենք կայսրության տերիտորիայի և վարչական միավորների հաճախակի փոփոխություններով, իսկ անունների անճշտությունն ու աղավաղումը՝ ձեռագրերում արարական տառերով անունները ճիշտ արտահայտելու դժվարությունով (ինչպես հայտնի է թուրք պատմագիրների երկերը դաբել շարունակ միացել են ձեռագիր վիճակում):

Հոգիվածում մենք հիմք ենք ընդունել Այնի-Ալի-էֆենդիի ցուցակը, ծանոթություններում ավելացնելով Ֆերիզուն-Բեյի տվյալները:

3. Թեմեշվարի էյալեթը ուներ 5 սանջակ, որը հետո հասավ 11-ի (նոր նվաճումների հետևանքով): Ավելի ուշ այս էյալեթից կազմվեց նաև Վարադի էյալեթը: Թեմեշվարի բեյլերբեյն ուներ տարեկան զրանցված 8.600.795 աղչեի, իսկ միրլիվաները՝ 190—300 հազար աղչեի խասեր: Բոլոր զեամեթ և թիմարների ընդհանուր եկամուտը 85 բեռ (յուբ) աղչե էր: Զինվորների թիվը՝ 2000 հեծյալ:

4. Բողինի էյալեթը սկզբում ուներ 21 սանջակ, հետո էլ իրեն կանխիմեն մի շարք այլ շիվանների հետ առանձին էյալեթ կազմեցին, իսկ էյվարի նվաճումից հետո 7 սանջակներով մի նոր էյալեթ ևս կազմակերպվեց: Բեյլերբեյն ուներ տարեկան 8 բեռ և 8000 աղչեի, իսկ միրլիվաները ունեին 200—740 հազար աղչեի եկամուտով խասեր: էյալեթում 2720 զեամեթ և թիմարներ կային:

## II. Օսմանյան Կայսրության Ասիական մասի էյալեթները

1. Անադոլուի էյալեթը. Կենտրոնը (փաշայի սանջակը) Քյոթահիան էր: Բաժանվում էր հետևյալ սանջակների՝ Քյոթահիա, Սարուխան, Այդըն, Խուդավենդիկյար. Կաստեմունի, Մենթեշ, Բուլի, Անկարա, Քանդերի, Կարահիսարի-Սահիբ, Թեքե-էլի, Մուլթան-էրնի, Բալլըբեսեր: Բեյլերբեյը ստանում էր տարեկան 10 բեռ աղչե իր խասերից: Միրլիվաներն ունեին 2—6 բեռ աղչեի խասեր: Այս էյալեթում կային 196 զեամեթ և 7166 թիմարներ: Զինվորական ուժը ջեբելունների հետ միասին հասնում էր 17 հազար ձիավորի:

2. Կարամանի էյալեթը. Կենտրոնն էր Կոնիա քաղաքը: Սանջակներն էին՝ Կոնիա, Նիկոբ, Ակարայ, Բեյշահի, Կըրշահիբ, Կայսերի (Կեսարիա), Ակշահիբ: Բեյլերբեյի տարեկան եկամուտը հասնում էր 6 բեռ 65 հազար աղչեի, իսկ միրլիվաների եկամուտը՝ 190 հազարից մինչև 350 հազար աղչեի: Այս էյալեթում կային 116 զեամեթ և 1054 թիմար: Զինվորական ուժը, ջեբելունների հետ միասին հասնում էր 1600 ձիավորի:

<sup>1</sup> Թուրքիայի նվերողական մասում, բացի վերոհիշյալ էյալեթներից, կային նաև Շֆլաքի և Բոզասնի իշխանությունները, Էրզիլի թագավորությունը և Ռազոջեի հանրապետությունը: Մրանք կիսանկախ երկրներ էին և Օսմանյան Կայսրության հետ կապված էին որոշ պայմաններով: Անհրաժեշտ է հիշել նաև Ղրիմի իսխանությունը: Ղրիմի իսխանը նույնպես կիսանկախ էին, միայն իրենց սեփական զինվորական ուժերով հաճախ մասնակցում էին Թուրքական բանակի արշավանքներին և պատերազմական գործողություններին:

3. Ապիտակ ծովի (Միջերկրական) կղզիների էյալեթը. Սան-ջակներն էին՝ Գելիբոլու, Ազրոոզ, Իներախտի, Կարլի-էլի, Բիսթերե, Ռոզոս, Միդիլի, Կոչա-էլի, Բիզա և Սոզլե: Բացի այդ կային նաև «սալյանեի» կարգով՝ Սակըզ, Նեկչե և Մեհդիյե լիվաները: Այս էյալեթը կազմած էր Մովակալության հետ (Կափուղան փաշայություն): Բեյլերբեյի, այսինքն Կափուղան-փաշայի (Մովակալ փաշա) տարեկան եկամուտը 885 հազար, իսկ միրլիվաների եկամուտը 200 հազարից մինչև 440 հազար աղչե էր: Այս էյալեթում կային 126 զեամեթ, 1492 թիմար: Զինվորական ուժը, ջեբելունների հետ միասին 4500 զինվոր էր: Սրանք կոչվում էին «Մովային բաժին» և ծովային արշավանքների էին գնում, իսկ միրլիվաները երկուական նավով ծառայում էին կայսերական նավատորմի կազմի մեջ: Սոզլե սանջակը (Իզմիրը) համարվում էր Թերսանեի՝ քեթխուղայի խասը:

4. Կիպրոսի էյալեթը. Վարչական կենտրոնը՝ Լեֆկոշե, սանջակները՝ Լեֆկոշե, Իչ-էլ, Սիս, Ալայիյե, Թարսուս: Բացի այդ կային սալյանեի կարգով Գերինե, Բաֆ և Մազուսե լիվաները: Բեյլերբեյի տարեկան եկամուտը 6 բեռ, սանջակբեյերի եկամուտը 200 հազարից մինչև 240 հազար աղչե էր: Այս էյալեթում կային 38 զեամեթ և 1627 թիմար: Զինվորական ուժը, ջեբելուններով միասին 4500 զինվոր էր: Կիպրոսի բեյլերբեյին մի նավով և մի օժանդակ նավով պարտավոր էր գնալ ծովային արշավանքների:

5. Զյուվհադերիյեի էյալեթը. Սանջակները՝ Մարաշ, Մալաթիա, Այնթաբ, Կարս<sup>2</sup>-Զուվհադերիյե, Սեմադ: Բեյլերբեյի տարեկան եկամուտը 6 բեռ և 28.450 աղչե, միրլիվաներին՝ 300 հազարից մինչև 500 հազար աղչե էր: էյալեթում 29 զեամեթ և 2140 թիմար կար: Զինվորական ուժը ջեբելուններով միասին 1500 հեծելազորից էր կազմված:

6. Փոքր-Ռումիյեի<sup>3</sup> էյալեթը. Կենտրոնը Սվազն էր: Սանջակները՝ Սվազ (Սեբաստիա), Ամասիա. Զորում, Բոզոք, Դիվրիկի (Տիվրիկե), Զանիկ (Ճանիկ) և Արաբկիր: Բեյլերբեյի տարեկան եկամուտը 9 բեռ, միրլիվաներինը՝ 200 հազարից մինչև 350 հազար աղչե էր. էյալեթում կար 29 զեամեթ և 3020 թիմար: Զինվորական ուժը ջեբելուններով միասին 9 հազար հեծելազոր էր:

<sup>1</sup> Թերսանե՝ ուղղակի նավերի կողակցման վայրը, նավաշինարան:

<sup>2</sup> Կարսը չպիտի շփոթել կայսրության արևելյան սահմանի Կարս բերդաքաղաքի հետ:

<sup>3</sup> Այդ դարում Սվազը կոչվում էր «Ռումիյեի-Սուզրո» (Փոքր Ռումիյե) և հաճախ՝ Ռում:

7. Շամի էյալեֆը. Սանջակները՝ Դեմեշկ (Դամասկոս), Երուսաղեմ<sup>1</sup>, Ղաղե, Սեֆեդ, Ներելս, Աջլուն, Լեշուն, Բակատ, Աքա, Բեդմեր, Սեյդա՝ Բեյրութի հետ, Քետրոք՝ Շեվիքի հետ: Բեյլերբեյըն ունեւ տարեկան մեկ միլիոն աղչեի եկամուտ տվող խասեր, իսկ միրլիվաները՝ 200 հազարից մինչև 360 հազար աղչեի եկամուտ տվող խասեր: էյալեթում կար 128 զեամեթ և 868 թիմար: Զինվորական ուժը 2600 հեծելազորի էր հասնում:

8. Քարապլուսի-Շամի (Տրիպոլի) էյալեֆը. Սանջակները՝ Քարապլուս, Համա, Խումս, Սելմիյե և Զերլիյե: Բեյլերբեյի տարեկան եկամուտը հավասար էր 8 բեռ աղչեի, իսկ միրլիվաներին՝ 200 հազարից մինչև 390 հազար աղչեի: էյալեթում կար 63 զեամեթ և 570 թիմար: Զինվորական ուժը ջերելուներով միասին 1400 հեծելազորի էր հասնում:

9. Հալեպի էյալեֆը. Սանջակները՝ Հալեպ, Ադանա, էքրադ, Քիլիս, Բիրեջիք, Ազիզ, Մաարե, Քուրքման, Ադադ, Միթիջ՝ Մեզիքի հետ: Բեյլերբեյի տարեկան եկամուտը 817 հազար, միրլիվաներին՝ 200 հազարից մինչև 500 հազար աղչե էր: էյալեթում կար 400 զեամեթ և 700 թիմար: Զինվորական ուժը ջերելուներով միասին 2500 հեծելազորի էր հասնում:

10. Ռակայի էյալեֆը. Փաշայի սանջակը Ուրֆան էր: Սանջակները՝ Ուրֆա (Ուհա, Եդեսիա), Զեմասե, Խաբուր, Դիրբեհե, Բենի-Րարիյե, Սերուշ, Անե: Բեյլերբեյի տարեկան եկամուտը 680 հազար, միրլիվաներին՝ 100 հազարից մինչև 280 հազար աղչե էր. էյալեթում 37 զեամեթ և 616 թիմար կար: Զինվորական ուժը ջերելուներով միասին 1600 հեծելազորի էր հասնում:

11. Մուսուլի էյալեֆը. Փաշայի սանջակը Մուսուլն էր: Սանջակները՝ Բաջվանեու, Քեքրիթ, էսքի-Մուսուլ, Հորեն, Բանե: Բեյլերբեյի տարեկան եկամուտը գոյանում էր 680 հազար, միրլիվաներին 200 հազարից մինչև 220 հազար աղչեի խասերից. էյալեթում 274 զեամեթ և թիմար կար:

12. Բաղդադի էյալեֆը. Սանջակները և «հյուլբումեթները» Բաղդադ, Հելե, Զենկի-Արադ, Զեվարեզ, Ռեմահիյե, Զենգուլե, Կարադադ, Դերթենկ, Սեմավաթ, Բիյաթ, Դերեն, Դերալա, Վասեթ, Քերենդ, Քիմուր-Կափու, Կեզանեյի, Կիլան, Ելսայի, Ամադիյե: Բաղդադի բեյլերբեյի տարեկան եկամուտը 1.400.000 աղչե էր, իսկ նրա լիվաների մի քանիստ, թեև խասեր և ումերաներ կային, սակայն մեծ մասը սալյանեյի կարգով էին կառավարվում:

<sup>1</sup> Երուսաղեմը Քուրքեբենով Կուտու-ի Շեքիֆ էր կոչվում:

13. Բասրայի էյալեթը. Սուլթան Սուլեյման-խանի ժամանակ  
երբ Բաղդադը գրավվեց, Բասրայի էմիրը՝ Ռաշիդը հպատակու-  
թյուն ցույց տվեց և էյալեթը նրան տրվեց՝ իբրև «հյուպոթեթ»<sup>1</sup>,  
բայց որոշ ժամանակ հետո պետության կողմից միրմիրաններ  
նշանակվեցին իլթիզամի կարգով, որի եկամուտը հասնում էր 10  
բեռ ակչեի:

14. Տրապիզոնի էյալեթը. Սանջակները՝ Տրապիզոն, Բաթում  
և Քունիս: Բեյլերբեյի տարեկան եկամուտը կազմված էր 744.850  
ակչեի խասերից: էյալեթում 56 զեամեթ և 498 թիմար կար: Զին-  
վորական ուժը ջերելուներով միասին 1750 հեծելազորի էր հաս-  
նում:

15. Էրզրումի էյալեթը<sup>1</sup>. Սանջակները՝ Էրզրում, Կարահիսարի-  
Շարքի, Քըղի (Կեղի), Խնուս, Վերին-Բասեն, Մանաղկերտ, Քեք-  
ման, Կոզի-ջան (Ղուզուջան, Ընձուր), Իսփիր (Սպեր), Քորթում.  
Ստորին Բասեն, Մամրվան: Բեյլերբեյի տարեկան եկամուտը 1.214  
հազար, իսկ միրլիվաներին՝ 100 հազարից մինչև 320 հազար ակչե  
էր: էյալեթում կար 120 զեամեթ, 5195 թիմար: Զինվորական ուժը  
ջերելուներով միասին 7.800 հեծելազորից էր կազմված:

16. Վանի էյալեթը. Սանջակները՝ Վան, Աղիլչեվաղ (Արծկե),  
էրջիշ (Արճեշ), Մուշ (Տաբոն), Բաբկիրի (Բերկիրի), Կարկար, Քե-  
սանի (Կեծսն), էսյարբերդ (Սպարկերտ), Աղաքես, էքրադ, Բենիկո-  
թուր (Կոտոր), Բայազեդի բերդը, Բերդա (Բերդակ), Օվաջիք: Բեյ-  
լերբեյի տարեկան եկամուտը կազմված էր 1 միլիոն 32 հազար,  
միրլիվաներին՝ 200 հազարից մինչև 420 հազար ակչեի խասերից:  
Այս էյալեթում կար 199 զեամեթ և 916 թիմար:

17. Դիարբեքիրի էյալեթը. Փաշայի սանջակը Ամեդ (Ամիդ).  
այսինքն Դիարբեքիրն էր: Սանջակները՝ Խարփուտ (Խարբերդ),  
Արզնի, Սիվրիք, Նեսիբին (Մծբին), Հիսնքիֆ, Զմշկեզք (Զմշկա-  
ծազ), Ասիրդ (Սղերդ), Մեֆարկին (Նփրկերտ), Ակչակաբա, Սև-  
ջար, Խարուր, Սեֆման (Սաղման), Կուլեբ (Խուլիփ), Մեհրան, Քեր-  
ջիլ, Օթաք, Փերնեք, Զապակչուր (Ճապաղչուր) և Զերմիք (Զերմուկ):  
Բեյլերբեյի տարեկան եկամուտը կազմված էր 1 միլիոն 200 հա-  
զար, իսկ միրլիվաներին՝ 100 հազար ակչեից մինչև 500 հազար  
ակչեի խասերից: Այս սանջակներից 8-ը գտնվում էին քուրդ բեյերի  
իշխանության ներքո՝ «յուրթլուքի» և «ջաքլըքի» վարգով: Բացի  
այդ, կային նաև 400-ից ավելի քուրդ աշիրեթների բեյեր, որոնք

<sup>1</sup> Արևմտյան հայաստանի և հայաբնակ շրջանների վարչական միա-  
վորների թուրքական անունների հետ, բոտ հնարավորությամբ, տալիս ենք  
նաև հայկական-պատմական անունները (փակագծում):

միրյիվալի բեւերի նման թուղի գրողակի տեր չէին, այլ պարզապես ղեամեթի տերեր չին համարվում:

18. Կարսի էյալեքը. Սանջակները՝ Կարս, Խահջվան, Չարուշատ (Չարիշատ), Քեջվան (Կեշուան), Կաղըղման (Կաղղվան), Շորաշայի (Շիրակի) հետ: Բեյլերբեյի տարեկան եկամուտը 820 հազար, միրյիվաներին 200 հազարից մինչև 400 հազար ակչե էր: էյալեթում կար 1200 թիմար և ղեամեթ:

19. Չրլդրի էյալեքը. Սանջակները՝ Չրլդր, Սլթի (Ուղթի), Խերթուշ (Խերթվիս), Արդթուշ (Արտանուշ), Արդահան, Հաչրեբ, Փոսխով (Փոցխով), Մախշել (Մահախելի), Աջարա, Փենեբ (Բանակ), Բերթբեր (Բերդադարակ), Լիվանե, Նրսֆի-Լիվանե, Շեվշատ (Շավշեթի): Բեյլերբեյի տարեկան եկամուտը 925 հազար, միրյիվաներին՝ 200 հազար ակչեից մինչև 600 հազար ակչե էր: Բերթբերը, Լեվանեն, Նրսֆի-Լեվանեն և Շեվշադը կառավարվում էին իբրև «յուրթուր» և օջաքլըբ: էյալեթում կար 97 ղեամեթ և 559 թիմար: Զինվորական ուժը ջեբեղունների հետ միասին հասնում էր 1800 հեծելազորի:

Ասիական մասի վարչական միավորների շարքում պետք է հիշել նաև Արաբական թերակղզում՝ ա) Հիջազի Շերիֆությունը: Շերիֆ էին կոչվում նրանք, ովքեր, ըստ ավանդության, իսլամական կրոնի հիմնադիր Մուհամմեդ փեյգամբերի (մարգարե) ցեղից էին սերում: Այսպես, Մեքքեի կառավարիչը կոչվում էր Մեքքեի շերիֆ: Մեքքեի և Մեդինեի իշխանությունները նույն հիմունքներով կոչվում էին շերիֆություններ: բ) Եմենի էյալեքը՝ 9 լիվաներով: Մի ժամանակ Ադենը առանձին բեյլերբեյություն էր վազմել: Սակայն անհրաժեշտ է նշել, որ Արաբական թերակղզու այս մասերում, Հիջրեթի 1000 թվականից հետո (XVI դարի վերջերից), Օսմանյան պետության իշխանությունը անվանական բնույթ ունեւոր, փաստորեն իշխում էին տեղական իմամները:

Օսմանյան Կայսրության Ասիական մասում հիշված էյալեթները շատ մեծ տերիտորիաներ էին ընդգրկում: Այդ էյալեթների մի քանիստում, գլխավորապես երկրի ծայրամասերում և կամ հեռավոր լեռնային շրջաններում, Օսմանյան Կայսրության վարչական իրավունքները յուրատեսակ ձև տնեին: Այդ էյալեթների բազմաթիվ լիվաները, որոնք կոչվում էին «օջաքլըբ», «Յուրթուր» և «օջաքլըբ» և «ճյուղումեթ», որոշ իրավունքներ էին վայելում: Օսմանյան պատմագիրների և Ֆերիդուն-Բեյի նշումներից երևում է, որ վանի էյալեթի

<sup>1</sup> Թուզ էր կոչվում ձիու պոչի մազերից պատրաստված հատուկ սլաակի նշանը:

հարվում, Դիարբեքիրի էյալեթի սահմաններում, քրդական շրջանները համարվում էին «հյուժումեթ», այսինքն կիսանկախ, ավտոնոմ շրջան: Օրինակ, Դիարբեքիրի էյալեթում հիշվում են հետևյալ «հյուժումեթները»՝ Ջիզիրե, էքիլ, Գենջ, Փալու, Հեզո: Իսկ իբրև «Յուրթլուք և օջաքլուք»՝ Սեղման, Կուլբե, Փերթեք, Ջապաքջուր Ջերմիք: Վանի էյալեթում «հրաժարեցման ենթակա շեղող հյուժումեթները» ըստ էվլիյա-Չելեբիի հետևյալներն էին՝ Հեքթարի-Բիթլիսի, Մահմուդիի և Փինյանեշի հյուժումեթները, որոնց մասին ուղեգիրը հաղորդում է խիստ հետաքրքիր տեղեկություններ: Հյուժումեթներ չկային նաև Բաղդադի վիլայեթում:

Սրանք են Օսմանյան Կայսրության Ասիական մասի վարչական միավորները<sup>2</sup>:

III. Օսմանյան պետության Աֆրիկյան տերիտորիայում կային հետևյալ վարչական միավորները՝

ա) Հաբեշի (Հաբեշստանի) էյալեթը. որն իբրև միանվագ վճայ (սալյանե) տարեկան տալիս էր 11 բեռ և 80 հազար ալկե:

բ) Կայսերական Եգիպտոսի էյալեթը, որն ըստ Ֆերիզուն-Բեյի, բաժանվում էր 15 սալյանեի միավորի և մեկ լիվայի, իսկ ըստ Այնի-Ալի-էֆենդիի՝ 15 սանջակների: Տարեկան 487 քիսե սալյանե էր տալիս:

<sup>1</sup> اوليا جليبي: اوليا جليبي سيا حتامهسى، جلد 6، ص 188-171 85  
Օսմանյան Կայսրության Ասիական մասի էյալեթների ցուցակներում մեր հիշած երկու ազգյուրների սվյալները քիչ են տարբերվում: Ֆերիզուն-Բեյը հիշում է նաև Շեհերի-Չոբի էյալեթը (Ց լիվաներով): Այնի-Ալի-էֆենդիի ցուցակում հիշված Ջուլիկադերեյի էյալեթը Ֆերիզուն-Բեյի մոտ կոչվում է Մաբաշի էյալեթ:

Եբզրումի էյալեթի կազմում կան բավականին մեծ տարբերություններ: Էյալեթի լիվաների թվում Ֆերիզուն-Բեյը հիշում է նաև Բայազետի բերդը (որն Այնի-Ալիի ցուցակում Վանի էյալեթումն է հիշված) և Ալաշիբատի լիվան: Բասենը հիշվում է իբրև մեկ լիվա, առանց Վերին և Սուրբին-Բասենի բաժանման:

Չբլզբի էյալեթում Ֆերիզուն-Բեյի հիշած լիվաները թվով ավելի շատ են, որը բացատրվում է այդ էյալեթի սահմանների հարափոփոխ լինելովը: Ֆերիզուն-Բեյը հիշում է նաև Ալթուն-Կալայի, Սուրբին Աջաբայի և Մեհրեքի լիվաները:

Կարսի էյալեթում Ֆերիզուն-Բեյը հիշում է նաև Փոքր-Արզահանի և Բեուլեի լիվաները:

Վանի էյալեթում Ֆերիզուն-Բեյը հիշում է նաև Բիթլիսը՝ իբրև «հյուժումեթ», Հեքթարիի և Մոկսի լիվաները, Բերզայի, Աղաքեսի, Բենի-Կոթուրի լիվաները չկան Ֆերիզուն-Բեյի ցուցակում:

Դիարբեքիրի էյալեթում, Այնի-Ալի-էֆենդիի հիշած 19 լիվաները Ֆերիզուն-Բեյի ցուցակում հասել են 22 լիվայի:



դ) Արևմտյան Թաւաբլուսի. Թունիսի և Ջեզայիւրի (Ալժիր) էյալեթները, որոնք կոչվում էին «Արևմտյան օջաքներ» (Ղարբ օջաքլարը): Սրանք ևս կիսանկախ երկրներ էին:

Ինչպես նշել ենք, Թուրքիայի վարչական այս բաժանումը, հիմնականում վերաբերում է Հիջրեթի X դ. վերջին և XI դ. սկզբին (XVI դ. վերջին և XVII դ. սկզբին): Այդ բաժանումը հիմնական փոփոխությունների է ենթարկվել հատկապես հաջորդ դարերում, Օսմանյան Կայսրության անկման և քայքայման դարաշրջանում:

XVII դ. հետո Թուրքիայի վարչական բաժանման մեջ տեղի ունեցած փոփոխությունների ուսումնասիրությունը դուրս է մնում մեր այս հոդվածի սահմանից:

А. Х. САФРАСЯН

АДМИНИСТРАТИВНОЕ ДЕЛЕНИЕ ОСМАНСКОЙ  
ИМПЕРИИ В XVII ВЕКЕ

Резюме

По материалам официальных турецких документов в статье рассматривается административное деление европейской, азиатской и африканской территорий обширной Османской империи XVII века; указывается, что наряду с основными административными единицами (эялет, лива или санджак) были и полунезависимые ханства, шерифства, хокуметы и т. д.

Тесно связанное с военно-феодальной структурой Османской империи административное деление было основано на земельной, налоговой и военной организациях. В этой связи в статье рассматриваются турецкие военно-феодальные институты (тимар, зеамет, хасс) и связанные с ними налоговые и военные обязанности.

Б. Л. ЧУГАСЯН

ЛЕГЕНДА О БЮРАСПИ АЖДАХАКЕ ПО МОВСЕСУ  
ХОРЕНАЦИ

Армянская словесность с самого своего зарождения содержит богатые данные не только по истории и культуре Армении и армянского народа, но и многих народов Ближнего Востока.

Армянский народ на протяжении многих веков жил по соседству с Ираном и его народами. Это обстоятельство наложило свой глубокий отпечаток как на политическую судьбу армянского народа, так и, в равной степени, на различные стороны его культурной и духовной жизни: язык, быт, нравы, обычаи, народные верования.

Многосторонние связи армянского и иранских народов нашли свое отражение во многих памятниках духовной культуры и произведениях армянских писателей раннего средневековья.

Так, в исторических трудах Агатангелоса, Фавстоса Бузанда, Езника Кохбаци, Мовсеса Хоренаци, Себеоса, Иоанна Мамиконяна и других армянских писателей в аспекте армяно-иранских политических отношений мы нередко сталкиваемся с прямым или косвенным указанием о литературно-фольклорных взаимоотношениях обоих народов.

Лучшим трудом о ранних литературных связях армянского и иранских народов следует считать исследование проф. К. А. Мелик-Оганджяна «Фирдоуси и иранские эпические мотивы в «Шах-наме» и древнеармянской литературе» в сборнике «Фирдоуси»<sup>1</sup>, который был опубликован в связи с празд-

<sup>1</sup> *Ֆիրդուսի, ժողովածու* (Сборник „Фирдоуси“), Ереван, 1934 г., содержит: 1. К. А. Мелик-Оганджяна. Фирдоуси и иранск. эпическ. мотивы

нованием в Ереване тысячелетнего юбилея Фирдоуси. Труд проф. Мелик-Оганджяна является первым более или менее обстоятельным исследованием в арменоведении, в котором автор уделяет особое внимание выявлению общностей и различий, имеющих, с одной стороны, между эпическими сказами иранских народов, сохранившимися в древнеармянской литературе (Агатангелос, Фавстос Бузанд и Хоренаци) и в фольклоре нашего народа, и пехлевийскими письменными источниками «Шах-наме» Фирдоуси. — с другой. Подобное сравнение дало автору возможность выявить отдельные страницы культурных, в частности литературных, связей соседних народов.

В политической и общественной жизни Древнего Востока активную роль сыграли иранские народы<sup>1</sup>, которые вместе с политическим могуществом обладали и богатой культурой. «Авеста» — ценнейшая сокровищница духовной культуры мирового значения, ряд литературных пехлевийских источников последующих веков и позднее вся ираноязычная литература являются богатейшим первоисточником по мифологии, эпосу и реальной истории народов Древнего Востока. Однако не меньшую ценность представляют свидетельства и факты относительно истории и культуры иранских народов, их религиозных представлений и легенд, сохранившиеся в литературных памятниках и народном эпосе других не ираноязычных народов Востока.

Тщательное сравнение фактов, сохранившихся в литературных памятниках соседних народов и детальное исследование их дают возможность сделать новые и интересные выводы.

Ценные факты по истории и культуре иранских народов сохранились также у древнеармянских писателей и в армян-

в „Шах-наме“ и древнеармянск. литературе (стр. 1—116); 2 М. Абебян. Стихотворн. размер „Шах-наме“ в армянск. поэзии (стр. 117—128); 3. Г. Левонян. Фирдоуси в армянск. литературе (библиография), стр. 129—143; 4. А. Шахназарян. Одна из рукописей „Шах-наме“ Гос. Музея Армении, стр. 147—155; 5. „Ростем-Зал“ — один вариант армяно-иранск. эпоса на армян.-нарекском наречии, с предисловием К. Мелик-Оганджяна, стр. 157—230.

<sup>1</sup> Под иранскими народами надо понимать ираноязычные народы населявшие территории современного Ирана, Советского Таджикистана и т. д.

ском фольклоре. Наиболее раннее упоминание имени Ростама—одного из любимейших и прославленных героев Востока—среди известных нам литературных памятников принадлежит Мовсесу Хоренаци. «Имя Ростамы,—пишет один из лучших знатоков восточной литературы Э. Браун,—один или два раза встречается только в пехлевийских рукописях позднего периода, меж тем его богатырские подвиги были известны армянину Мовсесу Хоренаци»<sup>1</sup>.

Вновь обнаруженные согдийские фрагменты о Ростаме и его коне Рахше относятся ко времени не более раннему, чем «История» Хоренаци. Армянскому историку известно место происхождения Ростамы и его легендарная сила: «...Персы рассказывают о Ростаме Сагчике, уверяя, что он обладал силою ста двадцати слонов»<sup>2</sup>.

Как известно, Хоренаци наряду с записью древнеармянских эпических сказаний, по настоятельной просьбе и заказу своего молодого мецената князя Саака Багратуни, повествует и о персидских сказаниях, что также является наиболее ранней записью иранских сказов.

Факты фиксации этих сказаний у Хоренаци доказывают, что уже в V веке иранские легенды пользовались в Армении популярностью. Иначе и быть не могло, ибо, как пишет Н. Адонц, «Армения в целом, вовлеченная издревле в сферу мировой политики персидских государств, столетиями вращалась в одинаковом с персами культурном мире. С тех пор как Аршакиды захватили Персию и их младшая линия утвердилась в Армении, общественно-бытовая связь обеих стран стала еще теснее»<sup>3</sup>.

Приходится сожалеть, что Хоренаци из иранских легенд и сказов мало что записал, хотя приводимые им же самим факты показывают, что и в этой области он был достаточно осведомлен, тем более, что у него под рукой имелись и письменные персидские источники<sup>4</sup>. Принципы ученого и мыслите-

<sup>1</sup> Edward G. Brown, *A Literary History of Persia from the Earliest Times until Firdawsi*, London, 1902, стр. 117. Это свидетельство приобретает еще большую ценность, поскольку Хоренаци, живший в V в., был известен Брауну как писатель VII в.

<sup>2</sup> История Армении Моисея Хоренского, новый пер. Н. О. Эмина, Москва, 1893, стр. 59 (в дальнейшем *Мовсес Хоренаци*).

<sup>3</sup> Н. Адонц, *Армения в эпоху Юстиниана*, СПб, 1908, стр. 211.

<sup>4</sup> См. *Мовсес Хоренаци*, стр. 97, 116—117.

ля, а также политическая ориентация на Грецию ставили Мовсеса Хоренаци в определенные рамки, не давали ему развернуться, иначе сегодня мы имели бы обширные сведения относительно армяно-иранских культурных и литературно-фольклорных связей.

В «Истории Армении» Хоренаци из иранских сказаний повествуется легенда о Бюраспи Аждахаке и Феридуне. Она не имеет никакой связи с историей армянского народа и потому помещена в конце Первой книги его исторического труда в качестве приложения. Здесь Хоренаци чрезвычайно лаконичен, немногословен, весьма содержательную легенду рассказывает в нескольких строках, не отклоняется от основного содержания сказа, сохраняя основную канву его развития, яркую народную гиперболу.

Первая часть приложения «Из персидских сказаний» в Истории Хоренаци была впервые исследована талантливым переводчиком «Истории» на русский язык, крупным арменоведом Н. Эмном, который еще в середине прошлого столетия в своем ценном исследовании «Эпос древних армян»<sup>1</sup> подверг сравнительно-лингвистическому анализу данные «Истории» Хоренаци и соответствующие им эпизоды «Шахнаме» Фирдоуси («Зохака»).

В 1883 г. вышла в свет интересная статья акад. Вс. Ф. Миллера «Кавказские предания о великанах, прикованных к горам»<sup>2</sup>. Здесь автор в числе других легенд обратился также к рассказанным Хоренаци легендам о Бюраспи Аждахаке, Артавазде и к легенде о Зохаке в «Шахнаме» Фирдоуси.

В связи с празднованием тысячелетия со дня рождения Фирдоуси вопрос армяно-иранских литературных связей сделался предметом широкого обсуждения как в армянской периодической печати, так и в отдельных монографиях; особенно в центре внимания находились сообщения Хоренаци об иранских легендах.

Профессор Тегеранского университета, иранист Р. Абрамян в 1934 г. в I томе своего труда «Фирдоуси и его

<sup>1</sup> Н. Эмин, Эпос древних армян, Москва, 1850, стр. 50—75 (на древнеарм. яз.).

<sup>2</sup> Вс. Миллер, Кавказские предания о великанах, прикованных к горам, «Журнал Министерства народного просвещения», ч. ССХV, 1883, стр. 100—116.

«Шахнаме» чрезвычайно кратко, как говорит сам автор, «не претендуя на полноту труда», но лишь с намерением вызвать интерес к сравнительному изучению эпоса, отмечает отдельные общности армянского эпоса «Сасна Црер» и «Шахнаме»<sup>1</sup>.

В том же году в Ереване в вышеупомянутой статье К. Мелик-Оганджяни в числе прочих вопросов бегло останавливается и на легендарном эпосе Аждахак—Артавазд—Шидар, «оставляя на будущее основательное и тщательное исследование»<sup>2</sup>.

Наличие иранских народных сказаний в Истории Хоренаци послужило камнем преткновения для Сарухана<sup>3</sup> и заслуженного арменоведа Н. Акиняна, которые пытались и этими сказаниями обосновать свои неприемлемые взгляды относительно времени жизни Хоренаци.

Н. Акинян разделом «Из парсийских сказаний» «Истории» Хоренаци основательно занялся в своих исследованиях: «Бюраспи Аждахак и коммунист Маздак в армянском легендарном эпосе согласно Мовсесу Хоренаци» и «Еще раз о Маздаке и Мовсесе Хоренаци»<sup>4</sup>, где автор подобно Эмину подверг сравнительно-лингвистическому анализу легенду о Бюраспи Аждахаке, сравнивая ее с сообщаемым Фирдоуси сказанием о «Зохаке», и пришел к выводу, что Хоренаци спутав имя Аждахака с Маздак-Маждаком, учение последнего приписал Аждахаку.



Согласно Хоренаци, персидские легенды не скрывают в себе истины в аллегорической форме, как «изыщенные и выложенные» греческие мифы, однако, не желая отказать просьбе Саака Багратуни, он рассказывает о Бюраспи Аждахаке следующее:

<sup>1</sup> См. Р. Абрамян, Фирдоуси и его Шах-наме, т. 1, Тегеран, 1934, стр. 141—144 (на арм. яз.).

<sup>2</sup> См. Фирдоуси, Сборник, посвященный тысячелетию со дня рождения поэта, Ереван, 1934, стр. 97—100, на арм. яз. (в дальнейшем Фирдоуси, Сборник).

<sup>3</sup> См. „Андес амсорья“, 1935, стр. 1—24 и 175—185 (на арм. яз.).

<sup>4</sup> Там же, 1936 г., стр. 1—21 и 349—351 (на арм. яз.).

«И что за страсть у тебя к нелепой и чудовищной басне о Бюраспи<sup>1</sup> Аждахаке; и зачем это ты заставляешь нас повторять нескладные, бессвязные. (скажу более), бессмысленные сказания Парсов о недобром, первом благодетеле Бюраспи; о служении ему дэвов; о том, что они, не будучи в силах совратить совершенного и лукавого, (добиваются) у Бюраспи (позволения) целовать у него плечи, на которых вырастают драконы. С этой минуты к злодеяниям присоединяется еще истребление людей для его чрева; а там и Хруден, заключив его в медные оковы, уводит на гору, называемую Дмбавендом. Хруден дорогой засыпает; Бюраспи тащит его на холм; Хруден, проснувшись, ведет его в одну из горных пещер, сажает его на цепь и сам статуем становится против него. Бюраспи, пораженный ужасом, повинуется оковам и не может выйти и опустошить землю»<sup>2</sup>.

В своей поэме «Шахнаме» Фирдоуси посвятил этому сказанию целую главу под названием «Зохак».

Согласно Фирдоуси Зохак был сыном господствовавшего где-то в Аравии и прославившегося своими добрыми делами Мардаса, или Мердаса. По наущению Иблиса (сатаны) Зохак убивает отца и захватывает власть; далее, обольщенный тем же Иблисом, который появляется в образе молодого человека, он ест запрещенное религией мясо. Сатана за свои услуги просит награды—позволения поцеловать его плечи<sup>3</sup>. Зохак соглашается, но из тех мест, которые поцеловал Иблис, вырастают два вишапа. Сатана немедленно исчезает и затем появляется в образе врача; он советует Зохаку кормить вишапов человеческими мозгами, дабы не пре-

<sup>1</sup> В армянском тексте Хоренаци это имя написано в форме *Բյուրասպի* (Бюраспи) > род. п. *Բյուրասպիայ* (Бюраспя), в то время как Н. Эмин при переводе использовал знакомую ему иранскую форму *Бюрасп*. Приводя цитаты из перевода Эмина без изменений, мы лишь восстановили именную форму Бюраспи, сохранившуюся у Хоренаци.

<sup>2</sup> *Мовсес Хоренаци*, стр. 48.

<sup>3</sup> В древнем мире и в последующие времена было принятым обычаем, чтобы рабы в виде гарантии своей верности целовали и плечи своего господина. В „Одиссее“ рассказывается, что, когда Одиссей после 20-летних странствований вернулся домой, преданные ему рабы,—коровник Филотий и свинопас Эвмей,—узнав своего господина, горячо целуют „его голову, плечи“ (*Гомер, Одиссея*, перевод В. А. Жуковского, Москва, 1935, стр. 246).



терпеть вреда от них. И вот, ежедневно приносят в жертву двух человек, чтобы насытить вишапов. В это самое время иранцы восстают против Джамшида, четвертого царя Пишлада и приглашают Зохака в Иран царствовать. Деспотия Зохака в Иране длится 1000 лет (без одного дня), народ под руководством кузнеца Каве поднимает восстание и провозглашает царем 16-летнего Феридуна из рода Джамшида. Последний преследует и захватывает обратившегося в бегство деспота и уже намеревается убить его, когда появляется посланец небес Срош и советует Феридуну отвезти и приковать его в одной из пещер горы Демаванд. Победоносный царь так и поступает<sup>1</sup>.

Сравнение этого сохранившегося у Хоренаци и Фирдоуси сказания доказывают:

Արխիվային նյութերի և գոկումենտների բազմակողմանի ուսումնասիրության հիման վրա, ինչպես իրավամբ նշում են ժամանակակից թուրք պատմաբաններն ու տնտեսագետները, հնարավոր և անհրաժեշտ է գրել Թուրքիայի պատմությունը նոր և գիտական հիմունքներով, ուսումնասիրել և լուսաբանել Օսմանյան կայսրության և նրա կազմի մեջ մտնող երկրամասերի սոցիալ-տնտեսական կյանքը՝ իր բոլոր կողմերով:

Սակայն Թուրքիայում այս խնդիրը իրապես կենսագործվում է ոչ գիտական հիմունքներով:

Թուրքական Պատմության Ընկերությունը հենց սկզբից իր գործունեության հիմք և ղեկավարող սկզբունք ընդունեց «Թրքությունը».

<sup>1</sup> «Tarih»-ի I հատ. պարունակում է նախապատմական և էին ժամանակների, II հատ. միջին դարերի, III հատ. նոր ժամանակների, IV հատորը. Թուրքական Ռեսպուբլիկայի պատմությունը:

կամ «Թուրքիզմը» («Türkçülük»), այսինքն պանթուրքիզմի, թուրքական նացիոնալիզմի և շովինիզմի գաղափարների բազմակողմանի զարգացումը և արմատավորումը պետական-հասարակական, դրական-գիտական օրգաններում և թուրք ժողովրդի ազգային դաստիարակության գործում:

Մրա հետևանքով Թուրքիայում հնարավորություն ստացան գրելու և հրատարակելու միայն բուրժուական մոլի նացիոնալիզմով ներծծված գիտնականները և անասելի ծանր դրության մեջ դրվեցին պրոգրեսիվ, դեմոկրատական, օբյեկտիվ մտեցում ունեցող մտավորականները, որոնց ելույթը համարյա թե բացառված է ժամանակակից Թուրքիայում:

Միանգամայն պարզ է, որ այսպիսի պայմաններում չափազանց դժվարացել է ընդհանրապես դեմոկրատական տարրերի գործունեությունը և աշխատավոր մասսաների դաստիարակության կարևոր բնագավառը գտնվում է բուրժուական նացիոնալիստների ձեռքում: Այս ասպարեզում բավական աննախանձելի դեր են կատարում նաև թուրք պատմաբանները:

Թուրքական Պատմության Ընկերությունը իր երեք տասնամյա գործունեության ընթացքում կազմել և հրատարակել է բազմաթիվ աշխատություններ, որոնց թվում վերևում հիշված «Պատմություն» («Tarih») կոլեկտիվ աշխատությունը շորս հատորով, որը հանդիսանում է թուրք պատմության ուղեցույցը և որի մեջ տրվում է այդ պատմագրության հիմնական կոնցեպցիան՝ «Թրքությունը»:

«Թարիհ»-ի հեղինակներ՝ Ընկերության ներկայացուցիչները և «Թրքություն» իդեոլոգները փորձում են «ապացուցել», որ թուրքերը նաև իսլամում են աշխարհի ամենաբնագույն ժողովուրդը, աշխարհի ամենաբնագույն կուլտուրայի հիմնադիրները և օտարածողները:

«Թարիհ»-ի IV հատորի սկզբում կարգում ենք՝ «Մարդկության պատմության մեջ երբեք գոյություն չի ունեցել թուրքերի նման բազմաթիվ և մեծ պետություններ ստեղծող մի ցեղ: Թուրքերն են հիմնել Ասիայում և Եվրոպայում իշխանությունների, թագավորությունների և կայսրությունների մեծ մասը»:

«Թարիհ»-ի հեղինակները ճգնում են ապացուցել այն միտքը, որ իբր թե մարդկային ճաստակութունը ու կուլտուրայի պատմությունը սկսվում է թուրքերով: Այդ միտքը կարմիր թելի նման անցնում է «Թարիհ»-ի բոլոր շորս հատորներում:

Թուրքական Պատմության Ընկերության և Թուրքիայի Լու-

<sup>1</sup> «Tarih», c. 4, s. 1.

սավորութեան մինիստրութեան կողմից 1932 թ. կազմակերպված թուրքական պատմութեան առաջին կոնգրեսում Լուսավորութեան մինիստր էսադ բելը իր բացման ճառում, նշելով «Թարիհ»-ի իբրև թուրքական և ընդհանուր պատմութեան նոր դասագրքի մեծ ու բացառիկ դաստիարակչական նշանակութիւնը, ասաց հետևյալը. «Այլ վայրերում, երբ մարդիկ ապրում էին դեռևս անտառներում և քարայրներում, Միջին Ասիայում թուրքերը պարապում էին ատաղձի և մետաղների մշակութամբ, նրանք ընտելացրել էին կենդանիներին և հողամշակութամբ էին պարապում... Միջին Ասիայից տեղափոխվելուց հետո, նրանք տարածեցին քաղաքակրթութիւնը և այդպիսով հիմք դրին Ասիայում չինական և հնդկական քաղաքակրթութիւններին, իրենց նվիրական հայրենիք դարձած Անատոլիայում՝ էթիոպիայի, Միջագետքում՝ Սումերների և էլամների, և վերջապես եգիպտական, միջերկրածովային և հռոմեական քաղաքակրթութիւններին և այդ կերպով այսօր բարձր քաղաքակրթութեան հասած Եվրոպային ազատեցին քարայրային կյանքից... Բոլոր դարաշրջաններում հրաշքներ ստեղծող թուրք ազգը, այս նոր դարաշրջանում էլ, ստեղծելով իր ռեսպուբլիկական կառավարութիւնը, վարչական, քաղաքական և հասարակական քաղաքակրթութեան ասպարեզներում աշխարհի ամենամեծ ռեալիզացիան է իրականացրել»<sup>1</sup>:

Լուսավորութեան մինիստրի ճառում արտահայտված մտքերը հիմնավորելու համար Թուրքիայի պատմութեան առաջին և հետագա չորս կոնգրեսներում կարդացվել և լսվել լին բազմաթիվ զեկուցումներ թուրք գիտնականների և պատմաբանների կողմից: Թուրքական Պատմութեան Ընկերութեան ղեկավարներից՝ մոլիպանթուրքիստ Աֆեթ-խանումը իր ճառում այդ մասին ասաց. «Այսօրվա թուրքի զավակները գիտեն և ուրիշներին պիտի հասկացնեն, որ թուրքերը սերում են ոչ թե 400 վրանով աշիրեթից, այլ 10 հազար տարի առաջ գոյութիւն ունեցող արիական բարձր ցեղից և պատկանում են մեծ ընդունակութիւնների տեր մի ազգութեան»<sup>2</sup>:

Պրոֆ. Սատրի Մակսուտի Արսալը իր «Մարդկային պատմութեան մեջ թուրքական ցեղի դերը» թեմայով զեկուցման մեջ ասաց. «Մարդկային պատմութեան մեջ ոչ մի ցեղ թուրքերի նման պետութիւններ ստեղծելու ընդունակութիւն ցույց չի տվել»: Հիշելով, որ

<sup>1</sup> Birinci Türk Tarih Kongresi, Maarif vekaleti ve T. T. Tetkik Cemiyeti tarafından tertib edilmiştir. Konferanslar, Müzakere zabıtları (Հնդգծումները մերն են):

<sup>2</sup> Afet Hanım (Afet Inan), Birinci Türk Tarih Kongresi, s. 31.

դադուձարար պետութիւնները ոչնչացրել են իրենց հպատակ ժողովուրդներից շատերին, նա ասում է՝ «Իրենց հպատակ ժողովուրդների նկատմամբ թուրքերի վարած քաղաքականութիւնը ոչ մի ժամանակ մահացու չի եղել... Թուրքական քաղաքակրթութիւնը ապրեցնող քաղաքակրթութիւն է եղել: Թուրքերը ոչ մի ժամանակ որևէ աղբի նկատմամբ բռնութիւն չեն գործել... եթե այդ ազգը հպատակվել է օրենքին: Ոչ մի ժամանակ թուրք տիրակալները հպատակ ազգերին չեն պարտագրել իրենց կրօնը... Պատմական հրշմարտութիւնները նանաշող աշխարհի բոլոր մարդիկ պարտավոր են գլուխ խոնարհել թուրքի հոյակապ և փառավոր պատմական դերի առաջ»<sup>1</sup>:

Այստեղ պատմական իրողութիւնները և փաստերը խեղաթյուրված և նենգափոխված են: Դարեր շարունակ տևող և ամբողջ աշխարհին քաջ հայտնի դատան թուրքական քաղաքականութիւնը, մասնավորապես իրենց հպատակ փոքր ազգութիւնների նկատմամբ, ցույց է տրված և գնահատված իբրև թուրքերի վեհանձն, «ապրեցնող», մարդասիրական քաղաքականութիւն:

Մի հոգովածի սահմանում հնարավոր չէ ավելի մանրամասն խոսել ժամանակակից թուրք պատմաբանների և գիտնականների նույն ոգով և նույն ձգտումներով շարադրված «գիտական» զեկուցումների և աշխատութիւնների մասին: Կարծում ենք վերևում հիշվածներն էլ բավական են մեր ընթերցողներին ցույց տալու, որ ժամանակակից թուրք պատմագրութիւնը ֆալսիֆիկացնում է ոչ միայն Թուրքիայի, այլ նաև համաշխարհային պատմութիւնը:

Համաշխարհային պատմութիւն մեջ բոլոր կուլտուրական ժողովուրդների պատմութիւնը բավականաչափ ուսումնասիրված է և ցույց է տրված յուրաքանչյուր ժողովրդի տեղն ու դերը մարդկային քաղաքակրթութիւն մեջ: Ուստի ակնհայտ և պարզ է, թե ինչաստիճանի շինծու են թուրք գիտնականների կոնցեպցիաները: Նույնպես ակնհայտ և պարզ է, որ թուրքական պատմագրութիւն ապարդյուն փորձերը՝ համաշխարհային առաջնութիւն և մտացածին կուլտուրական գերազանցութիւն ձեռք բերելու համար, գիտականորեն հիմնավորված չեն:



Պաշտօնաթիւթ թուրք պատմաբաններն ու գիտնականները իրենց ելուցներում և աշխատութիւններում խոսում են նաև հայ,

<sup>1</sup> Prof. Sadri Maksudi Arsal, İkinci Türk Tarih kongresi, s. s. 1062, 1074, 1092 (Ընդգծումները մերն են):

վրացի և այլ ժողովուրդների մասին, նենգափոխելով նրանց պատմական անցյալը:

Գիտնականի և պետական գործիչի հռչակ վայելող և բեղմնավոր գրչի տեր պրոֆ. Քեոփրյուլուն-Ջաֆե Ֆուադը «Թուրք գրականության ընդհանուր ակնարկ» թեմայով զեկուցման մեջ, խոսելով թուրքերին դրացի ազգերի՝ հայերի, վրացիների, բուլղարների, հունգարացիների, ուկրաինացիների, սերբերի և այլ ազգերի գրականության և երաժշտության վրա թուրքական գրականության, մասնավորապես ժողովրդական բանահյուսության և երաժշտության ունեցած ուժեղ ազդեցության մասին, նշում է. «Նախապատմական և առաջին դարերի պատմությամբ զբաղվող ֆրանսիացի գիտնական Jacques de Morgan-ը, առաջին համաշխարհային պատերազմի վերջում, հայերին պաշտպանելու նպատակով գրել էր «Հայ ժողովրդի պատմությունը» (Histoire du peuple arménien), որի մեջ հայ բանաստեղծների երկերին և հատկապես հայ էպոսին Հոմերոսի հետ համեմատելու աստիճան արժեք էր ընծայել: De Morgan-ի վերոհիշյալ սխալ կարծիքը համաշխարհային պատերազմի ժամանակ գրեթե բոլոր գիտնականների մոտ աչքի զարնող մոլեռանդ հայրենասիրության, մտայնության արտահայտություններ և ուրիշ ուղիղ<sup>1</sup>: Պրոֆ. Քեոփրյուլուն, ի պատասխան Մորգանի, ասում է, որ իր երկարատև ուսումնասիրություններից հետո նա գտնում է, որ «Հայ բանաստեղծների երկերը թուրքական սազի բանաստեղծների (Saz Saifleri) պարզ ընդօրինակումն են» (taklid)<sup>2</sup>: Թուրք գիտնականի այս ելույթը անհիմն է և վրդովեցուցիչ: Մեզ թվում է, որ Քեոփրյուլուն այս հարցում հայ գրականությունը նսեմացնելու և պանթուրքիստների ազգային անապարծությանը ծառայելու նպատակն է հետապնդում:

«Թուրքիզմին» հարող պատմաբանները նույնպիսի նենգամիտ և թշնամական ձգտումներով խոսում են նաև վրացական ժողովրդի պատմության և կուլտուրայի մասին, ֆալսիֆիկացնելով դարավոր պատմություն, պետականություն ու բարձր կուլտուրա ունեցող այդ ժողովրդի անցյալը, պատմական հանրահայտ փաստերն ու իրողությունները:

«Թուրքիզմի» իդեոլոգներից՝ պատմաբան Ի. Հ. Դանիշմենդը XVI դ. սկսած թուրք-իբանական պատերազմական գործողությունների կապակցությամբ, խոսելով վրաստանի և վրաց ժողո-

<sup>1</sup> Prof, Köprülüzade Fuad, «Türk edebiyatına ümumi bir baki», Birinci T. T. Kongresi, sah. 320.

<sup>2</sup> Նույն աեղում:

վըրդի մասին, գրում է. «Սոսկ պայմանական անունով Վրաստան կոչված երկիրը (saha — տարածություն), իր աշխարհագրական դիրքով, տարածվում է Շիրվանի և Դազստանի արևմուտքից մինչև Սև ծովի եզերքը... Քրիստոսի ծննդյան թվականի սկզբից մինչև Հիշրեթի XVI դ. օղուզների, խազարների, սելջուկների, ավելի ուշ՝ Ակ-Կոյունլու թուրքերի, հոմեհացիների, բյուզանդացիների, արաբների, պարսիկների և մոնղոլների արշավանքներին ենթարկված Վրաստանը, ամբողջ պատմության ընթացքում, մեծ ազգերի և պետությունների ազդեցության և իշխանության ենթակա է եղել. վրացի ազգը ոչ մի ժամանակ անկախ քաղաքակրթություն չի կարողացել ստեղծել: Սոսկ պատմական տեսակետից «Վրաստան» կոչված երկիրը (տարածությունը) Իրանի, Բյուզանդիայի, արաբական և թուրքական պետությունների քաղաքակրթության, կրոնական և կուլտուրական ազդեցության տակ է մնացել, մշտական և տևական ազգային միություն չի կարողացել ստեղծել, հատկապես Օսմանյան պատմության հետ կապված ժամանակաշրջանում՝ XIII—XV դդ. բաժանված է եղել մի շարք թագավորությունների և իշխանությունների... Թուրքական բանակը Վրաստան էր գնում ոչ որպես նրա իրավունքները ոտնահարող ուժ<sup>1</sup>: Դանիշմենդի ասելով «1578 թ. թուրք-իրանական պատերազմի ժամանակ, թուրքական բանակը Վրաստանը գրավելուց անմիջապես հետո, երկրում վարչություն կազմակերպեց, ստեղծեց լրիվ կարգ ու կանոն և բացարձակ անդորրություն, սրի հետևանքով լեռներում ապաստանած բնակիչները վերադարձան իրենց օջախները<sup>2</sup>»:

Այս բոլորից հետո Դանիշմենդը ավելացնում է, որ թուրքական բանակը Վրաստանը փրկեց անարխիայից և շինարարական աշխատանքներ սկսեց ոչ միայն մայրաքաղաքում, այլ ամբողջ երկրում (բերդեր, ճանապարհներ, կամուրջներ և այլն):

Թուրքական Մեջլիսի նախկին նախագահ գեներալ Ալի-Ֆուադ Զեբեսոյն, իր հուշերում խոսելով Անդրկովկասում թուրքական նվաճումների մասին, Դանիշմենդի նման նենգափոխելով և ֆալսիֆիկացնելով պատմական դեպքերը, պնդում է, որ թուրքական ենիչերիների ավազակային բանդաները իբր թե Վրաստանում, հատկապես վրաց ժողովրդի համար կյանքի իրեալական պայմաններ ստեղծեցին: Խոսելով 1578 թ. թուրք-իրանական պատերազմում օսմանցիների Չըլդրի հաղթանակի մասին, նա ասում է,

<sup>1</sup> I. H. Danismend, «Izahli osmanli tarihi kronolojisi», Istanbul, 1950, c. III sah. 13—17 (Ընդգծումը մերն է):

<sup>2</sup> Նույն տեղում:

որ իբր «Թուրքական իշխանության շրջանը վրացի ժողովրդի կյանքում ամենաերջանիկ շրջանը եղավ»<sup>1</sup>։

Ահա այսպես է ներկայացվում Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում Թուրք պատմաբանների կողմից։

Ինչքան էլ Թուրք ֆալսիֆիկատորները փորձեն իդեալականացնել Թուրքական ենիչերիների բարբարոսական արարքները, նրանք չեն կարող հերքել այն ճշմարտությունը, որ Թուրքական արշավանքների հետևանքով հողին էին հավասարվում հազարավոր գյուղեր և քաղաքներ, կողոպտվում և թալանվում էին նյութական և կուլտուրական անթիվ հարստություններ, գերության էին քշվում տարվում հարյուր հազարավոր խաղաղ բնակիչներ։ Թուրքական լծի տակ ընկած վրացի, հայ, ինչպես նաև այլ կովկասյան ժողովուրդների համար այդ պատմական կատաստրոֆը երկար ժամանակ արգելակեց նրանց տնտեսական ու կուլտուրական զարգացումը<sup>2</sup>։

Վերջին տարիներս «Թարիհ»-ի և պանթուրքիստ պատմաբանների գաղափարներով ոգեշնչված մի քանի հեղինակներ հատկապես զբաղվել են հայ ժողովրդի պատմությամբ։

Հայ ժողովրդի նկատմամբ այդ հետաքրքրությունը բացատրվում է ոչ թե նրանով, որ այդ հեղինակները ուզեցել են ուսումնասիրել Թուրքական դաժան լծի տակ դարեր շարունակ տառապած Արևմտյան Հայաստանի, հայ ժողովրդի կարևոր հատվածի պատմությունը, այլ նրանով, որ նրանք իբր ցանկանում են «գիտականորեն ու պատմականորեն հիմնավորել» Թուրք կառավարող շրջանների դարեր շարունակ տարվող քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ։

Մենք անհրաժեշտ ենք համարում մեր ընթերցողներին համառոտակի ծանոթացնել վերջին տասնամյակում Թուրքիայում լույս տեսած հատկապես երկու աշխատության հետ, որոնք ամբողջովին նվիրված են Հայաստանին և հայ ժողովրդին։ Այդ գրքերից հատկանշական է էսադ Ուրասի «Հայերը պատմության մեջ և հայկական հարցը»<sup>3</sup> անունով ստվարածավալ աշխատությունը։ Երկրորդը՝ Յ. Չարբի «Հայերը Թուրքիայի պետական ժառանգության մեջ»<sup>4</sup> աշխատությունն է։

<sup>1</sup> *All Fand Cebesoy*, «Siyasi hatıralar», «Vatan» gazetesi, 13 nisan 1954.

<sup>2</sup> *SE» Всемирная история*, т. IV, М. 1958. стр. 544.

<sup>3</sup> *Esat Uras*, «Tarihte Ermeniler ve Ermeni meselesi», Ankara, 1950, 785 sahife.

<sup>4</sup> *J. Çark*, «Türk devleti hizmetinde Ermeniler» (1453—1953), İstanbul, 1953.



Մանոթանալով այս յուրահատուկ «գիտական» աշխատությունների բովանդակությանը և նրանց հեղինակների հետապնդած նպատակներին, դժվար չէ եզրակացնել, որ էսադ Ուրասն ու Չարբը այդ «ուսումնասիրությունները» գրել են ոչ թե իրենց անհատական նախաձեռնությամբ և միջոցներով, այլ այդ աշխատանքը նրանք կատարել են թուրքական ղեկավար շրջանների հատուկ հանձնարարությամբ, նրանց նյութական և բարոյական օժանդակությամբ:

էսադ Ուրասը, մանրամասնորեն «ուսումնասիրելով» հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, փորձում է հանրագումարի բերել տարբեր ժամանակներում և տարբեր առիթներով թուրք պետական ղեկավարների, գիտական հիմնարկների և պատմաբանների հայատյաց, թշնամական մտքերն ու տեսակետները, նենգափոխել և ֆալսիֆիկացնել հայ ժողովրդի պատմությունը և նրա կուլտուրան ամբողջությամբ վերցված:

էսադ Ուրասը ճգնում է «ապացուցել» որոշակի մտքեր ու տեսակետներ, որոնք կարելի է ամփոփել և ձևակերպել հետևյալ կերպ՝ հայ ժողովուրդը ոչ մի ժամանակ և ոչ մի տեղ չի ունեցել իր սեփական երկիր-հայրենիքը, «Հայաստան կոչված երկիրը»<sup>1</sup> չի ունեցել իր որոշակի և տեղական սահմանները, հայերը չեն ունեցել պետականություն, և ոչ մի ժամանակ անկախ չեն եղել: Հայերի ծագման ու զարգացման մասին եղած տեղեկությունները սոսկ անասպելներ են. հայերի կուլտուրան (գրականությունը, պատմագրությունը, լեզու. արվեստը և այլն) գուրկ են ինքնուրույնությունից և գիտական արժեքից, այդ կուլտուրան դրացի ժողովուրդների, և մասնավորապես թուրք ժողովրդի, կուլտուրաների ընդօրինակումն ու կրկնությունն է...

Կարելի էր դեռևս շարունակել էսադ Ուրասի ամբողջ աշխատության մեջ կարմիր թելի պես անց կացված այս յուրահատուկ տեսակետները, կամ ինչպես ինքն է ասում «անկողմնակալ» դիրքավորումը՝ Հայաստանի և հայ ժողովրդի մասին: Սակայն կարծում ենք, վերևում հիշվածներն էլ որոշակի գաղափար կտան մեր ընթերցողներին, որ այստեղ գիտականության նշույլ անգամ չկա և այս բոլորը արվում են հետին նպատակների համար:

էսադ Ուրասը և նրան ոգեշնչող «թրքության» շատագույները փորձում են ապացուցել, որ «պատմության օրրանը հանդիսացող Անատոլիան» անհիշատակ ժամանակներից եղել է և մնում է թրք-

<sup>1</sup> էսադ Ուրասն և այլ թուրք շովինիստներ Հայաստան աերմինը փոխաբերել են «Հայաստան կոչված երկիր» աերմինով («Ermenistan dedikleri vilke»).

բության մայր հայրենիքը (ana yurt)։ Նրանք նման անհիմն փաստարկումով փորձում են ժխտել Արևելյան Անատոլիայում հայ ժողովրդի հայրենիքի՝ պատմական Հայաստանի գոյութիւնը։ էսադ Ուրասը, «Թարիհ»-ի հեղինակները, Թուրքական Պատմութեան Ընկերութիւնը և առհասարակ Թուրք պատմաբաններն ու աշխարհագրագետները կարծում են, որ իրենց տպագրած գրքերում ու քարտեզներում Հայաստան, Հայկական լեռնաշխարհ, Արարատ և նման ամբողջ աշխարհի կողմից ընդունված և գործածվող տերմինները և անունները հանելով, այդ տերմիններին և անուններին համապատասխանող պատմական իրողութիւններն էլ պատմութիւնից կջնջվեն և, ինչպես կարծում է էսադ Ուրասը, «Հայաստանը կմնա աշխարհագրութիւնից փոխանցված պարզ մի հիշողութիւն»<sup>1</sup>։

էսադ Ուրասը մանրամասնորեն զբաղվում է Թուրքիայում և հատկապես Արևմտյան Հայաստանի հայաբնակ վիլայեթներում հայ ազգաբնակչութեան թվական տվյալների հարցով, հիշելով բազմաթիւ վիճակագրական թվեր Թուրքական պաշտոնական, հայ և օտար աղբյուրներից։ Այդ հարցումն էլ էսադ Ուրասը իր հետապնդած նպատակում «հետևողական» է։ Նա մերժելով բազմաթիւ հայ և օտար վստահելի աղբյուրների հայերի թվի մասին տվյալները, առաջ է քաշում և կանգ առնում Թուրքական պաշտոնական վիճակագրութեան թվերի վրա, որոնցում Թուրքական կառավարութիւնը հայտնի քաղաքական նկատառումներով միշտ աշխատել է հայերի թիւը շատ պակաս ցույց տալ ամբողջ Օսմանյան Կայսրութեան մեջ և հատկապես հայկական վիլայեթներում։ էսադ Ուրասը, օգտվելով 1911—1912 թթ. Թուրքական պաշտոնական վիճակագրութեան տվյալներից, Թուրքիայում հայերի թիւը ընդունում է 1.161.000 մարդ և հզրակացնում. «Հայերը ոչ մի տեղում, նույնիսկ Բիթլիսի, Վանի, էրզրումի վիլայեթներում մեծամասնութիւն չեն կազմել. Սիվասում, ուր հայերը ամենամեծ թիւն ունեին, դարձյալ մուսուլմանների թիւը 840.000 մարդ էր, իսկ հայերի՝ 170.000 մարդ, այսինքն 15 %: Մի վիլայեթ, մի սանջակ, նույնիսկ մի նահիյե չկա, ուր հայերը մեծամասնութիւն կազմեին»<sup>2</sup>։

Ինչպես այլ հարցերում, հայերի թվի հարցում էլ Թուրք ֆալսիֆիկատորները փորձում են անտեսել հայ և օտար աղբյուրների արժանահավատ տվյալները։ Այսպես, ֆրանսիացի հայտնի հեղինակ Ելիզե-Ռեկլյուի տվյալներով հայերի թիւը Արևմտյան Հայաստանում

<sup>1</sup> Esat Uras, sah. II. (Ընդգծումները մերն են)։

<sup>2</sup> Esat Uras, s. 145—147.

տանում՝ 2.520.000 մարդ էր՝ Ռուս ուսումնասիրողներից Վ. Ն. Ֆիլիպովի տվյալներով՝ 2.500.000 մարդ<sup>2</sup>։ Պրոֆ. Լեոնե իր «Հայոց հարցի վավերագրերում» (էջ 87) Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալներով, 1882 թ. հայերի թիվը Արևմտյան Հայաստանում և Քուրքիայի այլ մասերում 2.660.000 մարդ է հաշվում, որը բաժանված էր հետևյալ կերպով. Վանի վիլայեթում՝ 400.000, էրզրումի վիլայեթում՝ 280.000, Բիթլիսի վիլայեթում՝ 250.000, Սիվասի վիլայեթում՝ 280.000, Դիարբեքիրի վիլայեթում՝ 150.000, հարբերտի վիլայեթում՝ 270.000։ Այսպիսով ստացվում է Արևմտյան Հայաստանում՝ 1.630.000, Կիլիկիայում ավելի քան 330.000, Ասիական Քուրքիայի այլ մասերում՝ 455.000, Եվրոպական Քուրքիայում՝ 195.000 մարդ<sup>3</sup>։

Քուրքական կառավարությունը, հատկապես Արևմտյան Հայաստանում հայերի թիվն արհեստականորեն պակասեցնելու նպատակով, քանիցս փոփոխության էր ենթարկել Արևմտյան Հայաստանի մեջ մտնող վիլայեթների վարչական բաժանումը։ Վիլայեթների և սանջակների վերաբաժանումը կատարվում էր այն հաշվով, որ հայկական մեծամասնությունը բաժանվի տարրեր ազգությունների մեջ (Քուրք, քուրդ և այլն)։ Սակայն շնայած այդ և նման վարչական միջոցառումներին, հայերը Արևմտյան Հայաստանում շարունակում էին մեծամասնություն կազմել։ Այսպես, 1912 թ., Կ. Պոլսի պատրիարքարանի տվյալների համաձայն, հայաբնակ վեց վիլայեթներում հայերը կազմում էին ազգաբնակչության 38,9 %, Քուրքերը՝ 25,4 %, քուրդերը՝ 16,3 %, մնացած ժողովուրդները՝ 19,4 %։

Այնուհետև Քուրք պատմաբանները կրկնում են ժամանակակից Քուրք պետական ղեկավար շրջանների այն միաբերան պնդումը, որ իբր թե հայերը Քուրքիայում մշտապես ապրել են լավագույն պայմաններում։ Այդ հարցի պատմական ուսումնասիրության և պրոպագանդային է նվիրված վերոհիշյալ Յ. Չարքի «Հայերը Քուրքական պետական ծառայության մեջ» աշխատությունը։ Այն

<sup>1</sup> Էլիզե-Ռեկլյու, Լադիստան, Հայաստան և Քուրդիստան, Վազարշապատ, 1853, էջ 70։

<sup>2</sup> В. Н. Филипов, Военное обозрение Азиатской Турции. 1831, см ЦГВИА, ф. 450, л. 533, л. 47.

<sup>3</sup> Population armenienne de la Turquie avant la guerre. Statistiques établies par le Patriarcat armenien de Constantinople. Paris, 1920, p. 9.

Յես նաև Մ. Գ. Ներսիսյան, «Հայ ժողովրդի պատմական պայքարը Քուրքական բռնապետության դեմ՝ 1850—1890 թթ.» Երևան, 1955 թ.

աշխատութիւնը լույս է տեսել Ստամբուլի՝ թուրքերի կողմից  
սրբազան 500 ամյակի կապակցութեամբ:

3. Չարքը իր աշխատութեան մեջ Ստամբուլում և այլ մեծ քա-  
ղաքներում ապրող և թուրքական պետական ծառայութեան մեջ  
բարձր աստիճանի հասած մի քանի տասնյակ ամիրաների, սարաֆ-  
ների և վաճառականների օրինակով, որոնք պատկանում էին վեր-  
նախավին և անտարակույս շատ լավ էին ապրում, փորձում է իր  
ընթերցողներին համոզել, որ թուրքիայում բոլոր հայերը ապրում  
էին լավագոյն պայմաններում, վայելում էին լայն իրավունքներ և  
ունեին մեծ առանձնաշնորհումներ: Սրանով Չարքը, էսադ Ուրասը և  
պատմութեան մյուս ֆալսիֆիկատորները փորձում են «ապացուցել»,  
որ հայերը բոլորովին կարիք չունեին պայքարելու իրենց գրութիւնը  
բարձրելու և հայկական վիճակներում բարենորոգումների պա-  
հանջներ առաջ քաշելու համար:

Մեր կողմից նշված թուրք հեղինակները ավելի հեռու տանող  
նպատակներ են հետապնդում, Փորձելով արդարացնել թուրքական  
տիրող շրջանների կողմից հայերի նկատմամբ կատարված գազա-  
նութիւնները, նրանք առաջ են քաշում մի այսպիսի անհիմն միտք,  
որ փրթե հայերի բացարձակ մեծամասնութիւնը, թե անցյալում և  
թե ներկայում, միշտ գոհ է եղել թուրքական կառավարութիւնից և  
նրա ազգային քաղաքականութիւնից, որ միայն հայերի շատ ան-  
նշան փոքրամասնութիւնն է արտահայտել իր դժգոհութիւնը երկ-  
րում գոյութիւն ունեցող գրութիւնից: Ըստ էսադ Ուրասի՝ «Այդ  
չնչին փոքրամասնութիւնը այն հայերն են, որոնք գործելով ի  
վնաս թուրքիայի անկախութեան, ձգտել են օտար միջամտութիւն-  
ներ առաջ բերել և հրապարակ են հանել ինչ-որ «հայկական  
հարց»: Այդ կարգի հայերը (ազգային գործիչներ, քաղաքական  
պարտիաների ղեկավարներ), ձօգտվելով հայ ժողովրդի վրա իրենց  
ունեցած ազդեցութիւնից, նրա բոլոր դժբախտութիւնների պատ-  
ճառ են հանդիսացել»:

Ինչպես տեսնում ենք, էսադ Ուրասը թուրքական բռնակալու-  
թիւնից ազատվելու համար հայ ժողովրդի մղած պայքարը վերա-  
գրում է Կ. Պոլսի հայ հոգևորականութեան ղեկավար շրջաններին,  
հնչակյան և դաշնակ կոմիտեներին: Գրանով նա խեղաթուրում և  
նենգափոխում է Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդական մաս-  
սաների այն անհաշտ պայքարը, որը նրանք մղում էին թուրքական  
բռնակալութեան դեմ իրենց ազատագրութեան համար:

<sup>1</sup> Esat Uras, sah. IV.

Գրանով էսադ Ուրասը, Չարքը և ուրիշներ ուզում են ցույց տալ, որ Թուրքիայում չի եղել և չէր կարող լինել աղգային-աղատադրական շարժում, որ հայկական հարց գոյություն չի ունեցել և այդ հարցը հորինվել է հայ քաղաքական կազմակերպությունների և որոշ գործիչների կողմից, որ հայկական հարցի բարձրացման համար համապատասխան պայմաններ չեն եղել, քանի որ հայերը Թուրքիայում ապրում էին լավագույն պայմաններում և վայելում լայն իրավունքներ:

Հայտնի է, որ այդ «տեսակետը» փորձում են պաշտպանել ոչ միայն էսադ Ուրասը, Չարքը, այլ նաև Հիքմեթ-Քալուրը<sup>1</sup>, Շեմսեդդին-Գյոնալթալը, Քեոփրյուու-Ֆուադը, Սադրի Մակսուտի-Արսալը<sup>2</sup> և ուրիշներ:

Թուրք պատմաբանները երկի մոռանում են, որ ամբողջ աշխարհին քաջ հայտնի են թուրքական սուլթանների ֆեոդալական-րոնապետական, ասիմիլյատորական ուժի մը, սիստեմատիկորեն կազմակերպված հայերի մասսայական ջարդերը, որոնց հետևանքով Արևմտյան Հայաստանի ազգաբնակչությունը ենթարկվեց ֆիզիկական ոչնչացման:

Հայերի նկատմամբ թուրքական կառավարության գաղափարությունները արդարացնելու համար էսադ Ուրասը իր գրքի հարյուրավոր էջերում խոսում է դաշնակցական կոմիտեիների և որոշ ազգայնական կազմակերպությունների գործունեության մասին, որոնք իրենց ավանտյուրիստական, իմպերիալիստական տերությունների միջամտության վրա հենվող քաղաքականության մեջ առիթ տվին թուրքական ղեկավար շրջաններին էլ ավելի ուժեղացնելու հայերի նկատմամբ կատարվող բարբարոսությունները: Պատահական չէ, որ էսադ Ուրասը, նենդափոխելով հանրահայտ պատմական դեպքերը, սուլթանական կառավարության կողմից կազմակերպված հավական ջարդերը շարամտորեն կապում է վերոհիշյալ կազմակերպությունների գործունեության հետ: Բանը հասել է այնտեղ, որ էսադ Ուրասը նույնիսկ հայ ժողովրդի աղգային-ազատագրական պայքարի այնպիսի հերոսական և փառավոր էջերը, ինչպիսիք են Զեյթունի 1862 թ. ապստամբությունը, Մուշի 1863 թ. ապստամբությունը, Չարսանջաբի 1875 թ. ապստամբությունը, Զեյթունի 1875 թ. և 1884 թ. ապստամբությունները կապում է դաշնակ և հնչակյան

<sup>1</sup> Տես նրա աշխատությունը՝ «Türk inkilab tarihi».

<sup>2</sup> Տես նրա ղեկուցումը՝ «İkinci Türk Tarih kongresi» s. s. 1062, 1074, 1092.

կոմիտեաների գործունեութեան հետ, մինչդեռ փաստ է, որ նշված կոմիտեաները այդ թվականներին դեռևս գոյութիւն չունեին:

Հայտնի է, որ արևմտահայերի ազգային-ազատագրական շարժման արտահայտութիւններից մեկն էլ եղել է հայերի ակտիվ մասնակցութիւնը և օժանդակութիւնը ռուս-թուրքական պատերազմներում (1853—1856 թթ. և 1877—1878 թթ.), որովհետև հայ ժողովրդական մասսաները ռուսական բանակի վրա նայում էին իբրև իրենց ազատարարի:

Այդ բոլոր պատմական իրողութիւնները վկայում են, որ դեռևս հայկական կոմիտեաների (պարտիաների) կազմվելուց շատ առաջ. XIX դ. 50—60-ական թվականներին, Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի ազատագրական շարժումը ընդհանուր բնույթ ստացավ և վերածվեց ազգային-ազատագրական շարժման սուլթանական բռնապետութեան դեմ:

Արևմտյան Հայաստանի ազգային-ազատագրական շարժումը շարունակվեց և հետագա տարիներին:

Սակայն հայտնի է, որ սուլթանական կառավարութեան հայերի նկատմամբ հետապնդած քաղաքականութիւնը հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման հետևանքն ու արդյունքը չէ: Այդ քաղաքականութիւնը շատ որոշակի և ցիւրիկորեն բնորոշել էր դեռևս անցյալ դարի վերջին քառորդին մեծ հողատեր, հայտնի պետական գործիչ և անգլոֆիլ Քամիլ փաշան: Հիշելով Եվրոպական Թուրքիայում ոչ-մուսուլման ժողովրդական ազատագրական շարժումների և եվրոպական պետութիւնների միջամտութեան մասին, Մեծ վեզիր Քամիլ փաշան ասում էր. «...Եթե Եվրոպիո մասին մեր ծոցը օձ անուցիւնք, պետք չէ, որ նույն հիմարութիւնն ընենք մեր Ասիական Տաճկաստանի մեջ. խելոքութիւնը ջնջել վերցնել է այն ամեն տարերքը, որ օր մը կրնան մեզ նույն վտանգը ծնանել և օտարին ձեռնմխութեան առիթ և գործիք լինել:

Հիմա, այսօր գոնե, Անգլիո շահերն կպահանջեն, որ Փոքր Ասիո (մենք և Անգլիան Հայաստան բառը ոչ միայն շինք ճանշեր, այլ այդ անունը հնչող կզակները պետք է ջախջախենք) մեր ունեցած երկիրները ազատ մնան օտարին միջամտութենէն և միջամտութեան ամեն առիթներէն. ուստի այդ սուրբ նպատակին համար պետք է և պետական իրավունքը կպահանջե որ որևիցե կասկածելի տարրը անհետ ընենք, որպեսզի ապագան ապահովինք. ուրեմն այդ հայ ազգը վերացնելու, անհետ և անճետ ընելու ենք: Եվ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակասիր մեզ, ամեն գործիք պատրաստ ունենք—կուսակալ, դասավոր, հարկահան, ոստիկան, վերջապիս

ամենայն ինչ. կրոնական պատերազմ մը կհրատարակենք և դուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ՝ որ ոչ զենք ունի, ոչ զինվորութիւն և ոչ պաշտպան... Եվ եթէ այդ հայ ազգը բնաջինջ լինի և քրիստոնյա Եվրոպան կրոնակից մը փնտոս և չի գտնե Տաճկական Ասիո մեջ, կթողու զմեզ հանգիստ և այն ատեն կզբաղվենք ներքին գործերով և բարեկարգութեամբ...»<sup>1</sup>:

Կասկածից դուրս է, որ արդուհամիդյան պարբերական ջարդերի, Ադանայի եղեռնի և վերջապես 1915—1916 թթ. հայ ժողովրդի վերջնական ֆիզիկական ոչնչացման հրեշալին ծրագիրը մշակվել և պատրաստվել էր դեռևս անցյալ դարի վերջին քառորդում: Հայ ժողովրդի ոչնչացման Քամիլ փաշայի մշակած այդ հրեշալին ծրագիրը, անտարակույս, նրա անհատական մտահղացումը չէ, դա սուլթանական Թուրքիայի ղեկավար շրջանների ծրագիրն է եղել, որն իրականացվել է սուլթան Աբդուլ-Համիդի և նրա շովինիստական քաղաքականութիւնը շարունակող Իթթիհատական կառավարութեան կողմից:

Իսկ «անկողմնակալ» պատմաբան էսադ Ուրասը, փորձելով քողարկել Թուրքական ղեկավար շրջանների վաղուց հետապնդած նպատակը՝ Արևմտյան Հայաստանում և առհասարակ Թուրքիայում հայերին ոչնչացնելու հրեշալին ծրագիրը, հատկապես 1894—1896 թթ., 1909 թ. ջարդերը և վերջապես 1915—1916 թթ. ամբողջ աշխարհին հայտնի եղեռնը, պնդում է, որ այդպիսի ջարդեր չեն եղել, որ «Թուրքերի կողմից վեց հարյուր հազար, ութ հարյուր հազար և նույնիսկ մեկ միլիոն հայերի սպանվելու մասին բազմաթիվ հեղինակների գրածները իրականութեան հետ ոչ մի կապ չունեն, որ այդ բոլորը առասպելներ են, ընդհակառակն հայերի կողմից սպանված մուսուլմանների թիվը ավելի է, քան վերեւ հիշված թվերը»<sup>2</sup>:

Թուրք ֆալսիֆիկատորները ձգտում են հայկական ջարդերի պատասխանատվութիւնը բարդել նաև ցարական Ռուսաստանի վրա: Այդ միտքը պրոպագանդվում է թե՛ գրականութեան մեջ և թե՛ պարբերական մամուլում: Այսպես, օրինակ՝ վերջերս «Vatan» թերթում զետեղված է Թուրք հայտնի ժուռնալիստ Ահմեդ էմին Յալմանի զրույցը դաշնակ պարագլուխներից մեկի՝ Տիգրան Թոսպատի հետ: Թուրքական շովինիստ Յալմանը և դաշնակ-վարձկալ Տիգրան Թոսպատը Բեյրութում տեղի ունեցած մտերմական զրույցի ժամանակ շոշափում են նաև հայ-թուրքական հարաբերութիւնների հարցը,

<sup>1</sup> «Փրձ», ազգային և գրականական միամսյա հանդես, Տիբլիս, 1879 թ. № 7—8, էջ 204—205.

<sup>2</sup> Esat Uras, s. 617.

ձևացնելով իրենց հարյուր հազարավոր հայ նահատակների «ցավակիցներ»։ Նրանք եղեռնի ամբողջ պատասխանատվությունը գցում են ցարական Ռուսաստանի վրա, դրանով իսկ արադարացնելով այդ մեծ տրագեդիայի անմիջական մեղավորներին և իրենց քաղաքականությունը եղեռնին նպաստող՝ հայ ժողովրդի ոխերիմ թշնամի դաշնակներին։ Յալմանը զրույցի ընթացքում շեշտում է, որ ցարական Ռուսաստանը չի նվաճողական նպատակների համար հայերին իբրև միջոց էր օգտագործում, կազմակերպում էր կոմիտեներ և ձգտում էր նրանց թունավորել բազմատեսակ գրգռումներով, երկու կողմերին իրար կոտորել էր տալիս, հետո այդ բոլորը գործադրում էր իբրև պրոպագանդայի նյութ<sup>1</sup>։

Թուրք ֆալսիֆիկատորների վերոհիշյալ անհիմն և շինծու պնդումները քողազերթ անելու և վճռականապես հերքելու համար մենք մեջ ենք բերում թուրքական աղբյուրներից դոկումենտներ, որոնք անհերքելի կերպով հաստատում են մեր ասածները։

Հենց թուրքական ղեկավար շրջանները և համապատասխան փաստաթղթերը հերքում են նաև էսադ Ուրասի պնդումը։

«Իթթիհատ վե Թերաքքի» պարտիայի ղեկավարներից Սելվան-Ջադե Ռիֆաթը, որը մասնակցել է այդ պարտիայի ղեկավար օրդանի մի շարք նիստերին և խորհրդակցություններին, իր հուշերում գրում է նույն պարտիայի 1915 թ. սկզբներին կայացած մի դազուների խորհրդակցության մասին, որտեղ որոշվեց ոչնչացնել Թուրքիայում ապրող ամբողջ հայությունը։

«Այդ որոշման գործադրումը, — գրում է Ռիֆաթը, — հանձնարարվեց ոճրագործներից և բանդիտներից կազմված հատուկ խմբի, իսկ ղեկավարությունը՝ «Գործող եռյակին», որի մեջ մըանում էին դոկտոր Նազիմը, դոկտոր Բեհաեդդին-Շաքիրը և Լուսավորության մինիստր Շյուքրին»<sup>2</sup>։

Այնուհետև Սելվան-Ջադե Ռիֆաթը հիշում է այդ խորհրդակցության ժամանակ տեղի ունեցած ելույթները։ Հիմնական զեկուցողը՝ դոկտոր Նազիմը ասաց. «Եթե մենք բավականանանք մասնակի ջարդերով, ինչպիսիք տեղի ունեցան 1909 թվականին Ադանայում և այլ շրջաններում, դա մեզ փոխանակ օգուտի, վնաս կպատճառի. Եթե մաքրումը ընդհանուր և վերջնական չլինի, օգուտի փոխարեն վնասը անխուսափելի է։ Անհրաժեշտ է հայ ժողովրդին ոչնչացնել

<sup>1</sup> «Vatan», 24 aralık, 1956.

<sup>2</sup> Հայկ. ՍՍՌ Գիտ. ակադեմիայի Գատմություն և նաստիտուտի արխիվը, Գործ Турецкая политика истребление армян—(1880—1921 гг.) Документы и материалы, Թերթ 272, հետազայում՝ Документы и материалы:



հիմնովին, այնպես, որ մեր հողերում ոչ մի հայ շմա և հայ անունն էլ մոռացվի: Ներկայումս պատերազմ է մղվում, և նման հարմար առիթ այլևս չի լինի: Օտար երկրների միջամտությունն ու թերթերի ռողորր աննկատ կմնա, նույնիսկ եթե նկատվի էլ, նրանք կդրվեն կատարված փաստի առաջ և դրանով հարցը վճռված կլինի... ջարդը անհրաժեշտ է... Ես ցանկանում եմ, որ մեր հողերում ապրեն միայն թուրքերը՝ իբրև անկախ իշխաններ: Բոլոր ոչ-թուրք տարրերին պետք է ոչնչացնել... Այսպես է մեր ռևոլյուցիայի նպատակն ու ծրագիրը»<sup>1</sup>:

Խոջա-Հասան-Ֆեհմին ասաց. «Աստծո կամքով թող ոչնչացվեն կանայք, երևիսները և թույլերը: Դրա համար ես այսպիսի մի հարմար միջոց եմ առաջարկում: Ներկայումս մենք պատերազմում ենք. պատերազմելու կարող բոլոր հայերին պետք է ուղարկենք կրակի առաջավոր գիծը՝ ռուսների դեմ, իսկ փտեկից, հատկապես այդ գործի համար ուղարկված ուժերը կրակ բաց կանեն և կոչնչացնեն բոլորին: Մենք պետք է հրամայենք մեր կրոնակիցներին, որ ոչնչացնեն նրանց. նրանք կկողոպտեն հայերի ունեցվածքը և կվերցնեն աղջիկներին: Այս միջոցը ես համարում եմ նպատակահարմար»<sup>2</sup>:

Իր եզրափակման խոսքում նիստի նախագահ Թալաթ փաշան նշում է. «Հայերի ոչնչացումը մինչև վերջին մարդը մեր ազգային քաղաքականության համար աջն աստիճան կարևոր է, ինչ աստիճան, որ կարևոր է թուրքերի տնտեսական գերիշխանության ստեղծումը»<sup>3</sup>:

Իհիֆաթը ասում է, որ Թալաթ փաշան քվեարկեց և որոշումը րնդունվեց միաձայն:

Այս որոշմանը հաջորդեց Երիտասարդ թուրքերի կառավարության 1915 թ. ապրիլի 15-ի դիրեկտիվը հայերի բնաջնջման մասին՝ ներքին գործոց մինիստր Թալաթի, Զինվորական մինիստր էնվերի, «Իթթիհատ վե Թերաքքը» կուսակցության քարտուղար դոկտոր Նալիմի ստորագրությամբ:

Դիրեկտիվում ասված է, որ կառավարությունն ու «Իթթիհատ վե Թերաքքի» պարտիայի Կենտրոնական Կոմիտեն «որևէ տեղ և որևէ կերպ հայկական հարցի առաջ քաշումը կանխելու համար, օգտվելով պատերազմի ընձեռած անկախության հնարավորությունից, որոշել են ընդմիշտ վերջ տալ հիշյալ հարցին՝ բնաջնջելով այդ օտար տարրը՝ հախրին, արտաքսելով նրանց Արաբիայի անա-

<sup>1</sup> Документы и материалы, л. 274—275:

<sup>2</sup> Նույն տեղում թ. 277:

<sup>3</sup> Նույն տեղում:

պատնեքը՝ մեզ տրված գաղտնի ցուցումին համաձայն»։ Այնուհետև դիրեկտիվում ասված է. «Կառավարությունը և Իթթիհատի Կենտրոնական Կոմիտեն դիմում են ձեռք և ձեռք հայրենասիրությանը՝ և հրամայում՝ ձեռք տրամադրության տակ եղած բոլոր ուժերով օգնել «Իթթիհատ վե Թերաքքիի» տեղական օրգաններին, որոնք ապրիլի 24-ի արևածագից սկսած, գաղտնի կարգադրության համաձայն, ձեռնարկելու են այդ հրամանի իրագործմանը։ Ամեն մի պաշտոնական կամ մասնավոր անձ, որ կընդդիմանա այդ սրբազան և հայրենասիրական պարտքին և չի կատարի իր վրա դրված պարտականությունները կամ որևէ կերպ կաշխատի պաշտպանել կամ թաքցնել այս կամ այն հային, կդիտվի որպես հայրենիքի ու կրոնի թշնամի և կստանա համապատասխան պատիժ»<sup>1</sup>։ Կասկածից դուրս էր, որ խորհրդակցությունը և նրան հաջորդող դիրեկտիվը նախապես պլանավորված գործունեության արդյունք էին։

Սուլթանական կառավարությունը և Երիտասարդ թուրքերի Կոմիտեն, շարունակելով արդուհամիդյան քաղաքականությունը, առաջին համաշխարհային պատերազմից դեռ շատ առաջ որոշել էին Ֆիզիկապես ոչնչացնել հայ ժողովրդին՝ ջնջել երկրի երեսից Հայաստան անունը։ Այս բանը հաստատում են և՛ վերը բերված փաստաթղթերը, և՛ Թալաթ փաշայի գաղտնի հրամանը, որտեղ ասվում է. «Թեև հայկական տարրի բնաջնջումը նախօրոք որոշված էր, հանգամանքները թույլ չէին տալիս փրականացնել այդ սրբազան գործը։ Այժմ բոլոր խոչընդոտները վերացված են... ստիպողաբար խորհուրդ է տրվում շենթարկվել կարեկցության զգացմունքին, բոլորին ոչնչացնելով, աշխատեք վերացնել Թուրքիայում «Հայաստան» անունն անգամ։ Հետևեցեք որպեսզի նրանք, ում վերապահվելու է այս խնդրի իրականացումը, լինեն հայրենասեր և վրստահելի անձինք»<sup>2</sup>։

Էսադ Ուրասը իր «ուսումնասիրությունում» միտումնաբար աշխատում է շնկատել նշված փաստաթղթերը և վարվում է ճիշտ այնպես, ինչպես սուլթանական կառավարությունը հայկական ջարդերի օրերին։ Նա արդարացնում է սուլթանական կառավարության և Երիտասարդ թուրքերի կլիկի դահիճներին։ Այդ պատճառով էլ պատահական չէ, որ իր գրքում Էսադ Ուրասը վկայակոչում է բոլոր այն փաստաթղթերը, որոնք հորինեցին սուլթանական կառավարությունը և Երիտասարդ թուրքերի պարտիան 1915—1916 թթ., որպեսզի համաշխարհային հասարակայնությունից թաքցնեն իրենց

<sup>1</sup> Документы и материалы, № 278—280.

<sup>2</sup> Նույն տեղում, № 306։

չարագործությունները, Հեղինակը մեջ է բերում սուլթանական կառավարության հայտարարությունը հայկական շարժերի առթիվ, որի մեջ «հերքելով» այդ մասին եղած լուրերը, սուլթանական կառավարությունը հայտնում էր, որ Երնդհանուր անդորրություն հաստատելու համար, Օսմանյան կառավարությունը իր անսահմանափակ իրավունքների համաձայն ձեռնարկած միջոցառումների շնորհիվ սանձահարեց հայերի ապստամբական շարժումը, երբեք գործը կոտորածի չհասցնելով... Եթե որոշ հայեր արտաքսվել են պատերազմական գործողությունների գծից այն կողմ, ապա դա բխում է ազգային անվտանգությունը ապահովելու սուլթանական կառավարության օրինական անհանգստությունից»<sup>1</sup>:

Էսադ Ուրասը չափազանց դժգոհ է Թուրքիայի պրեմիեր-մինիստր Դամադ-Ֆերիդից, որը 1918 թ. հոկտեմբերի 19-ի իր ճանաչում մեղադրում էր նախկին կառավարությանը հայկական կոտորածներ կազմակերպելու համար, և այն գնահատում, որպես գաղանուսություն: Նա մերկացնում է Երիտասարդ Թուրքերի կառավարությանը, որը իր կատարած կոտորածն ու բռնությունը թաքցնելու համար հորինեց և հրատարակեց հատուկ գիրք<sup>2</sup>:

Այդ գրքում, նշում է Դամադ-Ֆերիդը, պրոպագանդում է այն միտքը, թե իբր մեկ միլիոն հայերի իրենց հայրենի օջախներից դեպի Արաբական անապատներն արտաքսումը թելադրված էր ստրատեգիական նկատառումներով: Դամադ-Ֆերիդը գտնում է, որ դա ոչ մի քննադատության չի դիմանում և որ կատարված գազանությունները ոչնչով արդարացնել հնարավոր չէ: «Ոչ մարդկությունը, ոչ քաղաքակրթությունը և ոչ էլ իսլամը չեն կարող ընդունել այդ»<sup>3</sup>, — ասում է նա:

Բայց ժամանակակից Թուրք պատմաբանը վրդովված է սուլթանական պրեմիեր-մինիստրի այդ խոստովանությունից, որը, «հայերի արտաքսման (tehcir) պատասխանատվությունը դնում է ժամանակի կառավարության վրա»<sup>4</sup>:

<sup>1</sup> Էսադ Ուրաս, նշվ. աշխ. էջ 620-621:

<sup>2</sup> ارمنى قوميتنه لر ينك امال حركات اختلاليه

اعلان مشر و طيتدن اول و مشر و طيتدن صكره اسنا نبول 1917  
 Հայկական կոմիտեների ապստամբական շարժումները Մահմանազրուսթյան հայտարարությունից առաջ և հետո, Մտամբուլ, 1910 թ.: Այս գիրքը լույս է տեսել 1916 թ. Թուրքերեն, Ֆրանսերեն, անգլերեն և գերմաներեն լեզուներով: Գրքում տպագրված են բազմաթիվ շինձու և անհիմն նկարներ Եղսկումնաները և Թվական տվյալներ Թուրքիայի տարբեր մասերում հայերի ապստամբական շարժումների մասին»:

<sup>3</sup> Esat Uras, նշվ. աշխ. էջ 068:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 703-704:

Կեղծիքի մեջ էսադ Ուրասը առաջ է անցնում անգամ ջարդերի կազմակերպիչ Թալաթից, որը գոնե մասնակիորեն, բայց ակամա խոստովանում է. «Ես ընդունում եմ. մենք ստիպված եղանք կըտրուկ գործել: Ինչ արած, այժմ պատերազմական դրություն է»:

էսադ Ուրասը և ուրիշ թուրք պատմաբաններ հետևողականորեն շարունակում են կեղծել նաև հայկական հարցի հետ կապված հետպատերազմյան իրադարձությունները, որոնց վրա մենք հարկ չենք համարում կանգ առնել փոքրածավալ հոդվածում:

Վերևում շարադրվածից արդեն կարելի է պարզ պատկերացնել, թե ինչ մեթոդներով ու միջոցներով ռեակցիոն թուրք պատմաբանները խեղաթյուրում են պատմական իրականությունը:

Թաքցնել սուլթանների, Երիտասարդ թուրքերի պարտիայի և նրանց կառավարությունների հակաժողովրդական և մոլի շովինիստական քաղաքականությունը, որը հետևանք էր երկրում տիրող բռնապետական ռեժիմի և փմպերիալիստական պետությունների քաղաքականության: Ինչպես հայտնի է, իրերի այս վիճակի դեմ, դուրս եկավ թուրք ժողովուրդը, տապալեց բռնապետությունը և հիմնեց Թուրքական Ռեսպուբլիկան:

Սակայն ցավալի է ու տարօրինակ, որ ժամանակակից թուրք պատմագրությունը արդարացնում է սուլթանական Թուրքիայի տիրապետող շրջանների քաղաքականությունը և խեղաթյուրում փաստերը:

Թուրք պատմագրության պանթուրքիստական և բուրժուա-նացիոնալիստական ռեզոլուցիոնը, ոչ միայն ղրկում է այդ գիտությունը գիտական հիմքից, այլև մեծապես վնասում է թուրք աշխատավորության դաստիարակության գործին և խանգարում երկրի դեմոկրատական ուժերի պայքարին՝ ընդդեմ փմպերիալիզմի և տիրող ռեակցիոն շրջանների:

Սույն հոդվածում մենք կանգ առանք էսադ Ուրասի և թուրք պատմագրության կողմից պատմության ֆալսիֆիկացիայի միայն մի քանի հարցերի վրա: Պատմագրության մեջ նման հակագիտական և տենդենցիոզ մոտեցումը ոչ մի ընդհանուր բան չոճի պատմության օբյեկտիվ, գիտական մեկնաբանության հետ: Հանրահայտ պատմական փաստերի ժխտելը և անէացնելը՝ ապարդյուն փորձեր են միայն:

<sup>1</sup> Документы и материалы, р. 337.

Е. К. САРКИСОВ  
А. Х. САФРАСЯН

## О НЕКОТОРЫХ ФАКТАХ АНТИНАУЧНОГО ОСВЕЩЕНИЯ ИСТОРИИ

### Резюме

В статье, на основе анализа наиболее видных турецких историков, рассматривается господствующая в современной турецкой историографии концепция—тюркизм (Türkçülük).

Изданные «Обществом турецкой истории (Türk tarih kurumu) четырехтомная «История» («Tarih») и отдельные монографии турецких историков показывают, что эта концепция фальсифицирует историю как турецкого, так и других народов мира. Статья раскрывает сущность «тюркизма», идеализирующего историю турецкого народа; показывает основную цель этой шовинистической, антинаучной концепции, которая проповедует превосходство турок, их особую роль в истории и оправдывает национальный гнет и произвол, существовавшие в султанской Турции.

В статье разоблачается преднамеренная фальсификация истории грузинского и армянского народов реакционными пантюркистскими историками, которые тщетно пытаются доказать будто армяне не имели своей родины и государственности, что они пришлый народ, нашедший приют в турецком государстве.

Авторы статьи выступают против фальсификации истории национально-освободительного движения армянского народа в реакционной турецкой историографии, искажающей роль армян в экономической, политической и культур-

ной жизни Турции и извращающей события, связанные с массовой резней и насильственным выселением армян из своей родины.

Авторы статьи показывают, что пантюркистское и буржуазно-националистическое направление турецкой историографии лишает ее научных основ и препятствует борьбе демократических сил современной Турции против империализма и внутренней реакции.

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

Սեկտորի կողմից . . . . .	5
Հ. Գ. Լենինյան — Վ. Ի. Լենինը և Արևելքի ժողովուրդները . . . . .	9
Հ. Մ. Եզանյան — Հողային բնտան ժամանակակից իրանական գյուղում . . . . .	39
Ռ. Գ. Սաճակյան — Սովետա-թուրքական 1925 թ. պայմանագրի հարցի շուրջը . . . . .	76
Ս. Ս. Ավանեսով — Մերձավոր և Միջին Արևելքում ագրեսիվ բլոկների ստեղծելու հարցի շուրջը (1953—1958 թթ.) . . . . .	105
Հ. Կ. Թուրյանց — Նավթային նոր կոնցեսիաները Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում . . . . .	140
Ռ. Պ. Կոնդակչյան — Ամերիկյան մոնոպոլիստական կապիտալի ներխուժումը Թուրքիա . . . . .	159
Ա. Լ. Լևոնյան — Սովետական Հայաստանի բրդերի կուլտուրան . . . . .	176
Ս. Ղ. Սարգիսով — Անդրկովկասյան ժողովուրդների պայքարը թուրքական օկուպանտների դեմ 1918 թվականին . . . . .	190
Ա. Ս. Ավետյան — Եվրոպական մոնոպոլիստական կապիտալի պայքարը ռազմական մատակարարման համար Թուրքիայում՝ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին . . . . .	243
Տ. Հ. Հակոբյան — Հայերի պայքարը կաթոլիկական միսիոներների ասիմիլյատորական ձգտումների դեմ Իրանում (17—18-րդ դարերում) . . . . .	265
Ա. Խ. Սաֆրաստյան — Օսմանյան կայսրության վարչական բաժանումը 17-րդ դարում . . . . .	285
Ք. Լ. Զուգասզյան — Առասպել Բյուրասպի Աժդահակի մասին ըստ Մովսես Խորենացու . . . . .	303
Ք. Պ. Բալայան — Շահսեհանների և կաշկայցիների միասնական էթնոգենեզի հարցի շուրջը . . . . .	331
 Հ ա ղ ո ղ զ ու մ	
Ե. Ղ. Սարգիսով, Ա. Խ. Սաֆրաստյան — Պատմության հակադիտական լուսաբանման մի քանի փաստերի մասին . . . . .	379

## ОГЛАВЛЕНИЕ

	Стр
От сектора . . . . .	5—8
О. Г. Инджикян — В. И. Ленин и народы Востока . . . . .	9—32
Г. М. Еганян — Земельная рента в современной иракской деревне . . . . .	39—75
Р. Г. Саакян — К вопросу о советско-турецком договоре 1925 г. . . . .	76—104
С. С. Аванесов — К вопросу о создании агрессивных блоков на Ближнем и Среднем Востоке (1953—1958 гг.) . . . . .	105—130
А. К. Турианц — Новые нефтяные концессии в странах Ближнего и Среднего Востока . . . . .	140—158
Р. Н. Кондакчян — Проникновение американского монополистического капитала в Турцию . . . . .	159—17
Амине Авдал — Культура курдов Советской Армении . . . . .	176—189
Е. К. Саркисов — Борьба народов Закавказья против турецких оккупантов в 1918 году . . . . .	190—242
А. С. Аветян — Борьба европейского монополистического капитала за военные поставки Турции накануне первой мировой войны . . . . .	243—265
Т. А. Акопян — Борьба армян против ассимиляторских стремлений католических миссий в Иране (XVII—XVIII вв.) . . . . .	266—284
А. X. Сафрастян — Административное деление Османской империи в XVII веке . . . . .	285—302
Б. Л. Чукасян — Легенда о Бираспи Аждахаке по Моисесу Хоронаци . . . . .	303—330
Б. Н. Балаян — К вопросу об общности этногенеза шахсевел и капкайцев . . . . .	331—378

### Сообщение

Е. К. Саркисов, А. X. Сафрастян — О некоторых фактах антинаучного освещения истории . . . . .	379—400
---	---------





Հրատ. խմբագիրներ՝ Ա. Ա. ՎԱՐԹԱՆԵՍՈՎԱ, Ռ. Խ. ՄԱՆՈՅԱՆ  
Տեխ. խմբագիր՝ Գ. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ  
Ինկարչական ձևավորումը՝ Կ. Թ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ  
Սրբագրիչ՝ Ա. Տ. ՉՈՂԱՆՅԱՆ

3

7

ՎՆ 04573, պատվեր 363, Հրատ. 1901, ԽՂԽ 578, տիրամ 1500

Հանձնված է արտադրության 14/IV 1960 թ.:

Ստորագրված է տպագրության 10/X 1960 թ.:

Տպագրական 251/Յմամուլ+1 ներդիր, Հրատ. 21,4 մամուլ, թուղթ՝ 60×92<sup>1</sup>/<sub>16</sub>,  
Գինը կազմով՝ 12 ռ. 85 կ. 1/1 1961 թ. 1 ռ. 29 կ.:

Հայկ. ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների և պոլիգրաֆ-  
արդյունաբերության Գլխավոր վարչության № 1 տպարան, Երևան,  
Ալավերդյան փող. № 65:

